

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԺԱՆ-ՊԻԵՐ ՄԱՀԵՆ ՀԱՅԱԳԵՏ



AELITA DOLOUKHANIAN
JEAN-PIERRE MAHÉ ARMÉNISTE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆ ՀԱՅԱԳԵՏ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրու-

թյունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի օժանդակությամբ:

**Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Վարդան Դևրիկյան**

Գիրքը նվիրված է XX դարավերջի և մեր օրերի ֆրանսիացի նշանավոր հայագետ, կովկասագետ, արևելագետ, լեզվաբան, Ֆրանսիայի արձանագրությունների և գեղարվեստական գրականության ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի Հանրապետության ԳԱԱ արտասահմանյան անդամ, Անգլիայի, Վրաստանի ակադեմիաների անդամ Ժան-Պիեռ Մահեի հայագիտական ժառանգությանը:

Մենագրությունը նախատեսված է հայագետների, հայ ժողովրդի պատմությունն ու գրականությունը ուսումնասիրողների և հայաստանագետների համար:



Աելիտա Գուրգենի Դուլուխանյան

Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2012-ին արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր գործչի կոչման: 32 գրքի և շուրջ 550 գիտական հոդվածների հեղինակ է: Նրա աշխատությունները լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն: Թարգմանություններ է կատարում ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից: Ունի բազմաթիվ պարգևներ, այդ թվում՝ Մովսես Խորենացու մեդալ (2003): «Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագետ» գրքի համար արժանացել է Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղբալյան» մրցանակին (2008): Հիմնել է «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը:

Professor Aelita Dolukhanyan holds a post-doctoral degree in philology, and is a Correspondent Member of the Armenian National Academy of Sciences. She is the first woman who was elected as a Correspondent Member of the Armenian National Academy of Sciences in the area of humanities. Prof. Dolukhanyan is the Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and Its Teaching Methodology at the Khachatur Abovian State Pedagogical University in Yerevan, Armenia. On 23 May 2012, the President of the Republic of Armenia bestowed on Prof. Dolukhanyan the honorary designation of Outstanding Contributor to Culture and Arts of the Republic of Armenia. Prof. Dolukhanyan has written 32 books and nearly 550 scholarly research articles.

Prof. Dolukhanyan's work has been published in Armenian, Russian, English, French, and Polish languages. She has also translated numerous research and literary pieces into Armenian from Russian, English, and French. Prof. Dolukhanyan has received many awards, including the Movses Khorenatsi Medal in recognition of her contributions to literary studies (2003). Her book "Frederic Feydit: an Armenologist" received the Nicol Aghbalian prize awarded by the Union of Writers of Armenia (2008). She has founded the "European Armenologists" literary series of books.

ՆԱԽԱԲԱՆ

Ժան-Պիեռ Մահեն մեր օրերի ամենանշանավոր ֆրանսիացի հայագետն է՝ անսահման սիրված ու գնահատված Հայաստանում, հայկական սփյուռքում, ֆրանսիացի և արտասահմանյան երկրների գիտական աշխարհում: Նա մի շարք գիտական ակադեմիաների անդամ է: Բավական է կարդալ „L'épée de Jean-Pierre Mahé” գիրքը և հասկանալի կդառնա, որ նրան կարելի էր շնորհել դարի հայագետ տիտղոսը: Ժան-Պիեռ Մահեն հայագիտական գործունեությունը ծավալել է իրեն գործակից ունենալով սիրելի կնոջը՝ Աննի Մահեին, որի նպաստը կա ամուսնու կոթողային աշխատություններում՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ֆրանսերեն նոր թարգմանություն (1993թ.), «Հայաստանը դարերի փորձությունների մեջ» (2005թ.), «Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» (2012թ.) և ուրիշ գործեր:

Նա իրականացրել է ֆրանսիական հայագիտության հիմնադրի՝ Մեն-Մարտենի երազանքը և իր աչքով տեսել Հայաստանի վանքերը, հնագույն հուշարձանները ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև պատմական Մեծ Հայքում: Դասական ու եվրոպական լեզուների, գրաբարի, արդի հայերենի երկու լեզվաճյուղերի՝ արևելահայերեն ու արևմտահայերեն իմացությունը, գիտական մեծ էրուդիցիան նպաստել են, որ նա դառնա հանճարեղ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի հանճարեղ մեկնիչը: Ժան-Պիեռ Մահեի ներկայությունը Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում, Մատենադարանում, հայկական համալսարաններում դարձել է խիստ անհրաժեշտություն: Ոչ ոք չի կարող ժխտել նրա ավանդը Գրիգոր Նարեկացու համաշխարհային ճանաչման սուրբ գործում: «Հայաստանի պատմու-

թյուն» ստվարածավալ հատորում Մահեն հայտնում է հայ ժողովրդի խիզախությունն ու բարությունը ներկայացնող այնպիսի փաստեր, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Ֆրեդերիկ Մակլերից, Ֆրեդերիկ Ֆեյդիից հետո նա հայ դատի ամենամեծ պաշտպանն է: Անհերքելի փաստերով դատապարտում է երիտթուրքերի դաժանությամբ իրագործված XX դարի առաջին մեծ ցեղասպանությունը, որին զոհ գնացին մեկ և կես միլիոն հայեր:

Մահեն անկողմնակալ ներկայացնում է նաև Արցախի հերոսամարտը՝ որպես ազգային-ազատագրական պայքար:

Ժան-Պիեռ Մահեի հայագիտական վաստակն անընդգրկելի է: Նա ծանոթ է միջնադարյան հայ բոլոր պատմիչներին, որոնց ոճին հետևում է իր գրվածքներում: Ծանոթ է հայ դասական գրականությանը, մշակույթին, սիրահարն է Հին Հայաստանի, միաժամանակ մեծ բարեկամը նոր Հայաստանի: Բավական է հիշել, որ նա Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, Գր. Նարեկացու «Մատեանը» և Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը համարում է համայն մարդկության մշակութային ժառանգություն:

Բազմաթիվ փաստերով հայագետը մատնացույց է անում հայկական մշակույթի դերը համաշխարհային պատմության մեջ:

Այս հետազոտությունը յուրօրինակ երախտագիտության տուրք է ֆրանսիացի հայագետին, որն աշխարհին ներկայացրել է, թե ով է հայը, որտեղից է գալիս և ինչ է սովել նա մարդկությանը:

Պրոֆեսոր Աեյխտա Դոլուխանյան

PRÉFACE

Jean-Pierre Mahé est l'arméniste le plus renommé de notre actualité de France, infiniment aimé et apprécié en Arménie, dans la Diaspora arménienne et dans les cercles scientifiques de France et des autres pays. Il est membre d'un certain nombre d'académies scientifiques. Il suffit de lire le livre *L'épée de Jean-Pierre Mahé* et il devient compréhensible qu'il mérite de porter le titre d'arméniste de notre siècle. Jean-Pierre Mahé a réalisé ses activités d'arméniste en ayant comme collaboratrice sa chère épouse Annie Mahé qui a apporté sa contribution aux œuvres magistrales de son époux : nouvelle traduction française de l'*Histoire de l'Arménie* par Moïse de Khorène (1993), *L'Arménie à l'épreuve des siècles* (2005), *Grégoire de Narek et son Livre de Lamentation* (2012) et d'autres.

Il a réalisé le rêve de Saint-Martin, fondateur des études arméniennes en France, et il a vu de ses propres yeux les monastères d'Arménie et les plus anciens monuments arméniens non seulement en République d'Arménie, mais sur le territoire de l'Arménie Majeure historique. La connaissance des langues classiques et européennes, de l'arménien classique grabar et des deux branches, orientale et occidentale, de l'arménien moderne, ainsi qu'une grande érudition scientifique ont contribué à ce qu'il devienne le génial commentateur du *Livre de Lamentation* du génial Grégoire de Narek. La présence de Jean-Pierre Mahé à l'Académie Nationale des Sciences d'Arménie, au Maténadaran et dans les universités arméniennes est devenue une grande nécessité. Personne ne saurait nier sa contribution à l'œuvre sacrée de la reconnaissance internationale de Grégoire de Narek. Dans le

volumineux tome de l'*Histoire d'Arménie*, Mahé communique des faits concernant le courage et la bonté du peuple arménien, qui sont mis pour la première fois en circulation scientifique.

Après Frédéric Macler et Frédéric Feydit, il est le plus grand défenseur de la Cause arménienne. Il condamne à l'aide de faits irréfutables le premier grand Génocide du XX^e siècle, cruellement perpétré par les Jeunes Turcs, dont le nombre des victimes est monté à un million et demi d'Arméniens.

Mahé présente également sans parti pris le combat héroïque de l'Artsakh comme lutte de libération nationale.

Le mérite de Jean-Pierre Mahé en arménologie est illimité. Il connaît tous les historiens arméniens du Moyen Âge, dont il suit le style dans ses œuvres. Il connaît la littérature et la culture classiques arméniennes, il apprécie hautement l'Arménie ancienne, tout en étant un grand ami de l'Arménie moderne. Il suffit de rappeler qu'il considère l'église de la Sainte-Croix d'Aghtamar, le *Livre de Lamentation* de Grégoire de Narek et le roman *Les plaies de l'Arménie* de Khatchatour Abovian comme faisant partie du patrimoine culturel mondial.

L'arméniste indique à l'aide de nombreux faits le rôle de la culture arménienne dans l'histoire mondiale.

Cette étude est une sorte d'hommage de reconnaissance à l'arméniste français qui a présenté au monde entier qui est l'Arménien, d'où il vient et ce qu'il a donné à l'humanité.

Professeur Aelita Dolukhanyan

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ժան-Պիեռ Մահեի կենսագրական տեղեկությունները կան Հայկական Սովետական Հանրագիտարանում, «Հայ գրատպություն և գրքարվեստ» հանրագիտարանում (2015), նաև 2018-ին լույս տեսած «Հանրագիտական բառարանի» II հատորում: Հայագետն իր մասին որոշ տեղեկություններ հաղորդել է ՀՀ հանրային հեռուստատեսության երթերով: Նրա և նրա կնոջ՝ նույնպես հայագետ և հին լեզուների մասնագետ Աննի Մահեի վերաբերյալ տեղեկություններ և նկարներ կան Հայաստանի և արտասահմանի տարբեր պարբերականների էջերում:¹ Ահա մեզ հասանելի աղբյուրների հիման վրա ներկայացվում է Ժան-Պիեռ Մահեի կենսագրությունը:

¹ Տե՛ս Ազնավուրյան Գ., Եվս մի ֆրանսիացի հայագետ: [Ժան Պիեռ Մահեի մասին], «Գրական թերթ», 1979, 3 օգոստոսի: Հայրապետյան Միքայել, Հանդիպում ֆրանսիացի հայագետի հետ ԵՊՀ-ում, «Երևանի համալսարան», 1986, թ. 3, էջ 28-30: Հովհաննիսյան Ա., Աննի և Պիեռ Մահեների աշխատությունը հայերեն: [«Գրիգոր Նարեկացին և իր «Մատյան ողբերգության» երկը], «Այբ Ֆե», 2006, թ. 2, 27 հունվարի – 2 փետրվարի, էջ 7: Մահե Ժան Պիեռ, Արվեստի 15 դար Հայաստանում, [Հարցազրույց հայագետի հետ], «Ազգ», «Ազգ» ներդիր, 2007, թ. 142, 28 հուլիսի, էջ 2-Է: Մահե Ժան-Պիեռ, «Ես հին Հայաստանի երկրպագուն եմ»: [Հարցազրույց հայագետի հետ], «Ազգ», 2005, թ. 53, 26 մարտի, էջ Ե: Մահե Ժան-Պիեռ, Հայը աննվաճելի ժողովուրդ մը: Օտար վկայություններ, «Զարթոնք», Բեյրութ, 1989, 23 դեկտեմբերի: Մահե Ժան-Պիեռ, Հարցազրույց ֆրանսիացի հայագետի հետ Հայաստան կատարած այցի մասին, «Զարթոնք», Բեյրութ, 1979, 4, 6 նոյեմբերի: Божко Александр, Об арменоведе Жан-Пьере Маэ, «Новое время», 2013, N 2258, 28 февр, с. 6. Карапетян Гурген, Француз с душой армянина, Штрихи к портрету Жан-Пьера Маэ, «Голос Армении», 2010, N 45, 29 апр, с. 7. Ավիկ Իսահակյան, «Գրական թերթի» արխիվից, 13.02.2014թ.: Պետրոս Հովհաննիսյան, Սովսես Խորենացի, Մատենագիտություն, Եր., 2013:

«Հանրագիտական բառարանում» կարդում ենք. «Մահե (Mahé) Ժան-Պիեռ Անրի Մարի (ծ. 1944), ֆրանսիացի լեզվաբան, արևելագետ, հայագետ: Պրոֆեսոր (1978): ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1990): 1977-ից՝ «Ռևյու դեզ էթնոլոգիա Արմենիեն» հանդեսի գլխավոր խմբագիր: 1989-ից բարձրագույն ուսմանը դպրոցի IV բաժանմունքի տնօրեն: Հեղինակ է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանքի» թարգմանության՝ գրաբարից ֆրանսերեն (1976), «Հերմեայ Եռամեծի «Սահմանքի» փիլիսոփայական նշանակության մասին» (1985), «Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոցի թեան» երկը» համահեղինակությամբ (2004), «Հայաստանը դարերի ապացույց» (2005), «Հայաստանի պատմություն» (2012), վերջին երկուսը՝ ֆրանսերեն և այլն աշխատությունների, նաև «Լարուս» ֆրանսիական հանրագիտարանի՝ հայ գրականությանը վերաբերող հոդվածների»²:

Համացանցի հայերեն Վիքիպեդիայում կարդում ենք. «Ժան Պիեռ Մահե (ֆր.՝ Jean-Pierre Mahé, մարտի 21, 1944, Փարիզ, Ֆրանսիա), ֆրանսիացի հայագետ, հայ միջնադարյան հեղինակներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ: Ֆրանսերեն է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Թարգմանության հիմքում Վիկտոր Լանգլուայի կատարած աշխատանքն է՝ վերախմբագրված և կատարելագործված Մահեի կողմից: Հայերեն է հրատարակվել Գրիգոր Նարեկացուն նվիրված Մահեի աշխատությունը:

2015թ. ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է Բարեկամության շքանշանով:

2010 թվականին Գուրգեն Կարապետյանը «Голос Армении» թերթում Մահեի մասին տպագրել է ջերմ հոդված՝ «Француз с

² «Հանրագիտական բառարան», հ. 2, Երևան, 2018, էջ 290:

душой армянина. Штрихи к портрету Жан-Пьера Маэ» խորագրով³ («Հայի հոգով ֆրանսիացին», Ժան-Պիեռ Մահեի դիմանկարի ուրվագծեր): Այս հոդվածում կան կենսագրական նոր մանրամասներ. «Նշանավոր գիտնական-հայագետ Ժան-Պիեռ Մահեն ծնվել է Փարիզում 1944 թվականին: Ստացել է դասական լեզուների բանասիրական բարձրագույն կրթություն: Ավարտել է Սորբոնի համալսարանը, սովորել է ականավոր գիտնականներ Ժան Մենարի, Շառլ Մերսյեի, Ֆրեդերիկ Ֆեյդիի մոտ: Դասավանդել է Սորբոնի Լատինական ինստիտուտում (1967-1969թթ.), Ստրասբուրգի հումանիտար գիտությունների համալսարանում (1975-1977թթ.), Փարիզի ֆրանսիական քոլեջում (1979-ից): Ժան-Պիեռ Մահեն Սորբոնի Արևելյան կենդանի լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտի պրոֆեսոր է (1977-1987թթ.), Փարիզի Ասիական միության նախագահ (2002-ից), „Revue des Études Arméniennes” հանդեսի գլխավոր խմբագիր, լատիներենի դոկտոր (1975թ.), բանասիրության (1981թ.), Արձանագրությունների ու գեղարվեստական գրականության ֆրանսիական ակադեմիայի իսկական անդամ (2001թ.), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1990թ.), Վրաստանի ԳԱ պատվավոր անդամ: Գիտնականի հիմնական աշխատանքները նվիրված են արևելագիտության արդի խնդիրներին, կովկասագիտությանը, հայագիտությանը: Շատ և արդյունավետ ձևով նա զբաղվել է Հայաստանի ու Վրաստանի պատմությամբ, հայոց լեզվով ու գրականությամբ, գրաբարից ֆրանսերեն է թարգմանել հայ հին ձեռագրեր և գրական հուշարձաններ, այդ թվում Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի պատմությանը»: Երեք տարիների ընթացքում (1975-1977թթ.) Ժան-Պիեռ Մահեն Երևանում ուսումնասիրել է Մատենադարանի արխիվները: Հենց այդ տարիներին նա լրջորեն ու

³ «Голос Армении», Ереван, 2010, N 45, 29 апр, с. 7.

անբուժելի հիվանդացել է հայագիտությամբ: Դա սեր էր ողջ կյանքի համար»⁴: Ժան-Պիեռ Մահեի երկարամյա և արգասավոր գործունեությունն արժանացել է երկու երկրների բարձր պարգևների՝ Ֆրանսիայի «Ակադեմիական արմավներ» շքանշան և Հայաստանի «Մովսես Խորենացի» մեդալ:⁵ Ավելացնենք նաև, որ Մահեն նաև Անգլիայի ակադեմիայի անդամ է:

Գ. Կարապետյանի հոդվածում ներկայացվում են Ժան-Պիեռ Մահեի մտքերը Հայաստանի պատմության, ավանդույթների, արվեստի և հայ ժողովրդի միջազգային դերի վերաբերյալ: Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվելով՝ իր վրա կրել է Իրանի, Ասորեստանի, Բյուզանդիայի, ինչպես նաև Եվրոպական երկրների մշակութային ազդեցությունը: Հայ արվեստում անմահության խորհրդանիշներ են խաղողը և նուռը: Դրա համար էլ խաղողի ողկույզներն ու նոները զարդարում են հայոց եկեղեցիների լուսամուտները: Ժան-Պիեռ Մահեն ասում է, թե հայերը մեծ դեր են խաղացել համաշխարհային քաղաքակրթության մեջ:⁶ Եվ հայկական մշակույթի միջազգային ճանաչմանը նպաստելու համար անհրաժեշտ է կազմակերպել ցուցահանդեսներ աշխարհի տարբեր երկրներում:⁷

⁴ «Голос Армении», N 45, с. 7.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:



Աննի և Ժան-Պիեռ Մահեները Կահիրեի գրադարանում

Ժան-Պիեռ Մահեի անձը և գործը հիանալի ներկայացված է մեկ այլ օտարերկրացի հայագետի՝ ուկրաինացի Ալեքսանդր Բոժկոյի «Постигая Армению» հոդվածում⁸ («Հասկանալով Հայաստանը»): Հոդվածում կան Աննի և Ժան-Պիեռ Մահեների միացյալ լուսանկարը, նրանց հեղինակած «Հայաստանի պատմություն» գրքի շապիկի նկարը և Ալեքսանդր Բոժկոյի նկարը: Բոժկոն և Մահեն ծանոթացել են 2012-ին Երևանում կայացած Թարգմանիչների միջազգային ֆորումի ժամանակ և մտերմացել: Այդ ջերմ մտերմությունն էլ առիթ է դարձել վերոնշյալ հոդվածի, որում Մահեի կյանքը լուսաբանող բացառիկ տեղեկություններ կան: Բոժկոն լսել էր Ժան-Պիեռ Մահե հայագետի մասին ու երբ նրան հանդիպել է ֆորումի ժամանակ, աննկարագրելի ուրախացել է: Միայն նրա համար, որ հնարավորություն կար ֆորումի ժամանակ ծանոթանալու և շփվելու խոշորագույն արևելագետի, Արձանագրությունների և գեղարվեստական գրականության Ֆրանսիայի ակադեմիայի ակադեմիկոսի հետ, Բոժկոն պատրաստ էր Կիևում թողնել ամեն ինչ ու

⁸ «Новое время», 2013, № 2258, 28 февраля, с. 6.

թոչել Երևան: Նա Մահեի հետ շփվել է հայերենով ու ապշել վերջինիս հայերենի անթերի իմացությամբ: Եվ որքան մեծ է եղել Բոժկոյի ուրախությունը, երբ Կիևի իր բնակարանում Փարիզից ստացել է մի ծանր բանդերով, որում եղել է Աննի և Ժան-Պիեռ Մահեների հեղինակած «Հայաստանի պատմություն» գիրքը:⁹

Դժվար թե որևէ մեկը կարողանար գրել այդքան պատասխանատու և աշխատատար գործ՝ հասկանալով հայ ժողովրդի անցած դժվարին ուղին: Մահեները գրել են մի երկրի մասին, որի սահմանները շարունակ ենթարկվել են փոփոխությունների, սակայն երկիրն անխափան շարունակել է իր մշակութային առաջընթացը:

Բոժկոն շատ ճիշտ նկատել է, որ չնայած իր մեծադիր 745 էջերին և գիտական նյութերով հագեցված լինելուն՝ «Հայաստանի պատմություն» գիրքը կարդացվում է չափազանց թեթև ու հետաքրքիր:¹⁰

«Այդ գիրքն իսկական գանձ է ցանկացած հայագետի համար»¹¹: Ժան-Պիեռ Մահեն խոստովանում է, որ գրքի նախնական տարբերակը չի արժանացել Աննիի հավանությանը, և ինքը ստիպված է եղել գրքի տասնհինգ բաժինները նորից շարադրել, մինչև որ ստացվել է հավանության արժանի տարբերակ: Գրքում շատ են հղումները զանազան աղբյուրներին, սակայն կան նաև հղումներ հայ դասական գրողներին, որոնց միջոցով առավել տպավորիչ է դառնում պատումը:

Բոժկոն ծանոթ է հայ պատմիչներին և իրավացիորեն նկատում է, թե Մահեները հայ մատենագիրների արժանավոր աշակերտներն են: Նրանք ըստ հայ պատմիչի ներկայացնում են,

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

թէ ինչ արժանապատիվ պատասխան է տալիս Հայաստանի սպարապետ Վասակ Մամիկոնյանը Պարսկաստանի ամբարտավան արքա Շապուհ Երկրորդին:¹²

Մահէն ճշգրտորէն ներկայացնում է այն դժվարին խնդիրները, որոնց առնչվել է Հայաստանը անցյալում: Նա նաև անդրադառնում է ներկա Հայաստանի արդիական ու հրատապ հարցերին:

Բոժկոն համոզված է, որ Մահէների շարադրած «Հայաստանի պատմություն» գիրքը իրադարձություն կդառնա բոլոր նրանց համար, ովքեր անտարբեր չեն Հայաստանի փառապանծ, բայց դժվարին պատմության նկատմամբ, այն թանկ գիրք կդառնա նաև նրանց համար, ովքեր գնահատում են այդ զարմանալի աշխատասեր ու տաղանդավոր ժողովրդին, որն անհիշելի ժամանակներից ապրում է հայկական լեռնաշխարհում:

Բոժկոն խոսում է նաև Մահէների գրքում այնքան ճշտորէն դատապարտված 1915 թվականի ողբերգական ցեղասպանության մասին:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը և նրա կինը՝ Ռուզան Սարյանը, մտերմական հարաբերություններ ունեն Մահէների ընտանիքի հետ: Ավիկ Իսահակյանը հայագետի 70-ամյակի առիթով ուշագրավ հոդված է նվիրել Ժան-Պիեռ Մահէին: Տեղին ենք համարում այդ հոդվածից կատարել ընդարձակ մեջբերումներ: Ավիկ Իսահակյանը գրում է. «Դժվար է գտնել Արևելքի վաղ քրիստոնեական շրջանի որևէ նշանավոր գիտական ամբիոն Եվրոպայում, Ամերիկայում, Կանադայում կամ Մերձավոր Արևելքում, ուր Ժան-Պիեռ Մահէն Հայաստանի հետ առնչվող թեմաներով հանդես եկած չլինի: Հիրավի, նա մեր գիտական «դեսպանն» է աշխարհում, և մենք պետք է նրանով հպարտանանք: Մատենադա-

¹² Նույն տեղում:

քանի հին նվիրյալներից Լևոն Խաչիկյան, Բաբկեն Չուգասզյան, Արտաշես Մաթևոսյան, Ասատուր Մնացականյան, Մեն Արևշատյան, մինչև Հրաչյա Թամրազյան, Աիդա Չարխչյան կարող էին և կարող են վկայել, որ ծնունդով ոչ հայ ժամանակակից արտասահմանցի գիտնականների շարքում չկա մեկը, որն ավելի շատ ուսումնասիրած և իրազեկ լինի Մատենադարանի ձեռագրերին, քան Ժ.-Պ. Մահեն: Իսկ ես հպարտությամբ պետք է նշեմ, որ շուրջ 35 տարի ընկերություն եմ անում Ժ.-Պ. Մահեի հետ և կարող եմ վկայել, որ հայաստանապաշտությունը վաղուց ի վեր մուտք է գործել Մահեի ընտանիքի հարկից ներս: Երբ դեռ 1970-ական թվականների սկզբներին ինքը Երևանի պետական համալսարանում ժամանակակից ֆրանսերեն լեզու էր դասավանդում և խորանում հայերենի մեջ, Մահեն իր ընտանիքով սկսեց տիրապետել հայերենին: Նա շուրջ չորս տարի ապրելով Հայաստանում՝ ոչ թե իրեն կցված մեքենայով, այլ մարզային «ուղեգծային ավտոբուսներով», իսկ հաճախ՝ նաև ոտքով, շրջեց ողջ Հայաստանը: Չկա մի վանք, տաճար կամ մատուռ, որ Ժ.-Պ. Մահեն տեսած չլինի, ուսումնասիրած, պրպտած ու լուսանկարած: Կարող եմ նաև վկայել, որ նա «գոց գիտե» հայոց ճարտարապետական բոլոր նշանավոր կոթողների պատմությունը, մանավանդ եկեղեցական բնույթի, որոնց անխոնջ նվիրյալն է ինքը: Մահեն նաև Անիի պատմության ու ճարտարապետության հմուտ գիտակ է: Մի քանի անգամ ամիսներ շարունակ մասնակցել է Անիի պատմական հուշարձանների պեղումներին: Իսկ Մահեի կինը՝ Անի սիմվոլիկ անվամբ, այդ համեստագույն ֆրանսուհին, բառիս բուն իմաստով ամուսնու գիտական օգնականն է և «Մատենան ողբերգութեան» պոեմի ծանոթագրությունների համահեղինակը:



**Անվանի իսահակյանագետ Ավիկ Իսահակյանի հետ
Ժան-Պիեռ Մահեի քնակարանում (Փարիզ, 2015թ.)**

Մահեն կարող է հպարտանալ իր զավակներով ևս: Որդիներից մեկը անվանի տնտեսագետ է և եղել է Ժակ Շիրակի ռեֆերենտը: Մյուսը՝ «Բոինգ-740» օդանավի հրամանատար է, որն առաջիններից մեկն է այդ տիպի ինքնաթիռով իրականացրել Փարիզ – Նյու Յորք թռիչքը: Իսկ դուստրը Սորբոնի համալսարանի գիտական աշխատակից է: Երկար տարիներ աշխատելով Սորբոնի համալսարանում՝ Ժան-Պիեռ Մահեն իր նախաձեռնությամբ իրականացրել է հայագիտությանը նվիրված գիտական մի շարք նստաշրջաններ, մասնագիտական սեմինար-դասախոսություններ՝ մասնակցությամբ Հայաստանից եկած ուսումնասիրողների: Նա եղել է նաև հայաստանյան երիտասարդ հետազոտողների գիտական ղեկավար: Մշտապես բերել է իր մասնակցությունը Ֆրանսիայում կազմակերպվող հայաստանյան մշակութային ձեռնարկներին, այդ

թվում և 2007 թվականին անցկացված «Ֆրանսիայում Հայաստանի տարի» աննախադեպ մշակութային ծրագրին: Տասնյակ տարիներ նա ապրիլի 24-ին՝ Հայոց եղեռնի հիշատակի օրը, Ֆրանսիայի տարբեր քաղաքներում հանդես է եկել դասախոսություններով և բազմիցս ստացել սպառնացող նախազգուշացումներ Ֆրանսիայի թուրքական շրջաններից: Սակայն Մահեն անկոտրում է և միշտ մեր ժողովրդի կողքին: Նա լիապես մարմնավորում է մեծ գիտնականի և Հայաստանի նվիրյալի կերպարը: Պատահականությունն չէ, որ նա միաձայն ընտրվել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ:

Սակայն կուզեի ընդգծել մի էական հանգամանք, որն իհարկե շատ օրինաչափ է: Լինելով մեր ժողովրդի բարեկամը և բազմավաստակ հայագետ՝ Ժան-Պիեռ Մահեն միաժամանակ անմնացորդ նվիրյալն է իր երկրի և ֆրանսիական գորեղ մշակույթի: Նա ֆրանսիական հին գրականության փայլուն գիտակ է ու ներծծված է այն ամեն լավով, ինչը հատուկ է իր ազգի մեծ զավակներին. լայնախոհություն, մարդասիրություն ու առաջադիմություն: Երբեք չեմ մոռանա, թե Փարիզում իմ անդրանիկ այցի առաջին օրը ինչ հպարտությամբ էր նա ցույց տալիս սկզբում մեծ ֆրանսիացի Վիկտոր Հյուգոյի տուն-թանգարանը, նրա ձեռագրերը, իսկ հետո նրա անմահ վեպի հուշակոթողը՝ Փարիզի Աստվածամոր տաճարը: Նրա հետ յուրաքանչյուր այցը ֆրանսիական ուզածո թանգարան մի յուրահատուկ դասախոսության էր վերածվում:

Ժան-Պիեռ Մահեն, Ֆրեդերիկ Ֆեյդին, Գուրգեն Հովնանը և ես 1975թ. հոկտեմբերի վերջերին հյուր էինք Թալինի շրջանի Իրինդ գյուղի իմ լավ բարեկամներ Ռազմիկի և Գոհարի տանը: Գիշերը հարսանիք էր. գյուղապետ Արշո Քոթանյանի որդին ամուսնանում էր Ռազմիկի յոթ եղբայրներից մեկի դստեր հետ: Ֆրանսիայից

եկած պրոֆեսորները հարսանյաց սեղանի հյուրերի ամենապատվավոր տեղում են, սկսվում է խնջույքը: Եվ ահա վեր է կենում Ֆրեդերիկ Ֆեյդին ու անբասիր հայերենով սրտառուչ խոսք ասում: Քիչ անց Ժան-Պիեռն է նույնպես ընտիր հայերենով ու փոքր-ինչ երևանյան առողջանությամբ ոգեշունչ ճառ ասում, վերջում էլ խոսքն ավարտում «Մասնա ծոերից» մի ընդարձակ հատվածի արտասանությամբ: Հավաքվածները և՛ հիացած են, և՛ զարմացած: Քոթանյան Արշոն ուղղվում է դեպի ինձ. «Բա ասում էիր ֆրանսիացի են, չէ, տղա, սրանք հայ են»:

-Հա, հայ են, հաստատում եմ ես,- իսկական հայ, այն էլ՝ սասունցի...

Ստորև, առաջինը «Գրական թերթի» ընթերցողներին, ներկայացնում ենք Ժան-Պիեռ Մահեի «հայկական թեմայով» առայժմ վերջին աշխատանքը արվեստաբան Ռուզան Սարյանի կազմած «Սարյանը և Փարիզը» ժողովածուի ֆրանսերեն հրատարակության համար գրված նախաբանը»¹³:

1986 թվականին Երևանում տեղի է ունեցել միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ միջնադարյան գրականությանը: Այդ գիտաժողովի ժամանակ Մահեն հանդես է եկել Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի տպարան» երկի կառուցվածքի մասին զեկուցմամբ: Օգտվելով առիթից՝ ԵՊՀ հայ գրականության ամբիոնը Ժան-Պիեռ Մահեին հրավիրել է հանդիպման ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Մահեն տեղեկացրել է, որ իր ուսուցչի՝ Ֆրեդերիկ Ֆեյդիի հանգստի անցնելուց հետո ինքը ղեկավարում է Սորբոնի համալսարանի Կենդանի արևելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտի հայագիտության ամբիոնը: Հանդիպման ժամանակ Մահեն ասել է.

¹³ «Գրական թերթ», 13 փետրվարի 2014, արխիվից:

«Ինստիտուտում այժմ դասավանդում են հայոց պատմություն, արևելահայ և արևմտահայ լեզուներ, գրաբար, հայ արվեստի պատմություն, հայ ճարտարապետության պատմություն և այլն: Եթե Մեյեի ժամանակ ֆրանսիական հայագիտությունը զբաղված էր գերազանցապես համեմատական լեզվաբանությամբ, ապա այժմյան հայագետների քննության ասպարեզը խիստ ընդլայնվել է, բազմազան է: Ժամանակին հայագետներ էին համարվում հայոց պատմությանը, մշակույթին այս կամ այն չափով առնչված արևելագետները, իսկ հիմա՝ հայագիտության որևէ բնագավառում մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարողները: Պահանջները փոխվել են»¹⁴:

Նա նաև նշել է, թե չնայած աշխարհի տարբեր մասերում կան հայագիտական կենտրոններ, սակայն հայագիտության հիմնական կենտրոնը Հայաստանն է ու նրա «գեղեցկուհի մայրաքաղաքը»: Հայագետը արժանի գնահատական է տվել Պողոս Խաչատրյանի և Արշալույս Ղազինյանի կազմած Նարեկացու «Մատենաի» քննական բնագրին:¹⁵

Մահեն խոստովանել է, թե շատ է սիրում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», իսկ Եղիշե Չարենցին համարում է դարի մեծագույն բանաստեղծներից:

1989-ին Բեյրութի «Զարթոնք» թերթում է տպագրվել Ժան-Պիեռ Մահեի «Հայը՝ աննուաճելի ժողովուրդ մը» հոդվածը, որը կարծես «Հայաստանի պատմության» հատորի ամփոփումը լինի: Հոդվածում խոսվում է, թե ինչպես հին քաղաքակրթությունների պետությունները, հետո քոչվոր ցեղերը տիրել են Հայաստանին,

¹⁴ «Երևանի համալսարան», գիտաինֆորմացիոն հանդես, № 3, Երևան, 1986, էջ 28:

¹⁵ Նույն տեղում, էջ 29:

սակայն վերջինս երբեք չի կորցրել իր ազգային դիմագիծը՝ կրոնը և լեզուն: Հատված է բերվում Մեքենուսի պատմությունից, ըստ որի Բյուզանդիայի Մորիկ կայսրը նամակով դիմում է Պարսկաստանի Խոսրով արքային՝ խորհուրդ տալով իր բաժին Հայաստանի հայկական գործն ուղարկել պատերազմ, և ինքն էլ նույնը կանի: Եթե հայերը հաղթեն, կպարտվեն իրենց թշնամիները, իսկ եթե հայերը հաղթեն, դարձյալ կպարտվեն իրենց թշնամիները: Եթե հայերը շարունակեն ապրել իրենց երկրում, ապա Բյուզանդիան ու Պարսկաստանը խաղաղություն չեն ունենա:¹⁶

Չնայած Հայաստանը մեծ տարածքի վրա ցրված է, ինչպես վկայում է X դարի պատմիչ Թովմա Արծրունին, հայերը միասնական են, երբ թշնամին հարձակվում է երկրի վրա:

XIV դարի վերջում Լենկ Թեմուրի արշավանքները պատճառ դարձան հայ դպրոցների ու վանքերի փակվելուն, սակայն հայ մատենագրությունը չմեռավ:

Վեցերորդ դարում, երբ բյուզանդական կայսր Հուստինիանոսը որոշեց արգելել հեթանոս ժամանակաշրջանի փիլիսոփաների երկերը, հայերն, ընդհակառակը, ձեռնամուխ եղան իրենց լեզվով թարգմանելու յոթ ազատ արվեստները՝ քերականություն, հռետորություն, տրամաբանություն, ուսողություն, երկրաչափություն, երաժշտություն և աստղագիտություն:¹⁷ Մա իսլամական զարգացումից առաջ: Վերջինս իր ազդեցությունը պետք է դրոշմեր Բյուզանդիայի և Արևմուտքի վրա: Հայերը VI և VII դարերում շարունակում էին պահպանել մարդկային գիտության կարևոր մասը:

¹⁶ «Զարթոնք», թիվ 53, մարտի 26, Բեյրութ, 1989, էջ 3:

¹⁷ Նույն տեղում:

Սկզբում հայ պատմիչները գրում էին միայն իրենց ազգի մասին, հետո ընդարձակեցին հորիզոնը և սկսեցին գրել տիեզերական պատմություններ:

Թուրքերը Հայաստանում հաստատվեցին XI դարում: XIII դարից սելջուկների արշավանքների հետևանքով թուրքերի Հայաստան թափանցումն ուժեղացավ: XVI դարից սկսած Հայաստանի մի մասն ընկավ Օսմանյան լծի տակ, իսկ մյուս՝ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի: Բոլոր եվրոպացի ճանապարհորդները, որոնք այցելում էին Արևելյան Հայաստան, զգալի ձևով տեսնում էին մեծ տարբերություն հայերի ու եկվոր ժողովուրդների (թուրք, քուրդ և այլն) քաղաքակրթական մակարդակի միջև:

Հայաստանի Արցախ գավառի մեջ մտնող Ղարաբաղի լեռնային շրջանը Հայաստանի անկախության վերջին միջնաբերդն էր: Պարսիկները ճանաչեցին հինգ մելիքների ինքնավար իշխանությունը: Երբ Նապոլեոնը Ռուսաստանում պարտություն կրեց, Պարսկաստանը ճանաչեց մելիքների ինքնավարությունը:

1828-ին Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Այդ գործում մեծ դեր ունեցան ռուս զորահրամանատար Պասկևիչը և հայազգի զորահրամանատար Մադաթովը, ինչպես նաև կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, որն իր գործով հիշեցնում է Ավարայրի նահատակ Ղևոնդ Երեցին:

Այնուհետև խոսվում է հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում Անգլիայի միջամտությամբ ձախողելու մասին: Նշվում է, որ ներկա Հայաստանը Մեծ Հայքի տարածքի մեկ տասներորդ մասն է:

Վերջում ասվում է, որ Հայաստանը, որն իր հայ բնակչությամբ առաջինն էր միացել Ռուսաստանին, Ստալինի որոշմամբ իր որոշ տարածքներով մաս չկազմեց ներկա Հայաստանի: Սակայն Հայաստանն իր միատարրությամբ հնագույն և ամուր մշա-

կույթով պետք է գիտակցի իր գավակների աննվաճելի արիությունը:

1979-ին Մահեն հարցազրույց է տվել դարձյալ Բեյրութի «Ջարթօնք» թերթի նոյեմբերի 4-ի և 6-ի համարներում, որոնցում կան խիստ հետաքրքիր նկատումներ: Նա ճշմարտացիորեն շեշտում է, թե հայազետը հայերենը պետք է սովորի լեզուն կրող երկրում, միաժամանակ տեղում ծանոթանա ազգի կենցաղին ու սովորույթներին, այլ ոչ թե դրանց մասին իմանա գրքերով:

Նա խոստովանում է, որ հայերի հյուրասեր լինելը չի կարող ունենալ ֆրանսիացին, որն այլ մշակույթի կրող է, միաժամանակ եվրոպացու համար հասկանալի չեն այն բաժակաճառերը, որոնք ասվում են հյուրասիրության սեղաններին: Մակայն մասնակցելով նման հյուրասիրություններին՝ Մահեն հասկանում է, որ այդ ճառերով մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, և դրանք դառնում են շատ հաճելի, շատ անկեղծ, շատ մարդկային:¹⁸

Մահեն ընդունում է հայկական ճարտարապետության և մշակույթի ազդեցությունը հարևան ժողովուրդների վրա, սակայն նշում է, թե այդ խնդիրը չպետք է չափազանցնել:

Նա շատ կուզենար գնալ Ջանգեզուր, որպեսզի ավանդական հայ արվեստը ուսումնասիրի, մանավանդ սկսել է Աբովյանը ֆրանսերեն թարգմանել: Ինքը շատ կուզեր շրջել հայկական գյուղերում, տեսնել հին կահ-կարասիները, իմանալ, թե ինչպես են ձմռան համար պահածոյացրել ուտելիքը: Մահեն նկատում է, որ սովետական հանրապետությունների մեջ Հայաստանը միատարր է. բնակչության իննսուն տոկոսը հայեր են ու ձուլման վտանգ չկա:¹⁹ Եվ այն գաղափարը, թե շուտով հայերը միայն ռուսերեն են

¹⁸ «Ջարթօնք», N 30, Բեյրութ, 1979, էջ 2:

¹⁹ Նույն տեղում:

խոսելու, թվում է գառանցանք, և անհնար է պատկերացնել, թե այսքան միատարր ժողովուրդը կարող է կորցնել հայկական նկարագիրը:

Նշելով ճարտարապետության, մանրանկարչության, գրականության, պատմագրության այլ ժողովուրդների բերած նպաստի մասին՝ Մահեն հատուկ շեշտում է, թե հունական, ասորական գրականության նմուշները հայերը թարգմանել են, և քանի որ դրանց բնագրերը կորած են, ապա հայկական թարգմանությունը չափազանց թանկագին է: Օրինակ, Ֆրանսիայի պատմության համար այնքան կարևոր հեղինակ, ինչպիսին է Սեն Իրենե դը Լիոնը, թարգմանված է հայերեն, այդ հեղինակից բեկորներ են պահպանվել հունարեն կամ լատիներեն, իսկ հայերենն ամբողջական է, ուրեմն շատ կարևոր է:

Քրիստոնեության առաջին ջատագովներից Արիստիդիս Աթենացին տարիներով գիտական աշխարհին ծանոթ էր միայն հայերեն թարգմանությամբ: Հայ հին մշակույթը շատ կարևոր է, այն անհրաժեշտ է արդի գիտությանը, նրա շնորհիվ կարելի է ստուգումներ կատարել, քաղել տեղեկություններ, որոնք այլապես ամբողջ աշխարհի համար կորած պիտի լինեին:²⁰

Հայերը ստեղծել են հոյակապ մշակույթ, ինչպես Աղթամարի եկեղեցին, ինչպես Գրիգոր Նարեկացին և Խաչատուր Աբովյանը: Դրանք գործեր են, որոնք պատկանում են ընդհանուր մարդկային ժառանգությանը:²¹

Հայագիտությունը խիստ զարգանում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայում, համալսարաններում, նրանց ֆակուլտետներում: Դա կարևոր է Հայաստանի ու Միջուրքի համար:

²⁰ «Զարթոնք», N 31, Բեյրութ, 1939, էջ 2:

²¹ Նույն տեղում:

Սփյուռքը մեռյալ տարր չէ: Այնտեղ էլ՝ Լիբանանում, Փարիզում, Նյու Յորքում և այլուր կան ինքնատիպ գործունյա գրողներ, որոնց առկայությունը հայկական մշակույթի գոյատևման երաշխիք է: Դա մշակույթ է, որ այնքան գլուխգործոցներ է արտադրել և դեռ շարունակելու է հարստացնել մարդկության ժառանգությունը:²²

Ժան-Պիեռ Մահեի կյանքի նկատմամբ ունեցած հետաքրքրությունն իր արտացոլումն է գտել նաև «Ազգ» թերթի հարցազրույցներում:

2005-ի մարտի 26-ի հարցազրույցն ունի հայագետի խոստովանությունը որպես խորագիր՝ «Ես հին Հայաստանի երկրպագուն եմ...»: Նկատենք, որ գիտական մեծ նվաճումներով շատ հարուստ ֆրանսիական հայագիտության ներկայացուցիչներից և ոչ մեկն այնքան չի շրջել պատմական Հայաստանում, ինչպես Մահեն: Մարի Բրոսսեն 1860-ին և 1861-ին հրատարակեց երկու հրաշալի աշխատություններ՝ «Անիի ավերակները», 1848-ին Էջմիածնում էր, սակայն ձմռան պատճառով չկարողացավ գնալ Անի: «Ազգի» հարցազրույցից երևում է, որ Մահեն Անիում եղել է՝ և ոչ մեկ անգամ: Նա ասում է. «Ճիշտ է, շատ զբաղված լինելով հանդերձ, օգոստոսին նորից պետք է գնամ Անի, հույս ունենք, որ կկարողանանք թուրքերի օգնությամբ նորոգել, ամրացնել Անիի կաթողիկեն, սա ծրագիր է, որով զբաղվում ենք տասնյակ տարիներ: Վերջապես մեզ նյութական միջոցներ կտրամադրվեն, և մենք կկարողանանք հիմնապես զբաղվել այդ գործով»²³: Մեծարգո՛ պրոֆեսոր, ես երկու անգամ եղել եմ Անիում՝ 2008 և 2010 թվականներին, երկրորդ անգամ Անիի կաթողիկե եկեղեցին ավելի վատթար վիճակում էր, որովհետև հայկական արձանագրության տեղում կար մեծ խոռոչ

²² Նույն տեղում:

²³ «Ազգ», N 53, 2005, Երևան, էջ Ե:

բացած պատ: Բացի այդ, ցավալի է, որ թուրքերը Անին չեն ներկայացնում որպես հայ Բագրատունիների մայրաքաղաք, այլ իրենցը, ինչպես և իրենցն են համարում Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին՝ ասելով, թե մի ժամանակ թուրքերի մի մասը եղել է քրիստոնյա, և նրանք էլ կառուցել են:

Հարցազրույցի առիթը եղել է 2005-ին Փարիզում լույս տեսած «Հայաստանը դարերի փորձությունների մեջ» հրաշք գիրքը, որն անհնար է կարդալ առանց հիացմունքի: Մահեն ասում է. «Այդպիսի գիրքն անհրաժեշտ է, որպեսզի ֆրանսիացի ընթերցողը ճանաչի հայ ժողովրդին, իմանա, թե որքան օտար նվաճողներ են ոտնատակ արել Հայաստանը, իսկ օսմանյան թուրքերը ցանկացել են ոչնչացնել հայերին»²⁴:

Նույն «Ազգ» թերթի 2007թ. հուլիսի 28-ին վերստին հարցազրույց է Մահեի հետ: Այն կոչվում է «Արվեստի տասնհինգ դար» ու լիովին նվիրված է արդեն քրիստոնյա Հայաստանի մշակույթին: Հարցազրույցի հիմնական թեման հայկական եկեղեցիների արվեստն է, նրանց զարդարանքները: Մահեն իրավացիորեն նկատում է, թե հայկական եկեղեցիները պարզ ու խիստ են: Չարդաքանդակները եկեղեցիներում հանդես են գալիս արդեն XIII դարից: Նա նկատում է. «Վանա լճի կղզիներից մեկի վրա գտնվող Աղթամարի նշանավոր եկեղեցին (10-րդ դար) ներսից նկարազարդված է և դրսից քանդակազարդված. դա բացառություն է, որը բացատրվում է բյուզանդական ուղղափառության նկատմամբ դրա ճարտարապետի բացահայտ հետաքրքրությամբ»²⁵:

«Այբ-Ֆե» պարբերականում է տպագրված «Աննի և Պիեռ Մահենների աշխատությունը հայերեն» հոդվածը, որը նվիրված է «Գրի-

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Ազգ», N 142, 28 հուլիսի, Երևան, 2007, էջ 9:

գոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» գրքին: Այդ հոդվածում ուշագրավ է Մահեի հետևյալ խոստովանությունը. «Մեզ համար Նարեկը իսկապէս մի հայտնագործություն դարձավ, որին մենք առնչվել ենք նույնպիսի հիացումով և թրթիռով, ինչպէս լուսնագնացներն են առաջին անգամ ոտք դրել Լուսնի վրա»²⁶:

²⁶ «Այբ-Ֆե», N 2, 27 հունվարի, - 2 փետրվարի, Երևան, 2006, էջ 7:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԺԱՆ-ՊԻԵՌԻ ՄԱՀԵՆ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՆՆԻ ԵՎ ԺԱՆ-ՊԻԵՌԻ ՄԱՀԵՆԵՐԻ

Չափազանց կարևոր ու արդիական գիրք է Աննի և Ժան-Պիեռ Մահենների պատկերագարող աշխատությունը, որը լույս է տեսել 2005-ին: Արդեն գրքի վերնագիրը շատ խոսուն է՝ «L'Arménie à l'épreuve des siècles»:

Մահենները որպես իրենց գրքի բնաբան դրել են Եղիշե Չարենցի՝ ամեն հայի համար չափազանց կարևոր «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանին նվիրած գրքի ընծայականում Ժան-Պիեռ Մահեն գրել է. «Մատենադարանի ընթերցողներին՝ սրտաբուխ մաղթանքներով, Երևան, 2005, հուլիս»:

Այս մակագրությունը համապատասխանում է գրքի բովանդակությանը. այն նույնպես հեղինակները գրել են սիրով ու նվիրումով, երկար տարիների հետազոտություններ կատարելու արդյունքում: Գիրքն օգտակար է թե օտարազգի մտավորականներին և թե հայերին՝ անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում՝ մայր հայրենիքում, թե նրա սահմաններից դուրս:

Ոչինչ գիտության ու հետազոտության համար այնքան մեծարժեք չէ, որքան փաստը: Այս գրքի հեղինակներն անկողմնակալ ձևով խոսում են միայն փաստերով, և այդ փաստերն առավել հաստատուն են դառնում գրքում զետեղված նկարներով ու քարտեզներով:

Ամեն ժողովուրդ իր պատմության կերտողն է, տերն է, պատասխանատուն է: Ամեն ժողովրդի ապագան կերտվում է ներկայի ու անցյալի փոխհարաբերությունների փորձի հիման վրա: Այս գիրքը դրա հաստատումն է: Հենց Մաշտոցի անվան Մատենադարանի գոյությունը, որտեղ հավաքված է տարբեր դարերի հայկական ձեռագրերի ամենամեծ քանակը, անխոս վկայում է, թե հայերը հինավուրց քաղաքակրթության կրողներ լինելով՝ մշտապես կրթվել են և ձգտել պետականության վերականգնման, ազգային ինքնուրույնության պահպանման: Սա, իրոք, մարդկության ազգերի պատմության մեջ արտասովոր երևույթ է, և այդ երևույթի ողջ ընթացքը նկարագրված է Աննի և Ժան-Պիեռ Մահենների գրքում:

Ամեն հայագի մարդ, եթե իհարկե իրեն հայ է զգում, ինչ-որ առումով գիտակցում է և հպարտ է, որ ինքը հին քաղաքակրթության կրողն է: Այս երևույթի մասին է խոսում անգլերենով գրող, Լոնդոնում ծնված, Հարվարդի համալսարանի շրջանավարտ Մայքլ Առլեն Կրոսերը իր „Passage to Ararat” գրքում.

„My wife said, „Did you know that Mt. Ararat was in Armenia?” She had been reading one of my new Armenian books.

I said I knew.

„Do you suppose Noah was an Armenian?”

I said I didn’t think it worked that way.

Later, she said, „Tell me about the kings of Nairi.”

„I don’t know about them,” I said.

„It says here they were your ancestors. It says, „Many years ago, the land of Armenia was ruled by the kings of Nairi.”¹

Աննի և Ժան-Պիեռ Մահենների գիրքը բաղկացած է հինգ գլուխներից, վերջում ունի «Վկայություններ և փաստաթղթեր» բա-

¹ Arlen M.J., 1975, 15.

ծինը («Temoignages et documents»), որին հետևում են գիտական ցանկերը:

Ամեն գլխի վերնագրում տրվում է տվյալ հատվածի բովանդակության սեղմ բնորոշումը: Օրինակ, հենց առաջին գլխի վերնագրում կարդում ենք. «Avec ses 29.800 kilomètres carrés la république d'Arménie, qui confine avec la Turquie, la Géorgie, l'Azerbaïdjan et, sur 35 kilomètres seulement, avec l'Iran et le plus petit des États issus de l'Empire soviétique. L'exiguïté de son territoire contraste avec le riche héritage culturel de ce qui fut l'une des plus importantes civilisations du Proche-Orient, déployée sur un espace dix fois plus grand».²

Ինչպես պարզ է դառնում Մահեների գիրքը պատմելու է, թե ինչպես իր պատմական տարածքի 9/10 կորցրած, շատ անգամ բնաջնջման եզրին հասած մի ազգ կարողացել է իր մեջ ուժ գտնել ու մարդկությանը թողել հարուստ մշակութային ժառանգություն: Չնայած պատմական հաճության փոփոխություններին՝ հայկական մշակույթը ծաղկել է մի լեռնոտ երկրում՝ մոտավորապես 300.000 քառակուսի կիլոմետր տարածքի վրա՝ ընկած Սև և Կասպից ծովերի արանքում, տարածվելով մինչև Կովկաս և Միջագետք:

Գրքի 14-րդ էջում դրված է քարտեզ, որը ներկայացնում է պատմական Հայաստանը, ինչպես նաև այսօրվա Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղը: Այդ քարտեզի բացատրականում ասվում է, թե պատմական Հայաստանի տարածքներից առաջին համաշխարհային պատերազմից հետո Կարսի մարզը տրվել է Թուրքիային, Նախիջևանը և Գանձակը՝ Ադրբեջանին, իսկ 1991-ին գլխավորապես հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը (le Haut-Karabagh) Ադրբեջանից անջատվել և հայտարարել է իր անկախությունը:

² Mahé A. et J-P., 2005, 19.

Գիտնականները թվարկում են պատմական Հայաստանի գլխավոր աշխարհագրական վայրերը: Կարևոր լեռներն են՝ Լ'Ararat (5205m), Լ'Aragatz (4095m), et au sud, le Sipan (4176), le Nemrud et le Tendurek. Հայերն իրենց երեք լճերն անվանում են ծով: Դրանք են՝ le lac Sevan, le lac d'Ourmia, le lac de Van:³

Դեռևս մ.թ.ա. III և II հազարամյակներին հայերի երկիրը վտանգվել է թշնամիների ավերումների ու թալանի հետևանքով: Արաքս գետի հովտում է Հայաստանի մայրաքաղաք Երևանը և նույն դաշտում է գտնվում հայերի հոգևոր կենտրոն Էջմիածինը, որը յուրօրինակ առանցք է եղել բոլոր ժամանակների պատմական իրադարձությունների համար:

Գիտնականները փորձում են վերականգնել հայ ժողովրդի ծագումնաբանությունը՝ չմոռանալով հնագույն ժամանակների տարբեր ցեղախմբերի մեծ տեղաշարժերը: ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի I հատորում նախաքրիստոնեական Հայաստանի մասին կարդում ենք. «Այսպիսով, Արմե-Շուպրիայում մ.թ.ա. 652-612 թվականների ժամանակահատվածում թագավորում է հայ-սկյութական ծագում ունեցող ցեղապետ Պարույրը, իսկ Բիայնիլիում VI դարի սկզբներին իշխանության գլուխ է անցնում հայկական Երվանդունի տոհմը»⁴:

Մահեները կանգ են առել նաև Հայաստանի ուրարտական շրջանի պատմության վրա, թվարկել այդ զարգացած երկրի մշակութային ու տնտեսական արժեքները, խոսել կարևոր քաղաքների՝ Տուշպա, Էրեբունի մասին, բնութագրել աստվածների պանթեոնը և լեզուն, տեղադրել ուրարտացիների մշակույթը ներկայացնող նկարներ: Ուրարտուի հարցում էլ նրանք համերաշխ են Հայաս-

³ Նույն տեղում, 14.

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, 1971, 438:

տանի ակադեմիական տեսակետի հետ. «Մ.թ.ա. VII-VI դարերում ուրարտական պետության փլատակների վրա կազմավորվում է հնագույն հայկական պետությունը, որով և նշանավորվում է հայ ժողովրդի ձևավորման ավարտական փուլը»⁵:

Մահեներն էլ Դյակոնովի նման հավատ են ընծայում Քսենոֆոնի «Կյուրոպեդիայի» հաղորդածին՝ Տիգրան Առաջինի մասին. «Ի.Մ.Դյակոնովը նույնպես գտնում է, որ «Կյուրոպեդիայի» Հայաստանին վերաբերող մասի հիմքում ընկած են VI դարի (մ.թ.ա.) պատմական իրական դեպքերը»⁶: Աքեմենյանների արքա Դարեհ Առաջինի Բեհիստունյան արձանագրության մեջ Հայաստանն արդեն հիշատակվում է որպես պետական միավորում: Այս շրջանում Հայաստանի վրա ազդեցություն են թողնում ավեստական լեզուն ու մշակույթը: Դա վկայում է որոշ աստվածների անվանումների և նրանց դերի նմանությունը: Օրինակ գլխավոր ավեստական աստված Ահուրա մազդան (Ahura-Mazda) հայերի մոտ Արամազդ է: Երկու կրոններում էլ բացառիկ դեր ունի Անահիտ աստվածուհին, որը սակայն հայերի մոտ ավելի պաշտված է: Գրքի հեղինակների կարծիքով, եթե հայերենը փոխառել է թրակափոյուզիական (thraco-phrygienne) 400 բառ, ապա իրանական բառերի փոխառությունը հայերենում երկու-երեք անգամ ավելի շատ է, և դրանք գործածվում են ցարդ: Գրքում նկարագրվում է Հայաստանը հելլենիզմի դարաշրջանում: Ներկայացվում են Հայաստանի Արմավիր ու Արտաշատ մայրաքաղաքները: Այդ դարաշրջանի համար վկայակոչվում են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաղորդածները: Ելնելով Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ եղած տեղեկություններից՝ բնութագրվում են

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, 435:

հեթանոս հայերի գլխավոր աստվածները՝ Արամազդ-Ջևադ, Վահագն-Շերակլեսը, և հայերի ամենափրելի աստվածուհին՝ Անահիտը, որին Ագաթանգեղոսը ներկայացնում է հետևյալ կերպ. «Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է ու կենսատուն, որին բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ Հունաց թագավորը: Նա է բոլոր զգաստությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը մեծ, քաջ Արամազդի»⁷: Արտաշես Առաջինը կառուցում է Արտաշատը, որը նշանակում է «La joie d'Artaches», ամրացնում է այն շրջապատող 9 բլուրները հելլենական ճարտարապետության կանոններով:

Առանձին ենթավերնագրով ներկայացված է Տիգրան Մեծը՝ «Tigran II, roi des rois»:

Տիգրան Մեծը հասուն տարիքում է ստանում Հայոց գահը (95-55), նա իրար է միացնում ոչ միայն հայկական պապենական հողերը, այլև կարողանում է հմուտ ձևով ստեղծել հսկայական մի կայսրություն, որը ձգվում է Կասպից ծովից մինչև Միջերկրականի ավերը, մյուս կողմից էլ այն ձգվում էր Կովկասից մինչև Պաղեստին: Նա ստեղծել էր օտարացեղ թագավորությունների մի կծիկ (conglomerat), որի մեջ կային ազատ քաղաքներ՝ սուվերեն իրավունքներով: Նա իր մեծ կայսրության համար հիմնում է Tigranakert⁸ քաղաքը ներկայիս Diyarbekir-ի մոտ. «Peuplée de colons grecs déportés de Césarée de Cappadoce, la ville s'orne d'un théâtre et d'une acropole, où Tigrane devait siéger avec l'administration du

⁷ Ագաթանգեղոս, 1983, 41:

⁸ 2010 թվականին Կիլիկյան Հայաստան ուղևորության ժամանակ տեսել եմ Տիգրան Մեծի կառուցել տված շինությունների մնացորդները Տիգրանակերտում, որոնք փառահեղ էին – Ա.Դ.:

royaume»⁹: Գրքի 27-րդ էջում դրված է Տիգրան Մեծի մետաղադրամը նրա պատկերով, որին կցված է հետևյալ ուշագրավ բացատրությունը. «Le Roi des rois porte une tiare, insigne des Perses achéménides, elle est ornée d'une étoile a huit branches encadrée deux aigles, symbole qui l'élève à un rang céleste et divin»¹⁰. Ճիշտ է մ.թ.ա. 66-ին հռոմեական զորավար Պոմպեոսը Տիգրանից վերցնում է նրա նվաճած տարածքները, սակայն Տիգրանի դիվանագիտական վարպետության շնորհիվ նրան է թողնում Մեծ Հայքը, Տիգրանը նորից մնում է Roi de rois տիտղոսով և համարվում է «ami et allié du peuple romain»¹¹:

Ֆրանսիացի նշանավոր պատմաբան René Grousset-ն հիացմունքով է խոսել Տիգրան Մեծի մասին. «Tigrane, un grand souverain méconnu qui mérite sans doute bien plus que son contemporain Mithridate Eupator l'admiration de l'histoire, si l'on veut bien observer que Mithridate a brillamment «suicidé son empire», tandis que Tigrane a assuré la survie de son peuple pour l'éternité»¹².

Տիգրան Երկրորդի որդի Artavazd II-ը (55-34) սկզբում հասնում է ռազմական հաջողությունների, սակայն գերվում է հռոմեական զորավար Անտոնինոսից, աքսորվում Եգիպտոս և մ.թ.ա. 30-ին մահապատժի է ենթարկվում Կլեոպատրայի հրամանով:

Մինչև Արշակունիների դինաստիայի հաստատումը Հայաստանը դառնում է հռոմապարթևական ազդեցությունների թատերաբեմ: Մահեները հիշատակում են նաև Արտաշեսյանների դինաստիայի թագուհի Էրատոյի մասին, որը խորթ եղբոր և ամուս-

⁹ A. et J.-P. Mahé, 2005, 27.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, 28:

¹² Adoniz N., 1946, VII.

նու՝ Տիգրան IV-ի հետ հաջորդել է հորը՝ Տիգրան Երրորդին, և գահակալել մինչև մեր թվարկության 6-11 թվականները:

Հայ Արշակունիների արքա Տրդատ Առաջինը 54 թվականին հիմնել է հայկական թագավորության նոր գերդաստան: 66-ին հռոմեական կայսր Ներոնը նրան թագադրում է որպես Հայաստանի արքա, և Արշակունիների դինաստիան դիմանում է ժամանակի փորձություններին մինչև 428 թվականը:

«L'organisation social» հատվածում ներկայացված է հայ Արշակունիների սոցիալ-տնտեսական կարգը: Մի թագավորական ընտանիքի շուրջ հավաքված նախարարական տներն ունեին աստիճանական կարգ: Այդ կարգը համապատասխանում էր Պարսկաստանում եղածին: Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենը Արշակունիների հիմնած պետական համակարգը համարում է ֆեոդալական դասական օրինակ. «Si l'on veut comparer l'Europe telle qu'elle était au XII siècle, avec la monarchie fondée en Asie par les Arsacides, trois siècle avant notre ère, partout on verra des institutions et des usages pareils; on y trouvera les même dignités et jusqu' aux même titres, jusqu' a des marquis, des barons, des chevaliers et de simples hommes d'armes»¹³. Հայաստանի հասարակությունը բաղկացած էր իշխաններից (les princes), ազնվականներից (les nobles), et les paysans (chinakan ou ramik). Նախարարները Հայաստանի նահանգների և գավառների սեփականատեր էին: Թագավորական պաշտոնների հիերարխիան բաժանված էր հետևյալ ձևով. «Le titre de sparapet (général en chef) appartient à la famille des princes Mamikonian, ceux d'aspè (chef de cavalerie) et de tagakir (couronneur

¹³ „Journal Asiatique”, 1822, 65-66.

du roi) reviennent aux Bagratouni. Les Gnouni sont échantons de la cour, les Khorkorouni gardes du corps»¹⁴.

Աշխատության երկրորդ գլուխը պատմում է Հայաստանում քրիստոնեության ընդունման, երկրի 387-ին երկու մասի բաժանվելու և հայ գրերի ստեղծման մասին: Գլուխն ունի տպավորիչ վերնագիր «Fastes et malheurs d'une nation chrétienne»¹⁵.

Լեգենդը պատմում է, թե հենց առաջին դարում Քրիստոսի երկու առաքյալները՝ Թադեոսը (Thaddéo) և Բարդուղիմեոսը (Barthélemy) Հայաստանում եղել են քրիստոնեության առաջին տարածողները, դրա համար էլ Հայոց եկեղեցին կոչվում է առաքելական: Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունվել է 301 թվականին: Ովքեր եղել են Վատիկանում, ապա անշուշտ տեսել են Գրիգոր Լուսավորչի՝ աշխարհում առաջին պետականորեն ընդունված կաթողիկոսի մարմարյա արձանը, որը լատիներենով ու հայերենով ներկայացնում է, թե ով է Հայաստանի առաջին կաթողիկոսը:

2005 թվականին Մոնրեալի Աստվածամոր տաճարում բացված մեծ ցուցահանդեսը նվիրված էր Հռոմի Պողոս Վեցերորդ պապի հիշատակին, և այն սկսվում էր մի խոշոր պաստառով, որի վրա գրված էր, թե Հայաստանը առաջին երկիրն է աշխարհում, որ քրիստոնեությունը դարձրել է պետական կրոն: Քրիստոնեության ընդունումը Տրդատ Երրորդի կողմից ունեցել է քաղաքական նշանակություն: Գրքի մեջ պատմվում է Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը, որում երևում են Հռոմի կայսր Դիոկղետիանոսի (Diocletien) և Տրդատ Երրորդի ու գեղեցկուհի Հռիփսիմեի հետ կապված իրադարձությունները, որոնք ավարտվում են նրանով, որ

¹⁴ A. et J.-P. Mahé, 2005, 30.

¹⁵ Նույն տեղում, 33.

Հռիփսիմեն հավատարիմ մնալով Հիսուսի սիրուն՝ նահատակվում է Տրդատ Մեծի հրամանով: Տրդատի և Գրիգոր Լուսավորչի հրամանով Հայաստանում քանդվում են բոլոր հեթանոսական տաճարներն ու սրբատեղիները, և նրանց փոխարեն հենց նույն վայրերում հիմնվում են քրիստոնեական եկեղեցիներ: Էջմիածնի մայր տաճարի հիմքում պահպանված է հեթանոսական մեհյանի պաշտամունքային շինության հիմքը, իսկ քարե պատին միաբանները հատուկ հյուրերին մատնացույց են անում փորագրված այն պարզ խաչերը, որը կատարել է հենց ինքը՝ Գրիգոր Լուսավորիչը: Քրիստոնեության ընդունումից հետո սուրբ Գրիգորը քրմերի որդիներին ուսուցանում է քրիստոնյա քարոզիչներ դառնալու համար: Նորաստեղծ հայոց եկեղեցին միանգամից պայքար էր մղում երեք ճակատներում: Մի կողմից հեթանոսության հաղթահարում, մյուս կողմից պայքար արիստկանության հերձվածի դեմ, երրորդը՝ պարսկական սպառնալիքը: Հայերը շարունակում էին փանդիոների (pandir) նվազակցությամբ երգել Վահագնի կռիվները վիշապների և Բարշամի դեմ (Barchamin). ըստ առասպելի վերջինից հարդ գողանալու հետևանքով առաջացել է Կաթնծիրը (la Voie lactée): Նրանք փառաբանում էին հայերի նախահայր (le père Arméniens) Հայկի (Haïk) կռիվը Բելի (Bel) դեմ, Արա Գեղեցիկի (Ara le Beau) սպանվելը Ասորեստանի թագուհի Շամիրամի (Sémiramès) Հայաստանի վրա հարձակման ժամանակ, չար Արտավազդի (Artavazd) քաջքերի (démons) կողմից բռնվելը և Արարատ լեռան մեջ շղթայվելը: Հեթանոսական այս սովորությունները երբեմն ճակատագրական էին սուրբ Գրիգորի առաջին հետևորդների (successeurs)՝ Արիստակեսի (Aristakes), Վրթանեսի (Vrtanès) և սուրբ Հուսիսկի (saint Yousik) համար, որոնք նահատակվում են: Մահեները կրկնում են այն ճշմարտությունը, թե 387-ին Հայաստանի՝ Բյուզանդիայի և Պարսկաստա-

նի միջև բաժանվելուց հետո քաղաքականապես թուլացած երկիրը ելքը գտավ հոգևոր ուժի մեջ, և ազգային ինքնագիտակցությունը հայ ժողովրդի մեջ ուժեղացնելու համար Հայաստանի լուսավոր անհատները հղացան ազգային գիրը ստեղծելու գաղափարը:

Արշակունի հայ թագավոր Վռամշապուհի (401-417) հովանավորությամբ և Գրիգոր Լուսավորչի վերջին շառավիղ Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոց վարդապետի միացյալ ջանքերով գրերի ստեղծման նախաձեռնությունը պսակվում է հաջողությամբ: 405 թվականին Մեսրոպ Մաշտոցը հայրենիք է բերում իր ստեղծած այբուբենը: 407 թվականին Մաշտոցն ամբողջությամբ թարգմանում է Աստվածաշունչը: Խիստ էական է Մահենների հետևյալ նկատումը. «Il serait faux de croire que les Arméniens avaient jusqu' alors ignoré l'écriture. Depuis Ourartou jusqu' à l'époque romaine, ils ont connu le cuneiforme ourartien, l'araméen, le grec et le latin. Mais l'usage de l'écrit demeurerait limité à la sphère administrative»¹⁶.

Գրքում կա շատ կարևոր նկատում: Մինչ մեսրոպյան այբուբենի ստեղծումը հնուտ հոգևորականները հրնթացս բանավոր ձևով հունարենից և ասորերենից Աստվածաշունչը թարգմանում էին հայերեն. «La nouvel alphabet rendait l'exercice plus aisé»¹⁷.

Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն մեծագույն գիտնական էր, այլև փայլուն կազմակերպիչ: Օգտվելով Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև եղած խաղաղությունից՝ Մաշտոցը Կոստանդնուպոլսում հանդիպում է Թեոդոս II (Théodose II) (401-450) միապետին, որը նրան իրավունք է տալիս Հայաստանի բյուզանդական մասում ուսուցանել նոր այբուբենը. այդ ճանապարհով հայերը փրկվում են ստույգ ձուլումից:

¹⁶ Նույն տեղում, 41:

¹⁷ Նույն տեղում, 42:

Քանի որ միայն Աստվածաշնչի թարգմանությունը բավարար չէր աստվածաբանական գիտելիքների համար, սուրբ Սահակն ու Մաշտոցը իրենց աշակերտներին հանձնարարում են թարգմանել հույն և ասորի հայերի գրքերը: Հետո այդ թարգմանիչները հայ մատենագրության մեջ կոչվեցին «սուրբ թարգմանիչներ» («les Saints Traducteurs»):

Գրքի երկրորդ գլխի մի հատվածը կոչվում է «Tous les savoirs du monde antique»: Այստեղ պատկերված է, թե ինչ եռանդով հայ հոգևորականները հունարենից ու ասորերենից սկսում են թարգմանել հունահռոմեական, ասորական մտքի լավագույն դրսևորումները, և այսօր այդ թարգմանությունները միջազգային արժեք ունեն, որովհետև նրանցից մի մասի բնագրերը կորած են և մնացել են միայն դրանց հայերեն թարգմանությունները: Բացի աստվածաբանական գրքերից հենց V դարում թարգմանվել են նաև աշխարհիկ ստեղծագործություններ, ինչպես, օրինակ, Կեղծ Կալիսթենեսի «Ալեքսանդրի վարքը» («Le Roman d'Alexandre du Pseudo-Callisthène»): V-VII դարերում հայ գիտնականները ստեղծեցին քրիստոնեական ազգային ու թարգմանական գրականության հրաշալի գրադարան: Այդ գրադարանի շնորհիվ ընդմիջտ կորչելուց փրկվել են այնպիսի կարևոր գործեր, ինչպիսիք են La Chronique d'Eusèbe de Cesarée, qui contient tout l'historiographie de l'Orient ancien-Bérose pour Babylone, Manéthon pour l'Égypte et Dios pour la Phénicie-ou encore les Questions sur la Genèse et sur l'Exode du savant juif Philon d'Alexandrie, les œuvres d'Irénée (130-202), premier évêque des Gaules, de nombreux apocryphes de l'Ancien et du Nouveau Testament, des traités antiques de littérature et de rhétorique. D'autres

manuscris arméniens contient d'importants documents traduits du syriaque, de l'arabe, du géorgien, du turc et du mongol.¹⁸

Հայերը բացի հարուստ թարգմանական գրականությունից, ստեղծել են նաև իրենց ազգային պատմությունը ներկայացնող բազմաթիվ գործեր:

Հազկերտ Երկրորդի (Yazgard II) (438-457) գահակալության ժամանակ հայերի առաջ ինդիք է դրվում ընդունել պարսիկների պետական կրոնը՝ զրադաշտությունը (zoroastrisme): Սա հայերին ձուլելու քաղաքականություն էր և վտանգում էր ազգային ինքնությունը: Բարձրացավ հայ ժողովրդի հուժկու ապստամբությունը, որը գլխավորեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, և 451-ի մայիսի 26-ին Ավարայր դաշտում տեղի ունեցավ հայ ժողովրդի հերոսացումը: Զոհվեցին շատ նախարարներ և հենց ինքը Վարդան Մամիկոնյանը՝ հերոսաբար կռվելով պատերազմական փղերով (les éléphants de guerre) զինված ավելի բազմաքանակ գործի դեմ: Դրանից հետո ևս հայերը պարտիզանական կռիվներ մղեցին:

Ավարայրի ճակատամարտում ընկած հերոսներին հայոց եկեղեցին նվիրեց հատուկ Վարդանանց տոն արարողությունը: Բելգիացի Ֆելիքս Ներ շատ ճիշտ է նկատել, թե հայերի այդ պայքարը իրենց **ազգային անկախության** և խղճի ազատության համար նկարագրել են ոսկեդարի երկու հեղինակները՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին:¹⁹

Հայերի երկրորդ ապստամբությունը, որը տեղի է ունեցել 484-ին Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, պսակվեց փայլուն հաղթանակով: Նվարսակի պայմանագրի առաջին երկու

¹⁸ Նույն տեղում, 42-44:

¹⁹ Դոլուխանյան Ա., 2001, 32:

կետերը խիստ կարևոր էին՝ ա) հայերը ստանում էին կրոնի ազատություն, բ) պարսից արքունիքն այլևս չէր խառնվում Հայաստանի ներքին գործերին:²⁰ Այս ապստամբության ժամանակ հայերին օգնեցին վրացիները և հոները (Huns):

Գրքի հեղինակներն էջեր ունեն նաև նվիրված հայ եկեղեցու մաքառումներին՝ ընդդեմ քաղկեդոնականության և կաթոլիկությունը Հայաստանում տարածելուն:

Արաբական արշավանքների սկզբնական շրջանում 651-ին կործանվում է Մասանյան կայսրությունը, արաբներին հաջողվում է գրավել Հայաստանի թե բյուզանդական և թե պարսկական մասը: Վերստին Հայաստանը վերամիավորվում է որպես մեկ երկիր՝ 387 թվականի բաժանումից հետո:²¹ Թեոդորոս Ռշտունու վարպետ դիվանագիտության շնորհիվ հաջողվում է արաբների հետ Հայաստանի համար կնքել շահավետ պայմանագիր և խալիֆաթը ճանաչել որպես հովանավոր: Թեոդորոս Ռշտունին ստանում է իշխանաց իշխան տիտղոսը: VII դարը Մահենները կոչում են հայ ճարտարապետության ոսկե դար: Արդեն VI դարում ներկայիս Հայաստանի տարածքում՝ հետագայի Անի մայրաքաղաքից ոչ հեռու, կառուցվում է Երերույքի (Érérouïk) հրաշակերտ վանական համալիրը: VII դարում է կառուցված ցարդ կանգուն և գործող Հռիփսիմեի (618) տաճարը, Էջմիածնի մոտ գտնվող Զվարթնոցը (650), Արուճի վանքը, Թալինի եկեղեցին, բազմաթիվ ուրիշ եկեղեցիներ ու մահարձաններ: Հայաստանը արաբները համարում են քաղաքակիրթ երկիր, որը դիմադրելու էր հյուսիսից եկող բարբարոս ցեղերի հարձակումներին: Արաբական խալիֆաթի տիրապետության դեմ մղած պայքարում հայերին հաջողվում է վերականգնել

²⁰ Ղ.Փարպեցի, 1982, 391:

²¹ A. et J.-P. Mahé, 2005, 48.

ազգային պետականությունը՝ չնայած արապյան դինաստիան նենգորեն հայ նախարարներին 705-ին կանչում և փակում է Նախիջևան քաղաքի ու Խրամ ավանի եկեղեցիներում և կենդանի այրում: Բագրատունիներն իրենց ձեռքն են վերցնում Հայաստանի անկախության գործը: Բագրատ Բագրատունին (826-851) արդեն խալիֆայթում այնպիսի նշանավոր դիրք ուներ, որ ճանաչվում է իշխանաց իշխան: Աշոտ Առաջինը կամ Մեծը այնքան է կարևորում Բագրատունիների դերը Հայաստանում, որ 884-ին արաբներից ստանում է արքայական թագ: Բյուզանդական կայսրը ստիպված ընդունում է այդ փաստը: Պայքարը նախարարների և տեղական արաբ էմիրների հետ շարունակվում է Սմբատ Առաջին Բագրատունու (890-913) օրոք: Սմբատ Բագրատունու որդուն՝ Աշոտ Երկրորդ Երկաթին (913-928) («le roi de fer») հաջողվում է բյուզանդացիներից ստանալ *roi de rois* տիտղոսը:

Բագրատունիների մայրաքաղաքը դառնում է Ախուրյան գետի ափին գտնվող Անին, որն ուներ հզոր պարիսպներ և XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին անվանում է տիեզերահռչակ քաղաք:²² Մահեները գրում են. «...la ville aux quarante portes, aux cent palais et aux mille églises» devient une mégapole de plus de cent mille habitants»²³.

Վասպուրականում հիմնվում է հակաթոռ հայկական թագավորության Խաչիկ Գագիկ Արծրունու ջանքերով (908-943), որն իր մայրաքաղաքը համարում է Վանա լճի Աղթամար կղզին, ու թագավորական պալատի կողքին ճարտարապետ Մանվելը (Manouel) կառուցում է «Սուրբ խաչ» (église de la Sainte-Croix) եկեղեցին, որը մինչև հիմա կանգուն է: Գրքում գետեղված են Սուրբ Խաչ եկեղեցու

²² Արիստակես Լաստիվերցի, 1971, 92:

²³ A. et J.-P. Mahé, 2005, 61.

գարդաքանդակների և ուրիշ հատվածների տպավորիչ նկարներ: Կան նաև Անիում պահպանված եկեղեցիների նկարներ և հատկապես Անիի կաթողիկե եկեղեցու (la Katoghiké d'Ani) նկարը, որի ճարտարապետն էր 992-ին Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը վերականգնած Տրդատ ճարտարապետը:²⁴

IX դարի վերջին և X դարում Հայաստանում սկսվում է վանական ու կրթական շարժման վերածնունդ: 935-ին Վանա լճի հարավային կողմում հիմնվում է Նարեկա վանքը (le monastère de Narek), որը դառնում է վանական կրթական վերածննդի կարևոր կենտրոններից մեկը: Հենց այդ վանքում է գործել le grand mystique arménien est l'auteur du Livre de lamantation, recueil poétique et visionnaire, mais aussi guide spirituel des fidèles de toutes conditions, qui l'apprenent par cœur, le copient sur des talismans et le récitent en toutes circonstances, quotidiennes ou tragiques, d' l'existence.²⁵

Գրչական և մանրանկարչական արվեստը, որ կար V-VIII դարերի հայոց վանքերում, վերածնվում է Անիի և Սանահինի դպրոցներում, ուր ստեղծվում են փիլիսոփայական դասագրքեր, ուսուցանվում գիտական տարբեր ճյուղեր, ինչպես նաև VII դարի մաթեմատիկոս Անանիա Շիրակացու (Anania de Chirak) աշխատությունները:

Գրքի III գլխի վերնագրում հեղինակները նշում են, թե ինչպես բյուզանդացիների՝ Բագրատունիների թագավորությունը վերացնելու անհեռատեսության պատճառով ազատ դուռ բացվեց սելջուկների, մոնղոլների և ապա թուրքոման ցեղերի համար, որոնք 1453-ին կործանեցին բյուզանդական կայսրությունը և մեծ հարված հասցրին մարդկությանն ու համընդհանուր քաղաքա-

²⁴ Նույն տեղում, 63:

²⁵ Նույն տեղում, 66:

կրթությանը, որովհետև մինչ այդ Հայաստանը այդ քոչվոր ցեղերի առաջ կանգնած էր իբրև պատնեշ:

Բագրատունիների հայ թագավորների շառավիղները անցնում են Վրաստան և այնտեղ հիմնում իրենց թագավորությունը: Թամար թագուհու օրոք հայ իշխաններ Զաքարե Երկայնաբազուկը (Erkaïnabazouk) և նրա եղբայր Իվանեն, որոնցից մեկը երկրի սպարապետն էր, իսկ մյուսը հազարապետը (général en chef Géorgie, principal ministre) կարողանում են սելջուկներից ազատագրել որոշ հայկական տարածքներ և դնել իրենց հովանավորության ներքո: XI-XII դարերում Հայաստանում կառուցվում են և նորոգվում նոր վանական ու կրթական համալիրներ՝ Գեղարդը (Geghard), Հաղարծիհը (Haghardzin), Մանահիհը (Sanahin) և Հաղպատը (Haghat):

Մեծ Հայքի շատ նախարարներ իրենց ընտանիքներով ու իրենց շինականներով ստիպված թողնում են հայրենիքը և գնում Կիլիկիա, ուր հիմնվում է 300 տարի տևած Կիլիկիայի Ռուբինյան հայկական պետությունը: Կիլիկիայի բնակավայրեր Տարսոնը (Tarse), Կորիկոսը (Korykos), Ադանան (Adana) դառնում են հայաբնակ և ծովով աշխույժ կապեր են հաստատում Եվրոպայի հետ. «De la fin du XI^e au milieu du XIII siècle, l'Arménie cilicienne développe une brillante culture qui, tout en préservant ses racines ancestrales, est soudain pénétrée d'influences nouvelles, essentiellement occidentales»²⁶.

Այս փոփոխություններն ազդում են նաև հայոց լեզվի վրա: Չնայած գրական լեզուն գրաբարն էր, սակայն Կիլիկյան Հայաստանի մատենագիրները սկսում են գրել միջին հայերենով՝ ժամանակի խոսակցական լեզվով: Այդ լեզվով իր հանելուկներն է շարադրում XII դարի ամենանշանավոր գրող Ներսես Շնորհալին, իր «Ջերմանց մխիթարութիւնն» («Réconfort de fièvres») է գրում հայտնի

²⁶ Նույն տեղում, 72:

բժշկապետ Մխիթար Հերացին (Mkhitar Heratsi), այդ լեզվով է թարգմանվում «Անտիոքի ասիզները» (Assises de Antioche): Ի դեպ Սմբատ Գունդստաբլի այս թարգմանությունը կարևոր է նաև նրանով, որ նրա բնագիրը կորել է, և գիտական աշխարհին այն հայտնի է միայն հայերեն թարգմանությամբ: XII-XIII դարերում հայերեն են թարգմանվում աստվածաբանական գրքեր լատիներենից: Խիստ զարգանում են գրքարվեստն ու մանրանկարչությունը: Կիլիկյան Հայաստանում հայտնվում են մոնղոլները, որոնք դեռ իսլամը չէին ընդունել և կապեր էին հաստատում քրիստոնյա երկրների հետ: Կիլիկիայի թագավոր Հեթում Առաջինը և նրա եղբայր Սմբատ Գունդստաբլը (le connétable Smbat) երեք տարով ճամփորդություն են կատարում Մոնղոլիայի մեծ խանին Կարակորումում հանդիպելու համար (1253-1256): Մահմեդականների հարձակումներից Կիլիկյան հայկական թագավորությունը մարում է, և նրա վերջին թագավորը՝ Լևոն VI Լուսինյանը գերի է տարվում Կահիրե (Caire): Գերությունից ազատվելուց հետո կյանքն ավարտում է Փարիզում և 1393-ին թաղվում է Փարիզի Saint Denis բազիլիկում՝ Ֆրանսիայի թագավորների կողքին: Կիլիկիայի թագավորության անկումը ծանր հարված էր ողջ հայության համար: Կիլիկիա էր տեղափոխվել Հայոց կաթողիկոսական աթոռը, որը սկզբում Հռոմկլայում էր, ապա տեղափոխվում է Միս մայրաքաղաք:

Հայաստանը վերստին դառնում է կովախնձոր օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի ձեռքին: 1604 թվականին պարսից Շահ Աբասը տեղահանում է Արարատյան մեծ նահանգը և բռնի ձևով հայերին տեղափոխում Պարսկաստան՝ իր երկրում առևտուրն ու արհեստները զարգացնելու նպատակով: Տեղահանվում է նաև Ջուղա վաճառաշահ քաղաքը, որի վերապրած 4.000 բնակիչները Իսպահանի մոտ հիմնում են Նոր Ջուղա (Nor Djougha)

քաղաքը. «Les Arméniens sont bientôt présents à toutes les étapes des grandes routes commerciales menant de la Chine et des Indes vers la Russie, la Méditerranée, l'Europe occidentale et la mer du Nord»²⁷. XVII դարի կեսերին մոտ 60.000 հայեր կային Կոստանդնուպոլսում, 8.000 Չմյունհայում, 20.000 Հալեպում, 14.000 Թիֆլիսում և 50.000 Նոր Ջուղայում: Նրանց մեջ կային հարուստ ու հայտնի վաճառականներ, որոնց կոչում էին խոջաներ (les khodjas): Նրանց նավերը Պարսից ծոցից հասնում էին Հնդկական օվկիանոս: Հայ վաճառականները իսլացի էին. որպեսզի ազատվեին օսմանյան Թուրքիայի ծանր հարկերից, նրանք փոխում են իրենց ճանապարհը և ապրանքները տանում են Կասպից ծովով, Աստրախանով և հասնում Արխանգելսկ, ուր նրանց սպասում էին հոլանդական նավերը: Տուրքերից ազատվելու համար Նոր Ջուղայի հայ վաճառականները Alexei Mikhaïlovitch ցարին նվիրում են ադամանդներով զարդարված փղոսկրյա շքեղ գահ, որից հետո ազատվում են բոլոր տուրքերից: Այդ գահը այժմ ցուցադրվում է Մոսկվայի զինապալատում: 1680-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում արդեն ապրում էին չորս հազար հայեր:

Հայերը միշտ սեր են ունեցել դեպի գիրքը, և քանի որ Թուրքիայի սուլթան Բայազիդ Երկրորդը (Bâyazid II) (1447-1512) արգելել էր գիրք տպագրելը և դրա համար սահմանել էր մահապատիժ, ապա հայկական I տպարանը հիմնվում է Վենետիկում 1512-ին Հակոբ Մեղապարտի կողմից: Գրքում թվարկվում է այն հարուստ ցանկը, որը ներկայացնում է, թե XVI և XVII դարերում աշխարհի տարբեր երկրներում ինչ հայկական տպարաններ են հիմնվել և ինչ գրքեր են տպագրվել: XVI-XVII դարերի աշխարհի հայ տպագրական կենտրոնների մասին գրում է նաև Ստեփանոս Նազար-

²⁷ Նույն տեղում, 83:

յանը, եզրակացնելով, թե նման երևույթ դժվար է գտնել աշխարհի այլ ժողովուրդների տարեգրություններում:²⁸ Հայկական տպարանները նշված դարերում գործել են Հոլանդիայում, Մաքսոնիայում, Անգլիայում, Լեհաստանում, Կոստանդնուպոլսում, Ջմյուռնիայում, Մադրասում, Նոր Ջուղայում, Մարսելում, Վենետիկում, Մալթայում, Էջմիածնում և այլ վայրերում:

Գրքի չորրորդ գլխում ներկայացված է, թե ինչ կարևոր դեր է կատարել հայ մշակույթի ու կրթության բնագավառում 1717-ին Վենետիկի մոտ գտնվող սուրբ Ղազար կղզում հիմնված Մխիթարյան միաբանությունը և նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացին (1676-1749):

Չնայած ազգային ճնշումներին՝ օսմանյան կայսրության մեջ հայերն իրենց աշխատասիրությամբ ու գիտելիքներով հասնում են որոշակի դիրքի և առաջանում է ամիրաների (amira) ժառանգական փոխանցվող դասը: Սա մի խավ էր քրիստոնյաների համար, որը բեկ կոչվելու իրավունք չունեի: Ղրիմի պատերազմից հետո (1854-1855) Բանկ օտոմանը տեր է դառնում Արևմուտքի հետ ընթացող ֆինանսական գործերին: Հայ ամիրաները ստանում են դրամ դրոշմելու մենաշնորհը, զբաղվում են ակնագործությամբ ու վառողի արտադրությամբ: Հայերի միջից էին ընտրվում մտավորականների տարբեր խավերը՝ բժիշկներ, ճարտարապետներ, ինժեներներ, փաստաբաններ, որոնք սովորել էին Մխիթարյանների մոտ ու Եվրոպայի համալսարաններում: 1860 թվականին հայերին իրավունք է տրվում ունենալ իրենց սահմանադրությունը («Réglement de la nation arménienne» qu'on qualifiera bientôt de «constitution national»)²⁹:

²⁸ Նազարյան Ստ., 1996, 10:

²⁹ A. et J.-P. Mahé, 2005, 91.

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանը ենթարկվում է Պարսկաստանին, սակայն Ղարաբաղի մելիքները դիմում են ռուսական ցարին իրենց ազատագրման համար: 1826-1828թթ. ռուսպարսկական պատերազմի շնորհիվ Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին: Արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին (Nersès d'Achtarak) (1770-1856) կոչ է անում բոլոր հայերին միանալ ռուսական զորքին և ազատագրել Հայաստանը: Պատահական չէ, որ ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը նրան անվանում է **«փիլոն հագած Գարիբալդի»**³⁰:

Այս երևույթը հույս ներշնչեց, որ օսմանյան կայսրության հայերը ևս կազատագրվեն: Թուրքական լծի դեմ պայքար սկսվեց Բալկաններում և Մագրեբում (Maghreb): Թուրքիան չակերտավոր բարելավման խոստում տվեց հայերին: Հայերն իրենց օրինական ազգային շահերը պաշտպանելու համար ստեղծեցին կուսակցություններ՝ դաշնակ (Dachnak), հնչակ (Hintchak):

Հայերի վիճակն առավել ծանրացավ Աբդուլ Համիդ II-ի (1876-1909) (Abdülhamid II) կառավարման ժամանակ: 1894-1896 թվականներին նրա հրամանով 300.000 հայեր կոտորվեցին: Մահեները բերում են ֆոտո փաստաթղթեր այդ ջարդերի վերաբերյալ: Բալկանյան ազգերն արդեն ազատագրվել էին թուրքական լծից, Թուրքիայում այլադավան ու այլազգի տարր մնացել էին միայն հայերը, որոնցից անհրաժեշտ էր ազատվել:

Մահեները խիստ տեսանելի և ազդեցիկ ներկայացնում են, թե ինչ դաժանությամբ հայկական հարցը լուծեցին երիտթուրքերը, որոնք օգտվելով 1914 թվականին I համաշխարհային պատերազմից, կազմակերպեցին Արևմտահայաստանի բնիկ տերերի ցեղասպանությունը: Նախ ոչնչացրին Կոստանդնուպոլսի հայ մտավո-

³⁰ Macler F., 1917, 216.

րականներին, հետո թուրքական բանակում ծառայող բոլոր հայ տղամարդկանց: Քաղաքներից ու գյուղերից բռնի դուրս հանեցին հայ բնակիչներին՝ ոտքով ու քաղցած քշելով Սիրիայի Դեր Ջոր անապատ: Այդ ոչնչացումն արվում էր տեղահանման պատրվակով:

Մահեներն իրենց գրքով պահանջում են, որ աշխարհի պետություններն ընդունեն հայերի ցեղասպանությունը, որին զոհ գնացին 1.500.000 անմեղ հայեր: Բերվում է այն պետությունների ցանկը, որոնք մինչև 2005-ը արդեն ընդունել են այդ՝ Ֆրանսիա, Ռուսաստան, Հունաստան, Բելգիա, Շվեդիա, Իտալիա:³¹

«L'Arménie à l'épreuve des siècles» գրքի վերջին գլուխը նվիրված է XX դարում ստեղծված Հայաստանի երեք հանրապետություններին: Հայաստանի առաջին հանրապետությունը հիմնեցին հայ հեղափոխական դաշնակցականները: Գրքում բերված են նրանց առաջին դեմքերի՝ Ռոստոմ Ջորյանի, Քրիստափոր Միքայելյանի և Միմոն Զավարյանի նկարները: Թուրքիան 1918 թվականի հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Չնայած քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններին՝ սով, հիվանդություններ, պատերազմական վիճակ Թուրքիայի հետ, հայերն իրենց մեջ ուժ գտան զբաղվել իրենց այնքան հատուկ հոգևոր կյանքով: Նրանք հայերենը հայտարարեցին պետական լեզու, 1920 թվականին բացեցին համալսարան, կրթությունը բոլորի համար ձրի էր: Բացվեցին թանգարաններ, թատրոններ, գրադարաններ, երաժշտական դպրոցներ: Միակ երկիրը, որ անհատույց հայերին օգնություն ցուցաբերեց, ԱՄՆ էր, որ նվիրեց 20 միլիոն դոլար՝ հայերին աղետից փրկելու համար:

³¹ A. et J.-P. Mahé, 2005, 103.

Հայկական հարցում ճակատագրական առումով նենգ դեր խաղացին բոլշևիկներն ու Մուստաֆա Քեմալը (Mustafa Kemal)։ Վերջինս զինելով ադրբեջանցիներին՝ փորձեց Հայաստանից պոկել Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը։ Փաստորեն 95% հայ բնակչություն ունեցող հայկական հողերը պետք է տրվեին Ադրբեջանին։

1920 թվականի վերջին Հայաստանում հաստատվում են բոլշևիկները, և սկսվում է Հայաստանի խորհրդային հանրապետության շրջանը, որը տևում է մինչև 1991 թվականը։

Խորհրդային տարիներին խիստ սահմանափակվում են հայ եկեղեցու իրավունքները. քանդվում են շատ եկեղեցիներ կամ վերածվում պահեստների։ Հայ եկեղեցու հոգևոր կենտրոնի և կաթողիկոսի իրավունքները խիստ սահմանափակվում են, նույնիսկ Խորեն կաթողիկոսին 1938-ին Tcheke-ն սպանում է։ Այդ հալածանքները վերանում են միայն 1945-ին, երբ Ստալինն ընդունում է արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին և կատարում նրա բոլոր պահանջները։ Էջմիածինը իրավունք է ստանում բացել ճեմարանը, ունենալ իր տպարանն ու ամսագիրը, հայեր ընդունել արտասահմանից, խորհրդային բանկում ունենալ վայրուտա պահելու իրավունք։ Չնայած ստալինյան բռնություններին՝ գիտությունն ու մշակույթը Հայաստանում սկսում են ծաղկել։ 1943-ին Հայաստանում բացվում է Ազգային ակադեմիա իր բազում ինստիտուտներով, բացվում է Մատենադարանը, ուր հավաքվում են բազմաթիվ հայկական ձեռագրեր, ստեղծվում են տարատեսակ բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Մինչ 1937-ի բռնությունները Հայաստան են հրավիրվում նկարիչ Մարտիրոս Մարյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, բանաստեղծներ Եղիշե Չարենցն ու Ավետիք Իսահակյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը,

պատմաբան հակոբ Մանանդյանը, ճարտարապետ Թորոս Թորամանյանը և այլ նշանավոր մտավորականներ:

XX դարի 60-ական թվականներին Ն.Խրուշչովի շնորհիվ մտավորականությունը ստանում է մտքի ազատություն, որը հետագայում նորից սանձահարվում է, և դա զգալի է դառնում բանաստեղծ Պարույր Սևակի կասկածելի մահով:

Մահեները գրեթե ականատեսի ճշգրտությամբ ներկայացնում են Ղարաբաղյան շարժման ազատագրական բնույթը: Պրոբլեմ, որը ցայսօր չի գտել իր արդարացի լուծումը, որովհետև դարձյալ գործում է Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը, ցեղասպանությունը մերժելու մոլուցքը:

Ահա թե ինչ են գրում Մահեները ղարաբաղյան խնդրի լուծման հայկական կողմի ջանքերի վերաբերյալ. «Pourtant, dès le début de sa présidence en 1991, Ter-Petrosian s'efforce de régler le conflit avec l'Azerbaïdjan et de normaliser les relations avec la Turquie. Acceptant que le génocide ne soit pas mentionné dans la constitution arménienne, il se déclare prêt au dialogue sans aucun préalable. Comme un accord global sur le statut du Karabagh se révèle trop difficile, il propose de procéder par paliers. Accusé par ses adversaires de faire trop de concessions pour parvenir à la paix, il est contraint de démissionner en 1998. Défendant une position plus intransigeante, son successeur, Robert Kotcharian, n'a guère amélioré la situation»³².

Գրքում ներկայացվում է, թե ինչպես Մ.Գորբաչովի պերեստրոյկան պատճառ դարձավ Ադրբեջանի արդյունաբերական քաղաք Սումգայիթի հայերի դաժան կոտորածին, նաև Բաքվի, Կիրովաբադի հայերի կոտորածին ու բռնի տեղահանմանը: Խորհրդային բանակը և Գորբաչովը հայերին չպաշտպանեցին՝

³² Նույն տեղում, 123-124:

ավելի մեծացնելով 1988-ի դեկտեմբերի Սպիտակի աղետալի երկրաշարժին հաջորդող հարվածները: Այս ամենը հաստատվում է նոր փաստերով:

2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 4-ը Ադրբեջանը ագրեսիա կազմակերպեց Լեռնային Ղարաբաղի դեմ: Հայերը հերոսաբար ու նահատակների կյանքի գնով պաշտպանեցին իրենց պապենական հողը՝ հաստատելով, թե Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի կազմում:

Գրքի հեղինակները ներկայացնում են, թե ինչպես հայերը սրբորեն պահպանում են 1915 թվականի ցեղասպանության մեկ ու կես միլիոն հայերի հիշատակը, և Հայաստանում ապրիլի 24-ը հավերժորեն հայտարարվել է սգո օր: Այդ օրը հարյուր հազարավոր հայեր ծաղիկներ են դնում Ծիծեռնակաբերդում կանգնեցված եղեռնի հուշարձանի մշտավառ կրակի մոտ: Եղեռնից վերապրածները չնոռացան իրենց պատմական հայրենիքը և անգամ օտար երկրներում պահպանեցին իրենց հայկական ինքնությունը: Եղեռնից հետո աշխարհը ճանաչեց այնպիսի նշանավոր հայերի, ինչպիսիք էին նկարիչներ Մարտիրոս Մարյանը, Արշիլ Գորկին, կոմպոզիտորներ Կոմիտասն ու Արամ Խաչատրյանը:³³

Գրքում խոսվում է Մուսա լեռան հերոս պաշտպանների, եղեռնը վերապրած հայերի Նանսենյան անձնագրերի, Սևրի և Լոգանի պայմանագրերի, հայերի ցեղասպանությանը վերաբերող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հրաշալի գրքի, Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմի մասին, որում խաղում է Շառլ Ազնավուրը:

Վկայություններ և փաստաթղթեր բաժնում ներկայացված են հայերի ծագումնաբանությունը ներկայացնող բանահյուսական նյութեր, մի փոքրիկ հատված Ակսել Բակունցի «Մթնաձոր»

³³ Նույն տեղում, 127:

պատմվածքից, Թովմա Արծրունու պատմության Սասունի բնակիչների կենցաղն ու հայրենասիրությունը ներկայացնող հատվածը, Հայկի առասպելը ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», «Սասնա ծռեր» էպոսից Ֆրեդերիկ Ֆելդիի թարգմանության մի կտոր, Գրիգոր Նարեկացու «Livre de lamantation» հանճարեղ երկի մի մաս՝ այս գրքի հեղինակների թարգմանությամբ, Ֆրիկի «Գանգատի» մեջ արտահայտված ցասումնալի բողոքը հայերի դառը ճակատագրի համար և տարբեր ազգերի նշանավոր մարդկանց ներկայացրած փաստերն ընդդեմ թուրքերի 1915 թվականի հայոց ցեղասպանության: Վերջում բերվում են XX դարավերջի արևելահայ և արևմտահայ երկու հեղինակների՝ Հրանտ Մաթևոսյանի ու Ջարեհ Խրախունու խոստովանությունները իրենց արմատները Նոյի ժամանակների մեջ տեսնելու վերաբերյալ:

Գիրքն ավարտվում է «Les Arméniens en France» հատվածով, որից երևում է հայերի անսահման սերը դեպի Ֆրանսիան ու նրա մշակույթը: Ֆրանսիայում արմենոֆիլ շարժումը դեկավարել է Պողոս Նուբար Փաշան: Այդ շարժմանը հարել են այնպիսի նշանավոր ֆրանսիացիներ, ինչպիսիք են Anatole France-ը, Romain Rolland-ը, Frédéric Mistral-ը և շատ ուրիշներ: Ֆրանսիական ժողովրդին հայ գրականությանն ու մշակույթին ծանոթացնելու գործում մեծ դեր է կատարել Արշակ Չոպանյանը (1872-1954): Ֆրանսիայի հասարակությանը ծանոթացրել է հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, գրականությանը: Հայերի անհատական ներգաղթը դեպի Ֆրանսիա սկսվել է XII դարում, խաչակրաց արշավանքները նպաստել են ֆրանս-հայկական կապերի մեծացմանը: Հայերը 1922 թվականի մեծ ներգաղթից հետո սկսել են ինտեգրվել ֆրանսիական կյանքին: Ֆրանսիայի նշանավոր հայերից է Անրի Թրուայան:

«L'Arménie à l'épreuve des siècles» գրքում կան պատմական փաստերի որոշ վրիպումներ: Չգիտես ինչու Տրդատ III-ը, որի ջանքերով քրիստոնեությունը դարձել է պետական կրոն, ներկայացված է Տրդատ IV, Վահան Մամիկոնյանի հայրը Վարդան Մամիկոնյանն է, Հմայակ Մամիկոնյանի փոխարեն, Գրիգոր Նարեկացու ծննդյան թվականը 955-ն է և այլն: Սրանք գուցե պարզ վրիպումներ են:

Աննի և Ժան-Պիեռ Մահեի կարծիքով Մովսես Խորենացին VIII դարի պատմիչ է և ոչ թե՛ V: Այս կարծիքը չեն ընդունում այնպիսի նշանավոր հայագետներ, ինչպիսիք են Վիկտոր Լանգլուան, Ֆրեդերիկ Կոնիբերը, Ֆրեդերիկ Մակլերը, Ժան-Պիեռ Մահեի սիրելի ուսուցիչ Ֆրեդերիկ Ֆեյդին, Հայաստանի ակադեմիական պատմագրությունը, Վենետիկի Մխիթարյանները:

«L'Arménie à l'épreuve des siècles» գիրքը հրաշալի նվեր է հայ ժողովրդին և ցանկալի է, որ գիրքն անպայման թարգմանվի ու տպագրվի անգլերեն, որպեսզի տարբեր ազգերի կրթված մարդիկ փաստացի իմանան, թե ինչ է նշանակում Հայաստան և ովքեր են հայերը:

BIBLIOGRAPHY

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983
2. Adonx N., Histoire d'Arménie (Les origines du X^e siècle au VI (Av. J. C.), Preface de René Grousset de l'Academie Française, Paris, 1946
3. Arlen J. M., Passage to Ararat, New York, 1975
4. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971

5. Դոլուխանյան Ա., Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագրությունը, Երևան, 2001
6. «Journal Asiatique», Paris, 1822, Août
7. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971
8. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982
9. Macler F., Autour de l'Arménie, Paris, 1917
10. Mahé A. et J.-P., L'Arménie à l'épreuve des siècles, 2005
11. Նազարյան Ստ., Երկերի ժողովածու, Երևան, 1996

**բ) ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՆՈՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ
ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱՀՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ**

Խիստ շնորհակալ գործ է կատարել Ժան-Պիեռ Մահեն իր կնոջ՝ նույնպես եռանդուն հայագետ Աննի Մահեի հետ՝ ֆրանսիացիներին և ֆրանսախոս երկրների գիտնականներին մատուցելով հայ պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» նոր և ընտիր թարգմանությունը՝ կցված ընդարձակ (91 էջ) առաջաբանով ու հարուստ ծանոթագրություններով:¹

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» առաջին անգամ ֆրանսերեն ամբողջական թարգմանել է հայ միջնադարյան մատենագրության ու պատմության լավագույն հետազոտողներից մեկը՝ Վիկտոր Լանգլուան: Այն լույս է տեսել հայագետի մահից հետո՝ Փարիզում, 1869-ին:²

Ժան-Պիեռ Մահեն իր ընդարձակ առաջաբանի վերջում գետեղել է „Notice sur la traduction et les notes” («Տեղեկություն թարգմանության և ծանոթագրություններ») հատվածը, որում հայտնում է, թե իր թարգմանությունը հիմքում ունի 1913 թվականին Թիֆլիսում տպագրված Մ.Խորենացու երկի քննական բնագիրը, որը նմանահանությամբ վերահրատարակվել է 1991 թվական

¹ Sté u Moïse de Khorène, Histoire de l'Arménie, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes, Gallimard, Paris, 1993.

² Collection des historiens anciens et modernes de l'Arménie par Victor Langlois, t. II, Première période, Historiens Arméniens du cinquième siècle, Paris, 1869.

նին Երևանում:³ Բնականաբար, ֆրանսերեն նոր թարգմանության մեջ հաշվի են առնված Ա.Սարգսյանի ձեռագրական նոր նկատումները: Ժ.-Պ. Մահեն միաժամանակ հաշվի է առել Ստ. Պալասանյանի աշխարհաբար թարգմանությունը⁴, որի հիման վրա Մ.Մինասյանը Ժնևում 1991-ին տպագրել է «շատ պատշաճ դիտողություններ» („de remarques très pertinentes”) և Ռոբերտ Թոմսոնի Մ.Խորենացու պատմության անգլերեն թարգմանությունը:⁵

Բոլորովին հասկանալի չէ, թե ինչու հայերեն և այլ լեզուներով Մ.Խորենացու պատմությունը Հայաստանի պատմություն խորագիրն ունի, իսկ Թոմսոնի մոտ «Հայերի պատմությունը», Լը Վալան դը Ֆլորիվալն այն կոչել է „Histoire d'Arménie”, առաջնակարգ հայագետ Մկրտիչ Էմինը՝ „История Армении”, Ժան-Պիեռ Մահեն՝ „Histoire de l'Arménie” և այլն:⁶

Վիկտոր Լանգլուայի թարգմանության առաջաբանում վերջինս հայ պատմահորը ներկայացնում է հայկական ավանդական տեսակետից: Խորենացին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտն էր, որը պարապել էր Ասորիքի նշանավոր կենտրոն Եդեսիայի դիվանում, եղել Անտիոքում, ուսանել Ալեքսանդրիա-

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի, Նմանահանություն, Լրացումները Ա.Բ.Սարգսյանի, Երևան, 1991:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:

⁵ Moses Khorenats'i, History of the Armenians, Translations and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, revised edition, Caravan Books, Ann Arbor, 2006.

⁶ Մովսես Խորենացու երկերի մատենագիտության մեջ Պետրոս Հովհաննիսյանը ներկայացրել է պատմահոր գլուխգործոցի բոլոր այլալեզու տվյալները (Տե՛ս Պ.Հովհաննիսյան, Մովսես Խորենացի Մատենագիտություն, Երևան, 2013, էջ 26-42):

յում, այցելել էր Բրյուզանդիոն, Աթենք ու Հոմ:⁷ Մովսես Խորենացին և նրա հետ արտասահման մեկնած աշակերտները լքվել էին իրենց հայրենակիցների անհոգությունից: Մովսեսն էլ իր կյանքի տասը տարիներն անց էր կացրել միայնության ու աղքատության մեջ: Նրան այդ վիճակից հանել է Գյուտ կաթողիկոսը, որը դարձել էր հայոց կաթողիկոս և իր ուսանող ընկերներին հավաքել շուրջը:⁸ Լանգլուան նշում է, թե Եզնիկ Կողբացու մահից հետո Խորենացին նշանակվել է Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս: Ըստ Լանգլուայի՝ Խորենացին իր գլխավոր գործը գրել է Սահակ Բագրատունու խնդրանքով՝ օգտվելով հունական, ասորական, քաղդեական, ազգային և աստվածաշնչային աղբյուրներից: Նա լայն բազմագիտական շնորհիվ և քերթողի տաղանդով արտոնություն է ստացել կոչվելու իր ազգի պատմահայրը:⁹ Լանգլուան նշում է, որ արտագրողները ձևափոխել են Խորենացու պատմությունը՝ հավելելով հասվածներ, որոնք չեն եղել նախնական բնագրում:¹⁰

Այստեղ տեղին է հիշատակել ռուս հին գրականության գերագանց մասնագետ Դմիտրի Լիխաչովի մի կարևոր նկատումը հին պատմական ձեռագրերի վերաբերյալ. «Առավել մեծ աստիճա-

⁷ Collection des historiens... p. 47.

⁸ Նույն տեղում: Ս. Գյուտ Ա Արահեզացի: Մովորել է Սահակ-Մեսրոպյան դպրոցում, ուսումը կատարելագործել է Հունաստանում: Հայոց կաթողիկոս է եղել 461-478թթ.: Մասնակցել է 449-ի Արտաշատի ժողովին: Հովանավորել է պարսկական արքայից վերադարձած նախարարներին և մյուս հայրենասեր ուժերին (Տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ՝ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 32):

⁹ Collection des historiens... p. 48. „Moise doit le privilège d'être classé à la tête des historiens de sa nation”.

¹⁰ Նույն տեղում, p. 49.

նի վերամշակման է ենթարկվել աշխարհիկ գրականությունը՝ առաջին հերթին պատմագրությունը:¹¹

Լանգլուան իրավացիորեն նշում է, թե Խորենացին առաջին պատմիչն է, որ մանրամասնում է իր ազգի ծագումը: Բոլոր հետագա հայ պատմիչները հետևում են Մովսես Խորենացու գրած հայ ազգի ծագումնաբանությանը: Այնուհետև հայագետը բարեխղճորեն թվարկում է այն բոլոր թարգմանությունները, որոնք կատարվել են իր թարգմանությունից առաջ՝ սկսելով շվեդ Հենրի Բրեններից:¹² Թարգմանությունների մեջ հիշատակվում են երկու իտալերեն թարգմանությունները և Հ.Հովհաննիսյանի ու Մ.Էմինի ռուսերեն թարգմանությունները:¹³

Ժան-Պիեռ Մահեի առաջաբանն ունի բազմաթիվ հետաքրքիր բաժիններ: Առաջին հատվածից են հետևյալները՝ «Մովսես Խորենացին ինքն իր մասին», «Միջնադարյան վկայություններ հեղինակի և նրա գործի մասին», «Մովսեսի մասին բացահայտումներն Արևմուտքում», «Աղբյուրների քննադատություն և բանավեճեր «Հայոց պատմության» ստեղծման ժամանակի վերաբերյալ», «Ազգագրություն և բանահյուսություն», «Հնագիտական հաստատումներ», «Հայոց պատմության» շարադրման կառուցվածքը:¹⁴

Այս խորագրերից առաջ ասվում է, թե Մովսես Խորենացին, այսինքն՝ Մովսես Խորենը կամ Խորեանը, անունն է մի քերթողի, որի «Հայոց պատմությունը» սկսած հայերի ծագումից, սկզբնավորվում է, ըստ նրա, բարելոյան աշտարակաշինությունից առաջ

¹¹ Д. С. Лихачев при участии А. А. Алексеева и А. Г. Боброва, Тектология на материале русской литературы X-XVII веков, Издание третье, переработанное и дополненное, Санкт-Петербург, 2001, с. 395.

¹² Collection des historiens..., p. 51.

¹³ Նույն տեղում, էջ 52:

¹⁴ Moïse de Khorène, Histoire de l'Arménie, p. 9-24.

և հասնում է մինչև 439 թվականը՝ հայոց այբուբենի ստեղծող և Աստվածաշնչի թարգմանիչ սուրբ վանական Մեսրոպ Մաշտոցի մահը:¹⁵

Ժան-Պիեռ Մահեի առաջաբանի երկրորդ մասը բաժանված է հետևյալ խորագրերի՝ «Պատմություն և առասպել. Մովսեսը Հունաստանի և Իրանի միջև», «Պաճուճանք և հանդես»: Այս հատվածն ունի իր հերթին երկու ենթաբաժիններ. ա) «Պատմիչի և նրա մեկենասի երկխոսությունը», բ) «Մովսեսը պալատական մատենագիր», գ) «Հավակցյուտ գրքերի որոնումը», դ) «Մատենագիտական կեղծի՞ք, թե՞ պատմական կեղծիք»:

Մույն առաջաբանի երրորդ հատվածը կոչվում է՝ «Հայոց պատմությունը» բորգեզյան պարադոկսի ձևով:¹⁶ Այս բաժնի ենթահարցերն են՝ ա) «Հնարանքի երեք շրջանակներ և պատմելու երեք աստիճաններ», բ) «Իրական գրքեր, թե պատրանկար պաճուճ», գ) «Մի պատմություն խոսող ուրի՞շ գրքերի կամ տարաշխարհի մասին»:

Հռոմեական թվակարգով III բաժինը կոչվում է՝ «Մովսես Խորենացին և պատմությունը»: Այս հատվածի բաժիններն են՝ «Հայոց պատմության» բանավոր և գրավոր աղբյուրները», «Ստեղծագործության պատմական արժեքը»: Նույն խորագրի ներքո կան հետևյալ բաժինները՝ «Ընկերական և հիմնական օրենքների տեղեկությունների հանգամանքը», «Մովսեսը և Հայաստանի լեզվական

¹⁵ Նույն տեղում, ք. 9.

¹⁶ Պարադոկս – օտարոտի միտք (տե՛ս Մտ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Չ-Ֆ, Երևան, 2010, էջ 76), paradoxe – նորոթիանակ՝ զարմանալի նորակերպ, նորալուր կարծիք, տարակերպություն (տե՛ս Բառարան ֆրանսերէնէ հայ-աշխարհիկ, յօրինեց Մեսրոպ Նուպարեան, Կ.Պոլիս, 1892, էջ 728):

անցյալը», «Համընդհանուր հիշողությունը և պատմական ոճավորումը»:

Ծավալուն բաժնից հետո դրվում է հետևյալ խորագիրը՝ «Հայոց պատմության» քաղաքական նպատակները»: Խորագրի տակ Ժան-Պիեռ Մահեն գրում է. «Ճշտենք այժմ այն նպատակները, որ կարող էր ունենալ Մովսեսը՝ գրելով իր պատմությունը»¹⁷: Այս հատվածում կան հետևյալ ուշագրավ վերնագրերը՝ «Փառավոր անցյալը և թշվառ ներկան», «Գովեստ Բագրատունիների թագավորական միապետության և գահասիրության», «Ժամանակագրության բազմադիմությունը»: Առաջաբանն ավարտվում է համառոտ ամփոփումով:¹⁸ Իսկ ամփոփումն ավարտվում է հետևյալ հավատով. «Կգա մի օր, երբ բոլոր գիտաճյուղերի առաջընթացը կբերի պրոբլեմի այնպիսի մի լուծում, որը կհամարվի վերջնական: Ենթադրենք, հասու կլինեն առաջ քաշելու բոլորովին տարբեր վարկած: Օրինակ, այնպիսին, որ V դարի հեղինակը հետո վերամշակվել է, ինչպես եղել է Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու և հաստատուն ձևով Կորյունի հետ, եթե հաշվի առնենք «համառոտ խմբագրությունը»:

Բավական է հետաքրքրությամբ և հիացմունքով, բայց նաև անհրաժեշտ մեծարանքով սպասելու այն հոյակապ գովեստին, ըստ որի Քերթոզահայրը տվել է իր ազգի ծագման պատմությունը»¹⁹:

Թվում է, թե այդ ժամանակը եկել է: 2015 թվականի մարտի 10-ին Nicholas Wade-ը տպագրել է «Հայերի ծննդյան ժամանակը՝ տրված V դարում» հաղորդումը, որը հաստատվել է հայերի և

¹⁷ Moïse de Khorène, Histoire de l'Arménie, p. 86.

¹⁸ Նույն տեղում, p. 91.

¹⁹ Նույն տեղում, p. 91.

պատմական Հայաստանի ու նրան հարող բնակավայրերի տեղաբնակների արյան գենետիկ քննությամբ: Գիտական արդյունքները վկայում են, որ Մովսես Խորենացին ճշտորեն նշել է հայերի՝ որպես ազգ ձևավորվելու ճշգրիտ թվականը, որն է՝ Ք.ծ.ա. 2492-ը.²⁰

„Moses Khorenatsi, a historian in the fifth century, wrote that his native Armenia had been established in 2492 B.C., a date ususally regarded as legendary though he claimed to have traveled to Babylon and consulted ancient records. But either he made a lucky guess or he really did gain access to useful data, because a new genomic analysis suggests that his date is entirely plausible”²¹.

Գերմանական բանասիրության մեջ XIX դարում խիստ տարածված էր գիտական խնդիրներում կասկածել ամեն ինչում: Անշուշտ, հետևելով դրան, Գրիգոր Խալաթյանցն էլ, որը կրթվել էր Գերմանիայում²², 1896-ին տպագրեց «Հայոց վեպը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» խիստ վարկածաշատ գիրքը²³, որում հայ պատմահորը համարում է կեղծարար: Ի դեպ, հենց նույն 1896 թվականին Ս.Պետերբուրգում լույս տեսնող Ֆ.Ա.Բրոկհաուզի և Ի.Ա.Էֆրոնի հեղինակավոր հանրագիտարանում Մովսես Խորենացին ներկայացված է որպես V դարի հեղինակ, որը սովորել է Ալեքսանդրիայում, եղել Անտիոքում, Հռոմում, Կոստանդնուպոլսում: Այդ հոդվածում կան նաև Մ.Խորենացուն քննադատող

²⁰ „New York Times“, Marah 10, 2015.

²¹ Nicholas Wade, Date of Armenia’s Birth, Given in 5th Century, Gains Gredence, նույն տեղում:

²² Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2005, էջ 488:

²³ Гр. Халатянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского: Опыт критики источников: В 2-х частях, ч. 1, Исследование, ч. 2, Материалы, Москва, 1896.

գիտնականների, այդ թվում նաև Գրիգոր Խալաթյանցի անունները:²⁴

Ժան-Պիեռ Մահեն բարեխղճորեն թվարկում է այն հայ և օտարազգի գիտնականներին, որոնք տեղափոխել են Խորենացու անձը և հետևաբար նաև նրա գործը ավելի ուշ դարեր: Բհարկե, վկայակոչված գիտնականների մեջ մեծաքանակ հղումներ կան հատկապես Օգյուստ Կարիերից և ամենաշատը Ռոբերտ Թոմսոնից:

Շատ քիչ անդրադարձ կա Ֆրեդերիկ Կոնիբերին, որը Մովսես Խորենացուն համարում է ոսկեդարի հեղինակ և հանդես է եկել Օգյուստ Կարիերի տեսակետի խիստ քննադատությամբ:

Օգյուստ Կարիերի Խորենացու քննադատությունը նույնպես չի ազդել „Larousse” հեղինակավոր հանրագիտարանի վրա, որի փոքրածավալ միհատորյակի մեջ Մովսես Խորենացին ներկայացվում է որպես V դարի հայ մատենագիր՝ կոչված Հայաստանի Հերոդոտոս:²⁵

Մովսես Խորենացուն քննադատելը ստացել էր համաեվրոպական բնույթ: Հավանաբար հենց այդ պատճառով էլ Ֆրեդերիկ Կոնիբերը՝ նշանավոր հայագետն ու մեծ հայասերը, Սյունիսենում հրատարակում է «Մովսես Խորենացու ժամանակաշրջանը» հոդվածը:²⁶

²⁴ Stéu Энциклопедический словарь, том XIX А, Издатели: Ф.А.Брокгауз, И.А.Ефрон, С.Петербург, 1896, с. 610-611.

²⁵ Stéu Nouveau petit Larousse, illustré dictionnaire encyclopédique, publié sous la direction de Claude Augé, Paris, 1932, p. („Moïse de Khoren, écrivain arménien du V^e siècle, surnommé l’Herodote de l’Arménie”).

²⁶ F.Conybeare, „The date of Moses of Khoren (տե՛ս Byzantinische Zeitschrift, Munich, 1901, N 3-4, p. 389-504).

Ֆ.Կոնիբերը ժխտում է Խալաթյանցի այն տեսակետը, թե Խորենացին օգտվել է Սեբեոսից՝ ավելի շուտ Մար Աբաս Կատինային վերագրվող հատվածներից: Նրա կարծիքով Մար Աբասի մասին Սեբեոսի հիշատակումը փաստ է, որ նա հետևել է Մովսես Խորենացուն:²⁷

1979-ին Սեբեոսի «Պատմության» քննական բնագրի մեջ Գևորգ Աբգարյանը Գ գլխի համար ունի այսպիսի խորագիր. «Արդ՝ թե պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ եւ Ստեփանոսի Տարանացոյ, հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել»²⁸:

Կոնիբերը անհնար է համարում, որ ուշ դարերի հեղինակը՝ մի ինչ-որ հայ, ծաղկաքաղ աներ 760 թվականին իր հայրենիքի պատմությունը մինչև 450 թվականը՝ գրելով մի ոճով, որը հատուկ է միայն V դարին:²⁹ Նա իր հոդվածն ավարտում է այն եզրահանգումով, թե պրոֆեսոր Կարիերի վարկածը գրական զարմանալիք էր և այնուհանդերձ ինքը նրա որոշ փաստերը համոզիչ է համարել և ուրախ է, որ կարողացել է ազատվել վարկածի լծից, որ թվում էր անխուսափելի և այդքան դժվարություններ էր պարունակում:³⁰

Ստուգապես հավաստի է, որ VII դարի նշանավոր թվաբան, տիեզերագետ, տորամագետ և մատենագիր Անանիա Շիրակացուց

²⁷ Նույն տեղում, պ. 501 („I cannot agree with him on the point, but that similar narrative equally attributed to Mar Aba is prefixt in the mss to the history of Sebeos, surely does not prove that Moses copied Sebeos. It rather confirms Moses' veracity”).

²⁸ Սեբեոս, Պատմութիւն, Աշխատասիրությանը Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979, էջ 55:

²⁹ F.Conybeare, The date of Moses of Khoren, p. 501.

³⁰ Նույն տեղում, էջ 502.503: Կոնիբերն անդրադարձել է նաև Խորենացու օգտագործած աղբյուրների խնդրին (տե՛ս «Ճանդէս ամսօրեայ», Վիեննա, 1902, № 5, էջ 129-132, № 7, էջ 193-201, էջ 236-240):

հասել է «Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ համարողի» քերթվածը, որը սկսվում է Մովսէս Խորենացու անունով. «Մովսէսի Խորենացոյ եւ Անդրեասի: Ադամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զՄէթ»³¹:

Իսկ ինչո՞ւ չմտածել, թե Անանիա Շիրակացին, հետևելով Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» և այն եզրափակող Ողբի կենսագրական տվյալներին, գրեց իր ինքնակենսագրությունը, որում մտքեր կան՝ հիշեցնող պատմահոր Ողբը.

Անանիա Շիրակացի

«...Թեպէտ և ոչ ոք եղև շնորհակալ և մեծարաւոյ իմոյ աշխատութեան, քանզի և ոչ սիրաւոյ իսկ է ազգ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյլք են և ձանձրացողք: Զի իբրև եկի ես, բազում ընթացան առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ թողին զիս և գնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս գորչափիկն ասին և փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել, զոր ոչն զիտէին և քարոզել զանձինս վարդապետս, որումն ոչ էին հասու»³²:

Մովսէս Խորենացի

«Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք»³³:

V դարի մատենագիրներից Մովսէս Խորենացուն հիշատակել է Ղազար Փարպեցին՝ իր հռչակավոր Թղթում: Թուղթը աշխար-

³¹ Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 357:

³² Նույն տեղում, էջ 335:

³³ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 364:

հաբար թարգմանել ու ծանոթագրել է Միքայել Նալբանդյանը: Հայկական աղբյուրներն ու ավանդությունը, որոնք առաջացել են նաև իր` Խորենացու վկայությունից, խոսում են պատմահոր հալածական որոշ տարիների մասին, երբ նա վերադարձավ արտասահմանից: Փարպեցին գրում է. «Երանելի Մովսես Փիլիսոփոսը (Խորենացին), որ արդարև, մինչդեռ մարմնով էր ապրում, գրեթե երկնքի գորքերին էր քաղաքակից. չէ որ այդ Հայոց արեղայքը այս տեղից այն տեղ հալածական արին նորան»³⁴: Իր այս թարգմանությունը կցած «Թարգմանչի բացատրությունքը» հատվածում Նալբանդյանը գրում է. «...մի՛ միայն մարդ կա, որ կարող է Փարպեցուց առնուլ նորա առաջնությունը, և այդ մարդը է անգուգական Մովսես Խորենացին»³⁵:

Նոյն «Հանդէս ամսօրեայի» 1902 թվականի համարում կա փոքրիկ մի նյութ, որի մեջ խոսվում է ուրախսալի այն լուրի մասին, թե գտնված է Մար Աբասի արաբական թարգմանությունը, որով զբաղվում է պրոֆեսոր Ն.Մառը:³⁶ Խոսքն այստեղ, անշուշտ, այն արաբական բնագրի մասին է, որը ֆրանսերեն թարգմանեց և տպագրեց Ֆրեդերիկ Մակլերը „Journal Asiatique“ ամսագրում 1903-ին:³⁷

Նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը միշտ շեշտում է, թե գիտության համար կարևորը փաստն է և ոչ թե անձնական կամ ազգային շահը: Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանը «Ն.Մառի գիտական ժառանգությունը անմահ է» հողվածում գրում է. «Իհարկե, Մառը չէր կարող բարձր չգնահատել մեր պատմիչներին

³⁴ Մ.Նալբանդյան, ԵԼԺ վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 320:

³⁵ Նույն տեղում, էջ 335:

³⁶ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», № 6, 1902, Վիեննա, էջ 191:

³⁷ Տե՛ս „Journal Asiatique“, mai-juin, Paris, 1903, p. 491-549:

և հատկապես նա զբաղվել է Խորենացիով, Ագաթանգեղոսով, Անանուն պատմիչով: Առաջինի մասին խոսելիս նա ասել է. «Հին հայ պատմիչները ինչ-որ սֆինքսներ են, իսկ նրանց մեջ Խորենացին՝ սֆինքս հսկա: Նա իր մեջ վառ կերպով արտացոլել է հայկական մտավոր կյանքի մի ամբողջ էպոխա, ուստի և դարձել է ազգային կուռք»: Մառը գտավ Պարիզի թանգարանի ձեռագրերում Խորենացու պատմության առաջին գրքի հիմնական աղբյուր՝ ասորի Մարաբասի ժամանակագրության մի քաղվածքը, որը հրատարակելով (1886) վերջ տվեց այն «անաչառ» քննադատներին (Կարիեր, Խալաթյանց...), որոնք Խորենացու գրքում ամեն ինչ տեսնում էին անձնական հնարանք կամ էլ եղծանք»³⁸:

Մինչ այդ՝ 1895-ին, Մառը փաստել է, թե Խորենացու խնդրում բոլորովին անտեսվում է, որ հինգերորդ դարի ոչ մի պատմիչ հայերի մոտ չի եղել ինքնուրույն և գրվել են ոչ միայն օրիգինալ գործեր: Այդ դարաշրջանի մատենագիրները ժողովրդական գործիչներ էին, քրիստոնեական գաղափարները հասկանալի հարազատ լեզվով, ազգային ոգով բացատրողներ: Դա մի բնագավառ էր, որում դեռ կային հեթանոսական տրամադրություններ: Վերջապես դրանք հեղինակներ էին, որոնք ընտրում էին իրենց անհրաժեշտ թեմաներ, և իզուր ենք նրանց փնտրում ուրիշ դարաշրջանում („которые мы напрасно искали бы в другой эпохе"): Նա պնդում է, թե չի կարելի դարաշրջանի հատկություններն անտեսելով, որոնք հա-

³⁸ Գր. Ղափանցյան, Ն.Մառի գիտական ժառանգությունը անմահ է (տե՛ս Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ, № 2, խմբագրությամբ Գր. Ղափանցյանի, Երևան, 1947, էջ 7):

տուկ էին V դարին, „перемешать историка из одного столетия в другое” («տեղափոխել պատմիչին մի դարից ուրիշը»)՝³⁹:

Մովսես Խորենացու ժամանակի խնդրում երբեք չի կարելի մոռանալ մի կարևոր հանգամանք: Պատմահոր գլուխգործոցը հակազդադաշտական բովանդակություն ունի: Մա կարևոր փաստ է: Չէ որ հայտնի է, որ VII դարում այլևս Պարսկաստանը զրադաշտական կրոնի դավանող չէր, և Բագրատունիների գահակալության ժամանակ հայերի կրոնական ու քաղաքական պայքարն ուղղված էր մահմեդականության դեմ: Մի՞թե այնքան մեծ հայրենասեր մատենագիր, ինչպիսին էր Մովսես Խորենացին, պետք է դիմեր ժամանակավրեպ կրոնի դեմ պայքարի, որը պարզապես հայերի պետականությանը չէր կարող սպառնալ:

Արդեն ութերորդ դարում գրվել էր Ղևոնդի պատմությունը, որը նկարագրում է, թե որքան ծանոթ է եղել արաբական լուծը Հայաստանում:

Բավական է հիշել, թե Ղևոնդը ինչպես է նկարագրում VIII դարի սկզբում հայ նախարարների ողջակիզումը Նախիջևանի և Խրամ ավանի եկեղեցիներում:⁴⁰ Ղևոնդի երկի աշխարհաբար թարգմանիչ Ա. Տեր-Ղևոնդյանը ծանոթագրում է. «Նախճավանի և Խրամի բարբարոսական գործողությունների նկարագրությունը տալիս են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի, ասորի և արաբ պատմիչները»⁴¹:

³⁹ Н.Март, О начальной истории Армении Анонима, К вопросу об источниках истории Моисея Хоренского, По поводу критических статей проф. А.Саргисова (տե՛ս „Византийский Временник”, 1895, № 1, с. 306).

⁴⁰ Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 38-39:

⁴¹ Նույն տեղում, էջ 147:

Նշանավոր ֆրանսիացի ավեստագետ C. de Harlez-ն որը 1881-ին Փարիզում հրատարակել է զրադաշտական կրոնի սրբագան մատյանի՝ Ավեստայի քննական բնագիրը, դիմում է V դարի պատմիչներ Մովսես Խորենացու ու Եղիշեի երկերում եղած փաստերին: Նա հիշեցնում է Խորենացու «Հայոց պատմության» այն հատվածը, որ պատմում է մար Զրադաշտի ու Շամիրամի բախումը:⁴²

Հայտնի է, որ մեր օրերում Ավեստայի բնագիրը հասել է խիստ թերի: Դա գիտեր դեռևս V դարում Եզնիկ Կողբացին և դրա համար էլ զրադաշտական կրոնի սրբագան մատյանը համարում էր «կցմցած ցնդաբանություն»⁴³:

Harlez-ի հրատարակած Ավեստայի քննական բնագրում բացակայում են Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում» ու Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում եղած Զրվանին ու նրա երկու որդիների՝ Որմիզդի ու Արհմի ծնվելուն վերաբերող հատվածները: Այն վերականգնելու համար ֆրանսիացի ավեստագետը դիմում է Եղիշեի երկին:⁴⁴

Միհրներսեհ վզրուկ հրամանատարը Հայաստանի մեծերին նամակ է ուղարկում, որում բացատրում է զրադաշտական կրոնի աշխարհաստեղծման առասպելը. «Քանզի մինչ չև էին երկինք ու երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր զհազար ամ և ասէր. «Թերևս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր»: Եւ յղացաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ՝ և զմեսն ևս

⁴² Avesta, Livre sacré du Zoroastrisme, traduit du text zend accompagné de notes explicatives et précédé d'une introduction à l'étude de l'Avesta et de la religion mazdeenne par C. de Harlez, Paris, 1881, p. XXIII.

⁴³ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 86:

⁴⁴ Avesta, p. XXXVI-XXXVII.

ի թերևսն ասելոյ: Իբրև գիտաց, եթէ երկու են յորովայնի, «Որ վաղ եկեացէ, ասէ, նմա տաց զթագաւարութիւնս»: «...Եւ այսպէս բաժանին արարածքս, հրեշտակը Որմիզդի են, իսկ դևքն Արիմնտյն, և ամենայն բարիք, որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք, որ անտի և այսօր գործին՝ զայն Արիմն արար»⁴⁵:

Ավեստայի քննական բնագրի առաջաբանում հիշատակվում է այն պատմական փաստը, ըստ որի VII դարում Պարսկաստանն ընկավ արաբական լծի տակ, և պարսիկներն անմիջապէս ընդունեցին իրենց նոր տերերի կրոնը. «Մագդեգական հավատն ամբողջովին վերացավ: Արաբները, որոնք զրադաշտականներին դիտարկում էին որպէս կռապաշտներ, նրանց արհամարհում էին և հալածում: Մագդեգական գրքերը, որոնք ընկնում էին նրանց ձեռքը, պատառոտվում էին ու այրվում»⁴⁶:

Պարսիկներին հեշտ էր անցնել մահմեդականությանը: Զրադաշտականության և մահմեդականության մեջ կային մեծ ընդհանրություններ: Երկուսն էլ ռազմատենչ կրոններ էին. ոչ զրադաշտականը և ոչ էլ մահմեդականը ստորադաս ցեղային պատկանելություններ էին: Երկու կրոններում էլ թոյլատրվում էին մերձա՛մուսնությունները և բազմակնությունը:

Բնական հարց է առաջանում, թե IX դարում ինչո՞ւ պետք է Խորենացին պայքարեր չեղած և իր երկրին որևէ վտանգ չսպառնացող կրոնի դեմ ու հանդիմաներ սիրելի մեկենասի՝ զրադաշտական կրոնի առասպելներին անդրադառնալու խնդրանքը: «Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ և Բիւրասպայ Աժդահակայ փծուն և անճոռնի առասպելքն իցեն և կամ էր սակս զմեզ Պարսից

⁴⁵ Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 48-50:

⁴⁶ Avesta, p. XXXVI-XXXVII.

անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ...»⁴⁷:

Մովսէս Խորենացին, որն այնքան չէր սիրում ավելորդաբանություններ, ինչու IX դարում պետք է հակակրանք արտահայտեր պարսից առասպելների վերաբերյալ:

VII դարից սկսած հայ պատմիչների պայքարը՝ հանուն ազգային անկախության և ազգային ինքնագիտակցության, ուղղված էր մահմեդականության դեմ:

Մովսէս Խորենացու «Հայոց պատմությունը» ազգային ծրագիր է՝ գրված դարերի համար: Եվ պատմահայրը հեռու է ազգային սնապարծությունից, մի զգացմունք, որը նպաստում է ոչ թէ ազգային առաջընթացին, այլ նրան տանում է դեպի փակուղի:

Հինգերորդ դարում, երբ չկար հայոց պետականությունը, Խորենացու մտահոգությունն առավել քան հասկանալի է: Բագրատունիների հայ թագավորությունը Մեծ Հայքում եղել է 885-1045 թվականին⁴⁸, և եթե Խորենացին IX դարի պատմիչ է, այն էլ պալատական պատմիչ, ինչն՝ պետք է ողբար հայ պետականության կորուստը այն դեպքում, երբ Բագրատունիները վերելքի մեջ էին, և նրանց գերիշխանության տակ էին նաև հարևան Վրաստանն ու Աղվանքը:⁴⁹

1990 թվականին լույս է տեսել Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն նոր թարգմանությունը, որն իրականաց-

⁴⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 89:

⁴⁸ «Հանրագիտական բառարան» հ. 1, Երևան, 2016, էջ 266:

⁴⁹ Նույն տեղում, էջ 267:

րել է ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը: Թարգմանությանը կցված է հանգամանալի գիտական առաջաբան:⁵⁰

Մենք դիմում ենք Գ.Սարգսյանի ռուսերեն առաջաբանին, որովհետև այն նախատեսված է գիտական առավել լայն շրջանակների համար: Սարգսյանն անդրադառնում է Մովսես Խորենացու կենսագրությանը և լիովին հավատ է ընծայում այն փաստին, թե Եփեսոսի ժողովից հետո Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը հայ ուսանողների մի խումբ ուղարկել են Ալեքսանդրիա՝ ուսման մեջ կատարելագործվելու: Ճանապարհին ծանոթացել են Եդեսիայի հարուստ գրադարանին, իսկ տարիներ անց հայրենիք վերադառնալիս անբարենպաստ նավագնացության հետևանքով հայտնվել են Իտալիայում, որտեղից Հունաստանի և Փոքր Ասիայի վրայով 440 թվականից հետո վերադարձել են Հայաստան:⁵¹

Սարգսյանի կարծիքով Խորենացու ձեռքի տակ աղբյուրների ոչ բավարար քանակ ունենալը և այդ աղբյուրները ոչ ճշգրիտ ժամանակագրելը չի նսեմացնում պատմահոր ծառայությունը, այլ դառնում է անկյունաքար և անգնահատելի ժառանգություն հին հայկական քաղաքակրթության համար:

Պատմաբանը կազմել է Խորենացու և Անանունի ժամանակագրությունների աղյուսակը և մատնացույց արել, որ Խորենացու ու գիտական ժամանակագրության ընդհանուր թիվը նույնն է 214

⁵⁰ St' u Movses Xorenatsi, *История Армении*, Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, 1990, с. VII-L.

⁵¹ Նույն տեղում, էջ IX-X: 2018 թվականին ես Մալթայի Գոգո կղզում տեսել եմ այն վայրը, ուր Տրոյայից հայրենի Իթակե կղզի վերադառնալիս ապրել է Հոմերոսի «Իլիական» քերթվածի գլխավոր հերոսներից Ոդիսևսը: Այնպես որ, նույն ձևով Խորենացին կարող էր ընկնել Հունաստանի փոխարեն Իտալիա:

տարի:⁵² V դարում Մովսես Խորենացու ստեղծած ավանդույթը շարունակել են Մովսես Կաղանկատվացին, Ուխտանեսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին և մյուսները՝ մինչև XVII դարը:

Խորենացիագետն անդրադառնում է Օգ. Կարիերի, Գ.Գուտշմիտի, Գր. Խալաթյանցի տեսակետներին՝ չընդունելով դրանք: Նա թվարկում է մի մեծ ցուցակ այն գիտնականների, որոնք Խորենացուն տեսնում են V դարում: Դրանք են՝ Հ.Օրբելին, Ս.Երեմյանը, Բ.Առաքելյանը, Լ.Խաչիկյանը, Գ.Ջահուկյանը, Բ.Պիոտրովսկին, Կ.Տրևեբը, Ի.Դյակոնովը, Հ.Բարթիկյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Ս.Կրկյաշարյանը և ուրիշներ:⁵³

Խորենացուն քննադատողների կարծիքները հերքվում են նորագյուտ հնագիտական փաստերով: Խորենացին ասում է, թե Ջարեհի որդի Արտաշեսը գյուղաբաժան քարեր է դրել արամեերեն արձանագրություններով: Պատմահոր այս փաստը հաստատվել է այդ քարերի մեկ տասնյակից ավելին հայտնաբերելով: Սարգսյանը հատկապես բանավիճում է Ռ.Թոմսոնի ծայրահեղ քննադատական մոտեցման փաստերի հետ: Նա Խորենացուն այդպես անողոր ժխտելը համարում է գերքննադատական ժամանակավրեպություն:⁵⁴

Պակաս կարևոր չէ, որ Խորենացուց իմանում ենք, որ մինչև մեր նոր «Մասնա ծոեր» («Մասունցի Դավիթ») էպոս ունենալը հայերն ունեցել են իրենց հին էպոսը և շատ հարուստ գողթան երգիչների բանահյուսությունը:⁵⁵

⁵² Նույն տեղում, էջ XIII:

⁵³ Նույն տեղում, էջ XXV:

⁵⁴ Նույն տեղում, էջ XXXIV-XXXV:

⁵⁵ Նույն տեղում, էջ XLII:

Այս հանգամանքը հատուկ շեշտել է նաև Ֆրեդերիկ Ֆեյդին, որը «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանության առաջաբանում գրում է. «Հինգերորդ դարի հայ պատմիչների մեջ կա մեկը, որը գերազանց է. դա Մովսես Խորենացին է: Նա չբավարարվեց մի ժամանակագրություն գրելով. նա կամեցավ ստեղծել իր ազգի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից սկսած: Այս նպատակով դիմեց հույն, պարսիկ, ասորի, քաղդեացի այն պատմիչներին, որոնց գործերը կարողացավ գտնել, բաղդատեց նրանց հաղորդած տեղեկությունները Աստվածաշնչի հիմնակետերին, նա պեղեց ազգային դիվանները, դիմեց անգամ բանավոր ավանդություններին՝ նրանցում փնտրելով պատմական դեպքերի արձագանքները: Մա նրա համար առիթ դարձավ ոգեկոչելու ստույգ լեգենդներ, հիշատակելու տարբեր կրկնություններ վիպական քնարերգության, որոնցից կարճ հատվածներ գետեղեց իր գրքում: Աչքի անցկացնելով հեթանոսական ժամանակներին վերաբերող նրա գրքերը՝ այդ կտորներից կարելի է հաստատել հերոս Հայկից սերող թվարկվող և հիշատակվող արքաների կյանքի ընթացքը և նրանց գեղեցիկ ու նշանավոր գործերը: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ այս վեպերը բացառապես հերոսական սխրագործությունների պատմություններ չեն»⁵⁶:


Մեկ ուրիշ հետազոտության մեջ Ֆեյդին գրում է. «Գուցե Մովսես Խորենացու վկայությանը համաձայն չեն այն բանասերները, ովքեր նրան չեն համարում ստույգ պատմիչ: Բացի այդ, կա-

⁵⁶ „David de Sassoun, Épopée en vers, Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Paris, 1964, p. 38-39.

րևոյր հարցերում նրա վկայությունները գլխավորապէս համընկնում են այլ պատմիչների հաղորդածներին»⁵⁷:

Հույն պատմագրոյան հայրը՝ Հերոդոտոսը, որն օգտագործել է իրենից առաջ եղած և իր ժամանակի աղբյուրներ, հիշատակում է միայն Հէկատէոսին:⁵⁸

Հէկատէոսի քարտեզը կա Գ.Դ.Ռոժանսկու գրքում: Ահա այն.



Карта мира по Гекатею⁵⁹

Շատ դիպուկ բանախոսելով Ռ.Թումանի հետ՝ Գ.Սարգսյանը ներկայացնում է Խորենացու «Հայոց պատմոյան» միջազգային

⁵⁷ F. Feydit, *Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien*, Wien, 1982 (Deuxième édition), p. 4.

⁵⁸ Мовсес Хоренаци, *История Армении*, с. XXXI.

⁵⁹ Հէկատէոսի քարտեզը՝ գծված Ք.Ճ.ա. VI դարում, Սև և Կասպից ծովերի արանքում տեղադրում է միայն Армения պետականությունը: Տե՛ս И.Д. Рожанский, *Античная наука*, изд. „Наука“, Москва, 1980, стр. 68:

արժեքը: Պատմահոր տեսադաշտում ամբողջ քաղաքակիրթ աշխարհն է՝ արևմուտքում Բրիտանիան, արևելքում՝ Չինաստանը:⁶⁰

Ֆրեդերիկ Մակլերը ևս Խորենացուն համարում է ոսկեդարի պատմիչ: Նրա վերաբերմունքը Խորենացու նկատմամբ ճշգրտորեն ձևակերպել է Մեսրոպ Մագիստրոսը. «Ֆրանսիացի հայագետ Կարիերը եվրոպացի մասնագետների շրջանում և գլխավորապես հայերիս մեջ, անուն հանեց սկսած վերջին իննսուն թվականից, երբ սկսեց ուսումնասիրել Մովսես Խորենացու պատմությունը և հատկապես այդ գրվածքի ժամանակի խնդիրը: Նրա պաշտպանած կարծիքները, թե Խորենացին օգտվել է փոքր կոչված Սոկրատի պատմությունից և Մադաղասի ժամանակագրությունից, *ոչ միայն չհաստատվեցին, այլ Սոկրատի վերաբերմամբ միանգամայն հերքվեցին*: Չնայած այդ հանգամանքին՝ հանգուցյալ հայագետը մեծ ծառայություն է մատուցել Խորենացու ուսումնասիրությանը: Նրա հոդվածների հարուցած հետաքրքրության շնորհիվ համարյա բոլոր հայագետները ավելի կամ պակաս ուշադրությամբ զբաղվեցին Խորենացու խնդրով, և ստեղծվեց մի պատկառելի գրականություն: Անկասկած այդ հանգամանքի շնորհիվ է, որ Կարիերի կենսագիր պ. Ֆ.Մակլերը յուր շարադրության խնդիրը նշանակել է՝ Մովսես Խորենացի և Օգյուստ Կարիերի աշխատությունները:⁶¹

Խորենացու ժամանակին վերաբերող այսօր էր գրվում են նոր գրքեր:⁶²

Իր շատ հարուստ առաջաբանում Ժան-Պիեռ Մահեն նշում է, թե ինչպես Եվրոպայում Խորենացու պատմության լատիներենով

⁶⁰ Мовсес Хоренаци, История Армении, с. XLVII.

⁶¹ Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյան (Մեսրոպ Մագիստրոս), Հոդվածների ժողովածու, Հրատարակության պատրաստեց Գևորգ Տեր-Վարդանյան, Ս.Էջմիածին, 2010, էջ 506:

⁶² Տե՛ս Ա.Վ.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, 410 էջ:

երևան գալը գիտական շրջանակներում առաջացրեց իսկական մշակութային շոկ (հարված) „un veritable choc culturel". Եվրոպայի գերազանց մտքերը տեսան ուժեղ հետաքրքրությունն առաջացնող անկախ մի պատմագրություն:⁶³

Բոլոր դեպքերում չընդունելով Հայաստանի պատմահոր V դարում ասպարեզ գալը՝ Ժ.-Պ. Մահեն «Հայոց պատմության» բնագրի թարգմանությամբ կատարել է կարևոր աշխատանք, և հուսանք, որ նա էլ մի օր Վիկտոր Լանգլուայի նման կկրկնի պատկառելի հայազգի հոգևորականի խոսքերը. «Կգա մի օր, որ գիտական Եվրոպան նրան կհայտարարի *Մեծ*՝ իր ապրած ժամանակի համար, կգա մի օր, որ մեր պատմաբանին մեղադրողները կարդարացնեն նրան, որովհետև եթե լավ հետազոտեն մեր Խորենացուն, կճանաչեն նրա անկեղծությունը, և նրանք էլ համաձայն կլինեն անվանելու Հայաստանի պատմահայր, ինչպես որ մեր նախնիները միշտ անվանել են նրան»:⁶⁴

⁶³ Moïse de Khorène, Histoire de l'Arménie, p. 16.

⁶⁴ V.Langlois, Étude sur les source de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861, p. 368.

զ) ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆ ԿՈՐՅՈՒՆԻ
«ՎԱՐՔ ՄԱՀՏՈՑԻ» ԵՐԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

„Revue des Études Arméniennes” հանդեսի թիվ 30-ում լույս է տեսել Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» երկի ֆրանսերեն նոր և ընտիր թարգմանությունը՝ հարուստ ծանոթագրություններով:

«Վարք Մաշտոցի» երկի առաջին թարգմանությունը իրականացրել է Մկրտիչ Էմինը Վիկտոր Լանգլուայի հանձնարարությամբ: Վերջինս այդ թարգմանության համար գրել է ընդարձակ և ուշագրավ առաջաբան: Չգիտես ինչու Կորյունի երկի այդ թարգմանությունը, 2005 թվականին հայ գրերի գյուտի 1600-ամյակի առթիվ հրատարակված 5 լեզուներով, վերագրված է Վիկտոր Լանգլուային:¹ Մինչդեռ Կորյունի երկի թարգմանիչը եղել է Մոսկվայի Լազարյան Ճեմարանի հռչակավոր պրոֆեսոր Էմինը, որը Վիկտոր Լանգլուայի կազմած „Collection des historiens anciens et modernes de l’Arménie” ժողովածուի, նաև Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» և՛ բնագրի, և՛ դրան կցված առաջաբանի հեղինակն է:

Նույն ժողովածուի երկրորդ հատորում լույս տեսած Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի թարգմանչի մասին կարդում ենք. „Corioun, Biographie du bienheureux et saint docteur Mesrob, traduit pour la première fois en français, Jean-Raphael Emine”:²

Ընթերցողին կարող են փոքր-ինչ շփոթության մեջ գցել Ժան-Ռաֆայել անունները, սակայն Վ.Լանգլուայի նույն երկի առաջաբանում կարդում ենք. «Ռուսական հայագետ M. J- B. Émine-ը, որին գիտությունը պարտական է մեծաքանակ կարևոր հրապարակում-

¹ Կորյուն, 2005, 217:

² Sté u V. Langlois, t. II, Paris, 1969, 1:

ներով, և որը հարստացրեց մեր «Պատմական գրադարանի» առաջին հատորը Փավստոս Բուզանդի ընտիր թարգմանությամբ, մի հիշատակարանում շատ մանրակրկիտ ներկայացրել է հայոց այբուբենի ծագումը և այդ այբուբենի գյուտի բնույթը»:³ Ինչպես տեսնում ենք Կորյունի ֆրանսերեն առաջին թարգմանիչը եղել է Մ.Էմինը: Կորյունի այդ երկի օտարալեզու թարգմանությունների ցանկն առկա է Արտաշես Մաթևոսյանի 1994-ին հրատարակած «Վարք Մաշտոցի» երկի՝ տպագիր ու ձեռագիր տարբերակներում: Սա շնորհակալ գործ է, որի առաջաբանի վերջում բերվում է օտարալեզու գրականությունների ցանկը՝

- ա) գերմաներեն, I անգամ, Տյուբինգեն, 1841թ.
- բ) գերմաներեն, II անգամ, Մյունխեն, 1927թ.
- գ) գերմաներեն, III անգամ, Դյուսելդորֆ, 1963թ.
- դ) ֆրանսերեն, Փարիզ, 1869թ.
- ե) անգլերեն I անգամ, ԱՄՆ-ում, 1964թ.
- զ) անգլերեն II անգամ, Երևան, 1981թ.
- է) ռուսերեն, I անգամ, Երևան, 1962թ.
- ը) ռուսերեն, II անգամ, Երևան, 1981թ.⁴

Ա.Մաթևոսյանը չի նշում, թե ով է թարգմանել Կորյունի երկը ֆրանսերենով:⁵

Ժան-Պիեռ Մահեի թարգմանությունը շահեկան է նախ նրանով, որ այն ներկայացնում է Մանուկ Աբեղյանի պատրաստած վարքի ընդարձակ տարբերակը և հենց սրանով կարևորվում է՝ խիստ տարբեր լինելով Փարիզի 1969 թվականի թարգմանությունից:

³ Նույն տեղում, 4:

⁴ Կորյուն, 1994, 19:

⁵ Նույն տեղում:

Երբ Վիկտոր Լանգլուան տպագրեց «Վարք Մաշտոցի» երկը, այն թարգմանված էր միայն գերմաներեն: Չնայած հայ գրերի գյուտի մասին կային տարբեր վերլուծականներ (հիմնականում հայերեն), սակայն դեռ չէր ստեղծվել այն գիտական, երբեմն նաև խիստ կողմնակալ գրաքննադատությունը, որի հեղինակները՝ վրացիներ ու ադրբեջանցիներ, հերքում են Կորյունի այն վկայությունը, թե Մեսրոպ Մաշտոցը, բացի հայերեն տառերից, գրեր է ստեղծել նաև վրացիների ու ադվանների համար՝ իրեն օգնական ունենալով տվյալ ազգերի լեզվի գիտակաների:

Կորյունը վկայում է. «Դարձյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետոն առավ, վեր կացավ գնաց, իջավ վրաց կողմերը»:⁶

Անվերապահ հմուտ հայագետ Մանուկ Աբեղյանը Կորյունի գրքի առաջաբանում գրում է. «Նա հոգում է (իմա՝ Մ.Մաշտոցը-Ա.Դ.) ոչ միայն հայկական դպրության համար, այլև վրացիների, հետագայում նաև ադվանների, որոնք կապված էին հայերի հետ»:⁷

Հայտնի է, որ քրիստոնեություն ընդունելուց հետո Հայաստանը, Վրաստանն ու Ադվանքը հայտնվել էին նույն քաղաքական դաշտում և հավասարապես գտնվում էին Պարսկաստանից նվաճվելու վտանգի առաջ: Այդ մասին վկայակոչում է հինգերորդ դարի պատմիչ Եղիշեն «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկի մի քանի հատվածներում: Բերենք պերճախոս երկուսը.

⁶ Կորյուն, 1962, 109-110:

⁷ Նույն տեղում, էջ 54:

ա) Հազվերտ Երկրորդի դավանափոխությունը պահանջող հրովարտակը հասնում է Հայոց, Վրաց, Աղվանից... աշխարհները:⁸

բ) Պարսից ատյանում Վասակ Սյունեցին մեղադրվում է այն փաստաթղթով, որ նրա կնիքով և ապստամբելու օգնության խնդրով ուղարկվել էր Վրաց և Աղվանից աշխարհները:⁹

Այս հարցերին անդրադարձն անհրաժեշտ է, որովհետև դրանց մասին խոսվում է Ժան-Պիեռ Մահեի թարգմանության համառոտ նախաբանում:

Ֆրանսիացի հայագետը տողատակում նշում է, թե վրացիները համոզված են, որ Մաշտոցը չի ստեղծել իրենց այբուբենը: Սակայն հիշեցնում է, թե վրացերեն Աստվածաշնչի ամենահին տարբերակը ածանցված է հայերենից, որը և վկայում է, թե վրացիները Մաշտոցից ավելի առաջ չեն ունեցել իրենց այբուբենը:¹⁰

Տեղին ենք համարում վկայակոչել նշանավոր հայագետ, վրացագետ և ընդհանրապես մեծ ու բարեխիղճ գիտնական Նիկողայոս Մառի որոշ դիտարկումները հայ-վրացական գրական, պատմական, մշակութային կապերի վերաբերյալ: Վրաց իշխան Ակակի Ծերեթելին կտրականապես ժխտում է հայկական մտավոր ազդեցությունն անցյալում Վրաստանի մշակութային, հոգևոր, քաղաքական կյանքի վրա՝ մամուլում հանդես գալով մերժողական հոդվածներով:

Ն.Մառը հիշեցնում է բանաստեղծ Ծերեթելիին, որ ինքը կիսով չափ վրացի է, կիսով չափ շոտլանդացի, սակայն իրեն համարում է վրացի: Իր համար կարևոր է գիտական փաստը. «Վրաց բանաստեղծը, ակնհայտ է, որ չի հասկանում, թե գիտնականը

⁸ Եղիշե, 1989, 21:

⁹ Նույն տեղում, 267:

¹⁰ „Revue des Études Arméniennes”, t. 30, 2005-2007, 60.

կղաղարեր գիտնական լինել այն բուսական, երբ նա կվճռեր ծածկել գիտական ճշմարտությունն այն պատճառով, որ դա վնասակար կլիներ իր ցեղակիցներին»:¹¹

Մտառ փաստում է V-VII դարերում հայ գրական ու մշակութային ազդեցությունը վրացիների վրա, որի մեջ մտնում է նաև վրաց այբուբենի մաշտոցյան ծագումը ու Աստվածաշնչի հայերենից թարգմանված լինելը: Ավելին, նա գրում է. «Եթե չլինեին հայ հեղինակները, վրացիների անցյալի նշանավոր մասը հավիտյանս անթափանցելի խավարով ծածկված կլիներ»:¹²

Զմոռանանք, որ Ղազար Փարպեցու հինգերորդ դարի պատմիչ լինելու իրողությունը որևէ կասկած չի առաջացրել ո՛չ հայ և ո՛չ էլ օտարազգի հայագետների մոտ: Բացի այդ, Փարպեցին ունի ճշգրիտ պատմիչի համբավ, ինչպես ինքն է խոստովանում իր երկի սկզբում «չեղած բաներ չավելացնել, չնվազեցնել եղածները», «այլ ամեն ինչ երևան հանել ողջախոհ զգուշությամբ»:¹³

Մանուկ Աբեղյանը նշում է, թե Ղազար Փարպեցին Հայաստանի ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ կրթվել է Վրաստանում՝ Աշուշա Բդեշխի տանը:¹⁴ Փարպեցին էլ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի մասին գրում է. «Հոգևոր այր Կորյունն էր, որ առաջին անգամ ճշմարտապես գրեց այս բոլորը: Որտեղից և մենք ստուգապես տեղեկացանք՝ բազում անգամ կարդալով»:¹⁵

Ընդամենը կես դար էր անցել Կորյունի երկը գրելու ժամանակից, ավելին՝ Ղազար Փարպեցին ապրել է Վրաստանի առաջնորդի տանը, և եթե Կորյունը ստել էր վրաց այբուբենի ստեղծման

¹¹ Ն.Մառ, 1898, 20:

¹² Նույն տեղում, 7:

¹³ Ղազար Փարպեցի, 1982, 17:

¹⁴ Մ.Աբեղյան, Գ, 1968, 344:

¹⁵ Ղազար Փարպեցի, 31:

խնդրում Մաշտոցի մասնակցության մասին, ապա ինչու՞ է Կորյունի մասին ասում. «Ճշմարտապես գրեց»:

Վիկտոր Լանգլուան Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի նախաբանում թվարկում է, թե որ պատմիչներն են գրերի ստեղծման խնդրում հետևել Կորյունին: Դրանք են՝ Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Աստղիկ, Սամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի և ուրիշներ:¹⁶ Եվ ուրիշների մեջ է մտնում նաև Մովսես Կաղանկատվացին, որի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի ԻԷ գլուխը վերաբերում է Մաշտոցին ու նրա ընկերներին, ու այնտեղ ասվում է, թե մեկը նախկին վարդապետներից, ներշնչված սուրբ Հոգուց, այբուբեն ստեղծեց երեք ազգերի համար՝ հայերի, աղվանների և վրացիների:¹⁷

Ներկա աղբյուրներն այնքան վիրավորական են համարում աղվանների համար Մաշտոցի այբուբեն ստեղծելը, որ 2002 թվականի մայիսին Թիֆլիսի Ի. Ջավախաշվիլու անվան համալսարանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում Աղբյուրների կայացուցիչը զեկուցում էր կարդում աղվանական գրի մասին, որն իբր թե արդեն եղել է մ.թ.ա. առաջին հազարամյակում: Իմ այն հարցին, թե այդ դեպքում ինչու Ք.Ճ. հետո VII դարում Աղվանքի Գորիկ թագավորի պղնձե դրամի վրա գրված է եղել հայերեն, նա չկարողացավ պատասխանել: Իսկ իրողությունը հետևյալն է. «Վիկտոր Լանգլուան հատուկ նշում է, թե իր հոդվածը վերաբերում է հազվագյուտ մի դրամի, որի նկարն ինքը ստացել է Թիֆլիսից: Այդ դրամի մասին գրել է Մ.Բրոսսեն իր „Monographie des monnaies arméniennes” աշխատության մեջ: Դրամը պղնձից է և պատկանում

¹⁶ V. Langlois, II, 6.

¹⁷ Մովսես Կաղանկատվացի, 1983, 94:

է Աղվանքի հայ Բագրատունի թագավոր Գորիկին: Գեներալ Բարտոլոմէյն իրեն ուղարկել է Բրոսսեի հրատարակած նկարը, դրամի բնօրինակը գտնվում է Մոսկվայում՝ իշխան Ալեք. Գագարինի մոտ: Այդ դրամը հիմք է տալիս հաստատորեն խոսելու Աղվանքի հայ Բագրատունի թագավորների մասին: Դրամի մի երեսին Հիսուս Քրիստոսի նկարն է, իսկ մյուսին՝ մեսրոպատառ հայերենով գրված է, «Տէր օգնէ Կորիկէ ի կորապալատին»:¹⁸

Նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանը աղվանական այբուբենի մասին գրել է հետևյալը. «В настоящее время для нас совершенно ясно, что Месроп даровал Стране Авганской не один алфавит и одну письменность, а два алфавита и две письменности-отдельно для армянского населения страны и отдельно – для агван. Для армянского населения Агванка предназначался, конечно, тот же армянский алфавит, что и для всех гаваров Армении, а для агванского-новосозданный алфавит, приноровленный к языку одной из племенных групп агван.

Передав армянам изобретенный для них алфавит, Маштоц, на основе языка гаргарской племенной группы, создал для агван алфавит из 52 букв, который сохранился и дошел до нас».¹⁹

Աղվանական այդ այբուբենը, որը պահպանված է հայկական մի ձեռագրում, այժմ ներկայացված է Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ցուցասրահում: Այն կրում է 7117 թվահամարը, գրված է 1440-ին Մեծոփա վանքում: Գրիչներն են Հովհաննես Արճշեցին և Թովմա Մեծփեցին: Այդ գրչագիր մատյանը ժողովածու է: Նրանում զետեղված է պատմիչ, եկեղեցական և մշակութային գործիչ, մանկավարժ Թովմա Մեծփեցու լեզվաուսուցանող

¹⁸ V. Langlois, 1866.

¹⁹ А.Ш.Мнацаканян, 1969, 68.

դասագիրքը, որի մեջ էլ պատկերված են հայերի, եբրայեցիների, հույների, արաբների, հռոմեացիների, վրացիների, աղվանների, դպտիների, հնդիկների տառերը:²⁰

Իհարկե ո՛չ վրաց և ո՛չ էլ ադրբեջանցի բանասերներն ու պատմաբանները չեն ընդունում Կորյունի այն վկայությունը, թե Մաշտոցը տառեր է ստեղծել վրացիների ու աղվանների համար. ավելին՝ այն ժխտելու խնդրում խիստ միասնական ու մարտական են:

Մաշտոցի եռալեզու այբուբենն ստեղծելու դեմ գիտական բանավեճերի պատկերը կա Արտաշես Մարտիրոսյանի «Մաշտոց» մենագրության մեջ, որի ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել Երևանում 1988-ին: Իվանե Ջավախաշվիլին, որն ի դեպ, Պետրոզրադում աշակերտել է Ն.Մառին, Կորյունի հաղորդածը՝ վրաց և աղվան գրերի մասին, համարում է հեքիաթ՝ ասելով, թե մինչև Կորյունը եղած հայկական աղբյուրներն այդ մասին ոչինչ չեն հաղորդում:²¹ Ինչպես փաստում է Ա.Մարտիրոսյանը, մինչև Կորյունը հայ հնագույն աղբյուր չկա, որում խոսվեր Մաշտոցի գրերի մասին:²²

Այդ հարցի պատասխանը տվել է նաև եվրոպացի գիտնական Պ.Պետերսը. «Рассказ Корюна о миссии Месропа в Грузии и создании им грузинского алфавита грузинские критики без колебаний считают ложью. Мы не станем стремиться доказывать им, что их предки не унижаются этим, что как и наши предки, так и они свои первые уроки письма взяли у другого народа.»²³ Как бы там не

²⁰ Յուգակ ձեռագրաց, 1970, 465-466:

²¹ А.Мартиросян, 1988, 239.

²² Նույն տեղում:

²³ 2018 թվականի հունվարի վերջին այցելեցի Մալթայի մայրաքաղաք Վալետայի հնագիտական թանգարանը և սպիտակ մարմարե սյան վրա

было, не это неприемлемо для их патриотической гордости-неприемлемо то, что просвещение пришло из Армении. Мы не в силах убедить их в том, что они являются должниками святого Маштоца».

Մաշտոցի մտահոգությունը հարևան քրիստոնյա ժողովուրդների՝ վրացիների և աղվանների համար գրեթե ստեղծելու հարցում ունեցել է խիստ քաղաքական նպատակ, դրա իմաստն էր՝ հարևան ու բարեկամ քրիստոնյա ժողովուրդների մեջ քրիստոնեությունը ամրապնդելն ու քրիստոնեական սրբազան մատյանների այդ լեզուներով թարգմանելը: Սա միասնական ճակատի խնդիր էր զրադաշտական հզոր Պարսկաստանի և այլադավան ցեղերի դեմ դիմակայելու համար: Մի հանգամանք, որը պերճախոս վկայում է Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցու խնդրագրերը՝ ուղղված Վրաստանի ու Աղվանքի տերերին, միաբան ձևով պայքարելու հանուն ազգային ու կրոնական անկախության:

1997-ին լույս է տեսել անգլիացի հայագետ Չարլզ Դաուսեթի «Սայաթ-Նովա» սովարածավալ մենագրությունը (505 էջ):

Մենագրությունը բացվում է Վրաստանի արքա Հերակլ Երկրորդի դիմանկարով: Գիրքն ավարտվում է սեղմ «Վերջաբանով», որում հայագետը նշում է, թե Հերակլ Երկրորդը ձգտում էր պաշտպանել Սայաթ-Նովային, որովհետև նա պարտավոր էր իմանալ վրաց Բագրատունիների հայկական ծագման մասին:²⁴

տեսա փյունիկեցիների այբուբենը, որից առաջացել է ներկա բոլոր այն ժողովուրդների գիրը, որոնք գրում են տառերով՝ լատինացիներ, հույներ, սլավոններ, հայեր և շատ ուրիշներ: Այդ այբուբենն այնքան հստակ ձևով էր ներկայացնում բոլոր հետազայում առաջացած տառերի իրենից ծագած լինելը:

²⁴ Charles Dowsett, 1997, 450.

Հայագետը միաժամանակ Սայաթ-Նովայի եռալեզու ստեղծագործության մեջ տեսնում է այն երաշխիքը, որի շնորհիվ Կովկասի երեք ժողովուրդները՝ հայերը-լուսավորչական, վրացիները-ուղղափառ, ադրբեջանցիները-մահմեդական, Հերակլ Երկրորդի գահակալության ժամանակ ապրում էին հաշտ ու համերաշխ:²⁵ Ահա հենց այդ համերաշխությանն է ձգտել Մեսրոպ Մաշտոցը՝ ստեղծելով տառեր բարեկամ երկու ժողովուրդների՝ վրացիների ու աղվանների համար:

Այս մանրամասները կարևորում են այն շնորհակալ գործը, որը հմտորեն իրականացրել է բացառիկ նարեկացիագետ ու հայագետ Ժան-Պիեռ Մահեն՝ ֆրանսերեն թարգմանելով Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ամբողջական բնագիրը և հմտորեն ծանոթագրելով նրա յուրաքանչյուր էջը:

²⁵ Նույն տեղում, 451:

դ) ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵԻ ՆՈՐ ՆԿԱՏՈՒՄՆԵՐԸ
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ժան-Պիեռ Մահեն Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» համարում է հայ պատմագրության մեջ մեծ առաջընթաց և նրա գրելու թվականը որոշակի համարում է 451 թվականը՝ կապելով այն Վարդանանց հերոսամարտի իրադարձություններին:¹ Հայագետի կարծիքով այդ երկը անպայմանորեն պատմական է. «Նկատի առնելով երկի ձևն ու բովանդակությունը, կարելի է համարել, թե հեղինակը, հաղթահարելով վարքագրական ժանրի նեղ սահմանները, հասել է գուտ պատմագրության մակարդակին և ավելի շատ հետաքրքրվել է ազգերով, քան թե անհատներով»²:

Ագաթանգեղոսի պատմության հայերեն տարբերակի ամբողջական բնագրի հեղինակ Արամ Տեր-Ղևոնդյանը նշում է. «Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» հինգերորդ դարի ոսկեդարյան մատենագրության դասական երկերից է, որը դեռ միջնադարում համաշխարհային տարածում է ունեցել: Մինչև օրս հայտնի են մոտ երկու տասնյակ խմբագրություններ (որոնցից մեկը և հիմնականը ներկա թարգմանության գրաբար բնագիրն է) միջնադարի 9 լեզուներով՝ հայերեն, հունարեն, ասորերեն, արաբերեն, լատիներեն, եթովպերեն, վրացերեն, դպտերեն (պատառիկ) և սլավոնական տարբերակներ»³:

¹ Ժ.-Պ. Մահե, Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» և հունահռոմեական վեպը, (տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1, Երևան, 1997, էջ 161):

² Նույն տեղում:

³ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 503:

XX դարում Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» շարունակել է հետաքրքրել գիտնականներին: Արևելագետներից Ագաթանգեղոսի պատմության վերաբերյալ մեծագույն վաստակ, ըստ կովկասագետ Պարույր Մուրադյանի, ունի բելգիացի արևելագետ պրոֆեսոր Ժ. Գարիտը, որը 1946-ին տպագրել է „Documents pour l'étude du livre d'Agatange"՝ աշխատությունը:⁴

Ժ.-Պ. Մահեն իր հոդվածում խոսում է Ագաթանգեղոսի երկի հիմքում ընկած մի հին աղբյուրի՝ Սուրբ Գրիգորի վարքի մասին, որը նրան հայտնի է հունարեն կամ արաբերեն թարգմանություններով: Հայագետը համոզված պնդում է, թե Ագաթանգեղոսի երկը գրել է հայ հեղինակ. «Բացի այդ, մեր ժամանակագրության **հայ հեղինակը** քողարկվում է իբր թե Տրդատ արքայի հույն դիվանապետի՝ Ագաթանգեղոսի դիմակով: Իրականում այդ անունով մարդ Տրդատի շրջապատում չկար և իբր թե հունարենից թարգմանված գիրքը ուղղակի հայերեն է գրվել»⁵:

Հայագետը հետաքրքիր ձևով է ներկայացնում Հռիփսիմյան կույսերի վկայաբանության հերոսների վարքագիծը: Վկայաբանության որոշ հատվածներ կրոնական բովանդակությունը կապում են գուտ աշխարհիկ իրողությունների՝ այն դարձնելով յուրօրինակ վեպ: Վեպում վավաշոտ ծերունին Դիոկղետիանոսն էր, կուսությունը երկնային փեսացուի համար պահպանող գեղեցկուհին՝ Հռիփսիմեն, իսկ միջնորդ պառավը՝ մայրապետ Գայանեն: Դիոկղետիանոսը ժամանակ չունի հարսնատես անելու և իր տիկնանց ընտրում է նկարագարդ ալբոմից: Մեծ սիրավառը Տրդատ արքան է: Պառավը՝ Գայանեն, կուսակրոն Հռիփսիմեին տանում է մինչև

⁴ Պ. Մ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 5:

⁵ «Պատմա-բանասիրական հանդես», 1, էջ 163:

արքունի սենյակի շեմը, սակայն Սուրբ Հոգին այնպիսի ուժ է ներշնչում կույսին, որ տիտանական ուժի տեր Տրդատը պարտվում է կույսից: Տրդատի կենդանու փոխակերպման տեսարանը ևս հիշեցնում է Ապուլեոսի Լուկիոս հերոսին: «Բացառված չէ, որ հայ հեղինակը կարդացել է հույն դասական պատմիչների երկերը: Թեպետև Եվսեբիոսի ժամանակագրությունը այն ժամանակ արդեն թարգմանված էր, Ագաթանգեղոսի կողմից պատմագրական ժանրի ըմբռնումը պիտի հիմնվեր գլխավորապես Աստվածաշնչի վավերական կամ անվավեր գրքերի վրա»⁶:

Հայագետի կարծիքով Ագաթանգեղոսը, փորձելով Գրիգորի վարքը վերածել կոթողային պատմագրական երկի, օգտագործել է Առաքյալների անվավեր գործերը, որոնցում շատ են հունահռոմեական վեպերից առնված հրաշապատում հատվածները:⁷

⁶ Նույն տեղում, էջ 165:

⁷ Նույն տեղում, էջ 166:

ե) ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՊԱՏՄԻՉ

Լայն բազմագիտակության տեր հայազետ Ժան-Պիեռ Մահեն իր կարևոր աշխատություններից մեկը՝ «Հայ ժողովրդի պատմություն՝ ծագումից մինչև մեր օրերը», վերստին գրել է հեղինակակից ունենալով Աննի Մահեին:

Գիտնականի վրա գորեղ ազդեցություն են թողել ոսկեդարի և հետագա դարերի հայ պատմիչները: Դրա համար էլ նրա պատումը երբեմն-երբեմն ունի միջնադարի հայ պատմիչների ոճի երանգավորումը: Գրելաձևի այս տեսակը յուրօրինակ գրավչություն է հաղորդում պատումին և գեղարվեստի երանգ տալիս: Պատահական չէ, որ գիրքը սկսվում և փակվում է նոր օրերի հայրենասեր հայ բանաստեղծների խոսքով:

«Հայ ժողովրդի պատմություն» ստվար (745 էջից է բաղկացած) աշխատությունը հրատարակվել է Մարի Լեոնյի խմբագրմամբ: Հավանաբար վերջինս էլ ընտրել է գրքի շապիկի սխալ նկարը, որովհետև Ժան-Պիեռ և Աննի Մահենները հիանալի գիտեն Հայաստանի պատմությունը ու կարող էին գրքի շապիկին դնել Մարտիրոս Սարյանի «Հայաստան» պանոն, Անիի հրաշք ճարտարապետությունը ներկայացնող որևէ նկար, Գրիգոր Խանջյանի «Ավարայրի ճակատամարտը» սքանչելի կտավի պատկերը և նման՝ հայ ժողովրդի պատմությանը պատշաճող նկար:

Գրքի բնաբանը Հովհաննես Թումանյանի 1902 թվականին գրված «Հայոց լեռներում» բանաստեղծությունն է՝ ամբողջությամբ: Սա բացառիկ խոսուն բնաբան է, որովհետև այն հանճարեղ ձևով ներկայացնում է Հայաստան երկրի ողջ ընթացքը և ավարտվում է մարգարեական լավատեսությամբ.

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկնքի ծերին,
Թե երբ կրբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:¹

Նախաբանում Ժան-Պիեռ Մահեն պատմությունը որպես գիտաճյուղ համարում է մշտապես պրոբլեմատիկ, որովհետև իրադարձություններն այնպես չեն պատմվում, որ պահպանված պատմությունը լիովին պատասխանի տվյալ ժամանակահատվածի հարցերին և վերականգնի պատմության ճշմարտացի ընթացքը: Նրա կարծիքով նոր օրերում խիզախություն է հարկավոր ճշգրիտ ներկայացնելու Հայաստանի կամ հայ ժողովրդի պատմությունը: Անշուշտ, հայագետն ի նկատի ունի հայ ժողովրդի պատմության նենգափոխումը թուրք-ադրբեջանական ներկա պատմաբանների կողմից: Եվ նման դժվարություններ չկան, եթե մեկը ցանկանա վերականգնել Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի կամ Իսպանիայի պատմությունը:

Երեք հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը, որը XXI դարում զբաղեցնում է հին Հայաստանի տարածքի մեկ տասներորդը, շարունակում է ունենալ հայրենիքը լքողներ, որոնք բնակություն են հաստատել աշխարհի չորս անկյուններում՝ ձևավորելով սփյուռքը:

Հայաստանը հին դարերի քաղաքակրթությունների մեջ, որի տարածքը Միջերկրական ծովից ձգվել է մինչև Հնդկաստան, շարունակել է պահել իր ազգային դիմագիծը: Հայաստանի պատմության մեջ շատ են առասպելները:

¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ տասը հատորով, Երևան, 2018, էջ 223-224:

Ժան-Պիեռ Մահեն Հայաստանի պատմությունը սկսում է Ք.Տ.ա. VI դարից և նկատում, թե մինչև III դարը այդ երկրի պատմության մասին հասել են փշրանքներ, որոնք առկա են հույն և լատին հեղինակների մոտ:² Հայաստանի Հանրապետության տարածքում պահվող հնավայրերը դրամատիկորեն անբավարար գիտելիքներ են հաղորդում Հայաստանի անցյալի մասին:

Հայագետը նշում է, թե Թուրքիայի ու Իրանի տարածքներում գտնվող հայկական հողի գաղտնիքները, ցավոք, հասանելի չեն հայերին: Մահմանային մասերում նույնպես գտնվում են հուշարձաններ, որոնք ևս հասանելի չեն հայերին:

405 թվականին՝ ազգային այբուբենի ստեղծումից հետո, սկզբնավորվում է հայկական պատմական գրականությունը, որը չի ընդհատվում քրիստոնեության ընդունումից հետո մեկ հազարամյակ: Այս պատմությունն այլևս դրսի աչքից չէ, այլ ներսից է, և հայացք է դեպի սեփական պատմությունն ու գրականությունը: Սա հնարավորություն է ընձեռում այդ պատմության մեջ գատել առասպելականը և այն համեմատել օտար աղբյուրների հետ:

428 թվականին՝ Արշակունիների դինաստիայի վերացումից հետո, պատմիչների մոտ հնչում են քննադատական խոսքեր թագավորների ու իշխանների հասցեին, որոնց քաղաքականության պատճառով վերացավ ազգային պետականությունը:

Ժամանակագրական ու պատմական այլ կարգի աղբյուրներ ևս կան: Դրանք քարերի վրա եղած վիմագիր արձանագրություններն են և գրական կամ պատմական և ընդհանրապես ձեռագրերի մեջ դրված հիշատակարանները: Վիմագիր արձանագրու-

² Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie des origines à nos jours, Perrin, 2012, p. 12.

թյունները հատկապես շատ են եկեղեցիների վրա:³ XV-XVI դարերն առավել դժվարիմաց են, մեծ ժամանակագիրները պակաս են, շատ տարածված են հիշատակարանները՝ արձակ կամ չափածո, որոնք կարևոր տեղեկատվություն են հաղորդում տվյալ ժամանակահատվածը վերականգնելու համար:

Փաստեր հաղորդում է նաև հայոց լեզուն՝ իր զարգացման տարբեր ժամանակահատվածներում կրած ազդեցություններով:

1975-1977թթ. Մահե ամուսինները 2 տարի եղել են Հայաստանում, դրանից հետո բազմիցս այցելել են Հայաստան, սակայն երկրի հետ ծանոթությունն էապես մնում էր գրքային՝ Կորյունը, Բուզանդի երկը, Բաֆֆու վեպերը: Մեծ էր նրանց զարմանքը. չնայած արդիականության մուտքին կյանքի բոլոր բնագավառները, հայագետներն ամենօրյա կյանքում նկատել էին հին ժամանակագիրների խոսքերն ու շարժուձևը: Ազգին ճիշտ հասկանալու նրանց ուղեցույցը սեփական ազգը լավագույնս ներկայացնող և 1841-ին գրված Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպն էր, հայ ազգային ոգու գերազանց քննությունը, որ ներկայացնում էր ազգի ճշգրիտ ընթացքը՝ ներկայի ու անցյալի:

Երեսունհինգ տարի է անցել Մահեների այդ հանդիպումից: Աշխատության 8-ից 11-րդ գլուխները (XIV-XIX դարեր) շարադրված են Երևանում հրատարակված (1967-1984) կոթողային «Հայ ժողովրդի պատմություն» 8 հատորների հիման վրա: Հայագետները նշում են, թե գրքում պատմել են Առաջին համաշխարհային պատերազմի և 1915-ի հայերի ցեղասպանության մասին, ինչպես նաև Հայաստանի խորհրդային տարիների: Հատուկ բաժին

³ 2008, 2010 թվականներին եղել էմ հայ Բագրատունիների Անի մայրաքաղաքում: 2010-ին մայր տաճարի պատը, որի վրա կար արձանագրություն, պայթեցրել էին, և արձանագրությունն այլևս չկար – Ա.Դ.:

է նվիրված Հայաստանի անկախությանը, որի 20-ամյա հոբելյանը նշվեց 2011-ին:

Հայագետների գիրքը շարադրված է ակադեմիական հետազոտություններին հատուկ պահանջների համեմատ: Հայաստանի պատմության ամեն կարևոր դարաշրջանի համար զետեղված են համապատասխան քարտեզներ, որոնք սկսվում են Ուրարտուից:

Մահեները «Հայաստանի պատմությունը» բաժանել են 15 գլուխների միջև, որոնք իրենց հերթին ունեն բազմաթիվ ենթաբաժիններ:

Առաջին գլուխը կոչվում է «Ծննդոց գիրք», Ք.Ճ.Ա. II հազարամյակ – Ք.Ճ.Ա. 331»: Այս գլխի բնաբանը ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ, նորարար Գիյոմ Ապոլիների (1880-1918) հետևյալ տողերն են՝

«Մեր պատմությունը քաջազգի է և ողբերգական
Ինչպես դիմակը մի բռնակալի (...)
Չկա մանրամասն անտարբեր (...):
Գիյոմ Ապոլիներ

«Հայաստանում, ավելի քան այլուր, աշխարհագրությունը նախատիպն է պատմության»⁴: Արարատը կամ Նոյի տապանի հանգրվանը ընծայել է երկրին պարբերական կործանումներ և վերածնունդներ: Տիգրիսի և Եփրատի ակունքները, որոնք իջնում են դեպի Միջագետք, օրորոցն են հնագույն քաղաքակրթությունների, այն մոտեցնում են անըմբռնելի Եդեմին, որտեղ ծնունդ առավ մարդկությունը:

363-ին պարսից Շապուհ Երկրորդը գերեց Հայաստանի սպարապետ Վասակ Մամիկոնյանին՝ ծաղրեց նրա ցածրահասակ

⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 19. Այսուհետ շարադրանքում կնշենք միայն Ժան-Պիեռ Մահեի անունը – Ա.Դ.:

լինելը և ասաց. «Ես քեզ առյուծ էի կարծում, սակայն դու միայն փոքրիկ աղվես ես»:⁵ Հայագետը փոքր-ինչ համառոտ կրկնում է Բուզանդի պատմության հետևյալ հատվածը. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով... մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա: Բայց երբ դեռ Վասակ էի, ես հսկա էի, մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը մյուս լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում՝ աջ կողմի լեռը գետինն էի կոխում. երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում»: Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Չի՞ լինի ասես, այդ ինչ լեռներ են, որ դու տափն էիր կոխում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց թագավորը»:⁶

Այս համարձակ խոսքերից հետո Շապուհը հրահանգում է Վասակին մորթազերծ անել և նրա խոտով լցված պաճուճապատանքը դնել գահընկեց արված Արշակ Երկրորդի դիմաց՝ Անհուշ բերդում:

Գրքում Մեծ Հայքի աշխարհագրական տարածքը նույնն է, ինչ որ տեսնում ենք 1818-ին Փարիզում լույս տեսած Մեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» աշխատության առաջին հատորում: Հայաստանի բարձր լեռները հանգած հրաբուխներ են, որոնց բարձրությունը 3500-ից մինչև 5000 մետր է: Այդ լեռներն են՝ Սիփանը, Նեմրութը, Արարատն ու Արագածը:

Հայաստանը լեռնային երկիր է, և առանձին գավառներ ձմռան ամիսներին երկար ժամանակով կտրվում էին միմյանցից:

⁵ Նույն տեղում:

⁶ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 261:

Որպես խոսուն օրինակ բերվում է Ակսել Բակունցի «Մթնաձոր» պատմվածքը: Առկա է հետևյալ մեջբերումը. «Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: ...Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում: ...Ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի Արևմուտք, Մթնաձորում սավերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում»⁸:

Հայագետը ներկայացնում է գավառների տեղական ինքնավարությունը, նահապետական հայ ընտանիքների կենցաղավարությունը:

Այս գլխի կարևոր ենթաբաժիններից է «Ուրարտու պետությունը»: Սույն հատվածում հայագետը Մովսես Խորենացուն համեմատում է հռոմեացի պատմիչ Տիտոս Լիվիոսի հետ:⁹ Խորենացին սկսում է իր հայրենիքի պատմությունը Նոյի տապանից և հասնում մինչև ազգային գրի գյուտը V դարում: Պատկերել է Բելի՝ Բել Մարդուկ նույնանունի բռնությունը Հայքի բարձր սարահարթի

⁷ Ժան-Պիեռ Մահեն գրեթե բոլոր տեղանունների բառացի թարգմանությունները ֆրանսերենով դնում է իր պատմության մեջ: Մթնաձոր - «Vallée obscure» (տե՛ս Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 21):

⁸ Ալ. Բակունց, Երկեր, Երևան, 1955, էջ 3:

⁹ Տիտոս Լիվիոս (59 կամ 64 Ք.ձ.ա. – 17 Ք.ձ.հ.) – հռոմեացի պատմիչ, գրել է «Հռոմի պատմությունը»՝ բաղկացած հարյուր քառասուներկու գրքերից: Իսկական պատմության փիլիսոփա, որը իդեալականացրել է Հռոմը, իր պատմությունը սոզոգրել խոր հայրենասիրությամբ (տե՛ս Petit Robert – 2, Paris, 1988, p. 1780):

բնակիչների վրա՝ Վանա լճի հյուսիս-արևմուտքում: Սա տեղի է ունեցել մեր թվարկությունից երկու հազարամյակ առաջ:

Խորենացին պատկերում է հայերի նախահորը՝ «Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով»¹⁰:

Հայագետը խոսում է ասուրական արքա Թիզլաթպալասար Առաջինի մասին, որը 1119 թվականին՝ իր թագավորության երրորդ տարում, հարձակվում է Նաիրի երկրի վաթսուն դաշնակից ցեղերի վրա. դա մի միություն էր խուրիական ցեղերի, որը գտնվում էր իր տիրակալության սահմանների մոտ՝ Վանա լճից արևմուտք և հարավ-արևմուտք:¹¹

Ժամանակակից հայ պատմագրությունն այս վաղնջական իրադարձությունների մասին հայտնում է. «XI դարում Նաիրի միությունը տրոհվում է և նորից հանդես է գալիս Ուրատրին, որը շուտով վերածվում է Ուրարտու թագավորության՝ որդեգրելով նաև Նաիրի անվանումը: Տեղական լեզվով գրված վիմագիր արձանագրություններից պարզվում է նաև նրա ինքնանվանումը՝ Բիահնիլի»¹²:

2015-ին լույս տեսած «Հայոց պատմություն» գրքում գրված է. «Մ.թ.ա. XII դարի սկզբին, իւթական պետությունը վերջնականապես ջախջախվեց այսպես կոչված «ծովի ժողովուրդների» հզոր խմբավորման հարվածներից, որը Փոքր Ասիա էր ներխուժել արևմուտքից: Մ.թ.ա. 1112թ. Ասորեստանի թագավոր Թիզլաթ-

¹⁰ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 22. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մայիսայանի, Երևան, 1981, էջ 39:

¹¹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 22.

¹² Հայ ժողովրդի պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Խմբագրությամբ պրոֆ. Մ.Գ.Ներսիսյանի, Երևան, 1985, էջ 17:

պալասար I-ը ներխուժում է Հայաստան: Ասորեստանցիների դեմ մարտակառքերով և հետևակային զորքերով, որոնց թիվը 22 հազար էր, պայքարի ելան Նաիրի երկրների 60 առաջնորդները: Հաջորդ դարի առաջին կեսին Ասորեստանի զորքերը ներխուժեցին Հայաստանի հարավային շրջանները: Պայքարը նվաճողների դեմ ավելի էր համախմբում ռազմաքաղաքական և տնտեսական ուժերը երկրի հարավային ուղղությամբ՝ Վանի ավազանում: Ժամանակի ընթացքում Նաիրին սկսեց հիշատակվել Արարատյան պետության Բիաինեղե (Վան) անվան հետ միասին, որի թագավորը կրում էր նաև «Նաիրի երկրների թագավոր» տիտղոսը»¹³:

Ասորեստանի թագավոր Ասուրնազիրապալ II (884-859) թագավորի ժամանակ հայտնի էր Ուրարտու պետության գոյությունը: Ուրարտու ասորերեն տեղանունը Հին կտակարանում կոչվում է Արարատ՝ մի լեռնոտ երկիր, որը գտնվում է Ասորեստանի հյուսիսում: Թագավորն է Արամուն (860-840), որն ունի արքայից արքա տիտղոսը. նա կարողացել է իր ձեռքի տակ հավաքել Վանի շրջակայքի բոլոր ցեղախմբերին՝ Բիայնա երկրի: Սա հավանաբար այն թագավորն է, որին Մովսես Խորենացին, ըստ բանավոր զրույցների, կոչում է Արամ.¹⁴ «Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»¹⁵: Արամուի հաջորդն էր Սարդուրե I-ը (840-830): Նա կառուցում է Տուշպա

¹³ Էդ. Դանիելյան, Աշ. Մելքոնյան, Հայոց պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2015, էջ 34-35:

¹⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 22.

¹⁵ Նույն տեղում: Տե՛ս նաև Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 53:

(Տոսպ, Վան) ամրոցը¹⁶, որը դառնում է պետության մայրաքաղաքը: Ուրարտուն շարունակում է ընդարձակել իր պետության սահմանները: Հյուսիսում Արգիշտի թագավորը (785-760) հիմնում է Էրեբունին (Երևանը), 782 թվականին, գրավում է Սևանի շրջապատը և հասնում է Ուրմիա լճի հարավային կողմերը:

Ուրարտերենով Սարդուրե I-ը և նրա հաջորդները թողել են սեպագիր արձանագրություններ, որոնք պատմում են նրանց հաղթանակների ու նվաճումների մասին: Վեց հազար վեց հարյուր ասորի գերիներ պարսպապատել են Էրեբունին, որը շուտով դառնում է թագավորության հատիկեղենի կենտրոնը: Խաղողագործությունը, պտղաբուծությունը, մանր ու խոշոր եղջյուրավոր կենդանիների բազմացումը շատ կարևոր էր: Զարգացած էր նաև ձիաբուծությունը: Մենուա արքայի արձանագրություններից մեկում նշվում է, թե նա իր ձիով թռել է 11 մետր:

Ուրարտունում կառուցվում են ամրոցներ և քաղաքներ: Քաղաքները կոչվում են դրանք հիմնող թագավորների անուններով՝ Մենուախենեղե, Արգիշթեխինեղե, Ռուսախինեղե: Դրանց մեջ ամենակարևորը՝ ինչպես Արգիշթեխինեղեն, ուներ պաշտպանական, վարչական, մշակութային, նստավայրային և գյուղատնտեսական գործառնություն: Այդ ամենն ուներ կենտրոնացված ղեկավարում: Բացի Թեյշեբախնեում գտնված մի քանի սալիկներից, ամեն ինչ կոթողային ձևով սեպագրված է քարի վրա: Ուրարտու քաղաքների ու ամրոցների քարե պատերն ունեին երկու, երեք մետր բարձրություն: Թագավորների ու կառավարողների պալատները այուներով էին, պատերը զարդաքանդակներով ու կենդանիների որմնանկարներով: Աստվածների տաճարներն ավելի բարձր էին մյուս

¹⁶ 2008 և 2010 թվականներին տեսել և բարձրացել ենք այդ ամրոցը – Ա.Դ.:

շինություններից: Ուրարտացիները քաղաքներն ու ամրոցները ապահովում էին քարի հիմքով կառուցված ջրմուղներով: Երբեմն նրանց ջրանցքներն իսկական արվեստի գործեր էին և ձգվում էին վաթսուն կիլոմետր և ջուր մատակարարում Տուշպա մայրաքաղաքին: Անշուշտ այն կառուցել էր Մենուա արքան, սակայն հայկական առասպելն այն վերագրում է Արա Գեղեցիկին սիրահարված Շամիրամին:¹⁷

Հայագետն ուրարտական աստվածների և հավատալիքների մասին խոսելիս առաջին հերթին կանգ է առնում Վան քաղաքի մոտ՝ Ժայռի բարձրության վրա գտնվող Մհերի դռան վրա: Դուռը մարդու ստեղծած ձեռագործ հուշարձան է, որը փակ դուռ է և առանց մուտքի. նրա հետևում սենյակ չկա: Հին հայերը շարունակ սպասում էին Խալդի աստծուն, որը դուրս էր գալու քարից: Հետագայում դուռը կապվում է ազգային էպոսի վերջին հերոս Փոքր Մհերի հետ, որը փակվում է Ագռավաքարում: Մհերի դռան վրա սեպագրերով նշվում են Ուրարտուի վաթսուն աստվածները:¹⁸

«Մասնա ծոեր» կամ «Մասունցի Դավիթ» էպոսի առաջին գրառող Գարեգին Սրվանձտյանցը ևս Մհերի դուռը կապում է ուրարտական ժամանակների հետ, երբ հայերի նախահայրերը գրում էին սեպագրերով. «Մհերի դուռը ամենալերջ քար է, գորտաշեր և կոկեր են մեծ դրան ձևով և վրան բևեռագիրեր գրած են՝ խիստ հստակ»¹⁹:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ևս «Մասունցի Դավիթ» էպոսի արմատները ձգում է մինչև ուրարտական ժամանակները. «Մասնասարի մասին Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու

¹⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 24.

¹⁸ Նույն տեղում, էջ 25:

¹⁹ Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 87:

ասած խոսքերը վերաբերում են ոչ թե էպոսի հերոսներին, այլ կիսաառասպելական հին իշխաններին՝ Արարատյան դաշտ տեղափոխված ասորական արքունի տան շառավիղներին: Նրանց մասին արված հիշատակությունները արտացոլում են ասորական թագավորների այն բուն պատմական արշավանքները, որոնք ուղղված էին մի երկրի դեմ, որը երկու-երեք դար հետո կոչվեց Հայաստան, իսկ այդ արշավանքների ժամանակ կրում էր Ուրարտու անունը»²⁰:

Խալդին, որը ուրարտացիների գերագույն աստվածն էր, իր հզորությամբ, փայլով ու կարողություններով իշխում էր մյուս աստվածներին:

Ուրարտացիներն ունեին սրբազան ծառ՝ սուին, որի տերևների սոսափյունի միջոցով գուշակություններ էին անում. «Բայց (Մար Աբասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ, թողնելով արու գավակ՝ գործով հզոր, խոսքով հանճարեղ Անուշավան Սոսանվերին, որովհետև նա (կրոնական) պաշտամունքի համաձայն նվիրված էր Արմենակի սուսի ծառերին Արմավիր քաղաքում, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց, նայելով քամու ուժին և ուղղությանը՝ մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություններ անել երկար ժամանակ»²¹:

Ուրարտուն հասավ իր բարձրակետին Մենուայի, Արգիշթե Առաջինի և Սարգուրե Երկրորդի գահակալության ժամանակ՝ 810-735թթ. ընթացքում: Հերոս Արամուի հիմնած պետությունը սկսեց թուլանալ ասորիների հարձակումների հետևանքով: Մենեքերիմ

²⁰ «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ XXXII.

²¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 77:

թագավորին սպանելուց հետո Ադրամելեքը ապաստանում է Ուրարտուում, ինչպես վկայում է Հին կտակարանը. «Ասորեստանի Սենեթերիմ արքան չվեց ու գնաց բնակվեց Նինվեում: Երբ նա երկրպագում էր Նեսրաք աստծու տանը, նրա որդիներ Ադրամելեքն ու Սարասարը նրան սրով հարվածեցին և Արարատի երկիրը փախան»²²:

Ռուսա Երկրորդի ժամանակ (690-665) սկյութացիները անցնելով Դաղստանը, ներկա Ադրբեջանի տեղում, հիմնեցին իրենց պետությունը, և նրանք սկսեցին հարձակվել Ասորեստանի և Ուրարտուի վրա: 616-605թթ. ընթացքում բաբելոնացիներն ու մարերը հարձակվում են Ասորեստանի վրա և նրան պարտության մատնում: Նրանք հարձակվում են նաև Ուրարտուի վրա: 593 թվականին Երուսաղեմի թագավոր Սեդեկիայի թագավորության չորրորդ տարում Երեմիա մարգարեն ընդդեմ Բաբելոնի օգնության է կանչում հետևյալ երկրներին. Դրո՛շ բարձրացրեք երկրի վրա, փող փչեցեք բոլոր ազգերի մեջ, զորագնդե՛ր կանչեցեք նրա դեմ: Իմ կողմից հրամա՛ն տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին, նրա շուրջը նետաձիգ սարքե՛ր կանգնեցրեք, հարձակվեցե՛ք նրանց վրա»²³: Ուրեմն այս ժամանակ Ուրարտուն դեռ գոյություն ուներ:²⁴ Հավանաբար 590-ին, երբ պատերազմ սկսվեց Լյոտիայի ու Մարաստանի միջև, նույն տարում առնվեց Թեյշեբայինին (Կարմիր բլուր), այրվեց, սրածվեց: Ամառ էր, բերքահավաք պետք է լիներ: Բիայնա պետությունը, ինչպես ուրարտացիներն անվանում էին իրենց երկիրը, ամբողջովին խորտակվեց:

²² Թագավորություններ, Դ, 19, 36-37:

²³ Երեմիա, 51, 27:

²⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 26.

Մահեների գրքի «Ծննդոց» գլխի ենթաբաժիններից է «Հայերի երևան գալը» բաժինը: Մովսես Խորենացին վկայում է, թե Պարույր Սկայորդին օգնում է Մարաստանի Վարկաբեա արքային սպանելու Ասորեստանի վերջին թագավոր Սարդանապալին: Վարկաբեաը Պարույրին ճանաչում է Հայաստանի թագավոր:

Առանձնակի ներկայացվում են Կյուրոսը և Տիգրան Հայոց արքան, որոնց մասին պատմում է Քսենոֆոնը իր «Կյուրոսապատումի» մեջ: Տիգրան Երվանդյանն օգնում է Կյուրոսին տապալելու Մարաստանի արքա Աժդահակին:

Ժան-Պիեռ Մահեն բացատրում է Աժդահակի զրադաշտական նշանակությունը: Վիշապ Աժդահակը Ահրիմանի ստեղծած էակն էր. ուներ երեք գլուխ, երեք պոչ և վեց աչքեր: Ըստ զրադաշտականների՝ նա չարի ոգին էր:

Mar բառն իրանական լեզվում նշանակում է օձ:²⁵

Հայագետը չափազանցնում է, երբ ասում է, թե հնագիտությունը սակավ փաստեր է տալիս ճշգրիտ ներկայացնելու հայերի նախնիներին: Նա հիանալի թարգմանել է Խորենացու պատմությունը ֆրանսերենով, և այս գրքի՝ Խորենացու պատմության թարգմանչի ընդարձակ առաջաբանը ներկայացնելիս կրեթվեն այդ փաստերը ըստ հայ պատմահոր:

519 թվականի Բեհիստունի արձանագրության մեջ Հայաստանը հիշատակվում է որպես առանձին երկիր: Քսենոփոնը հիշատակում է Հայաստանը որպես հարուստ ու բնակեցված երկիր Աքեմենյանների տիրապետության մեջ:²⁶ Քսենոփոնն իր «Անաբասիսի» մեջ գրում է. «Գետն անցնելուց հետո հելլենները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու ճանապարհի ընկան Արմենիայի միջով, և

²⁵ Նույն տեղում, էջ 28:

²⁶ Նույն տեղում, էջ 33:

ամբողջ ժամանակ դաշտավայրով և հողաբլուրներով գնալով, անցան ոչ պակաս քան հինգ փարսախ» (գլուխ IV, 1):

Միաժամանակ հայազետը չի մոռանում նշել, որ հայերը հիշում էին իրենց նախնիներին, և Խալդիի դուռը ընծայված է հայ մի հերոսի, որին ավելի ուշ կոչեցին Մեեր:²⁷ Ջրմուղը, որ կառուցել էր Մենուան, համարվեց Արային սիրահարված Շամիրամինը: Արամուն (Արամը) դարձավ հայերի նախահայրը, ինչպես Հայկը:

«Հայոց պատմության» երկրորդ գլուխը կոչվում է «Միապետություններ» (331 Ք.ժ.ա. – 6 Ք.ժ.ա.):²⁸ 331-ին Ալեքսանդր Մակեդոնացին հաղթում է վերջին Աքեմենյան թագավոր Դարեհ Երրորդին: Անցնելով Կիլիկիայով ու Միջագետքի հյուսիսով՝ Ալեքսանդրն իրականում շրջանցեց Հայաստանը՝ կործանելու համար Բաբելոնը, Պերսեպոլիսը: Համարելով, թե ինչպես Աքեմենյանների մյուս սատրապությունները, այնպես էլ Հայաստանն իրենն է, շարժվեց առաջ: 323-ին Ալեքսանդրի մահից հետո Հայաստանը չկա բաժանված երկրների ցուցակում:

301-ին Սելևկոս Առաջինը (312-281), որն արդեն Իրանի ու Կենտրոնական Ասիայի տերն էր, գրավեց Կապադովկիան, Ասորեստանի մի մասը և ողջ Հայաստանը, ուր նա իրեն ենթարկեց Երվանդունիներին:²⁹

Հայազետը հիշատակում է Նեմրութ լեռան վրա հիմա էլ գտնվող Երվանդունիների սրբավայրը՝ հսկա քանդակներով, որ-

²⁷ Նույն տեղում, էջ 34:

²⁸ Նույն տեղում, էջ 37:

²⁹ Նույն տեղում, էջ 38:

տեղ հայ թագավորների նախնիներն աստվածացված են որպես Զևս – Արամազդ և Հերակլես – Վահագն:³⁰

Մեծ Հայքում թագավոր է դառնում Արտաշեսը: Մովսես Խորենացին ժողովրդական բանահյուսության ոգով պատմում է Արտաշեսի հաղթանակները՝ հաղթելը չար և բռնի գահը զավթած (ուգուրպատոր) Երվանդին և գահը հետ վերցնելը: Իբր Երվանդն ունեցել է չար այք ու իր հայացքով կարող էր սպանել մարդկանց: Այս Երվանդը կոտորում է Սանատրուկի բոլոր զավակներին, և փրկվում է միայն նորածին Արտաշեսը: Երվանդը փոխում է Արաքսի ափին գտնվող արքայական նստավայր Արմավիրը և փոխարենը կառուցում է Երվանդակերտ ամրոցն ու Երվանդաշատ քաղաքը՝ կորած այգիների մեջ: Նա նաև Արմավիրից Բագարան է տեղափոխում հեթանոս աստվածների արձանները: Այս փաստերը հաստատվում են նաև հունական արձանագրություններով:

Արտաշեսն արքունիքում ապրում էր իր որդիների հետ, որոնց տրված էին զինվորական ու հոգևոր մեծ արտոնություններ: Արքունիքի անդամները ըստ աստիճանակարգի գրավում էին իրենց գահերը: Երկրորդ գահը տրվում է Արգամին կամ Արգավանին, որը մի ժամանակ օգնել էր Արտաշեսին գահ բարձրանալ՝ ազատվելով Երվանդից: Արքան ավելի ուշ բացահայտում է Արգավանի՝ իր դեմ խարդավանք պատրաստելը և Մաթենիկի՝ թագուհու հետ սիրո կապ ունենալը, և սպանել է տալիս Արգամին:

Հովհաննես Թումանյանը, որ հայ ժողովրդական բանահյուսության մեծ գիտակ էր, հատուկ հոդված է գրել «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» խորագրով, որում հերքում

³⁰ Նույն տեղում, էջ 39: Այդ վիթխարի արձաններից ցուցադրվում են Լոնդոնի Բրիտանական թանգարանի առանձին սրահում, որը կոչվում է «Նեմրուծ դադ» - Ա.Դ.:

է Սաթենիկի և Արգավանի միջև սիրային կապի գոյությունը. «Մի հանգամանք էլ գալիս է ապացուցելու, որ Սաթենիկինը՝ անհատինը, չի այդ տենչանքը: ...Սաթենիկ թագուհին (50 տարեկան) տոփական սեր չի ցույց տվել դեպի վիշապագունների նախարարը (80 տ. անց)»³¹:

Արտաշեսը չէր կարող նստել Հայաստանի հին մայրաքաղաք Արմավիրում, ոչ էլ իր թշնամու անունը կրող Երվանդաշատում: Ըստ հելլեն արքաների սովորության, հարկ էր, որ նա ունենար իր անունով նստավայր՝ Արտաշատ: Եվ գահակալության չորս թե հինգ տարիներից հետո իրականացնում է իր ծրագիրը: Մայրաքաղաքի տեղը թելադրում է Կարթագենի նշանավոր գորավար Հանիբալը³², որն ընտրում է Արաքս ու Մեծամոր գետերի միջև 12 բլուրներով շրջապատված վայրը՝ տալով նաև քաղաքի հատակագիծն ու դրա պաշտպանական եղանակը: Արտաշատն իր դիրքով դառնում է միջազգային առևտրի կենտրոն, որը կապում է Ազովի ծովը, Էկրատանը և ավելի հեռու՝ Հնդկաստանը, Կենտրոնական Ասիան և Չինաստանը: Արտաշեսի ժամանակ հայերն ունեին սեփական օրացույցը, և տարվա յուրաքանչյուր ամիսն ուներ իր անվանումը:

³¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ տաս հատորով, հ. VI, Երևան, 1994, էջ 20:

Ցարդ չհասկացված Խորենացու մեջբերած գողթան երգի հատվածն է.

Տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին

Տենչանս՝ զարտախուր խաւարտ

Եւ գտից խաւարծի

Ի բարձիցն Արգաւանայ (տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք առաջին, Լ(ԼԱ):)

³² Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 45.

Մեծացած տարածքով և հզորացած ռազմական ուժով հայկական պետականությունը դառնում է կարևոր ուժ Փոքր Ասիայում ու Մերձավոր Արևելքում:

Արտաշեսը ծեր հասակում արշավանք է կազմակերպում դեպի Ուրմիա լճի հյուսիսը, սակայն հիվանդանում է: Նա խնդրատու պատգամաբեր է ուղարկում Երիզա՝ Անահիտ աստվածուհուց փրկություն խնդրելու: Պատգամաբերի վերադառնալուց առաջ ավանդում է հոգին՝ արքայական կյանքի կարոտը սրտում: Մահեն մեջբերում է Գրիգոր Մագիստրոսի թղթերից մեկում գետեղված Արտաշես արքայի անսահման կենսասիրությամբ լցված հետևյալ տողերը.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարզելն եղջերուաց,
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորաց:³³

Ըստ Մովսէս Խորենացու հայագետը ներկայացնում է, թէ ինչպէս Արտաշես արքան Հայաստանը առաջ է մղում գիտության, արվեստի, կենցաղավարության բնագավառում. «Նույնպէս և չկար նավագնացություն մեր աշխարհի ծովակների վրա, ոչ էլ ճանապարհորդություն գետերով»³⁴:

Իր երկրի կարգ ու կանոնը զարգացնելու համար Արտաշեսը հրավիրում է օտարազգի գիտունների ու վարպետների: Նա

³³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87: Այս հատվածին Գրիգոր Մագիստրոսը կցում է հետևյալ բացատրությունը. «Եւ գայս ասեն ի վախճանելն իւրում, զոր և ի գոեհիկս աւանդեալ գտաք»:

³⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 45. Տե՛ս նաև Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, էջ 227:

նան ստեղծում է ազգային օրացույց. տարվա ամիսներից ամեն մեկը ստանում է առանձին անվանում:

Այս բաժնի ենթազուխներից մեկը կոչվում է՝ «Հայաստանը, միջազգային հզորություն»:

Հայաստանը շարունակում էր հարձակումների ենթարկվել օտարերկրյա ուժերի կողմից, ու հայերի էլքն այդ վիճակից ազատվելու համար ուժեղ կայսրության ստեղծումն էր, որ դիմադրի արևելքից ու արևմուտքից եկող հարվածներին: Այդ կարևորագույն խնդիրը լուծում է Տիգրան Երկրորդը կամ Մեծը:

Տեղին է հիշել ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեի՝ Նիկողայոս Ադոնցի «Քննական պատմություն Հայոց» աշխատության համար գրված առաջաբանում Տիգրան Մեծին տրված գնահատականը. «Նա նույնիսկ կխուսափի մակեդոնական հաղթանակի գոհ դառնալուց, և դրանից հետո հելլենիստական անիշխանության շնորհիվ է, որ հին Հայաստանը կհասնի իր ընդարձակման գագաթնակետին, և դա կլինի Տիգրան թագավորի օրոք: **Սա մի չճանաչված մեծ իշխող է, որ, անկասկած, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությանը», մինչդեռ Տիգրանն իր ժողովրդին ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»³⁵:**

Տիգրանն անմիջապես վերցնում է «Յոթանասուն գետահովիտները»: Այնուհետև արշավում է պարթևների ամառային նստավայր Էկբատանի վրա: Արքայից արքա Տիգրանի կայսրությունը շատ մեծ էր, նրա մեջ մտնող երկրների ժողովուրդները խոսում էին տասնհինգ տարբեր լեզուներով, չունեին ընդհանուր պատմություն

³⁵ Ն. Ադոնց, Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 29:

և տարբեր էին պատմական ընթացքով:³⁶ Տիգրանը Մելնկյանների օրինակով նշանավոր օտարերկրյա քաղաքներին տալիս է ինքնավարության իրավունք: Անտիոքում նա իր պատկերով դրամ է հատում:³⁷

Տիգրանն իր մեծ տերության կենտրոնում կառուցում է նոր մայրաքաղաք՝ Տիգրանակերտը: Մայրաքաղաքը չափազանց գեղեցիկ էր. «Տիգրանակերտը կառուցվել էր քաղաքաշինության բոլոր կանոններով՝ հզոր պարիսպներով և միջնաբերդով պաշտպանված արքունիք՝ պալատ, բնակելի թաղամասեր, թատրոն: Այստեղ էին տեղափոխվել հելլենիստական տասներկու քաղաքների բնակիչներ: Անտիկ հեղինակները մեծ հիացմունքով են խոսել մայրաքաղաք Տիգրանակերտի մասին: Տիգրանը կառուցեց իր անունը կրող ևս մի քանի քաղաքներ՝ Արցախում և Ուտիքում, Գողթն գավառում (Տիգրանավան), ինչպես նաև Մարաստանում (Տիգրանա) և Ամանոսում (Տիգրանուկումե)»³⁸:

Հայագետը մեջբերում է Պլուտարքոսի հետևյալ հատվածը Տիգրան Մեծի մասին. «Լրա մոտ գտնվում էին շատ թագավորներ, որոնց ծառաների դիրքին էր դասել, իսկ նրանցից չորսին նա մշտապես իր մոտ էր պահում, որպես ուղեկիցներ կամ թիկնապահներ, և երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ քիտոններ հագած,

³⁶ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 51.

³⁷ Տիգրան Մեծի պատկերով դրամը տեսել եմ աշխարհի շատ թանգարաններում՝ Լոնդոնի Բրիտանական թանգարան, Բոստոնի „Fine art” և այլն: Այն 1936 թվականին մեր կուրսի ուսանողների հետ տեսել եմ նաև Բաքվի Ադրբեջանի պատմության թանգարանում: Էքսկուրսավարը Տիգրանին կոչեց Ադրբեջանի արքայից արքա: Երբ մենք ասացինք, որ Տիգրան Մեծը Հայաստանի արքայից արքա է, բացատրող կինը շարտեց ցուցափայտը և գայրացած հեռացավ:

³⁸ Էդ. Դանիելյան, Աշ. Մելքոնյան, Հայոց պատմություն, էջ 52: Տե՛ս նաև Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 52.

վագում էին կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով՝ ձեռքները կրծքներին խաչած կանգնում էին նրա երկու կողմում»³⁹:

Ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է Տիգրանի արքայական թագը, որի ամեն կողմում կային երկու արծիվներ, իսկ նրանց մեջտեղում՝ ութ թներ ունեցող աստղ, որը արքային դասում էր աստվածների շարքին: Հայկական բանավոր գրույցները Տիգրանին համարում են Վահագն աստծու հայրը, որը Հերակլեսի նման հերոսական գործեր է կատարել:⁴⁰ Պատմվում է նաև, թե ինչպես է Վահագնը հարդ գողացել ասորի Բարշամից, այն տանելիս թափել, և առաջացել է Հարդագողի ճանապարհը:

Հայագետը նույնացնում է Տիգրան Մեծին Տիգրան Երվանդյանի հետ ու ըստ Խորենացու կրկնում, թե Տիգրանն ինչպես է իր երկրում ստեղծում ոսկու, արծաթի, թանկարժեք քարերի առատություն, ընտիր զգեստներով զարդարում բոլորին: Դրանց մեջ տգեղները գեղեցկանում էին, իսկ գեղեցիկները նմանվում էին աստվածներին: Հետիոտն կռվողները դառնում են հեծյալներ, բոլորը հիանալի զինվում են և սնվում յուղով ու մեղրով:⁴¹

Տիգրանի միությունը Պոնտոսի արքա Միհրդատ IV Եվպատորի հետ ձեռնտու էր արևելյան սահմանները պաշտպանելու համար, սակայն միաժամանակ նրան պատերազմական իրադրություն մեջ է դնում Հռոմի հետ:

Տիգրանը համարձակ դիմադրում է Հռոմին: Տիգրան Մեծի արտաքին քաղաքականությունը հայագետը հիմնականում շա-

³⁹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 53.

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

քաղրում է ըստ Պլուտարքոսի և հռոմեական պատմիչ Դիոն Կասսիոսի:

Տիգրանին մեծ վտանգ էր սպառնում Պոմպեոսից, այսինքն Հռոմից, մյուս կողմից նրա համար նույնքան վտանգավոր էր պարթևների արքա Հրահատ III-ը: Տիգրանը կենտրոնանում է Մեծ Հայքի բուն հայկական տարածքները պաշտպանելու խնդրի վրա:

Պոմպեոսի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Տիգրան Մեծը հռոմեական մի ջոկատի թողնում է մտնել Արտաշատ: Հետո նա ներկայանում է Պոմպեոսին՝ քաղաքից դուրս գտնվող վրանում. իջնում է ձիուց, հանձնում է սուրը Պոմպեոսի արբանյակներին, հանում է թագը Պոմպեոսի առաջ ու երկրպագում նրան: Պոմպեոսը բարձրացնում է նրան, վերադարձնում է թագը և նստեցնում իր կողքին՝ մյուս կողքին նստեցնելով նրա որդուն՝ հորը դավաճանած Տիգրան Կրտսերին:⁴²

Տիգրան Մեծին հաջորդում է նրա որդին, որը փորձում է ճկուն քաղաքականությամբ զերծ մնալ թե հռոմեական և թե պարթևական վտանգներից:

Հայագետը նշում է, թե Խորենացին տեղյակ էր Հայաստանում բնակվող հրեա համայնքների մասին, որոնց բերել էին Տիգրան Երկրորդն ու նրա որդին՝ Արտավազդը.⁴³ «...և Տիգրանը Բարգավորանին հրամայեց՝ Մարիսացոց քաղաքից բերված հրեա զերիներին բնակեցնել Շամիրամի քաղաքում»⁴⁴: «Գերի տարան նաև Արտաշատում և Վաղարշապատում ապրող հրեաներին, որոնց նույնպես բերել էր նույն Տիգրան թագավորը»⁴⁵: Հրեաներին Հայաս-

⁴² Նույն տեղում, էջ 57:

⁴³ Նույն տեղում, էջ 60:

⁴⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 155:

⁴⁵ Նույն տեղում, էջ 365:

տանում վերաբնակեցնելու մասին վկայում է նաև Փավստոս Բուզանդը. «Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեա, որոնց Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինացոց աշխարհից»⁴⁶:

Մարկ Անտոնիոսը եռանդուն ձևով արշավանք է նախապատրաստում պարթևների դեմ և առաջարկում է Արտավազդին միանալ իրեն: Արտավազդը, միանալով հանդերձ, շատ վճռական չի գործում, և պարթևական արշավանքի ձախողման մեղքը Անտոնիոսը գցում է Արտավազդի վրա:

Հայագետը նկարագրում է, թե ինչպես է Անտոնիոսը թալանի ենթարկում ողջ Հայաստանը: Անգամ Երիզայից հափշտակում է Անահիտ աստվածուհու ոսկե արձանը ու ամենուր տեղակայում է հռոմեական պահապան զորքեր: Գերված Արտավազդին իր ընտանիքի հետ ուղարկում է Ալեքսանդրիա: Դիոն Կասսիոսն այսպես է նկարագրում Արտավազդի վախճանը. «Եվ մյուս գերիների հետ սրանց ևս իր առջևից Ալեքսանդրիա ուղարկելով իբր հաղթահանդեսի շքերթի համար, ինքը քաղաք մտավ մարտակառքի վրա և բացի այն ամենից, որ շնորհվեց Կլեոպատրային, նրան բերեց ընտանյոք հանդերձ նաև Արմենին (խոսքը Արտավազդի մասին է – Ա.Դ.), որը ոսկե կապանքների մեջ էր: Իսկ (Կլեոպատրան) նստած էր բազմության մեջտեղ, արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա: Սակայն բարբարոսները ոչ աղերսեցին նրան, ոչ իսկ երկրպագեցին, թեպետև նրանց շատ էին ստիպում՝ ...ազատություն խոստանալով, ...նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահե-

⁴⁶ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ.Մալխայանցի, Երևան, 1987, էջ 265:

ցին, բայց և նույն այդ պատճառով ենթարկվեցին խիստ չարչարանքների»⁴⁷:

Հայագետն ունի «Արտավազդի լեգենդը» բաժինը, որում ներկայացնում է Արտաշեսի որդի Արտավազդի՝ քաջքերից շղթայվելը Ագատ Մասիսի վրա: Այս լեգենդը համեմատվում է վրացական Ամիրանի էլբրուս լեռան մեջ շղթայվելու հետ:

«Հայաստանի պատմության» երրորդ գլուխը կոչվում է «Միաստվածություն» (6 Ք.ճ.ա. – 639 Ք.ճ.հ.):

Հռոմեացիները Հայաստանի գահին նշանակում են մի շարք թագավորներ:

Ք.ճ. հետո՝ առաջին դարում, նոր հարաբերություններ են սկսվում հայերի ու պարթևների միջև և հիմնվում է հայկական Արշակունի դինաստիայի գահակալությունը: Տրդատին հայոց թագավոր է հաստատում նաև Հռոմի կայսր Ներոնը: Այդ մասին Դիոն Կասսիոսը գրում է. «Ես, ո՛վ վեհապետ, Արսակեսի (Արշակի) հետնորդն եմ, Վոլոգեսուս և Պակորոս թագավորների եղբայրը, իսկ՝ քո ծառան: Ու եկել եմ ես դեպի քեզ, իմ աստծուն, երկրպագելու քեզ, ինչպես Միթրային, և թող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կամենաս, քանզի դու ես իմ վիճակը և իմ բախտը»: Իսկ Ներոնը նրան այսպես պատասխանեց. «Եվ դու լավ արեցիր անձամբ գալով այստեղ, որպեսզի քո ներկայությամբ իմ ներկայությունը վայելես, և այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց, ոչ ևս քո եղբայրները քեզ տալուց հետո պահպանեցին, ես բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանան, թե ես կարող եմ թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարգևել»⁴⁸:

⁴⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 62.

⁴⁸ Նույն տեղում, էջ 69:

Քրիստոնեության երևան գալը Հայաստանում կապված է Եղեսիայի արքա Աբգարի հետ: Աբգարին քրիստոնյա էր դարձրել Թադեոսը՝ Հիսուսի տասներկու առաքյալներից մեկը: Տրդատ Երրորդի⁴⁹ ժամանակ Տարոնի Աշտիշատի վանքը կոչվում է «Թադեոս առաքյալի աթոռ»:

Վաղարշը՝ Սանատրուկի որդին, հիմնում է նշանավոր քաղաք Վաղարշապատը, որում երկու դար հետո կառուցվում է Մայր Աթոռ Էջմիածինը՝ Հայոց կաթողիկոսների նստավայրը: Երիտասարդ Վարդգեսը, որն ամուսնացել էր Երվանդ Սակավակյացի քրոջ հետ, Վաղարշապատը դարձնում է ծաղկուն ավան, որն Արաքսի հովտով ուղի էր բացում դեպի Վրաստան ու Սև ծով:

Պարսկական ծագում ունեցող հայ Արշակունիների համար բոլորովին նոր միջպետական իրադրություն է սկսվում, երբ 224 և 227 թվականների ընթացքում պարսիկ Արտաշիրը՝ Պապակի որդին, Սասանի շառավիղներից, ապստամբում է Արտավան արքայի դեմ և հիմնում Սասանյան կայսրությունը, որը ձգտում է վերեկանգնել Աքեմենյանների փառքը ու վերադառնալ ճշմարիտ գրադաշտական կրոնին. այն դարերի ընթացքում աղավաղվել էր հեթանոսության պատճառով: Հայկական ավանդույթը իդեալականացրել է նախասասանյան Պարսկաստանի հետ ունեցած հարաբերությունները ու իրանական և պարթևական պարթև բառերը հայերենում ստացել են քաջ, հզոր, խիզախ նշանակությունները:⁵⁰

Ինչպես պատմում է Ագաթանգեղոսը, ապագա քրիստոնյա արքա Տրդատը, դեռ շատ մանուկ, ազատվում է արքայական ընտանիքի կոտորածից և տեղափոխվում Հռոմ:

⁴⁹ Իր բոլոր հետազոտություններում Ժան-Պիեռ Մահեն Տրդատ Երրորդին կամ Մեծին անվանում է Տրդատ Չորրորդ – Ա.Դ.:

⁵⁰ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 75.

252-ին Հայաստանը նվաճվում է պարսիկներից. Շապուհ արքան (240-270) երկիրը խաղաղեցնելու նպատակով արքա է դարձնում Ռամիզո – Արտաշիրին՝ կոչելով Արտավազդ IV (252-271):⁵¹ Միաժամանակ նա փորձում է մտցնել Ահուրա Մազդայի պաշտամունքը:

298-ին Մծբինում կնքվում է հռոմեա-պարսկական խաղաղության պայմանագիր, և գահ է բարձրանում Տրդատ III-ը (298-330): Վերստին վերականգնվում է Մեծ Հայքի հայկական թագավորությունը:

Հայերն ունեին իրենց սեփական աստվածներին ու գլխավոր սրբավայրերը, որոնք հայտնի են ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»: Արտաշատում էր գտնվում Տիր աստծու՝ Ապուլլոնի տաճարը, ինչպես նաև Անահիտ՝ Արտեմիսի, Թորդան գյուղում սպիտակաբառ Բարշամինայի, Անի-Կամախում, որը Արամազդ՝ Ջևսի նստավայրն էր, վերջինիս արձանն էր, Երզիայում ոսկեմայր Անահիտի, Թիլում Նանե՝ Աթենասի, Բագառիճում՝ Հերակլեսի և Աստղիկի՝ Աֆրոդիտեի:⁵²

Տաճարները շքեղ էին՝ զարդարված ոսկով ու արծաթով, թանկագին քարերով: Շոգ ամռանը Տրդատը Վարդավառի տունը⁵³ նշում էր Երիզայում, ուր Անահիտ աստվածուհուն նվիրում էին ծաղկեպսակներ և ծառերի թավ ճյուղեր: Վահագնի պաշտամունքը շատ կարևոր էր: Նա ծնվել էր կրակե ծովից և կոչվում էր վիշապների դեմ՝ հիշեցնում էր Սասանյանների Միիր աստծուն:

Հայերի քրիստոնյա դառնալը կապվում է Հռոմի կայսր Դիոկղետիանոսի (284-305) Հռիփսիմյան կույսերին հալածելու

⁵¹ Նույն տեղում, էջ 76:

⁵² Նույն տեղում, էջ 77:

⁵³ Հայագետը ֆրանսերենով Վարդավառը թարգմանել է „Rose de feu“:

հետ: Քրիստոնյա Հռիփսիմեն մայրապետ Գայանեի և մյուս կույսերի հետ փախչում է Հռոմից, հասնում Հայաստան: Հռիփսիմեի գեղեցկությունը հայտնի է դառնում, և Հայոց արքա Տրդատը կամենում է ամուսնանալ նրա հետ: Սակայն Սուրբ հոգուց ուժ ստանալով՝ Հռիփսիմեն հաղթում է Տրդատին: Չայրացած Տրդատը հրամայում է սպանել Հռիփսիմեին իր քառասուն ընկերուհիների հետ, որից հետո ստանում է խոզի կերպարանք ու շրջում Արաքսի եղեգնուտներում:⁵⁴

Ըստ Ագաթանգեղոսի է պատմվում Անակի որդի Գրիգորի՝ Տրդատի պալատում հայտնվելը: Գրիգորի հայրը՝ Անակը («Le Mauvaie» - վատախորհուրդ), սպանել էր Տրդատի հորը՝ Խոսրովին: Հոր հանցանքը քավելու համար Գրիգորը ծպտյալ ծառայության է անցնում Տրդատի արքունիքում:

Հայագետը նոր բացատրություն է տալիս Տրդատի կողմից քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու պատճառներին: Դառնալով աշխարհում առաջին քրիստոնյա երկիրը՝ Հայաստանը դառնում էր անկախ թագավորություն, այլևս կախված չէր կայսրի ցանկություններից, այլ միայն ամենահզոր Աստծուց:⁵⁵ Գրիգորը հեռատես էր. նա քուրմերի որդիներին դարձրեց քրիստոնյա քահանաներ: Տրդատը դարձավ քրիստոնյա, սակայն պետության կազմում չփոխեց ֆեոդալական աստիճանականությունը: Մնացին նույն նախարարներն ու իշխանները, ազատները, շինականները, որոնք օգտվում էին որոշակի ազատություններից, և ռամիկները, որոնք գյուղատնտեսությամբ զբաղվող բանվորներ էին: Հոգևորների և իշխանների միջև տեղի ունեցավ որոշ միաձուլում: Ձորանամակում նշված են հայ նախարարների՝ պետության մեջ ունեցած

⁵⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 78.

⁵⁵ Նույն տեղում, էջ 79:

դիրքերը: Ամենահզոր նախարարները բղեշխներն էին, որոնք սահմանապահ փոխարքաներ էին: Դրանք էին՝ Աղձնիք, Գուգարք, Սյունիք, Կորդուք:⁵⁶ Տիգրան Երկրորդի ժամանակ դրանք կոչվում էին նաև արքաներ: Գահնամակով որոշված էր յուրաքանչյուր նախարարի դիրքը արքունիքում: Մամիկոնյանները սպարապետ էին, այսինքն՝ երկրի զորքի հրամանատար, Բագրատունիները՝ թագադրող ասպետներ, Խորխոռունիները արքայապաշտ, Մարդպետները՝ գանձերի և կանանանց հսկիչը: Սուրբ Գրիգորը ոչ միայն քահանայապետ էր, այլև գլխավոր դատավոր ու աղքատների հովանավորը:

Տրդատի կատարած փոփոխությունները առաջացրին որոշ պարսկամետ նախարարների դժգոհությունը:

Պարսից արքունիքին իր հերթին հանգիստ չէր տալիս հայերի կրոնափոխությունն ու ինքնավարությունը:

Խախտելով Մծբինի պայմանագրերը՝ Շապուհ II-ը պատերազմ է սկսում Հռոմեական կայսրության դեմ: Տիրանը ստիպված մասնակցում է պատերազմին, գերվում է և Շապուհ Երկրորդի հրամանով կուրացվում:⁵⁷

Առանձին բաժին է «Արշակ Երկրորդը Հռոմի և Պարսկաստանի միջև» հատվածը:

Հռոմեացիները Հայոց գահին են նշանակում Արշակ Երկրորդին (350-368), որը կաթողիկոս է նշանակում վերստին Գրիգոր Լուսավորչի տոհմից Ներսեսին: Ներսես Մեծը (353-373) մեծ փոփոխություններ է մտցնում եկեղեցու օրենքներում: Հատկապես խստորեն արգելում է արյունակիցների ամուսնությունը և թաղման

⁵⁶ Նույն տեղում, էջ 80:

⁵⁷ Նույն տեղում, էջ 82:

ժամանակ կատարվող ողբասացությունը:⁵⁸ Իր հերթին Արշակ Երկրորդը խստություններ է իրականացնում նախարարների շրջանում: Խստորեն պատժում է Շիրակի և Արշարունիքի տեր Կամսարականներին: Որոշելով հենվել քաղաքների բնակիչների վրա՝ հիմնում է Արշակավանը, որը նախարարները և սուրբ Ներսեսը համարում էին անկարգությունների վնասակար վայր: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Արշակավանը ոչնչանում է կաթողիկոսի անեծքից առաջացած համաճարակից, իսկ ըստ Խորենացու՝ վերացվում ազնվականության միավորված ուժերից:⁵⁹ 358-ին Արշակը վերահաստատում է բարեկամությունը Հռոմի հետ և ամուսնանում է Հռոմի արքայական տնից Օլիմպիայի հետ: Այս ամուսնությունը դրամատիկ իրադարձությունների պատճառ է դառնում: Արշակի զարմիկ Տիրիթը գաղտնի սիրահարված էր Արշակի մյուս զարմիկ Գնելի գեղեցկուհի կնոջը՝ Փառանձեմին: Պատմվում է Գնելի սպանությունը՝ Տիրիթի կեղծ մատնության պատճառով, և Արշակի՝ Փառանձեմի հետ ամուսնանալը: Փառանձեմը սպանել է տալիս Օլիմպիային:

Արշակը երկկողմանի վտանգված էր թե Հռոմից և թե Պարսկաստանից: 364-ին Շապուհը հարձակվում է Հայաստանի վրա: Սպարապետ Վասակ Մամիկոնյանը հերոսաբար պաշտպանում է հայրենիքը: 368-ին Շապուհը Արշակին նետում է Անհուշ բերդը: Դավաճան Մերուժան Արծրունուց պաշտպանվելու համար Փառանձեմը 14 ամիս փակվում է Արտագերս բերդում և սպասում գահաժառանգ Պապին: Ամբոցը ընկնում է համաճարակի հետևանքով: Պարսիկներն ավերում են Հայաստանի քաղաքները: Նոր սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը Վաղես կայսեր (364-378)

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում:

օգնությամբ Պապին է վերադարձնում Հայոց գահը: 372-ին հայկական և հռոմեական ուժերը հաղթում են պարսիկներին, և Պապը դառնում է թագավոր:

Պապի ինքնիշխանությունն ու պարսիկների հետ դիվանագիտական կապեր հաստատելը անհանգստացնում է Վաղես կայսերը, որը Տերենտիանոսի միջոցով սպանել է տալիս Պապին: Նշվում է, թե Պապ թագավորը թունավորելու միջոցով սպանել է Ներսես Մեծին:⁶⁰

Պապին փոխարինում է Վարազդատը (374-378), որը խիզախ էր և արտակարգ ուժի տեր:⁶¹

387-ին Հայաստանը ոչ հավասար տարածքներով բաժանվում է Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև: Տարածքի մեծ մասն անցնում է Սասանյան Պարսկաստանի գերիշխանությանը:

Արդեն Տրդատ Առաջինի ժամանակ Հայաստանի հեթանոսական կրոնը հեռացել էր զրադաշտությունից և ուներ հելլենիզմի կնիքը: Շրջապատված երկու թշնամի երկրներով՝ Հայաստանը շարունակում է իր ազգային զարգացումը՝ ներկայացնելով իր մշակույթի երկու ճյուղերը: Այս տարբերությունը առկա է մինչև մեր օրերը:⁶²

389-401թթ. Հայաստանի գահն ազատ էր: Վերջապես Վռամշապուհը (401-417) գահ է բարձրանում: Վերջինս մտահոգ էր, որ

⁶⁰ Այժմ Փ.Բուզանդի հաղորդած այս տեղեկությունը հերքվում է՝ հենց նույն պատմիչի ներկայացրած Ներսեսի մահվան տեսարանով (տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 333):

⁶¹ Վարազդատը հաղթահասակ, արտակարգ ուժեղ, բազմակողմանի զարգացած մարզիկ էր. ըմբշամարտում դարձել է օլիմպիական խաղերի (385թ.) հաղթող (տե՛ս Ուլ ուլ է, հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007, էջ 529):

⁶² Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 86.

քրիստոնյա Հայաստանն ունենա գրոց լեզու, որպեսզի թարգմանվի Աստվածաշունչը: Հայերի նախնիները՝ ուրարտացիները, օգտագործում էին սեպագրերը: Մովսես Խորենացին ներկայացնում է բազմաթիվ գրավոր աղբյուրներ, որոնք կոչում է Մար Աբաս Կատինայի: Բացի այդ, հայերն իրենց նախնիների պատմությունը պատմում էին բանավոր, դրանից հատվածներ կան Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Հարկավոր էր պայքարել բանավոր աղբյուրների դեմ և սովորեցնել ու ամրապնդել Աստվածաշունչը: Ահա թե ինչու Մեսրոպ Մաշտոցը (363-439)⁶³ ստեղծեց հայոց այբուբենը:

Ժան-Պիեռ Մահեն Մաշտոց անունը բացատրում է «Vase de sagesse» («Իմաստության անոթ»), որը եղել է պատվանուն, տրվել է նրան ավելի ուշ: Անհայտ է նրա սոցիալական ծագումը. Կորյունը նրա հոր մասին ընդամենն ասում է «Երանելի Վարդան»⁶⁴:

Մաշտոցը հունարենին վարժված լինելով՝ քաջաձանոթ էր Սուրբ գրքերին. նա մեկնում է Սյունիք, ուր դեռ ուժեղ էր հեթանոսության ազդեցությունը, քարոզում է հայերենով, ու ծնվում է այբուբեն ստեղծելու գաղափարը: Նա փորձում է Դանիելյան նշանագրերը, որոնք բավարար չէին հայերենի հնչյունային համակարգի համար, և արքայի աջակցությամբ իր աշակերտների հետ մեկնում է Ամիդ, Եդեսիա քաղաքները՝ կատարելագործելու այբուբենի համակարգը:⁶⁵

⁶³ Մեսրոպ Մաշտոց (362 – 17.02.440), հայկական գրի ստեղծողը, հայ ինքնուրույն և թարգմանական գրականության սկզբնավորողը (տե՛ս Ով ով է, հայեր, հ. 2, էջ 99):

⁶⁴ Կորյուն, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ.Աբեղյանի, Երևան, 1962, էջ 95:

⁶⁵ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 89.

Հետևելով հունական այբուբենին՝ նա ստեղծում է հայկականը և այն ստեղծելիս ստանում է աստվածային ներշնչանք: Աստվածատուր գրերով 405-ին Մաշտոցը վերադառնում է Վաղարշապատ: Հայագետը փաստում է, թե Մաշտոցը գրեր է ստեղծել նաև վրացիների համար՝ Արչիլ (411-435) թագավորի օրոք, ինչպես նաև աղվանների:⁶⁶

Սահակ Պարթևն իր հերթին վկայարաններ է կառուցում Հռիփսիմեի, Գայանեի և մյուս նահատակ կույսերին նվիրված: Հռիփսիմեի և Գայանեի սրբատեղիների կենտրոնում բարձրանում է Էջմիածնի Մայր տաճարը: Սուրբ Սահակը խմբագրել է տալիս Գրիգոր Լուսավորչի վարքը:

Լուսավորիչն իր աչքով էր տեսել Հիսուսին, որը մատնացույց էր արել սրբատեղիները: Այս երևույթը հայերի մոտ պաշտամունքային նույն արժեքն ունի, ինչ Երուսաղեմում Հիսուսի սրբատեղիները: Եվ Մաշտոցի աշակերտները հենց սուրբ քաղաքում էլ թարգմանում են սրբազան բնագիրը:

Պարսից արքա Շապուհը սպանվում է իր եղբորից՝ Վռամից (421-439), որը 422-ին բյուզանդական Թեոդոս II կայսեր հետ կնքում է «հիսունամյա խաղաղության» դաշնագիր: Վռամը Հայաստանի վրա թագավոր է կարգում Արտաշես IV-ին (422-428): Մաշտոցը մեկնում է Կոստանդնուպոլիս: Իրավունք է ստանում Հայաստանի բյուզանդական մասում հայերենով դպրոցներ բացել: Բյուզանդական կայսեր համաձայնությամբ որոշ աշակերտների թողնում է Մելիտենում և Կոստանդնուպոլսում՝ հունարենից հայրաբանական գործեր թարգմանելու համար: Հետո աշակերտներ է ուղարկում Եդեսիա՝ ասորերենից թարգմանություններ կատարելու: Վռամ V-ը ստիպում է Հայոց արքա Արտաշես IV-ին փոխել

⁶⁶ Նույն տեղում:

անունը, կոչվել Արտաշիր և պալատական կյանքը կազմակերպել պարսկական ձևով: Հայ նախարարները դժգոհ էին Արտաշիր թագավորից ու որոշում են դիմել Պարսից արքային՝ նրան գահընկեց անելու համար: Նրանք դիմում են նաև Սահակ Պարթևին՝ իրենց միանալու, սակայն Սահակը հրաժարվում է՝ ասելով, թե իր մոլորված ոչխարը չի մատնի գայլերին:⁶⁷

Պարսից արքան կաթողիկոսությունից ազատում է նաև Սահակ Պարթևին:

Երբ Սահակ Պարթևը Պարսկաստանում էր, տեղի է ունենում երրորդ տիեզերական ժողովը՝ 431-ին Եփեսոսում՝ ընդդեմ նեստորականության: Եզնիկը Աստվածաշնչի ստույգ թարգմանության հետ Սահակ Պարթևին է բերում Եփեսոսի ժողովի ընդունած կանոնները: Եփեսոսի ժողովի աստվածաբանական կանոնները դառնում են հայոց եկեղեցու փորձաքարը, և Հիսուսի մայրը պաշտվում է որպես Աստվածածին:

Սահակ Պարթևի փոխարեն պարսիկները կաթողիկոս են նշանակում Շամուելին, որը 5 տարի հետո մեռնում է: Իշխանները դիմում են Սահակ Պարթևին և խնդրում վերստին դառնալ կաթողիկոս: Սակայն նա հանձն չի առնում: Հայագետը Սահակ Պարթևի մահը դնում է 438-ի սեպտեմբերի 7-ին և ըստ Խորենացու նշում, թե թաղված է Բլուր գյուղում: Նրանից հետո վախճանվում է Մեսրոպ Մաշտոցը՝ 439-ի փետրվարի 17-ին:⁶⁸

«Ոսկեդարի գրականություն» բաժնում ներկայացվում են հինգերորդ դարի հայ գրականության ձեռքբերումները: Սուրբ թարգմանիչներն իրենցից հետո թողել էին բազմաթիվ աշակերտներ, որոնք մատենագրության բնագավառում շարունակեցին

⁶⁷ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 431:

⁶⁸ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 92.

նրանց հոգևոր գործը: Աստվածաշնչի թարգմանության շնորհիվ հայերենը լայնացրեց իր արտահայտչամիջոցները և մշակութային հորիզոնը: Քաղաքակիրթ աշխարհի ծայրում գտնվելով՝ հայերը տեղեկացան այն ամենին, ինչ որ եղել էր աշխարհի ծննդոց օրվանից՝ համաշխարհային պատմությունները և վերջին իրադարձությունները: Հայերենը հարստացավ նոր բառերով, զարգացան գրական տարբեր ժանրերը: Յուրացնելով առաջին դարերում եղած հայրաբանական գրականությունը՝ հին հայերեն բազմաթիվ թարգմանություններ, ինչպես Փիլոն Ալեքսանդրացու գործերը, բնագրի արժեք ստացան՝ միայն հայերենով պահպանված լինելու պատճառով:

Միայն հայերենով է պահպանված Եվսեբիոս Կեսարացու Տիեզերական ժամանակագրությունը, որի միջոցով հնարավոր է իմանալ Միջագետքի ու Եգիպտոսի հելլենիստական պատմագրությունը, որը V դարի երկրորդ կեսին Հայաստանում ճանաչվեց որպես ոսկեդար: Բացի Գրիգոր Լուսավորչի «Վարքից», որը գրվեց Սահակ Պարթևի պատվերով՝ 428 թվականից առաջ, մյուս նշանավոր ազգային մատյանները գրվել են Արշակունիների թագավորության անկումից հետո:⁶⁹ Եզնիկն իր աստվածաբանական գործը շարադրեց 435-ին, Կորյունը ոգեկոչեց Մաշտոցի կյանքի պատմությունը 443-ի մոտերքը, 451-ին, երբ պարսիկները փորձեցին Հայաստանում վերացնել քրիստոնեությունը և տարածել զրադաշտական կրոնը, Տրդատի քարտուղար հույն Ագաթանգեղոսի դիմակի տակ թաքնված՝ գրվեց Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: 470-ական թվականներին ստեղծվեց Բուզանդի պատմությունը Արշակունիների մասին, որն ավարտվեց Հայաստանի երկուսի բաժանվելով՝ 384-387թթ.: Մամիկոնյաններին նվիրված՝ Ղազար

⁶⁹ Նույն տեղում, էջ 93:

Փարպեցին գրեց պատմություն, որն ավարտվում է 485 թվականով՝ Հայաստանի ինքնավարության ձեռքբերումով:

Ցավոք հետևելով Ռ.Թումսոնին՝ հայագետը ոսկեդարից դուրս է դնում Եղիշեին ու Մովսես Խորենացուն:⁷⁰ Հայ ակադեմիական պատմագրությունն այդ երկու պատմիչներին անվերապահ համարում է հինգերորդ դարի մատենագիրներ:

Սասանյաններից Հազկերտ Երկրորդը (435-457) վերջ դրեց Կովկասի քրիստոնյաների նկատմամբ պարսիկների ունեցած հանդուրժողականությունը: Նա պահանջեց, որ իր տիրապետության տակ գտնվող բոլոր ազգերն ընդունեն զրադաշտական կրոնը: Հայերի ռազմական ուժը թուլացնելու համար իշխաններին ուղարկում էր հեռավոր երկրներ՝ հոների դեմ կռվելու: Հազարապետ Վահան Ամատունուն ազատեց պաշտոնից:

Սուրբ թարգմանիչների աշակերտ Հովսեփ Հողոմեցին դարձավ Հայոց կաթողիկոս: Հայերը խիստ դժգոհ էին Հազկերտ Երկրորդի վարած քաղաքականությունից: 449-ին, երբ Հազկերտը հավատափոխության հրովարտակ է ուղարկում, հայերն այն մերժում են: Հազկերտը նրանց կանչում է Տիզբոն և ստիպում ընդունել զրադաշտությունը, այլապես կսպանի բոլորին ու կամայացնի ողջ Հայաստանը: Նախարարները որոշում են ձևանալ, թե կրոնափոխ են դառնում, որ ողջ ու առողջ վերադառնան հայրենիք, ուր վերստին կհետևեն քրիստոնեական կրոնին: Հազկերտը հայ նախարարների հետ Հայաստան է ուղարկում մոզերի մի մեծ խումբ: Երբ Անգղում մոզերն ուզում են կատարել իրենց ծեսը, ամբոխը Ղևոնդ երեցի գլխավորությամբ հարձակվում է նրանց վրա ու քարկոծում:

⁷⁰ Նույն տեղում:

Վարդանը և մի խումբ նախարարներ որոշում են ապստամբել: Մարզպան Վասակ Սյունին պատգամավորություն է ուղարկում Բյուզանդիայի կայսրին՝ օգնության գալու: Վերջինս զբաղված էր Դանուբի մոտ հոների հետ կռվելով և հրաժարվում է օգնել: Վասակ Սյունին հեռանում է ապստամբներից: Հայերի բանակը 451-ի հունիսի 2-ին ջախջախվում է Արտազ գավառում:⁷¹ Վարդան Մամիկոնյանի հետ Ավարայրում զոհվածները սրբացվել են Հայոց եկեղեցու կողմից, նրանց նվիրված է հատուկ օր, որը մինչև այսօր նշվում է որպես ազգային տոն: Պարսիկների կորուստները նույնպես մեծ էին: Հազկերտը կանչում է Վասակ Սյունեցուն, որին անմիջապես մահվան է դատապարտում: Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և Ավարայրի դաշտում գերված մյուս հոգևորականները տարվում են Նյուշապուհ, ուր նահատակվում են 454-ին: Հայ եկեղեցին պատվում է նրանց սուրբ Ղևոնդյանք տոն անունով:

455-ին Աշուշան՝ Վրաստանի բղեշխը, որը նույնպես գերի էր Պարսկաստանում, ազատ է արձակվում ու Վրաստան վերադառնալուց հետո իր մոտ է հավաքում Մամիկոնյանների երեխաներին: Նրանց մեջ էին Վահանը՝ Հմայակ Մամիկոնյանի որդին, և նրա ընկերը՝ Ղազարը՝ Փարպի գյուղից: 476-ին Վազգենը՝ Աշուշայի որդին, որն ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի հետ, ընդունում է զբաղաշտականություն՝ պատճառ դառնալով իր կնոջ նահատակության, որը չընդունեց իր հավատուրաց ամուսնուն:

484-ին հայ-վրացական ուժերը ապստամբում են պարսիկների դեմ: Այն պահին, երբ վերջիններիս համար ճակատագրական պահ էր, հեփթաղների դեմ մղված մարտում սպանվում է Պարսից

⁷¹ Ավարայրի ճակատամարտի ընդունված թիվն է 451 թվական, մայիսի 26:

արքա Պերոզը: Նոր արքան՝ Վաղարշը (484-488), Վահան Մամիկոնյանի հետ Նվարսակ գյուղում կնքում է հաշտության պայմանագիր: Ըստ այդ պայմանագրի՝ հայերը շարունակում են մնալ քրիստոնյա, և պարսիկները չպետք է խառնվեին Հայաստանի ներքին ինքնավարությանը: 485-ին Պարսից արքունիքը Վահան Մամիկոնյանին նշանակում է Հայաստանի մարզպան: Վահանի մարզպանությունը նման էր թագավորության վերականգնմանը՝ վերացված կես դար առաջ:⁷² Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալը օրհնում է Հայոց կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունին, և ինչպես վկայում է Ղազար Փարպեցին, նույն ժամին սաղմոսել տվեց. «Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զՏէր յաղբերացն Իսրայէլի»:⁷³ Կաթողիկոսը հրահանգում է «Գիրք թագավորացից» կարդալ այն հատվածը, ուր ներկայացվում է, թե ինչպես է Դավիթը թագավորեցնում իր որդի Սողոմոնին:

451-ին տեղ է ունենում չորրորդ տիեզերական ժողովը Քաղկեդոնում, որին հայերը չեն մասնակցում պարսիկների դեմ պատերազմելու պատճառով: Ժողովի հիմնական խնդիրն էր որոշել՝ Հիսուսը երկբնակ է, թե միաբնակ: Որոշվում է, թե Հիսուսն ունի երկու բնույթ՝ նաև՝ մարդ է, և՛ Աստված: Բաբկեն Ա կաթողիկոսը 506-ին Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որին մասնակցում են մարզպան Վարդ Մամիկոնյանը, հայ, վրացի, աղվան, ասորի

⁷² Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 97.

⁷³ Նույն տեղում: Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրթ Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 434:

բարձրաստիճան հոգևորականներ: Հայերն ընդունում են հակա-
քաղկեդոնական որոշում:⁷⁴

Բյուզանդական կայսր Հուստինիանոսը (527-565) Արևմտյան Հայաստանում վարչական և օրենսդրական լուրջ փոփոխություններ է կատարում: Նա փոխում է հայ նախարար-
ների ժառանգական իրավունքները՝ պահանջելով ենթարկվել
կայսրության բուն օրենքներին: Սա ստիպեց շատ հայերի թողնել
հայրենիքը և հաստատվել կայսրության արևմտյան նահանգնե-
րում:

Աբրահամ Ա Աղբաթանեցու ժամանակ (607-615) տեղի է
ունեցել հայ և վրաց եկեղեցիների խզումը: Աբրահամ Ա Հայոց
կաթողիկոսը նզովում է Կյուրիոնին՝ Վրաստանի կաթողիկոսին, և
ընդմիջտ բաժանվում են Հայոց ու Վրաց եկեղեցիները:

Ժան-Պիեռ Մահեն ներկայացնում է, թե ինչպես բյուզանդա-
կան Մորիկ կայսրը ու պարսից արքա Խոսրովը ջանում էին
ազատվել հայերից: Բյուզանդական կայսր Մորիկը նամակ է գրում
Խոսրով արքային հետևյալ բովանդակությամբ. «Ազգ մի խոտոր և
անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց է՛կ,
ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ, և դու զքոյդ ժողովէ և
հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, և
եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն, և մեք կեցցուք խաղաղու-
թեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, և մեք կեցցուք
խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ
հանգչել ոչ լինի»⁷⁵:

⁷⁴ Այդ որոշումը անկյունաքարային նշանակություն է ունեցել Հայոց
եկեղեցու ինքնուրույնության համար (տե՛ս «Ամենայն հայոց կաթողիկոս-
ներ», էջ 36):

⁷⁵ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 102. Սեբեոս,
Պատմութիւն, Աշխատասիրությամբ Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979, էջ 86:

Հիշատակվում է Սմբատ Բագրատունու խիզախությունը պատկերող հատվածը: Վերջինս փորձում է հայկական զորքերն ուղղել կայսրության դեմ, բռնվում է ու նետվում կրկես: Նրա վրա արձակում են արջ, ցուլ և վերջում առյուծ: Նա հաղթում է բուրբին: Դրանից հետո նրան ներում են շնորհում և ուղարկում Աֆրիկա՝ «և առնել զնա անդ ի զարացն, որ էին անդ՝ տրիբուն»⁷⁶:

Պարսից Խոսրով արքան, որը Կովկասի տերն էր, նվաճում է նաև Սիրիան ու Պաղեստինը: 614-ին գրավում է Երուսաղեմը և գերի տանում Տիրոջ խաչը:

618-ին Կուփտաս կաթողիկոսը Վաղարշապատում Հռիփսիմեի գերեզմանի վրա կանգնեցնում է մի հոյակապ տաճար և այդ առիթով հորինում է հայերենի այբբենակապով երեսունվեց տնից բաղկացած շարական:

Բյուզանդական Հերակլ կայսրը (610-641) հայերի օգնությամբ փայլուն հաղթանակներ է տանում Արևելքում: Խոսրով արքան սպանվում է, Հիսուսի խաչը Հայաստանի տարածքով տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, ապա Երուսաղեմ: Սուրբ խաչը հանդիսավոր ձևով ազատվում է գերությունից: Այն տանում են Գևորգը, Դավիթը, Վահանն ու Սմբատը:⁷⁷ Վերջին երկուսն անժխտելիորեն հայեր էին: Այդ ժամանակահատվածի հետ է կապվում Խաչի բազմաթիվ մասունքների Հայաստանում գտնվելը: Քանզի Սյունիքի իշխանուհուն Հերակլը մերժում է խաչից մասունք տալ, կատարվում է հրաշք: Խաչից կտրվում է մի կտոր և մնում Հայաստանում: Կամենալով Հայաստանի եկեղեցին միացնել բյուզանդականին՝ Հերակլը Կարին քաղաք է հրավիրում Եզր կաթողիկոսին (630-641) և նրա քարտուղար Թեոդորոսին: Նրանք ստիպ-

⁷⁶ Նույն տեղում, էջ 93:

⁷⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 103.

ված ժամանակավոր ընդունում են կայսեր առաջարկը: Կրոնական խաղաղություն հայերի մոտ հաստատվում է, երբ հանկարծակի քաղաքական թատերաբեմ են բարձրանում արաբները՝ կործանելով Մասանյան կայսրությունը: Հայերն այսպիսով ազատվում են կրոնափոխության սպառնալիքից, որը նրանց ճնշում էր երեք դարեր ի վեր:⁷⁸

«Հայաստանի պատմության» IV գլուխը կոչվում է «Խալիֆաթ» (639-884):

637 թվականը ճակատագրական էր արաբների համար: Այդ ժամանակ Արևելյան Հայաստանն իրեն զգում է պարսկական լծից ազատ: Ջորավար Թեոդորոս Ռշտունին, որը նստում էր Վանի Աղթամար կղզում, դառնում է Արևելյան Հայաստանի տերը. նա փորձում է միացնել Հայաստանի երկու մասերը և վերականգնել անկախությունը:⁷⁹

Հայաստանը միավորվում է, և Ռշտունուն բյուզանդացիները ճանաչում են որպես Հայաստանի տեր. 384-387 թվականներին երկու մասի բաժանված Հայաստանը ստանում է ընդհանուր հայ ղեկավար:

«Հայաստանի պատմությունը» գրքում կա «Հայ ճարտարապետության ոսկեդարը» ենթաբաժինը:

Ազատագրված ու միավորված Հայաստանը ունենում է խաղաղ տնտեսական և մշակութային փայլուն զարգացում, որը համեմատելի է Արտաշեսյանների ու Արշակունիների ծաղկուն տարիներին: Զարգանում են հայկական քաղաքներ՝ Նախիջևանը, Դվինը, Վաղարշապատը, Արուճը, Բագարանը, Շիրակաշատը, Թալինը, Երևանը և Մարմետը: Շապուհ IV-ի ժամանակից սկսած

⁷⁸ Նույն տեղում, էջ 103:

⁷⁹ Նույն տեղում, էջ 105:

երկիրն այդքան ավաններ ու քաղաքներ չէր ունեցել: Չարգանուս են կավագործությունը, ապակեգործությունը, զինագործությունը, երկաթագործությունը, արուրագործությունը, ոսկերչությունը, կտավագործությունը, գորգագործությունը: Հայ վաճառականները Հնդկաստանից ներկրում են մարգարիտներ և թանկարժեք քարեր:⁸⁰

Հինգերորդ դարը ճանաչվեց որպես հայ գրականության ոսկեդար, իսկ յոթերորդ դարը նշանավորվեց որպես հայ ճարտարապետության և քանդակագործության բարձրակետ:⁸¹

VI դարում կառուցվեցին Մաստարայի և Ավանի հիասքանչ եկեղեցիները: Յոթերորդ դարում ի հայտ եկան հայ ճարտարապետության նոր ձևեր՝ ավելի գեղեցիկ, ինչպես ութանկյուն Իրինդի եկեղեցին և բոլորաձև Չվարթնոցի տաճարը՝ քանդակված նրբագույն զարդաքանդակներով: Սակայն այդ շքեղ կառույցները կանգուն ձևով չեն պահպանվել: Վեցերորդ դարում հանդես եկավ նորալատոնականության նշանավոր դեմք Դավիթ Անհաղթը, իսկ յոթերորդ դարում մաթեմատիկոս Անանիա Շիրակացին, որը և՛ թվաբան էր, և՛ երաժիշտ, և՛ երկրաչափ, և՛ տիեզերագետ: Նրան է պատկանում նաև Աշխարհացույցը, որում Հայաստանը մի լայնածավալ երկիր է:

699-701 թվականներին արաբները արյունալի կոտորածներով իրենց իշխանությունը հաստատեցին Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա և այդ անձայրաձիր նահանգը կոչեցին Արմենիա:⁸²

⁸⁰ Նույն տեղում, էջ 110:

⁸¹ Նույն տեղում, էջ 110:

⁸² Նույն տեղում, էջ 112:

Ժան-Պիեռ Մահեն չի մոռանում ըստ Ղևոնդի պատմության ներկայացնել իշխանուհի Շուշանի մեծահոգությունը, որը փրկում է 300 արաբ զինվորների կյանքը. «Մի փոքր մասը, մոտավորապես 300 մարդ, փախուստի դիմելով՝ ապավինեց տիկին Շուշանին: Սրանց իր գորքով հետապնդեց Աշոտի որդի Սմբատը, կամենալով փախստականներին սրի անցկացնել: Նրան ընդառաջ ելավ տիկին Շուշանը և բազում աղերսանքով ու խնդրանքով փրկեց նրանց՝ մերկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր վիճակում, որոնց վերցնելով [իր մոտ], վերքերը կապեց, առողջացրեց և հանդերձներ հագցրեց: Տվեց նաև գրաստ իր երամակից և առաքեց Իսմայելի իշխան Աբդի-Մելիքի մոտ, որի համար նրանից մեծ շնորհակալություն և մեծամեծ պատիվների արժանացավ»⁸³: 705 թվականին արաբները խորամանկությամբ հայ իշխաններին հավաքում են Նախիջևանի եկեղեցում և կենդանի այրում:⁸⁴

Հայոց կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցին (717-728) ամբաստանել է հայկական եկեղեցին: Հովհաննես Օձնեցին պարթևահասակ էր և հոգով առավել գեղեցիկ: Օմար խալիֆը նրան կանչում

⁸³ Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 33:

⁸⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 113. Մուհամմադ իբն Մարուանը, հրաման ստանալով Վալիդ խալիֆայից՝ ոչնչացնելու հայ նախարարներին, կարգադրեց ոմն Կասիմի, որը հրամանատար էր Նախճավանի կողմերում, իր մոտ կանչել Հայաստանի նախարարներին, պատճառաբանելով, թե իբր արքունի մարդահամարով պետք է անցնեն՝ հեծյալների համար հոռոգ (ռոճիկ) ստանալու և վերադառնան: Նախարարները չկասկածելով՝ ժամանեցին: Երբ հավաքվեցին, Կասիմը հրամայեց նրանց երկու մասի բաժանել. ոմանց հավաքեցին Նախճավանի եկեղեցում, իսկ այլոց՝ Խրամի և, դռները փակելով, ողջակիզեցին: ...Ըստ Մովսես Կաղանկատվացու, Նախճավանում զոհվել էր 800 հոգի, իսկ Խրամում՝ 400» (տե՛ս Ա.Ն.Տեր-Ղևոնդյան, Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 130):

է իր մոտ: Հայոց կաթողիկոսը շքեղ հանդերձներով և գեղեցիկ տեսքով հիացնում է խալիֆին: Վերջինս նրան հարցնում է. «Վասն Քրիստոսին ձերոյ ասեն, եթէ կարի յոյժ հեզ էր և խոնարհ և զաղքատութիւնն առաւել սիրէր: Չայս յայտ առնեն և կարգ քրիստոնէից, զի որ նոցա առաջնորդքն են՝ զաղքատութիւն և զզձուրթիւնն առաւել մեծարեն քան զփարթամութիւն և զճոխութիւն: Իսկ դու ընդէ՞ր այդպէս զարդարեալ ես»⁸⁵:

Հովհաննէս Օձնեցին բարձրացնում է իր շքեղ զգեստը, և տակից երևում է նրա ծակող մազեղեն հանդերձը: Նա ասում է. «Ա՛յս է իմ հանդերձ»⁸⁶: Օմարը հիանում է կաթողիկոսի անձով ու իմաստությամբ, կատարում է նրա խնդրանքները և պատվով ուղարկում է Հայաստան:

726 թվականին Մանազկերտում տեղի է ունեցել հայ-ասորական միացյալ եկեղեցական ժողով: Քննարկվել են երկու արևելյան եկեղեցիների՝ հայկական ու ասորական, տարաձայնությունները հակաքաղկեդոնական աստվածաբաններ Հուլիանոս Հալիկառնացու և Սևերիոս Անտիոքցու հայացքների շուրջ: Ըստ հայերի՝ Հիսուս Քրիստոսն իր մորից՝ Մարիամից, ստացել էր հողեղեն մարմին՝ ինչպէս մերը, սակայն Աստվածային Բանը նրան անմիջապէս դարձրել էր անմահ ու անապական:⁸⁷ Հայ եկեղեցու այս ընկալումը կա մինչև օրս:

Հենց այս շրջանում էլ Հայաստանում սկզբնավորվում է Պավլիկյանների աղանդը, որը տարածվում է Բյուզանդական կայսրության մեջ:

⁸⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 67:

⁸⁶ Նույն տեղում, էջ 68:

⁸⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 114.

Արաբ խալիֆ Աբդուլա Աբասը (750-754)՝ կոչված արյունաբու, հիմնում է Աբասյան դինաստիան: Մինչ նրա գահ բարձրանալը՝ Արմենիա մեծ նահանգում, որը հիմնականում բնակեցված էր քրիստոնյաներով, չկային այն խստությունները, ինչ որ կային այլ նահանգներում:

Աբասյանների նոր ու ծանր հարկային քաղաքականությունը հանգեցնում է ապստամբությունների: Մի ժամանակաշրջանում, երբ շատ քչերը դրամ ունեին, պահանջում էին, որ հարկը մուծեն արծաթով:⁸⁸

Ղևոնդ պատմիչը Աբասյանների դաժան հարկահանությունը պատկերում է այսպես. «Նրանք ռամիկների բազմությունը խոշտանգում էին տեսակ-տեսակ չարիքներով, ոմանց փոկահարությամբ տանջում էին դառն հարկապահանջության պատճառով, ոմանց գելարաններով ու կախաղաններով, իսկ ոմանց էլ դառնաշունչ ձմեռվա օրերին զգեստներից մերկացնելով՝ նետում էին լճերի մեջ ու պահապաններ կարգում, որպեսզի չարչարեն նրանց և այնպես չարավրով կտտանքներով էին կեղեքում, որ պատմել չեմ կարող այդ աղետների պատմությունը»⁸⁹:

851 թվականին Աշոտ և Դավիթ Բագրատունիներն ապստամբում են և Մուշի ճակատամարտում 851 թվականին սպանում են Յուսուֆին: Այդ ապստամբությունը շուտով տարածվում է ողջ Արմենիա նահանգում՝ ընդգրկելով Վրաստանն ու Աղվանքը:

⁸⁸ Նույն տեղում, էջ 117:

⁸⁹ Ղևոնդ, Պատմություն, էջ 111:

Արաբական տիրապետության ժամանակ խալիֆաթը հարստացրեց իր մշակույթը հայկական ու ասորական ազդեցությամբ:⁹⁰

«Հայոց պատմություն» գրքի հինգերորդ գլուխը կոչվում է «Թագավորություններ» (884-1066):

884թ. օգոստոսի 26-ին Աշոտ Բագրատունին հռչակվում է Հայոց թագավոր. դա յուրօրինակ վերականգնումն էր Արտաշեսյանների և Արշակունիների թագավորությունների: Աշոտ Բագրատունու թագադրման արարողությունն իրականացնում է Գևորգ Բ Գառնեցի (877-897)⁹¹ կաթողիկոսը: Ծիսակարգով Աշոտը ստանում է թագավորական իրավունք Թորգոմի տան և Ասքանազյան ցեղի վրա:⁹²

Ճ.-Պ. Մահեի կարծիքով Հայաստանի Բագրատունիների թագավորությունը ինքնավար էր, սակայն լիովին գերիշխանություն չունեիր:⁹³ Ահա դրա համար էլ ո՛չ Աշոտը և ո՛չ էլ նրան հաջորդողներն իրենց անունով դրամ չհատեցին:

IX դարից սկսած խալիֆաթը սկսում է թուլանալ:

Բյուզանդական կայսր Վասիլը 867-ին հիմնում է հայկական ծագումով Մակեդոնիական դինաստիան, որը Բյուզանդական կայսրությունը ղեկավարում է մինչև 1057 թվականը: Աշոտը գնում է Վասիլ Առաջինի մոտ թագ ստանալու: Հայագետը հիշեցնում է,

⁹⁰ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 124.

⁹¹ Ժան-Պիեռ Մահեն դնում է՝ (879-898): Տե՛ս Histoire de l'Arménie, p. 127:

⁹² Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 127. Ասքանազյան ցեղ և Թորգոմի տուն բնութագրելն ըստ հայագետի գալիս են Աստվածաշնչից, և V դարի հայ մատենագիրները դրանց միջոցով իրենց ազգին ծանոթացնում էին նախնիներին (տե՛ս նույն տեղում, էջ 635):

⁹³ Նույն տեղում, էջ 127:

թե Արշակունիների ժամանակ Բագրատունիները թագադիր ասպետներ էին:

Աշոտ Առաջինի ժամանակ հայոց եկեղեցին չուներ երբեմնի այն ուժը, որին տիրապետում էր Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի օրերում: Եկեղեցու ողջ հարստությունը խլել էին արաբները:

Հովհաննես Դրասխանակերտցին Աշոտ Ա Բագրատունուն գովերգում է՝ ազդվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած Տիգրան Երվանդյանին նվիրված ներբողից. «Բայց ինձ համար այստեղ մեկ այլ բան ավելի սիրելի չէ, քան զբաղվել այն գովեստով, որ վերաբերում է իշխանաց իշխան Աշոտին: Քանի որ նա միջին տարիքի հասնելով՝ բարձրահասակ էր, մարմնեղ, թիկնավետ, զվարթադեմ, մրահոն: ...զարդարված էր գեղեցիկ մորուքով, խելացի ու քաղցրախոս էր, խրախճանքի, կերակուրների նկատմամբ պարկեշտ. նա չէր նախանձում լավագույններին և չէր արհամարհում նվաստներին, այլ իր խնամքի զգեստը հավասարապես տարածում էր բոլորի վրա»⁹⁴:

Աշոտ Առաջինն իշխանությունն ամրացնելու համար իր աղջիկներին ամուսնացնում է՝ Մարիամին Վասակ Սյունեցու, իսկ Սոֆիին Գրիգոր-Դերենիկ Արծրունու հետ: Քրոջն էլ ամուսնաց-

⁹⁴ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ.Բ.Թոսունյանի, Երևան, 1996, էջ 141: Անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաուսեթը «Սայաթ-Նովա» ծավալուն մենագրության մեջ գրում է. «...Բագրատիոնի դինաստիայի ներկայացուցիչ Հերակլ Երկրորդը պետք է որ տեղյակ լիներ իր հայկական ծագմանը» (տե՛ս Sayat-Nova, An 18th-century troubadour, A biographical and literary study by Charles Dowsett, Lovanii, 1997, p. 450): Դաուսեթը նաև նշում է. «Բագրատունիները համարվում են աշխարհի շատ հին ու երկարատև թագավորական տունը, նրանց ազնվականությունը պաշտոնապես ցայսօր ճանաչված է Ֆրանսիայում (տե՛ս նույն տեղում, էջ 87):

նում է Իբերիայի իշխան Բագրատի հետ: Այս հատվածում հայագետը հաճախ է դիմում Վրաստանի պատմությանը:

Աշոտը վախճանվում է 890-ին՝ իր հայրենական Շիրակում տեսչական շրջայցի ժամանակ: Հորը փոխարինում է Սմբատ Առաջին Բագրատունին (890-914), որը փորձում է բարեկամական կապեր հաստատել Բյուզանդիայի կայսր Լևոն IV Իմաստասերի հետ:

Բաղդադի խալիֆ Ալ Մուք Թաֆին (902-908), որպեսզի ապացուցի, թե ողջ Հայաստանը կախված է իրենից, Սմբատին նոր թագ է տալիս: Ատրպատականի ամիր Յուսուֆը, օգտվելով Բագրատունիների ու Արծրունիների միջև ծագած հակասություններից, 908 թվականին արքայական թագ է տալիս Գագիկ Արծրունուն՝ նրան հռչակելով Հայոց թագավոր: Դրանից հետո Յուսուֆն արաբական զորքով անցնում է Փայտակարանը, Ուտիքը և ամրանում է Դվինում: Յուսուֆի հրամանով Սմբատ Առաջինը նահատակվում է:

Հայաստանի վիճակը թվում էր անհուսալի: Սակայն Յուսուֆը չէր հասել նպատակին: Հայոց գահի օրինական ժառանգը՝ Աշոտ Երկրորդը կամ Երկաթը, ցուցաբերում է անընկճելի խիզախություն: Հոր մահից էլ առաջ նա շարունակ նեղում էր թշնամուն անսպասելի՝ վերագրավելով ամրոց ամրոցի հետևից՝ մահմեդական բանակի մեջ տարածելով սարսափ:⁹⁵ Աշոտը հարձակվում էր մերթ Բագրևանդի, մերթ Շիրակի, հետո Տաշիրի վրա: Նա գերի է վերցնում մի քանի բարձրաստիճան մոլլա, և բոլորին սպանում է. նա ապակայունացնում է հազարացիների որդիներին, գրավում է նաև Թիֆլիսը, ազատ արձակում քրիստոնյա բանտարկյալներին: Գնահատելով նրա սխրագործությունները՝ Վրաստանի արքան 913-ին նրան թագադրում է Մեծ Հայքի թագավոր՝ իր հոր փո-

⁹⁵ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 137.

խարեն:⁹⁶ Այս ամենը պատմում է ժամանակի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին իր «Հայոց պատմության» հիսուներորդ գլխում:

Իր հերթին էլ Գագիկ Արծրունին Գուրգեն եղբոր հետ հաղթական կռիվներ է մղում Յուսուֆի դեմ Կորդուքի, Ատրպատականի կողմերում՝ ստիպելով հագարացիներին դիմել փախուստի:

Կոստանդին VII կայսրը (911-959) տեսնում է, որ Կովկասն ազատագրվում է մահմեդականներից՝ Աշոտ Երկրորդի խիզախության շնորհիվ: Կայսրը վստահում է Կոստանդնուպոլսի պատրիարքին (901-907, հետո 912-927) պատրաստել դիվանագիտական մի մերձեցում:⁹⁷ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսը 913-ին նամակ է գրում հայոց Հովհաննես կաթողիկոսին՝ նրան անվանելով կրոնական գլխավորը հայերի, վրացիների, աղվանների: Նույնատիպ նամակ ուղարկվում է վրացիների և աբխազների արքաներին՝ հորդորելով միասին պայքարել Յուսուֆի դեմ: Հետո Թեոդորոսի ուղեկցությամբ Աշոտ Երկաթը հրավիրվում է Կոստանդնուպոլիս, ուր ընդունվում է մեծ ջերմությամբ: Կոստանդին VII-ը Աշոտին մեծարում է «նահատակի որդի» և «շատ սիրելի որդի» բնորոշումներով: Հայոց արքային տրվում են նվերներ ու գորեղ զինվորական խմբի ուղեկցությամբ ճանապարհում են հայրենիք:

Աշոտ Երկաթն ամուսնանում է Խաչենի, Գարդմանի, Աղվանքի տեր Սահակ Սևադայի (910-922) աղջկա՝ Մարիամի հետ:

Մովսես իշխանը ապստամբում է Աշոտ Երկրորդի դեմ՝ գորք հավաքելով Ուտիքում: Սակայն Աշոտին հաջողվում է Սա-

⁹⁶ Նույն տեղում, էջ 138:

⁹⁷ Նույն տեղում, էջ 138:

հակ Սևադայի օգնությամբ փախուստի մատնել Մովսեսի գորքը: Մովսեսը բռնվում է և կուրացվում:

Աշոտ Երկաթը վախճանվում է անհայտ պատճառներով:⁹⁸ Իրականում Հովհաննես պատմիչը, որն այնքան ոգևորված էր նրա ռազմական հաջողություններով, 923 թվականից հետո այլևս չի հիշատակում նրան:

Անչափ ուշագրավ է Մահեի պատմության այն հատվածը, որում պատկերված է Գագիկ Արծրունին՝ որպես Վասպուրականի շինարար:⁹⁹

Գագիկ Արծրունու թագավորությունը հյուսիսից հարավ ձգվում էր Արաքսից մինչև Կորդուքի լեռները՝ ողողված Տիգրիսի ջրերով, և արևմուտքից մինչև արևելք Վանա լճից դեպի Ուրմիա լիճը՝ ընդգրկելով 33-ից մինչև 35 գավառներ, որոնք Անանիա Շիրակացին «Աշխարհացույցում» ներկայացնում է որպես Վասպուրական, դրանց մեջ մտնում են Մոկսի նահանգը, երկու գավառ Պարսկահայքից, երկուսը Կորճայքից, ինչպես նաև Հեր ու Զարեվանդ գավառները: Գագիկի ժամանակ Արծրունիները հսկում էին նաև Արարատյան դաշտը՝ Կոգովիտը, Բագրևանդը, Մասյացոտն, որոնք ավելի ուշ կորցրին:

Չնայած մահմեդականների հարձակումներին՝ Արծրունիների թագավորությունն առաջադիմում էր: Մինչև թագավոր դառնալը Գագիկն արդեն զբաղված էր շինարարական աշխատանքներով:

904-ին Գագիկը դառնում է Արծրունիների տոհմի գլխավորը և անմիջապես վերակառուցում է Աստվածամոր եկեղեցին՝ զարդարելով սքանչելագործ խաղով և թանկարժեք անոթներով:

⁹⁸ Աշոտ Երկաթը վախճանվել է 928-ին:

⁹⁹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 142-146.

Նա Վանը դարձնում է թագավորության մայրաքաղաքը: Միջնաբերդի գագաթին՝ ուրարտական հնությունների վայրում, փորում է ստորգետնյա Սուրբ Գևորգ եկեղեցին: Հյուսիսից՝ բլրի ստորոտում, կանգնեցնում է Երկնային Երուսաղեմի Սիոն եկեղեցին՝ Վանա լճի վրայով բերված Մանազկերտի քարից: Շքեղ շենքերի համար կառուցում է նաև ջրմուղ՝ ջուրը բերելով Վարազա սարից:

Գետք քաղաքում, որը թագավորության հյուսիս-արևելքում է, Արաքսին և Արարատին նայող ամառային պալատ է կառուցում: Շրջապատը լցնում է ուրախ կենդանիներով՝ եղնիկներով, ցիռերով, առյուծներով, վարազներով: Արաքսի աջ ափի ուղղությամբ կառուցում է անառիկ Ձորք ամրոցը և ձմեռային պալատը:

Գագիկը սիրում էր աղոթքի գնալ Վարազա սարը, որտեղ Ներսես Երրորդի ժամանակներից (641-661) կար Հիսուսի իրական Խաչի մասունքը: Նա նաև վերակառուցում է գերդաստանի օրրան Ադամակերտի եկեղեցին: Ինչպես Նոյը տապանը կառուցելիս, այնպես էլ Գագիկը խորհրդի կանչեց տեղի ողջ բնակչությանը՝ իր աշխատանքներն իրականացնելու համար:

Տասներկու տարի թագադրվելուց հետո՝ 919-921 թվականների ընթացքում, Գագիկը ճարտարապետական նոր ձեռնարկներ սկսեց: Կառուցեց Ոստանի պալատական համալիրը Արտոս լեռան գառիվայրից մինչև լիճը, որը մի պաշտպանական հզոր համակարգ ուներ: Գագիկը սալահատակեց կղզյակի ծովամատույցը՝ ստեղծելով հրաշալի հանգստավայր, ուր պալատականները կարող էին գրուցել՝ հիանալով գեղեցիկ բնությամբ: Պալատն ուներ բազմաթիվ գմբեթներ, որոնք պահվում էին առանց սյուների՝ ինչպես օդում ճախրող թռչունները: Թագավորական գահը ոսկեհուռ էր, պալատը շրջապատված էր ծաղկաստանով:

Այս պատումը, որն ավանդում է Թովմա Արծրունու պատմության շարունակողը, եզակի է իր գեղեցկությամբ հայ արվեստի պատմության մեջ: *Դժբախտաբար պալատներն ամբողջությամբ անհետացել են:¹⁰⁰ Ի հեճուկս ամենի՝ պահպանվել է Սուրբ Խաչ եկեղեցին:* Այն կառուցել է Մանվել ճարտարապետը, և իր որմնաքանդակներով եկեղեցին իսկական ճարտարապետական գլուխգործոց է՝ որմնաքանդակված դրսից ու նկարազարդված ներսից:

Գագիկ Արծրունին մրցակցում էր Աշոտ Երկաթի հետ և կամենում էր, որ իրեն համարեն Հայոց արքա, մինչդեռ Աշոտ Երկաթին կոչում էին արքայից արքա: Երբ հալածական Հովհաննես Դրասխանակերտցին փախել է Գագիկ Արծրունու մոտ (927), վերջինս Աղթամարը դարձրել է կաթողիկոսական կենտրոն: Վասպուրականի հետ է կապվում Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանը: Ըստ ավանդության նա թաղվել է Վասպուրականի Աղբակ գավառում: Այս լեզենդը VIII-IX դարերում նպաստել է, որպեսզի Վասպուրականը դառնա ազգային եկեղեցու գլխավոր նստավայր:

Աշոտ Երկաթին փոխարինում է նրա եղբայրը՝ Աբասը (929-953), որը չուներ եղբոր հմայքն ու եռանդը:

Աբասը Կարսում կառուցում է (930-943թթ.) տասներկու առաքյալների եկեղեցին, որը հարազատ կրկնօրինակն է VII դարի Մաստարայի եկեղեցու:

Բագրատունիների թագավորության բարձրակետը կապվում է Աշոտ Ողորմածի հետ: Նա Անին դարձնում է Բագրատունիների թագավորության մայրաքաղաքը:

¹⁰⁰ Երկու անգամ եղել են Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու: Այն ճարտարապետական գլուխգործոց է: Եվ ապացուցում է, թե Թովմա Արծրունին ու նրա պատմության շարունակողը ոչինչ չեն չափազանցել:

Նրա և կնոջ՝ Խոսրովանույշի հովանավորությամբ են կառուցվել Հաղբատի և Սանահինի վանքերը: Սանահինը Գրիգոր Մագիստրոսի ժամանակ դառնում է (XII.) կարևոր կրթական ու գիտական կենտրոն:

Աշոտ Ողորմածը գթասիրտ լինելուց բացի խելացի և եռանդուն ռազմավար էր ու քաղաքագետ: Բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկը որոշում է արշավել Հայաստան: Աշոտ Երրորդը արագորեն հավաքում է 80.000 հեծելազոր: Ենթարկվելով արքային՝ նրա շուրջը հավաքվում են Վասպուրականի, Սյունիքի, Աղվանքի նախարարները: Այս միաբանության մասին իմանալով՝ Չմշկիկը նախընտրում է բանակցել:

961-ին հաստատվելով Անիում՝ Աշոտ Երրորդը Կարսը թողնում է եղբորը՝ Մուշեղին, որն իր հերթին հիմնում է թագավորություն:

Իր պատմության մեջ հայագետն առանձին ենթավերնագիր ունի «Անիի կառուցումը» խորագրով:

Անիի զարդերից է կաթուղիկե եկեղեցին, որը կառուցել է Տրդատ ճարտարապետը: Սա այն ճարտարապետն է, որը վերականգնեց Կոստանդնուպոլսի Մուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը:

Գագիկ Առաջինը (990-1021) վերադառնում է արքայից ու գահ է բարձրանում: Գահակալության հենց սկզբից նա իր տիրապետությունը սկսում է տարածել Վայոց ձորից մինչև Փառիսոս: Ձեռքն է վերցնում Սյունիքը՝ Խաչենից մինչև Արցախ գավառը:

Երկրում տիրում է խաղաղությունը, և ինչպես Ասողիկ պատմիչն է գրում 1004-ին, ոչ ոք չէր հանդգնի մոտենալ Հայաստանի բնակիչներին:

Պատանեկան տարիներին Գագիկը բարեկամացել էր ճգնավոր Սարգսի հետ, որին սովեց Շողակաթ եկեղեցին: Դառնալով թա-

գավոր՝ նրան հանձնեց Սևանի վանքը, ուր սուրբ մարդն ամբողջ օրն անցկացնում էր սաղմոսերգության ու Տիրոջը փառաբանելու մեջ: 992-ին կաթողիկոս Խաչիկ Արշարունեցու մահվանից հետո Գագիկը նրան ընտրել է տալիս կաթողիկոս: Թողնելով Արգինայի նստավայրը՝ նոր կաթողիկոսը հաստատվում է Անիում:

Եզակի նարեկացիագետ Ժան-Պիեռ Մահեն առանձին ենթաբաժիններ է հատկացնում Նարեկա վանքի դպրոցին և տաղերգու ու միստիկ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն: Ռշտունյաց լեռներում, որոնք կախված են Վանա լճի վրա, հիմնում է Նարեկա վանքը: Իր դպրոցական տարիների ընկեր Խաչիկ կաթողիկոսի խնդրանքով Անանիան թղթեր է գրում քաղկեդոնության և թոնդրակեցիների աղանդի դեմ, որոնցում խիստ քննադատում է թոնդրակյան աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցուն: Կրոնական կարիքների համար Անանիան գրում է նաև խրատներ:

Գրիգոր Նարեկացին, նրա եղբայր Հովհաննեսը, նրանց հայրը՝ Խոսրով եպիսկոպոսը, 955-ին կաթողիկոս Անանիա Մոկացու հետ յուրահատուկ տեղ էին զբաղեցնում Նարեկա վանքի միաբանության մեջ: Ամուրի դառնալով՝ Խոսրովը հոգևոր կյանքն է ընտրում՝ իր մոտ պահելով ավագ որդուն՝ Սահակին, իսկ մյուս երկու որդիներին՝ Հովհաննեսին ու Գրիգորին, մանուկ հասակից հանձնում է Նարեկա վանքին: Փոքր որդին՝ Գրիգորը, ծնվել է 945-ին:

Ընդառաջ գնալով Անանիա Նարեկացու ցանկությանը՝ Գրիգորը եկեղեցու մեծ տոների համար գրում է ծիսական երգեր, որոնք բոլորովին նոր ժանրի էին:

Գրիգոր Նարեկացին հայ միջնադարյան գրականություն բերեց նոր գրական տեսակներ՝ գանձ և տաղ և իր ընդարձակ Ողբը՝ գրված սրտի խորքերից:

Այդ նույն ժամանակահատվածում Հայաստանի եկեղեցուն լուրջ վտանգ էր սպառնում թոնդրակյան աղանդավորական շարժման պատճառով: Թոնդրակեցիներն ասում էին, թե Հիսուսն իր վարդապետությունը ուսուցանում էր պարզապես իր աշակերտներին. այդ ժամանակ չկար եկեղեցական քահանայապետությունը, չկային ոչ եկեղեցիներ, եկեղեցու սպասքներ, եկեղեցու ծեսեր:¹⁰¹

Թոնդրակեցիները չէին ընդունում եկեղեցու կողմից օրինական ամուսնությունը: Միրով միավորված տղամարդուն ու կնոջն էին համարում ամուսնություն: Նրանք նույնիսկ քանդում էին եկեղեցիները, անարգում խաչը և խաչքարերը, որոնք բոլորն էլ պաշտվում էին դարեր ի վեր ողջ Հայաստանում:

Գրիգոր Նարեկացու, նրա հոր Խոսրովի և նրա ուսուցչի՝ Անանիայի աչքին թոնդրակեցիները եկեղեցու ողջ վայելչությունը ժխտողներ էին: Եկեղեցու խորհուրդը, որ Հիսուսն անձամբ ուսուցանում էր առաքյալներին, չլինել անտարբեր, այլ ունենալ հոգու մեծ ուժ ողջ սրտով պատարագել, անտեսվում էր: 977-ին Վասպուրականի Գուրգեն Արծրունի (990-1003) թագավորը Գրիգոր Նարեկացուն պատվիրում է մեկնել Երզ երզոցի այլաբանական իմաստը: Նարեկացին Հիսուսին համարում է փեսա, իսկ եկեղեցուն հարս, որը հիացած է իր փեսայով:

Գրիգոր Նարեկացին «Թուղթ» է գրել ընդդեմ թոնդրակեցիների: Նա խոր զգվանքով է խոսում թոնդրակեցիների գաղափարախոսության մասին. «Թե որ զգլխաւոր աղանդին իւրեանց գարշութեանն յանդգնեալ Քրիստոս անուանեն, զոր Քրիստոս կանխաւ վկայեաց, թէ՛ «յարիցեն սուտ Քրիստոսք եւ սուտ մարգարեք», եւ

¹⁰¹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 162.

ա՛յս է ասելն մարգարէին, թէ՛ «Խորհեցաւ անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ իցէ Աստուած»¹⁰²:

Իր եղբոր օգնությամբ Գրիգոր Նարեկացին գրում է «Մատենանոց տպարանի» քերթվածը՝ որը հայ միաստիկ քնարերգության բացարձակ գլուխգործոց է:¹⁰³

Բոլոր քրիստոնյաներին վերջին դատաստանի տագնապից ազատելու համար Գրիգորը խոստովանում է բոլոր մարդկային մեղքերը՝ նախահորից մինչև վերջին ծնվածը: 95 գլուխներից բաղկացած այդ համընդհանուր խոստովանությունը ներկայացնում է իդեալական եկեղեցի՝ բաղկացած գավիթից, տաճարից և խորանից: Այդ եկեղեցին նախատեսում է աղոթքներ բոլոր ժամանակների համար: «Նարեկը», ինչպես հայերն անվանում էին գիրքը, վաղուց դուրս է եկել վանական միջավայրից: Այն որպես հոգևոր ուղեցույց միշտ հայ ժողովրդի հետ է թե ուրախության և թե փորձությունների ժամանակ: Գիրքը պաշտում են որպես սրբազան մատուց: Այն դնում են եկեղեցու խորանում, պահում են տանը՝ որպես հոգու և մարմնի ցավերի բուժիչ, որպես օգնություն դնում են հիվանդների սնարին:

Բագրատունի Գագիկ Առաջինը վախճանվում է 1020-ին՝ գահի օրինական ժառանգ թողնելով իր ավագ որդուն՝ Հովհաննես Սմբատին (1020-1041), որը չուներ իր նախորդների քաջությունը:

Վասպուրականում Մենքերիմ-Հովհաննես (968-1021) թագավորը, նեղված թուրքական առաջին արշավանքներից, օգնություն է խնդրում բյուզանդական կայսր Վասիլ Երկրորդից, որն առաջարկում է իրեն հանձնել թագավորության տարածքը և փո-

¹⁰² «Մատենագիրք Հայոց», ԺԲ հատոր, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Երևան, 2011, էջ 1088:

¹⁰³ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 165.

խարենը տարածք ստանալ Մեքաստիայում: Մենեքերիմ-Հովհաննեսը բյուզանդացիներին է հանձնում Վասպուրականի 8 քաղաքները, 72 ամրոցները, 4000 գյուղերը և 900 վանքերը: Արծրունյաց արքան մեկնում է Հայաստանից՝ տանելով ողջ ընտանիքը և 70.000-80.000 հայրենակիցների, այդ թվում կանայք ու երեխաներ:¹⁰⁴

Բագրատունիների թագավոր Հովհաննես-Սմբատից հետո արքա է դառնում Աշոտ Բագրատունու որդի Գագիկը, շատ երիտասարդ, սակայն իր տարիքի համեմատ առավել իսելացի ու եռանդուն: Նա ձեռնարկում է Հայոց պետականության ամրապնդումը: Սակայն որոշ նախարարներ Վեստ Սարգսի գլխավորությամբ դավադրաբար Անիի բանալիները հանձնում են բյուզանդական կայսերը: Գագիկ Երկրորդը (1042-1045) բանակցելու պատրվակով կանչվում է Կ.Պոլիս և բանտարկվում: Բագրատունիների հայկական թագավորությունը դադարում է:

Մեծարժեք է նշանավոր հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեի «Անիի ավերակները» երկհատոր աշխատությունը:¹⁰⁵ Այս գրքում Բրոսսեն պատմում է, թե ինչպես Վեստ Սարգիսը և Պետրոս կաթողիկոսը կարողանում են համոզել իշխաններին՝ Անին հանձնել Մոնամաքոսին, որպեսզի վերջինս իրենց պաշտպանի թշնամիներից: Նրանք կայսրին են տանում բանալիները, վերջինս որոշում է հանդիսավոր արարողությանը բերել տալ Գագիկ Երկրորդին: Նա ցնծագին դիմում է Հայոց արքային և ասում.

- Հիմա ի՞նչ կասես, քո ավագանին ինձ հանձնեց Անին և ողջ Հայաստանը:

Գագիկն արժանապատիվ պատասխանում է.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 167:

¹⁰⁵ M.-F. Brosset, Les ruines d'Ani, capitale de l'Arménie sous les rois Bagratides, aux X^e et XI^e-s., I^{re} partie, SPb, 1860, II^e partie, SPb, 1861.

- Ընդունենք, որ նրանք տվին դրանք, դու, ուրեմն, կարող ես մտածել, թե դո՞ւ ես դրանց բնիկ տերը: Ինչպե՞ս կարող ես դու վերցնել ուրիշի թագը և քաղաքները, որտե՞ղ է քո արդարությունը:

Գրքի այս հատվածը Բրոսսեն ավարտում է վարդապետ Իզնատիոսի խոսքերով. «Նախանձն աղետ է, ովքեր այն ունեն, չունեն ոչ մի առողջ միտք»:

Հայագետն Անիի վերջնական անկումը հատվածը խորագրել է՝ «Անիի վերջնական աղետը»¹⁰⁶:

Ժ.-Պ. Մահեի «Հայոց պատմության» վեցերորդ գլուխը վերնագրված է՝ «Երկբևեռություն, XI-XII դարեր»:

Տեղավորվելով Հայոց լեռնաշղթայի սրտում՝ թուրքական տարբեր ցեղերը տիրանում են հին Մեծ Հայքին: Հյուսիսում մի քանի լեռնային նահանգներ՝ Գուգարքը, Սյունիքը և Արցախը, հարավում՝ Վասպուրականի որոշ անմատչելի հատվածները՝ Մոկսը և Սասունը, պահպանում են որոշ ինքնավարություն: Առաջանում են Տաշիր-Ձորագետքի թագավորությունը, Սյունիք-Խաչենի, Վասպուրականի և Սասունի ինքնավար իշխանությունները:¹⁰⁷ Կամաց-կամաց սկսում է ձևավորվել Կիլիկիայի հայկական թագավորությունը:

1073-ին Արցախի իշխան Օշինը թողնում է Գանձակի մոտ գտնվող իր ժառանգական Մայրաց ջուրք տարածքը և ընտանիքի, եղբոր ու բազմաքանակ հեծյալների հետ հեռանում:¹⁰⁸ Իր հետ տանում է նաև սուրբ Պետրոսի մի մատը՝ որպես սրբազան մասունք: Ծառայության է մտնում Ապլղարիի Արծրունու մոտ, որին բյուզանդացիները կարգել էին Տարսունի տեր: Դառնալով վերջինիս փե-

¹⁰⁶ M.-F. Brosset, Les ruines d'Ani, II^e partie, p. 104.

¹⁰⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 175.

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 191:

սան՝ ստանում է անառիկ Լամբրոն բերդը, որը Կիլիկիայի արևմուտքում էր:

1079-ին գերի Բագրատունի Գագիկ Երկրորդը, որին գահազրկել էր Կոնստանդին X-ը, վերադառնում է Տարսոն, մտադիր լինելով բանակցել Ապլղարիբի ընտանիքի մի քանի ամուսնությունների վերաբերյալ: Սակայն ճանապարհին սպանվում է:

Ժամանակի ընթացքում Կիլիկիան ազատվում է Բյուզանդիայի խնամակալությունից ու ամբողջովին դառնում հայկական:

1187-ի հունիսի 11-ին, նույն տարում, երբ Լևոն Երկրորդը հաջորդում է իր եղբորը՝ Ռուբեն Երրորդին, Սալահադդինը գրավում է Երուսաղեմը:¹⁰⁹ Լևոն Երկրորդը, որն ամուսնացած էր ֆրանկ իշխանուհու հետ, ձեռնարկում է Կիլիկյան հայկական թագավորության վերափոխումը ըստ ֆրանսիական արքունիքի կառավարման ձևերի: Սալահադդինը 1193-ին Լևոնից պահանջում է իրեն հանձնել Կիլիկիան: Հայերը պատասխանում են սպառնալիքով: Սուլթանը պատրաստվում է արշավանքի, սակայն վախճանվում է մի դաժան հիվանդությունից:

«Հայոց պատմության» VII գլուխը կոչվում է «Մոնղոլները, XIII-XIV դարեր»:

Այս հատվածում Հայաստանի պատմությունը որոշ չափով կապվում է Վրաստանի պատմական դեմքերի ու դեպքերի հետ:

Վրաց թագավոր Գեորգի Երրորդը վախճանվում է 1184-ին, նրա փոխարեն գահ է բարձրանում դուստրը՝ Թամարը, որը 1178-ից հոր գործակիցն էր: Այդ ժամանակահատվածում Վրաստանի արքունիքում բարձր դիրքի են հասնում հայազգի Զաքարյան իշխանները, որոնցից Զաքարեն դառնում է սպարապետ, իսկ Իվանեն՝ հազարապետ:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 203:

Զաքարեն և Իվանեն 20 տարուց ավելի հերոսական կռիվներ են մղել սելջուկյան ամիրայությունների դեմ ու հայ-վրացական ուժերով տարել բազում հաղթանակներ: Զաքարեն ազատագրել է Անին և Շիրակը: Նրա տիրույթները հասել են մինչև Կարին ու Բասեն: Զաքարեն, իրեն համարելով հայ Բագրատունիների ժառանգորդը¹¹⁰, կոչվել է շահնշահ: Աթաբեկ Իվանեն դառնում է տերը Լոռու մի մասի, Արարատյան նահանգի բազում հաստիքների, Սևանի ավազանի՝ Գեղարքունիքով ու Սոտքով, Վայոց ձորի և Սյունիքի հարավ-արևելքով: Նրա նստավայրը սկզբում Դվինն էր, հետո՝ Բջինն: Բազմաթիվ ձեռնարկումներով 1204-1208 թվականների ընթացքում Զաքարեն և Իվանեն մահմեդականներից ազատագրում են Հայաստանի արևմուտքն ու հարավը:

1206-ին Ռումի սուլթան Նուր Էդդինը հավաքագրում է 400.000 մարդ: Ինչպես պատմում է վրաց ժամանակագիրը, սուլթանը Զաքարեի միջոցով վերջնագիր է ներկայացնում Թամարին, որում իրեն համարում է Մուհամեդից ուղարկված հրեշտակ, իսկ Թամարին հիշեցնում, թե բոլոր կանայք թուլամիտ են, և նա պետք է իրեն ենթարկվի: Թամարը պատասխանում է. «Ով կերդվի Աստծուն ունայն պերճախոսությամբ, կպատժվի Աստծուց»¹¹¹:

Հայագետը կանգ է առնում Մեծ Հայքում մնացած ազնվական այն ընտանիքների քաղաքական գործունեության վրա, որոնք շարունակում էին պահպանել Հայաստանի ինքնուրույնության գիծը: Դրանք էին՝ Վաչուտյանները, Պահլավունիները, Օրբելիները, Խաղբակյան-Պռոշյանները:

Վաչե Վաչուտյանը՝ Սարգսի որդին, Հովհաննավանքի մի արձանագրության մեջ պատմում է իր մասին: 1217—1221 թվա-

¹¹⁰ Նույն տեղում, էջ 210-211:

¹¹¹ Նույն տեղում, էջ 211:

կանների ընթացքում կառուցել է կաթուղիկե եկեղեցի՝ Քասախ գետի ափին:

Գրիգոր Մագիստրոսի շառավիղները, որոնք Պահլավունի տոհմանունն են կրում, պահել են իրենց հինավուրց առաջնորդությունը Շիրակում, Մարմաշենի, Լմբավանքի, Բագնայրի մոտ՝ պահպանելով նաև Անիի արքեպիսկոպոսությունը:

1225-ին Մարմաշենի եկեղեցու հյուսիսային պատին արքեպիսկոպոս Գրիգոր Պահլավունին արձանագրում է, թե ինչպես իր եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի հետ, որը նահատակվել է թուրքերի ձեռքով, վերանորոգել է իրենց նախնի Վահրամի ձեռքով կառուցված վանքը:

Ժ.-Պ. Մահեն գրում է, թե Օրբելյանները հայկական ճյուղն են վրացական Օրբելիների (Օրբելի վրացերեն նշանակում է «Արծվաբույն»): Նրանց տոհմանշանը պատկերում է արծվի՝ ոչխարին բարձրացնելիս: Օրբելյաններից Լիպարիտի թոռը՝ Էլիկումը, Թամարից ստացել է Սյունիքի իշխանությունը՝ 1202-1225թթ.:¹¹² Նրանք իրենց գերդաստանի գերեզմանատեղին են դարձրել Եղեգնաձորի Նորավանքը:¹¹³ Նրանց է պատկանում նաև Տաթևի վանքը՝ որպես մետրոպոլիտի նստավայր: Նորավանքը զարդարված է աստվածաշնչային պատկերներով և ունի վանական դպրոցը: Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի հայրը՝ Տարասայիձը, Սիրանես ճարտարապետին պատվիրում է 1275-ին կառուցել թաղման սրահ:

Նույն Տարասայիձը 1295-ին Տաթևում կառուցել է տալիս Սուրբ Գրիգոր եկեղեցին՝ մի քանի տարի առաջ, քան Ստեփանոս Օրբելյանը կավարտեր «Սյունիքի պատմությունը»:

¹¹² Նույն տեղում, էջ 214:

¹¹³ Նույն տեղում:

Հաջորդ դարում՝ 1331 և 1339թթ. Բուրթել Օրբելյանը Նորավանքում ավելացնում է Սուրբ Աստվածամոր եկեղեցին, որն իր տեսակով եզակի է հայ ճարտարապետության մեջ: Եկեղեցու գավթին հասնելու համար կան աստիճաններ: Սա հավանաբար Մոմիկի գործն է, որին պատկանում է Արենիի եկեղեցին ու բազում խաչքարեր՝ անգուգական նրբությամբ, նաև ձեռագրերի շքեղ մանրանկարներ:

Խաղբակյաններն ավելի ուշ կոչվեցին Պռոշյաններ՝ գերդաստանի հիմնադիր Վասակի որդի Պռոշ-Հասանի անունով. նրանք ծագում են Խաչենից: Պռոշյանները Ագատի հովտում կառուցել են վանական համալիր:

XII դարի երկրորդ կեսին կառուցվել է Այրիվանքը (վիմափոր եկեղեցի), եզակի եկեղեցի՝ կառուցված մեկ քարից, որի պատերի ամենահին արձանագրությունը 1160 թվականի է: 1215-ին Ջաքարեն և Իվանեն կառուցում են կաթողիկե եկեղեցին: 1240-ին Պռոշը՝ Վասակի որդին, Իվանեի որդի Ավագ-Սարգսից գնում է այս վանքը, որն իր տարածքում էր. նա հանդիսավոր ձևով այնտեղ է բերում Հիսուսի կողը ծակած գեղարդը: Ծիսակատարության համար Վարդան Արևելցին գրում է հիմներգ: Այդ մասունքի պատճառով վանքը կոչվել է Գեղարդավանք: Վանքի միջից բխում է աղբյուր: Եկեղեցու պատին կա Պռոշյանների տոհմական զինանշանի քանդակը՝ երկու առյուծ՝ բռնած արքայական արծիվը: 1288-ին Պռոշի ժառանգորդ Պապակը և նրա կինը՝ Ռուզուֆանը, կառուցում են ննջեցյալների համար նախատեսված մեծ դահլիճ:

Պռոշյանների տիրապետության մեջ մտնող Աղբերք վանքում, որը կոչվում է նաև Գլածոր (գայլերի ձոր), ծագումով Մուշից՝ Ներսես Տարոնացին հիմնում է առաջին վանական համալսարանը: Աթոռակալելով Տարոնում 1275-ից մինչև 1281-ը՝ Ներսեսը Սրբոց

Առաքելոց վանքում արտագրում է երեք թանկարժեք ձեռագրեր՝ Փիլոն Ալեքսանդրացու «Հարցարանը», Բարսեղ Կեսարացու գործերը և Մաշտոցի աշակերտ Եզնիկի «Եղծ աղանդոցի» եզակի օրինակը: Հալածվելով մոնղոլներից՝ Ներսեսն իր գրչական աշխատանքը շարունակում է Գլաձորում՝ արտագրելով Եվագր Պոնտացու, Դիոնիսիոս Արեոպագացու գործերը և Հովհանի Ապոկալիպսիսի մի մեկնությունը: 1284 թվականին նրա մահից հետո Եսայի Նչեցին՝ նույնպես Տարոնից, առավել եռանդուն է դարձնում գրչությունը և դպրոցը: Աշակերտների և ապագա գրիչների օգտագործման համար գրում է Դիոնիսոս Թրակացու Քերականության մեկնություն և բազում դպրոցական գրքեր Սուրբ հայրերի մասին, որոնք պարունակում էին փիլիսոփայական, մաթեմատիկական և աստվածաբանական նյութեր:

Չաքարե և Իվանե եղբայրներն ունեին չորս քույրեր, որոնց ամուսնացրել էին իրենց ենթակաների հետ: Վանենին ամուսնացել էր Մաքնաբերդի իշխան, Բագրատունի թագավորների շառավիղ Աբասի հետ: Շուլան-Դոպը օժիտ ստացավ Սևանա կղզու հարավային մասը: Նրա ամուսինը՝ Գրիգոր-Հասանը, Արցախի իշխանն էր: Նրանց շառավիղները հիմնեցին Դովյանների նշանավոր ընտանիքը: Թաթմա-Խորիշան ամուսնացավ Խաչենի իշխան Վախթանգի հետ, ունեցան որդի՝ Հասան-Ջալալ-Դոլա՝ Արցախի և Սյունիքի թագավորը (1214-1261)՝ Հասան-Ջալալյանների նախահայրը:¹¹⁴ Նոժիսը, որի գերեզմանը Սանահինում է և ավարտեց իր կյանքը որպես միանձնուհի, ամուսնացավ Դիզակի ու Վարանդայի իշխան Վասակ-Սմբատի հետ:

Չաքարյանների գլխավոր քաղաքը՝ Անին, XII դարի կեսերին գտնվում է նախկինից առավել ծաղկուն վիճակում: Քա-

¹¹⁴ Նույն տեղում, էջ 217:

ղաքի ամենահարուստ մարդը դրամատեր ու վաճառական Տիգրան Հոնենցն էր, որը զբաղվում էր միջազգային առևտրով: Տիգրան Հոնենցը բազմաթիվ կառույցներ է թողել Անիում: Հիանալի է նրա կառուցած Ս.Գրիգոր եկեղեցին: Կառուցել է տվել տոհմական շքեղ գերեզմանոց Ծաղկոցաձորում: Անիից դուրս՝ Հողոմոց վանքում, գտնվում է Բագրատունի հայ թագավորների դամբարանը:

Մեծ Հայքից հետո հայագետը վերադառնում է Կիլիկյան Հայաստան ու ներկայացնում արդեն կայացած հայոց նոր պետականությունը: XIII դարի ժամանակագիր Վիլլրանդ Օլդենբուրգը, որն այցելել է Կիպրոս ու Կիլիկիա, Կիլիկյան Հայաստանը ներկայացնում է որպես հաստատուն պետություն՝ մի կողմից ողողված ջրով, մյուս կողմից պաշտպանված բարձր լեռներով: Երկրի կենտրոնական մասը հարթավայր և բերրի, լի որսի կենդանիներով: Երկրում ապրում էին ֆրանսիացիներ, հույներ, ասորիներ, թուրքեր, սակայն գերիշխողը հայերն էին: Հայերը հիանալի քրիստոնյաներ էին, կարգ ու կանոն պահպանող, որն իրենց ուսուցանել էր սուրբ Գրիգորը: Նրանք անսխալ էին հավատի հարցերում: Նրանց հոգևոր գլխավորը կոչվում էր կաթողիկոս:¹¹⁵ Վիլլրանդը Կիլիկիան համարում է իսկական Հայաստան: Լևոն Առաջինը (1201-1219) հատում է իր արծաթե դրամը: Դրամի վրա Լևոնն է արքայական զգեստներով՝ ծնկաչոք Քրիստոսի առաջ: Հակառակ կողմում երկու առյուծներ (նրա անունը ակնարկող)՝ կռթնած և մեկ այլ խաչ:

Դրամի վրա գրված է՝ «Լևոն՝ Հայոց արքա, Աստծո զորությամբ»: Մա նշանակում է, որ Լևոնն իրեն համարում էր ողջ Հայաստանի թագավոր: Լևոնի ժամանակ՝ 1201-ին, հայերը ճենովայում ու Վենետիկում ունեին առևտրական տներ: Լևոնի համար

¹¹⁵ Նույն տեղում, էջ 223:

կարևոր էր կաթողիկոսի հեղինակությունը: Կաթողիկոսի նստավայրն այդ ժամանակահատվածում անկախ էր թագավորից: Նախ այն գտնվում էր Հռոմկլայում՝ անառիկ ամրոցում: Ավելին՝ 1066-ից սկսած Պահլավունիները, որոնք իրենց համարում էին Գրիգոր Լուսավորչի հաջորդներ, ջանում էին հեռու մնալ քաղաքական ուժից:

Լևոն Երկրորդը փորձում է սահմանափակել կաթողիկոսի ավանդական իրավասությունները ու նրան ենթարկել իրեն: Շատ երիտասարդ Գրիգոր V-ը (1193-1194) չի արդարացնում Լևոն Երկրորդի ակնկալիքները և շարունակում է ինքնուրույն քաղաքականություն: Լևոնը բանտարկել է տալիս կաթողիկոսին, վերջինս փորձել է փախչել պարանից կախված: Նրան գտել են ժայռի վրա մեռած: Այստեղից էլ նրա անունը՝ Քարավեժ:

1194-ին կաթողիկոս է ընտրվում Գրիգոր VI Ապիրատը՝ 72 տարեկանում: Նորից սկսվում են լատին եկեղեցու հետ միավորվելու միտումները, և այդ շարժումը դեկավարում էր Ներսես Լամբրոնացին: Նա կողմ էր Հիսուսին երկբնակ համարելուն: Մեծ Հայքի հոգևորականների պահանջով Ներսես Լամբրոնացին, որպես լատինամետ, հեռացվում է պաշտոնից: Գրիգոր Ապիրատը լիովին ենթարկվում է Լևոն Երկրորդին և 1198-ին թագադրում է նրան:

Լևոնի թագադրման ժամանակ ներկա էին Կիլիկյան Հայաստանի տասնվեց եպիսկոպոսներ և քառասունչորս իշխաններ՝ բոլորը թագավորի վասալներ: Նրանց մեջ էր Օշինի որդի Հեթումը՝ Լամբրոնի տերը և նրա եղբայր Ներսեսը: Հեթումը չէր համակրում Լևոնին, վերջինս նրան բանտ է նետում, հետո ազատում: Հետագայում Հեթումը մտնում է Դրագակի վանք՝ չելի անունով:¹¹⁶

¹¹⁶ Նույն տեղում, էջ 227:

Կիլիկյան Հայաստանից հարավ-արևելք ձևավորվում է Անտիոքի պետությունը: 1194-ին Լևոնը իր եղբայր Ռուբենի աղջկան՝ Ալիսին, ամուսնացնում է Ռայմոնդի հետ: Ռայմոնդն ամուսնությունից քիչ անց վախճանվում է՝ թողնելով հղի կնոջը: Ծնվում է Ռայմոնդ-Ռուբենը, որին Լևոնը մեծացնում է մեծ խնամքով:

1217 թվականին գրված հայկական մի ձեռագրում Լևոնը բնութագրվում է որպես տերը «ողջ Կիլիկիայի և Մեծ Անտիոքի»¹¹⁷:

Երիտասարդ Հեթում Առաջինը (1226-1269) գահ է բարձրանում, և նրա անունով ոսկե դրամներ են հատվում:¹¹⁸

1219-ին վրաց արքա Գեորգի Լաշան (1213-1223)՝ Թամար թագուհու որդին, իր հեծելագործ պատրաստվում է մեկնել Պաղեստին՝ օգնելու խաչակիրներին, երբ հայտնվում են մինչ այդ անձանոթ պատերազմողներ, որոնք գրավում են Վրաստանի հարավը՝ սարսափելի կոտորած իրականացնելով: Սրանք արտասովոր մարդիկ էին, օտար դեմքով: Նրանց մասին ոչինչ չկար հին գրքերում, քանի որ նրանց լեզուն, նրանց կերպարանքը ծայրաստիճան տարբեր էին: Նրանք չգիտեին հացի համը, սնվում էին միայն անասունների մսով և կաթով: Նրանք անթերի հասակով էին, զորեղ մարմնով, ամուր սրունքներով: Նրանց մաշկը գեղեցիկ ճերմակ էր, աչքերը՝ նեղ, մթնագույն, շեղ և փայլուն, նրանց գլուխը մեծ էր, նրանց մազերը՝ սև և խիտ, նրանց ճակատը՝ տափակ, նրանց քիթն այնքան տափակ, որ նրանց այտերն առավել բարձր էին ու կողքից երևում էին միայն ռունգերը, նրանց շրթունքները բարակ էին, նրանց ատամները՝ սպիտակ և լավ շարված: Նրանք բոլորովին զուրկ էին մորուքից, որը նրանց եզակի տեսք էր տալիս:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 228:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 230:

Բայցևայնպես բոլոր տղամարդիկ և կանայք շատ գեղեցիկ էին: Բացի այդ, նրանք շատ խիզախ էին: Սրանք ընտիր նետաձիգներ էին՝ ճանճի վրա անվրեպ նետահարող: Նրանց նետն այնքան հզոր էր, որ ոչ մի զենք չէր կարող դրան դիմադրել: Նրանք գերազանց հեծյալներ էին, եթե դա այն ձին էր, որ իրենք էին վարժեցրել:¹¹⁹

Առաջին հարձակումից հետո մոնղոլները վերադառնում են 1220-ին: Իվանեն իր զարմիկի՝ Չաքարեի հետ նրանց դեմ է ելնում 90,000 մարդկանցով: Ճակատամարտը տեղի է ունենում Դեբեդ գետի մոտ: Սկզբում ճակատամարտի դուրս գալով զորքի կեսի հետ՝ մոնղոլները դիմում են փախուստի: Այն պահին, երբ վրացիները կարծում էին, թե հաղթել են, մոնղոլները ձեռնարկում են երկրորդ հարձակումը: Երիտասարդ արքա Գեորգի Լաշան, որը հայտնի էր իր անվեհեր քաջությամբ, արագորեն հեռացավ, մարտադաշտը թողեց նաև Իվանեն, ու կորուստները մեծ եղան: Մոնղոլների արտաքինի հիացական նկարագիրը և այս ճակատամարտի դեպքերը Մահենները ներկայացնում են միայն ըստ վրացական աղբյուրների:¹²⁰

«Հայաստանի պատմության» մեջ զուգադիր ներկայացված են XIII դարի հայ և վրացի պատմիչների՝ մոնղոլների արտաքինի, սովորույթների, կենցաղի նկարագրերը, որոնք որոշ հարցերում խիստ տարբեր են: Եթե վրացի պատմիչը մոնղոլներին ներկայացնում է որպես գեղեցիկ մարդիկ, ապա XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որը նրանց մոտ գերի է եղել, վերջիններիս պատկերում է որպես տգեղ մարդկանց. «Էին տեսլամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր՝ մօրուս ոչ ունելով, բայց ոմանց

¹¹⁹ Նույն տեղում, էջ 230-231:

¹²⁰ Նույն տեղում, էջ 232:

սակաւ թուով մագս ունելով ի շուրթն կամ ի կլափն, ակն նեղ և արագատես, ձայնն նուրբ և սուր, բազմակեցաք և տևողք»¹²¹:

Այս նույն հատվածը ռուս գրող Վասիլի Յանը դրել է որպէս բնաբան իր մեծարժէք «Չինգիզ խան» պատմավեպի գլուխներից մեկում՝ նշելով՝ «Կիրակոս XIII դարի հայ պատմիչ»¹²²:

Մահէները Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» օգտագործել են լայնորեն՝ վերջինից ներբերելով մոնղոլների մոտ պատմիչի գերված լինելու դեպքերի մանրամասները: Կիրակոսը (1203-1271), որը Գանձակ քաղաքի շրջակայքից էր, ազատ խոսում էր պարսկերեն ու թուրքերեն, գիտեր նաև մոնղոլերեն: Մուլար նուինը կամենում է Կիրակոսին պահել իր մոտ՝ որպէս թարգմանիչ, նրան տալիս է կին, վրան, երկու պատանի՝ որպէս ծառա: Խոստանում է նաև ձի, սակայն Կիրակոսը գիշերով փախչում և գալիս է իր հարագատ վանքը՝ Գետիկ:¹²³ Իր պատմության մեջ Կիրակոսը մոնղոլներին 60 բառեր է դնում՝ հայերեն համարժէքներով, որոնք բանասիրական առումով կարևոր են:

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ մանրամասն նկարագրվում է Հէթում թագավորի այցը Կարակորում՝ 1253-1255-ին, Մանգու խանին հանդիպելու ու նրա հովանավորությունը հայցելու համար:

Նկարագրվում է Մեծ Հայքով՝ Կարինով, անցնող ճանապարհը, որտեղ Հէթումը կանգ է առնում Քուրդ Վաչության հայագրի իշխանի տանը, ուր թողնում է կնոջն ու երեխաներին:

¹²¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 271:

¹²² В. Ян, Собрание сочинений в четырех томах, т. 2, Москва, 1989, с. 237.

¹²³ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 252, Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 235.

Հեթում Ա-ի հեռավոր ու վտանգներով լի դիվանագիտական այցը Կիլիկիայից Կարակորում ունենում է իր ցանկալի արդյունքը: Մանգու խանը հայոց արքային հանձնում է նշանավոր հրովարտակ, որով հրահանգում է իր իշխանավորներին՝ չնեղել արքայի երկրին, և բոլոր տեղերում հայոց եկեղեցիներին տրվում է ազատություն:¹²⁴

Մահեները «Հայաստանի պատմության» մեջ օգտագործում են հայ պատմիչների հաղորդած այնպիսի փաստեր, որոնց այլուր չենք հանդիպում: Վերադարձի ճանապարհին Հեթում Ա-ն անցնում է մի ավազուտ երկրով, որտեղ հանդիպում է վայրենի տեսքով մարդկանց. նրանք մերկ էին, մազ ունեին միայն գլուխներին, կանանց ստիսքները մեծ էին և հույժ երկար, կային նաև սև ու դեղին գույնի վայրի ձիեր, սև և սպիտակ գույնի ձիուց մեծ ջորիներ և վայրի երկսապատանի ուղտեր:¹²⁵

Կիլիկիայի հայոց թագավորությունը շարունակ շաղկապվում է Մեծ Հայքում տեղի ունեցող անցքերին ու պատմական դեմքերին:

Եզիպտոսի մամլուքների սուլթան Բիբարիսը հարձակվում է Կիլիկիայի վրա: Հեթում Ա-ն գնում է մոնղոլներից օգնություն խնդրելու, իսկ երկու որդիներին՝ Լևոնին ու Թորոսին, թողնում է երկիրը պաշտպանելու դժվարին գործը: Թորոսը սպանվում է, իսկ Լևոնին գերի են տանում Եզիպտոս: Միս մայրաքաղաքը հրդեհում են, սակայն միջնաբերդը մնում է ամուր:¹²⁶ Այս հատվածը ներկայացնելիս ֆրանսիացի հայագետներն օգտվել են Վարդան Արևելցու «Տիեզերական պատմությունից»: Ահա համապատասխան հատ-

¹²⁴ Նույն տեղում, էջ 367:

¹²⁵ Նույն տեղում, էջ 368:

¹²⁶ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 248.

վածը. «Նույն թվի աշնանը մեզ՝ հայերիս համար բացվեցին քացախի դառն ամանն ու Աստծու բարկության մրուրը, քանզի Փնսխատար¹²⁷ անունով Մսրա¹²⁸ սուլթանը պահանջում էր այն բերդերը, որոնք թաթարների օգնությամբ գրավել էր Հայոց Հեթում թագավորը: Եվ երբ հայերը չեն տալիս, ավելի շատ թաթարի երկյուղից խիստ բարկանում է, հավաքում է մեծաքանակ զորք և ունի Սմլնոթ անունով զորագլխի միջոցով ուղարկում է Կիլիկիա: Հանկարծակիորեն մտնելով երկիրը՝ նա գրավում է արքայանիստ Միսմայրաքաղաքը, այրում է այն՝ նրանում եղած եկեղեցիների հետ միասին: Նա գտնում է գետնափոր գանձարանը և ամբողջությամբ թալանում: Ասում են, որ այնտեղ ամեն մի ամանի մեջ կար վեց հարյուր հազար ոսկեդրամ կարմիր: Երկիրն ավերելով՝ նա հասնում է մինչև Ադանա և ապա լսելով տազնապալի լուրը՝ վերադառնում է ավարով ու քառասուն հազար գերիներով՝ չհաշված կոտորածները: Վերջիններիս մեջ գլխավոր ու անբուժելի խոցը Թորոս արքայազն էր, որը գեղեցիկ ծաղիկ էր: Նա զոհվեց մատաղ հասակում, մորուքը ծլելու ժամանակ, և ինչպես վկայում են բոլոր բերանները, նա ամեն մի բարիքից անպակաս էր ու կուսությամբ իր մեջ էր շտեմարանել Աստծու շնորհները: Նա հոժարությամբ գնում է նահատակման, իսկ երբ հարցնում են նրա ով լինելը, հոր անունն էլ չի տալիս, որպեսզի կյանքով գերվելով՝ իր հոր ու երկրի համար ավելորդ բեռ չլինի իր ավագ եղբոր՝ Լևոնի հետ միասին, որը հոր կենդանության ժամանակ հրավիրված ու թագադրված էր թագավորական աթոռի համար: Քանզի Լևոնը եղավ մեր գերիների գլխավորն ու մեր աշխարհի, ազգի աղեկեզ, լերդաչարչար, սրտա-

¹²⁷ Բիբարիս սուլթանն է – Ա. Դ.:

¹²⁸ Մսրա = Եգիպտոսի – Ա. Դ.:

կոտոր հուրը, երբ մենք գտնվում էինք շնչարգելության ու երերման մեջ»¹²⁹:

Կիլիկիայի թագավոր Լևոն Երրորդը Մահենների մոտ դարձել է Լևոն Երկրորդ, սակայն ճշգրիտ է գահակալության թվականը՝ 1269-1289թթ.:

«Հայոց պատմության» մեջ նկարագրվում են Եգիպտոսի մամլուքների երկրորդ և երրորդ արշավանքները Կիլիկյան հայոց թագավորության վրա: Գրքում խոսվում է նաև Հեթում պատմիչի մասին, որը միջնադարյան ֆրանսիական գրականության մեջ հայտնի է Հայթոն անունով: Նրանից ֆրանսերենով հասել է «Ծաղիկ պատմութեանց արեւելեան աշխարհի» („Fleur des Histoires de la Terre d’Orient” composée par le Frère Hayton, de l’ordre de Prémonstré”): Այս երկի մեջ շատ կարևոր փաստեր կան Չինգիզ խանի և թաթարական արշավանքների վերաբերյալ:¹³⁰

Բնականաբար Կիլիկիայի Հայոց թագավորության պատմությունը կապվում է նրա վերջին թագավորի՝ Լևոն V Լուսինյանի հետ, որը 1374-ին սկզբում թագադրվում է կաթոլիկ եկեղեցու ծեսով, հետո հայկական: 1375-ին նա գերվում է մամլուքներից, հետո վախճանվում Փարիզում 1399-ին և հիմա թաղված է Ֆրանսիայի արքաների Սեն Դընի դամբարանում:

Կիլիկիայում հայերը շարունակում են ապրել մինչև 1915-ի ցեղասպանությունը՝ պահպանելով Սիսում կաթողիկոսական նստավայրը:

¹²⁹ Վարդան Արևելյի, Տիեզերական պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղանիշերով ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 212-215:

¹³⁰ Տե՛ս Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 103-121:

„Histoire de l'Arménie” հատորի VIII գլուխը վերնագրված է „Diaspora”՝ «Սփյուռք» (XI-XIX դարեր):

Այստեղ առկա է «Աստվածաշունչը և սփյուռքը» ենթաբաժինը, որն սկսվում է Երեմիա մարգարեի հետևյալ խոսքերով. «Այլևս նրանց չեմ լսի, պիտի ցրեմ ու սփռեմ նրանց. իմ ժողովուրդն անգավակ մնաց դռներին, որովհետև ես կորցրի իմ ժողովրդին՝ նրանց չարության պատճառով, քանի որ նրանք չուղղվեցին»¹³¹: Սփյուռք բառը գալիս է Հին կտակարանից՝ հետևանք հրեա ժողովրդի աշխարհի տարբեր երկրներ ցրվելու: Հրեաների ցրվածության մասին վկայություն կա նաև Ավետարանում. «Հիսուսն ասաց. «Մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ և ապա գնում եմ նրա մոտ, ով ինձ ուղարկեց: Ինձ կփնտրեք և չեք գտնի, և ուր որ ես եմ գնում, դուք չեք կարող գալ»: Հրեա առաջնորդներն իրար ասում էին. «Իսկ դա ուր պիտի գնա, որ մենք դրան չգտնենք. մի՞ թե հեթանոսների մեջ ցրված հրեաների՞ մոտ պիտի գնա և հեթանոսներին պիտի ուսուցանե»¹³²: Քրիստոնեության տարածման գաղափարն այսպես էր ընկալվում, դրա համար էլ հայ առաջին ժամանակագիրները, ինչպես Կորյունը (443թ.), թույլ էին տալիս իրենց ազգին ներկայացնել որպես նոր ընտրյալ ազգ:¹³³

Աստվածաշնչի հայերեն տարբերակում՝ բոլոր տեղերում, հունարեն «diaspora» բառը թարգմանված է սփյուռ ձևով, որը սփռել բառից է:¹³⁴ Հայերի մոտ Աստվածաշնչից եկած բառն օգտագործվեց այն հայերի համար, որոնք ապրում էին մայր հայրենիքից հեռու: Սակայն եզրույթի օգտագործումն ավելի ուշ ժամանակների հետ է

¹³¹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 259, Երեմիա – 15, 7:

¹³² Նույն տեղում, էջ 259-261, Հովհաննես – 7, 33-34:

¹³³ Նույն տեղում, էջ 261:

¹³⁴ Նույն տեղում:

կապվում: Դրան հանդիպում ենք 1927-ին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի «Սիոն» պարբերականում, որում Մերձավոր Արևելքում, Եվրոպայում կամ Ամերիկայում և ընդհանրապես Խորհրդային Հայաստանից դուրս այլ երկրներում ապրող հայերը կոչվեցին սփյուռքահայեր: Այս եզրույթն ընդունվեց Խորհրդային Հայաստանի կողմից, և 1964-ին Երևանում բացվեց Սփյուռքահայության կոմիտե, որը մշակութային կապեր հաստատեց արտասահմանում՝ Խորհրդային Միությունից դուրս ապրող հայերի հետ:

Շատ հետաքրքիր փաստարկ են բերում Մահենները: 1915թ. Եղեռնից հետո Մուսթաֆա Քեմալի հիմնած նոր Թուրքիան պահանջեց 900.000 հայերի դուրս գալ հայրենիքից՝ հայրենագրկելով նրանց, բռնությամբ զրկելով այն հայրենիքից, որում ապրել են երկար դարեր, կամ դառնալ մահմեդական:

Գրքում ներկայացվում է, թե ինչպես շատ վաղուց հայերը հաստատվել են բոլոր քրիստոնյաների համար սրբազան քաղաք Երուսաղեմում: Երուսաղեմի առաջին պատրիարքը եղել է Աբրահամը (638-669): Նա և իր հաջորդները փորձել են հսկել Երուսաղեմի բոլոր ոչ քաղքեղոնական համայնքները: 1142-ին և 1167-ին Սիոն լեռան վրա բարձրացել է Սրբոց Հակոբյանց պատրիարքարան եկեղեցին: Երուսաղեմում վաղուց կա հայկական թաղամաս, որը գոյատևում է մինչև օրս: Այն զբաղեցնում է ողջ Սիոն լեռը՝ 150.000քմ տարածությամբ, համարվում է Երուսաղեմի մեկ վեցերորդ մասը: Երուսաղեմի պատրիարքարանի գրադարանը դարերի ընթացքում հավաքել է 5000 ձեռագիր մատյաններ, որոնց մեջ կան հայկական մանրանկարչության գլուխգործոցներ պարունակողներ:

Երուսաղեմում հույների ու լատինացիների դիրքերը թուլացնելու համար Մալախադինը ավելի բարեհաճ էր հայ համայնքի

նկատմամբ և նրանց ազատեց արտաքսվելուց և ստրկության մատնվելուց:

Հայերի արքա Հեթում Առաջինի և Մանգու խանի ռազմական դաշինքով նախատեսվում էր Երուսաղեմի ազատագրումը: Սակայն նախագիծը չիրականացավ՝ 1259-ին Մանգու խանի հանկարծակի մահվան պատճառով:¹³⁵

Առանձին խորագրով՝ «Սասանյանների ու բյուզանդացիների տարհանումը», ներկայացվում է հայերի բռնի արտագաղթերը վերջիններիս կողմից:¹³⁶ 451 թվականի Ավարայրի ճակատամարտից հետո հայ գերյալներին ուղարկում են պատերազմելու քուշանների դեմ: 600-601 թվականներին Սմբատ Բագրատունին, որին սասանյան արքա Խոսրով Երկրորդը նշանակել էր Hyrcanie-ի կառավարիչ, իր ռազմական արշավի ժամանակ Թուրքեստան մեծ անապատի մոտ տեսնում է հայկական զինվորական մի գաղութ. հայերը մոռացել էին իրենց լեզուն, տառերը և կրոնը:¹³⁷ Այս փաստը քաղված է Սեբեոսից. «Կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ, և նստուցեալ առ ստորոտով անապատի մեծի, որ ի Թուրքեստանի և ի Դելիաստան կողմէ, զլեզու իւրեանց մոռացեալ և դպրութիւն նուազեալք և կարգ քահանայութեանն պակասեալք»¹³⁸:

Նույն քաղաքականությունը վարում էին բյուզանդացիները: Հուստինիանոսը մի խումբ հայերի իրենց ընտանիքներով տեղափոխում է Բալկաններ, որպեսզի պաշտպանի Դանուբի կողմերը ավարների հարձակումներից: Տիրերիոսը դատարկում է Աղձնիք

¹³⁵ Նույն տեղում, էջ 263:

¹³⁶ Նույն տեղում, էջ 264:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Սեբեոս, Պատմութիւն, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 97:

նահանգը հայերից և 10.000 հայերի իրենց գերդաստաններով ուղարկում է Կիպրոս: Պատմության մեջ կրկնվում է Մորիկ կայսեր նամակը: 590-ին բյուզանդական Մորիկ կայսրը նամակ է գրում Խոսրով Երկրորդին՝ առաջարկելով իր տիրապետության տակ գտնվող հայերին ուղարկել պատերազմի, ինքն էլ իրեն ենթակա հայերին կուղարկի, և հայերից կազատվեն: Այդ փաստը ըստ Մեբեոսի է. «Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և զաւրաց իւրեանց: Ազգ մի խոտոր և անհնազանդ են, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ, և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն, և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»¹³⁹:

Մահեները նշում են, թե բյուզանդական կայսրության բազմաթիվ կայսրեր եղել են հայազգի: Դրանցից են Հերակլիոսը, որի անունը հելլենացված Վահագն է, Ֆիլիպը (711-713), որի իսկական անունը Վարդան է, Լևոն V հայը (813-820), որը իրեն ներկայացնում էր որպես Մենքերիմ Արծրունու որդի, և վերջապես Մակեդոնյան դինաստիայի կայսրերը (867-1056), որի հիմնադիրը Վասիլ Առաջինն էր ու իրեն համարում էր Արշակունի: Հայերը կարևոր դեր ունեին նաև կայսրության ռազմական կառավարման գործում:¹⁴⁰ Նրանք բյուզանդական կայսրության մեջ չէին ձուլվում և պահպանում էին ազգային ինքնությունը: Չնայած արաբական խալիֆաթի հայ ազնվականության դեմ ուղղված հատուկ ճնշում-

¹³⁹ Նույն տեղում, էջ 86:

¹⁴⁰ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 265.

ներին՝ հայ նախարարական տները շարունակում էին իրենց գոյությունը: Այդ իսկ պատճառով հայոց թագավորությունը, որը մարեց 428-ին, վերստին վերականգնվեց 884-1045 թվականների ընթացքում:

1064 թվականին թուրք-սելջուկների արշավանքների ժամանակ նախարարների մի խումբ լքեցին իրենց պապենական հողերը և տեղափոխվեցին Եփրատի ափերը կամ Կիլիկիա: Կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Կիլիկիա: 1166-ին Հայոց կաթողիկոսն էր Ներսես Շնորհալին: XV դարում, երբ Հայաստանը գրկված էր պետականությունից, թե Կիլիկիայում և թե Մեծ Հայքում համայն հայության հոգևոր ղեկավարումը 1441-ին վերստին տեղափոխվում է Վաղարշապատ: Սակայն չեն վերացվում տեղական կաթողիկոսները՝ Կիլիկիայի ու Վասպուրականի:

Առանձին ենթաբաժնով ներկայացվում է, թե ով է պանդուխտը կամ դեգերող հայը:

1375-ին կորցնելով Կիլիկիայի թագավորությունը՝ որոշ հոգևոր գործիչներ փորձում են հայերին համախմբելու գործում փոխարինել պետականությանը: Դիարբեքիրի եպիսկոպոս Մկրտիչ Նաղաշը, որն իր Նաղաշ անվանումը ստացել էր բազմաթիվ ձեռագրեր մանրանկարելու պատճառով, 1430-ին ստեղծում է բազմազգ մի ընկերություն, որի մեջ մտնում են ասորիներ, հայեր, թուրքեր, թաթարներ, քրդեր, արաբներ ու հրեաներ: Նրա մեղմ բնավորությունը և ընդհանուր համակրանք վայելելը գնահատվում է Օսմանյան կայսրության կողմից, որը նրան թույլատրում է 1439-ին լիովին վերակառուցել Ամիդի Սուրբ Թեոդորոս կաթողիկե եկեղեցին. վերջինիս գմբեթը մզկիթներից բարձր էր: Օսմանի մահից հետո նրա որդին՝ Համզան, լսելով մահմեդականներին, հրամայում է ավերել եկեղեցին: Մկրտիչը թողնում է Ամիդը, հու-

սահաստ գնում Տրապիզոն, հետո Կոստանդնուպոլիս և վերջում՝ Ղրիմ, որը ենթակա էր ձենովացիներին: Հավանաբար հենց Կաֆայում (Թեոդոսիայում) նա ստեղծում է իր հռչակավոր «Տաղ վասն դարիպի ասացեալ» քերթվածը, որը սկզբնավորում է նոր ժանր հայ գրականության մեջ: Ղարիպության տաղում կա այն միտքը, թե Աստված, որ ստեղծել է բոլոր արարածներին, մարդուն նրանց վրա կարգել է թագավոր: Սակայն պանդխտությունն այնպիսի դաժան երևույթ է, որ մարդուն դարձնում է թափառական՝ թողնելով անհայրենիք ու առանց հարազատների: Եվ եթե մարդը պանդուխտ է, ապա կարևոր էլ չէ, թե նա պարոնորդի է, որովհետև օտար ավերում նրան ոչ ոք չի ճանաչում և օգնության ձեռք չի մեկնում.

Ղարիպին խելքն է կորեր, միտքն է մոլոր,
Եւ թէ լինի քան զՍոդոմոն մտօք ճարտար,
Որ թէ խօսի բան մի քանի անգին ճոհար,
Սաստեն նմա, թէ՛ Լուռ կացիր, անգետ, յիմար:

Ղարիպին ցերեկն եղուկ, գիշերն է վայ,
Աչերուն քունն է հատեր ու ճար չկայ,
Մտօք տանջի գիշերն ի բուն ոչ դուրանայ,
«Վաղիւն ես ինչ լինիմ գերիս, երբ լուսանայ»¹⁴¹:

Մահեները բացատրում են, որ *ղարիք* բառը փոխառություն է արաբերենից: Պանդխտությունն այնքան է տարածվում հայերի մեջ, որ հայրենիքի կարոտը սկզբնավորում է գրական մի նոր տեսակ՝ անտունի, որ նշանակում է առանց տան («Sans maison»):

¹⁴¹ Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 170:

XVI դարում Մերձավոր Արևելքում անանուն հայր ստեղծում է «Կռունկ» սրտառուչ երգը, որում պանդուխտը չվող կռունկին հարցնում է, թե հայրենիքից լուր չունի՞՞ .

Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռո՛ւնկ, մեր յաշխարհէն խաբրիկ չունի՞ս...
Թողեր եմ, էգեր եմ մլքերս ի յայգիս,
Քանի որ ա՛խ կու քաշեմ՝ կու քակվի շնչիկս...¹⁴²

XV-XVI դարերից սկսած երկու մահմեդական պետությունները՝ Օսմանյան և Մեֆյան, երկու հակառակորդներ հայերին տիրում են իրենց բնօրրանում ու ենթարկում ճնշումների, կոտորածների և դա սկսած XI դարից, հայերի ցեղասպանությունից ութ դար առաջ, որը և նպաստում է պանդխտությանը:¹⁴³

„Histoire de l'Arménie” գրքի 267-317 էջերը նվիրված են հայ գաղթօջախների պատմությանը. դրանք առաջացել են որպես հետևանք հայ ժողովրդի դեմ օտար տիրողների գործադրած բռնությունների:

Երկրները, որոնցում հայտնվել են հայերը, ներկայացվում են առանձնացված: Դրանց մեջ առաջինը Եգիպտոսն է: Հուստինիանոսը Եգիպտոսում ու Աֆրիկայի հյուսիսում տեղակայում է հայկական լեզիոն, որը գլխավորում էին հայ նախարարներ Ներսես Բասենցին, Ներսես Կամսարականը, Հովհաննես և Արտավան Արշակունիները: 640 թվականին արաբական նվաճումից հետո նշանավոր հայ զորահրամանատարներ դարձան Վարդան ալ-Ռումին և Հասան ալ-Արմանին: 969-ին Եգիպտոսի մայրաքաղաքը դառնում է Կահիրեն: Այդ ժամանակ հայեր են հաստատվում այն-

¹⁴² Ա.Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 260-261:

¹⁴³ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 267.

տեղ, և 981-ին այնտեղ դրվել է խաչքար: XI դարի կեսերին խալիֆաթը թուլանում է, և մեծ վեզիրը՝ գորքի գլխավորը, դառնում է խալիֆայության իրական տերը: Այդ ժամանակահատվածում ստրկության վաճառված և մանկության օրերին մահմեդական դարձած մի հայ դառնում է սկզբում Դամասկոսի, ապա Ակոռայի տերը՝ իր հայրենակիցներից կազմում է բանակ, հարձակվում է Կահիրեի վրա և 1073-ին իրեն կարգում է մեծ վեզիր ու գորահրամանատար: Իր ղեկավարության քսաներկու տարիների ընթացքում նա ճնշում է բոլոր խռովություններն ու ամրացնում է մայրաքաղաքը, որը պարսպապատում է: Այդ պարիսպները նման էին Եդեսիայի (Ուռհայի) հայկական ճարտարապետությանը: Ընտիր գորքերն իրենց ընտանիքներով, որոնք բնակվում էին Կահիրեի տարբեր թաղամասերում, մեծամասամբ հայեր էին:

1135-ին Կահիրեում նստող խալիֆը հայազգի էր՝ Բահրամ ալ-Արմանին, որը շուտով կոչվեց Թաջ ալ-Դավլա՝ «Պետության թագը» („La Couronne de l'État”), ինչ որ է, նա շարունակում է մնալ քրիստոնյա: Խրախուսելով արտագաղթը՝ նա 30.000 հայերի բնակեցնում է Եգիպտոսում: Կահիրեում և Կահիրեից ոչ հեռու Դուրայում կառուցվում են հայկական եկեղեցիներ: Նոր վեզիրը՝ Ռիդուան իբն Վալակշը, կազմակերպում է հայերի կոտորածներ, նրանց տների թալան, նրանց վանքերի ու եկեղեցիների ավերում: Երկու տարի անց Հաֆիզ խալիֆը հետ է կանչում Բահրամին՝ որպես խորհրդական: Բահրամը վախճանվել է 1140-ի դեկտեմբերի 7-ին:

Եղան ևս երկու հայ վեզիրներ, սակայն հայկական գաղութն առաջվա պես ծաղկուն չէր:¹⁴⁴

1250 թվականին Եգիպտոսն ընկնում է մամլուքների ձեռքը: 1290-ին սուլթանի 10.000 մամլուքներից 3500-ը կովկասյան ծագում

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 270:

ունեին՝ չերքեզներ կամ հայեր էին: 1377-ին Կահիրեում որոշակի քանակի մահմեդական դարձած հայեր կային: Հայտնի է նաև, ինչպես վկայում է Դարդելը, XIV դարում Կահիրեում կային հարուստ ու հարգված հայեր: Նրանց շնորհիվ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն V-ը, գերված մամլուքներից, իրավունք ստացավ ազատ շարժվել քաղաքում:

X դարից սկսած՝ հայերը հայտնվում են Կիլիկյան Ռուսիայում: Արաբ ճանապարհորդ Ահմեդ իբն Ֆալդունը պատմում է, թե հայկական գորգեր է տեսել Վուլգայի բուլղարների մոտ:¹⁴⁵ Ամենահին պավոնական փաստաթուղթը, որը վերաբերում է 1080-1090թթ., հայտնում է Կիևի եկեղեցում հաստատված մի քրիստոնյա հայի մասին: Հաստատ կարելի է ասել, որ այդ ժամանակահատվածում Կիևում հաստատված հայկական գաղթօջախ կար: Ապրելով Կիևում՝ հայերը ծանոթ էին նրանց սրբություններին: XII դարում «Սուրբ Բորիսի և Գլեբի վարքը» թարգմանվել է հայերեն:

1240-ին մոնղոլները գրավում են Կիևը և կոտորում բնակիչներին: Հինգ հարյուր հայերը կռվում են Կիևը պաշտպանողների կողքին:

XIII դարի վերջին և XIV դարի սկզբին հայերը հայտնվում են Ղրիմում. այս մասին վկայում են Կիլիկիայի աղբյուրները՝ վկայելով հայերի կապը Իտալիայի վաճառաշահ քաղաքների՝ Վենետիկի և Ճենովայի հետ: Փաստեր կան, որ հայերը Ղրիմում հաստատվել են XIII դարից էլ առաջ: Պետք է հաշվի առնել, որ 1064 թվականի Անիի անկումից հետո հայերից ոմանք տեղափոխվել են Ղրիմ: Մի հիշատակարանից հայտնի է դառնում, որ Ղրիմ հայերը տեղափոխվել են Մեծ Հայքի տարբեր մասերից՝ Երևանից, Բաբերդից, Էրզրումից, Մալաթիայից, Մոկսից, Լոռուց և այլ վայրերից:

¹⁴⁵ Նույն տեղում:

1375-ից մեծանում է այն հայերի թիվը, որոնք Կիլիկիայից տեղափոխվում են Ղրիմ:

XVII-XVIII դարերի ճանապարհորդները վկայում են, որ Ղրիմում կային 24-ից 32 հայկական եկեղեցիներ:¹⁴⁶ Օսմանցիների՝ 1475-ին Ղրիմը գրավելուց հետո շատ հայեր ինքնակամ Ղրիմից արտագաղթեցին Մուլդովա ու Լեհաստան:

XVII դարի սկզբին ջալալիների ընդվզումների պատճառով Փոքր Ասիայից շատ հայեր վերստին տեղափոխվում են Ղրիմ: Հայերը տեղափոխվում են նաև Բալկաններ և Արևելյան Եվրոպա: 1071-ին բյուզանդացիների Մանազկերտի պարտությունից հետո հայերի մի ստվար քանակ արտագաղթեց Պլովդիվ, ուր հայերի քանակը մեծ էր հատկապես XII դարից սկսած: Երկրորդ մեծ քանակն ավելացավ XV դարի սկզբին, երբ վերացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Օսմանյանների և Սևֆյանների բախումների հետևանքով XV դարում վերստին բավական հայեր տեղափոխվեցին Բալկաններ: Դանուբի ձախ ափին հայերը հաստատվեցին Վալխիայում: Բուխարեստի հյուսիս-արևմուտքում հիմնեցին հայկական Արճեշի անունով Argeș-ը: Հայերը տեղափոխվեցին նաև Պոդոլսկ, Գալիցիա և Բալթիկայի արևմուտք: 1277-ի մի տապանագրից իմանում ենք, որ հայերը նախ և առաջ հաստատվել են Լվովում: Լեհաստանի արքա Կազիմիր Երրորդի մի հրովարտակից, գրված 1366-ին, իմանում ենք, որ հայերն ունեցել են որոշ ինքնավարություն և սեփական դատարան:¹⁴⁷ 1365-ին Լվովում հաստատվում է եպիսկոպոսական աթոռ, և այն վարում էր Հովհաննես անունով մի հոգևորական, որը Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսի նշանակմամբ էր «եպիսկոպոս համայն Ռուսիոյ»:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 273:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 274:

1469-ին՝ հայ քաղաքագլխի պաշտոնի դադարեցումից հետո, ձևավորվում է հոգևոր երեսփոխանների խորհուրդ, որը դատարանի դեր էր կատարում և գործել է մինչև 1784 թվականը:

Լվով քաղաքի շրջակայքում 1441-ին հիշատակվում են «Հայկական» կոչվող երեք փողոցներ: Նրանցից մեկը մինչև այսօր ունի այդ անվանումը:¹⁴⁸ Եղել են «Հայկական» հրապարակ և հայերի հետ կապվող այլ անվանումներ:¹⁴⁹

1243 թվականի մի հրովարտակով Հունգարիայի Բելա IV արքան հաստատել է հայերի ներկայությունը Հունգարիայի հին մայրաքաղաքում:

Հայերն Իտալիայում հաստատվել են դեռևս Հուստինիանոսի ժամանակներից: Մահեները բերում են մի ցուցակ՝ հռոմեական եկեղեցու կողմից սրբացված ու կանոնիկացված հայազգի քրիստոնյաների, որոնց թվում է նաև ֆլորենցիացի Մինասը:¹⁵⁰

Մերձավոր Արևելքում, որը նվաճվեց Օսմանյան կայսրության կողմից, XVI դարասկզբին, հայկական գաղթօջախը ճանաչված էր մինչև XVII դարի կեսերը՝ որպես ծաղկուն վիճակում գտնվող: Հալեպ քաղաքով էր անցնում այն առևտրական ուղին, որը Թավրիզով գնում էր դեպի Հայաստան: Հալեպում կային երկու եկեղեցիներ: Ըստ Սիմեոն Դպիր Լեհացու 1616-ին Հալեպում ապրում էին 300 հայ ընտանիքներ:

Հայերը հաստատվում են Անտիոքում, Ալեքսանդրետում և Բեյլանում: Հարավային Սիրիայի հայկական եկեղեցիներն ենթարկվում էին Երուսաղեմի պատրիարքին: Դամասկոսում հայկական համայնքը բարգավաճ էր XV-XVI դարերում, դրան նպաստել

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 645:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 275:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 277:

էր առևտրական Հալէպ – Դամասկոս – Տրիպոլի ճանապարհը: Հայերը Դամասկոսում խմբված էին Սուրբ Սարգիս եկեղեցու շուրջը:

1517-ին Օսմանյան կայսրությունը գրավում է Եգիպտոսը, որի հետևանքով մեծաքանակ հայեր արտագաղթում են, մի մասն էլ դառնում է մահմեդական: Ըստ Սիմեոն Դպիր Լեհացու 1615-ին Կահիրեում կային հայերի ավելի քան երկու հարյուր տներ, որոնք խմբված էին հատուկ թաղամասում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու շուրջը: Հայ վաճառականները մեծ մասամբ վաճառում էին թանկարժեք կտավներ: Որոշ հարուստ վաճառականներ՝ Նոր Ջուղայից, կապեր էին հաստատել Հնդկաստանի, Արաբիայի ու Եթովպիայի հետ:

Արաբական աղբյուրները այս ժամանակահատվածում նշում են Եգիպտոսում եղած քաղաքական ու ռազմական գործում կարևոր դեր ունեցած հայերի մասին:¹⁵¹

Եգիպտոսի տիրակալ Ալի Բեյը 1771-ին երկու էմիսարներ է ուղարկում Ռուսաստան, որոնցից մեկը հայ էր Հակոբ անունով՝ օսմանյան լծից ազատագրվելու համար: Երբ Բոնապարտը սկսում է Եգիպտական արշավանքը, շատ հայեր կովում են Եգիպտոսի համար, սակայն հետագայում նրանց մի մասն անցնում է Ֆրանսիային ծառայելու: Նապոլեոնը հայ առևտրականներին արտոնություններ է տալիս, որով գրգռում է Եգիպտոսի քրիստոնյա դպտիներին: Հայ գաղութը թեթևացած շունչ է քաշում 1805-ին, երբ Մեհմետ Ալին (1769-1849) դառնում է Եգիպտոսի տիրակալը:¹⁵² Պաշտոնապես փոխարքա, Եգիպտոսի նոր տիրակալը որոշում է ժամանակակից դարձնել երկիրը և հենվում է հայերի վրա: Փոխարքան Եգիպտոս է հրավիրում Զմյուռնիայից, Կոստանդնուպոլ-

¹⁵¹ Նույն տեղում, էջ 280:

¹⁵² Նույն տեղում, էջ 281:

սից, Հալեպից դրամական գործերով զբաղվող և արհեստավոր հայերի: Բանկային գործով զբաղվող հայերը շուտով նշանակալի դեր են կատարում երկրի տնտեսության մեջ: Այդ մարդիկ կոչվեցին սարաֆբաշի: Նշանավոր սարաֆբաշիներ էին Ալեքսան Միսակյանը և Եղիազար Պետրոսյանը: 1837-ին Եգիպտոսի տնտեսությունը ժամանակակից դարձնելու առաջին դրամատունը հիմնվեց: Մինչև XIX դարակեսը այդ գործում մեծ դեր կատարեց Մեհմեդ Ալիի խորհրդական Պողոս Յուսուֆյանը: 1833-ին վերջինս դարձավ ֆինանսների, առևտրի և արտաքին գործերի նախարարը: Նա առանց այդ անունն ունենալու կատարում էր Եգիպտոսի վարչապետի պաշտոնը:¹⁵³

Պողոս Յուսուֆյանը նպաստել է իր զարմիկի, նույնպես Զմյուռնիայից, Նուբար Նուբարյանի (1825-1899) բարձրանալուն, որին գահի օրինական ժառանգորդ Իսմայիլ փաշան (1830-1899) սկզբում դարձնում է արտաքին գործերի նախարար, ապա 1878-ին վարչապետ: Նրա շնորհիվ ժամանակակից է դառնում Եգիպտոսի դատական գործը և զարգանում է ռոռզման համակարգը: Այդ իսկ պատճառով Եգիպտոսի ջրանցքներից մեկը կոչվում է նրա անունով:

Որևէ կապ չկա Եգիպտոսի և Եթովպիայի հայերի համայնքի միջև, որը ձևավորվեց XIX դարում: Հայերը Եթովպիա եկան Օսմանյան կայսրությունից՝ բերելով Արևմուտքի տեխնիկական առաջընթացը՝ հատկապես լուսանկարչությունը:¹⁵⁴

Հայ – հնդկական առևտրական կապերը վաղեմի են: Պրոկոպիոս Կեսարացին նշում է VI դարում հնդիկ վաճառականների ներկայությունը Դվինում: Ասում են, թե Անիի կաթողիկե եկեղեցին

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 282:

ունեցել է բյուրեղապակյա ջահ՝ բերված Հնդկաստանից: Հնդկաստանի մայրաքաղաք Ագրայում XVI դարում ձևավորվել է առաջին հայկական համայնքը: Սա արտասովոր երևույթ է, որը նախորդել է Արաքսի հովտի հայերին Պարսկաստան բռնի արտագաղթին և Նոր Ջուղայի երևան գալուն:

1605-ից հետո, երբ հիմնվեց Նոր Ջուղան, այն ուժեղացրեց հայերի ներկայությունը Հնդկաստանում:

Հնդկաստանի տիրակալներից Աքբարը (1556-1605) հայ վաճառականներին արտոնում է ազատորեն երկիր ներկրել և արտահանել ամեն տեսակի ապրանքներ:

1605-ին Նոր Ջուղայի հիմնվելուց հետո հայ վաճառականները՝ խոջաները, Պարսկաստանից գալիս ու հաստատվում են Հնդկաստանի տարբեր քաղաքներում:

XVI դարից սկսած Հնդկաստանում հայտնվում են հայկական գերեզմանաքարերի վիմագիր արձանագրություններ: 1547-ին Սուրբ Թովմա եկեղեցու վրա եղած մի հայերեն արձանագրություն կա: Ըստ վկայաբանության՝ Թովմա առաքյալը Հնդկաստան գնալու համար անցնում է Հայաստանով: 1790 թվականին արտագրված ձեռագրի հիշատակարանում Հովհաննես Սարգիսը վկայում է, թե 1666-ին Մադրաս քաղաք են գալիս բավական հայեր: Այդ ժամանակից էլ Մադրասում կա «Հայկական փողոցը», որն իր անունը պահպանել է մինչ այսօր:¹⁵⁵ Հենց Մադրասում էլ Շահամիր Շահամիրյանը հիմնում է հայկական տպարան (1771), և 1798-ին լույս է տեսնում առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը»:

Բոմբեյում բրիտանացիները հատուկ տարածք են հատկացնում հայերին՝ բնակարաններ կառուցելու համար: Հատկապես շատ հարուստ խոջա Մինասը տեր է դառնում Հնդկական օվկիա-

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 284:

նոսում առևտրական նավերի: Հայտնի են նրա երկու նավերի անունները՝ «Օքսեն» և «Հույս»:

Հայերի ձեռներեցությունը ձեռնտու չէր անգլիացիներին, որոնք սկսում են ճնշումներ գործադրել նրանց նկատմամբ: Տեղի են ունենում զինված բախումներ:

Մահեները հնդկահայերի կյանքի որոշ փաստեր քաղել են Հովսեփ Էմինի «Հովսեփ Էմին հայի կյանքն ու արկածները» ինքնակենսագրական գրքից:

XIX դարում Հնսկաստանի հայկական համայնքներն արագորեն նվազում են: Հեռանում են առավել հարուստ վաճառականները: Մնում են գործարար մարդիկ, իրավաբանները, բժիշկները, բանվորներն ու ծառայողները: Վերջում միակ հայաբնակ վայրը մնում է Կալկաթան: Պատճառն այն է, որ մետաքսի ճանապարհը դառնում է ծովային, և բրիտանացիներն այն վերցնում են իրենց ձեռքը:

1821-ից Կալկաթայում սկսում է գործել մարդասիրական հայկական վարժարան առավել աղքատների համար: 1828-ին բացվում է հայկական հանրային գրադարան: Հայ մտավոր կյանքը հենվում է նաև տպագրության և պարբերականի վրա, որը գործում է մինչև դարավերջը՝ հայերենով ու անգլերենով:

Հնդկաստանում եղել են նշանավոր հայեր: 1760-ին Թովմա Խոջամալյանը գրում է «Հնդկաստանի պատմությունը», որն արժեքավոր փաստեր է հաղորդում երկրի գաղութացման մասին: Նորջուղացի Հակոբ Միմոնյանը գրում է Հնդկաստանի ազգային հերոս Հեյդար Ալիի կյանքի պատմությունը, որի բարեկամն ու խորհրդատուն էր եղել:¹⁵⁶

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 286:

Չինաստան մեկնող հայ նավագնացները հասնում էին մինչև Ֆիլիպիններ և Բիրմա: XIII դարում հայ գերիներին մոնղոլներն ուղարկում էին Քաբուլ, Սամարղանդ, այնտեղից Չինաստանի հյուսիս: Չինաստան էին գալիս հայ վաճառականներ ծովի կողմից: Կար մի նավահանգիստ՝ Ձեյթուն անունով:¹⁵⁷ Հայերից մի բարեպաշտ տիկին, լատին միսիոներներից կաթոլիկություն ընդունելով, կառուցում է մի եկեղեցի: Մինգերի իշխանության գալուց հետո (1386-1644) արգելվում է օտարերկրացիների մուտքը Չինաստան:¹⁵⁸ Բայցևայնպես Չինաստանում եղել են հարուստ հայեր: Մնացական Լագարյանը, որը հարուստ վաճառական էր, XVIII դարի վերջում իր հայրենի քաղաք Գանձակին կտակում է մեծ գումար: Մեկ այլ հարուստ հայ՝ Հովհաննես Մաթևոսյանը, Դոնի Ռոստովի մոտ գտնվող Նոր Նախիջևան քաղաքի հայրենակիցներին կտակում է 80.000 ռուպի:¹⁵⁹

Էջմիածնի կաթողիկոսական թանգարանում կան չինական արվեստը ներկայացնող քրիստոնեական մի քանի ցուցանմուշներ:

Արդեն IX դարից սկսած հայ վաճառականները Վոլգայով հասնում էին Կամա գետ և բուլղարների երկրի սրտում բացում մի դրամատուն: Մոնղոլների և թուրքական ցեղերի արշավանքները հայերին ստիպում են տեղափոխվել Ոսկե Հորդայի մայրաքաղաք, այնտեղից էլ Աստրախան՝ Կասպից ծովի ափ: Ռուսական մի ժամանակագիր հիշատակում է 1346-ի համաճարակը, որին զոհ գնացին մահմեդականներ, թաթարներ և հայեր: Վոլգայով դեռևս XIV դարի երկրորդ կեսին հայ վաճառականները հասնում էին Նիժնի Նովգորոդ, Կազան և Մոսկվա: Ժամանակագիրները վկա-

¹⁵⁷ Նույն տեղում:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 287:

¹⁵⁹ Նույն տեղում:

յում են, թե Մամայ խանի հարձակման մասին Դմիտրի Դոնսկոյին ահագանգել է հայազգի Սիմեոն Մելիքովը: Միանալով ռուսական բանակին՝ վերջինս զոհվել է 1380-ին Կուլիկովյան ճակատամարտում իր հայրենակից Անդրեյ Մերկիզովի հետ:¹⁶⁰ Երբ 1390-ին Կրեմլը շրջապատող խանութներն այրվել են, դրանցից մեկի տերը եղել է հայազգի Աբրահամը:

1550-1552թթ. Մոսկվայի և Կազանի խանի միջև տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ թաթարական զորքի բոլոր գնդացրորդները հայեր էին, սակայն նրանք այնպես էին կրակում ռուսական կողմի վրա, որ վրիպեին: Կազան քաղաքում ցարդ «Հայկական» անունով պահպանվում են փողոց, հրապարակ և գերեզմանոց:¹⁶¹

XVI դարում Մոսկվան նվաճել էր Աստրախանն իր շրջակայքով, և դա նպաստեց հայ համայնքի վերելքին: XVII դարում տասնմեկ հայ ընտանիքներ մշտական բնակվում էին Աստրախանում, իսկ հայ վաճառականների խանութները բազմաքանակ էին: Արդեն 1640-ին հայերը կառուցում են իրենց եկեղեցին: Հայերն արտադրում էին մետաքս, որ հասցնում էին մինչև Մոսկվա, ինչպես նաև ձկնկիթ ու գինի: 1667-ին խոջա Գրիգոր Լուսիկովը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին խնդրում է թույլատրել Աստրախանում նոր եկեղեցի կառուցել:

Պետրոս Մեծը հայերին խրախուսում էր ոչ միայն ապրել Ռուսաստանում, այլև արտադրել ու զարգացնել մետաքսագործությունը: XVIII դարում հայկական բնակչությունն Աստրախանում շատ մեծանում է: 1780-ին Չաքարյան իշխաններից սերող արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը հիմնում է հայկական դպրոց:

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 288:

¹⁶¹ Նույն տեղում:

Հայերի հարյուր հիսուն արհեստանոցներ մետաքսագործական էին, քսան ուրիշները՝ արծաթագործական: Աստրախան քաղաքում հայերն ունեին սեփական ինքնավարությունը, և 1765-ին խոջաներ Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կամպանովի ու Սարգիս Օհանյանի ջանքերով ստեղծվում է «Աստրախանի դատաստանագիրքը»: 1825-ին հայ բնակիչների թիվը Աստրախանում հասնում է 6500 մարդու:

XVIII դարում հայերը հաստատվում են նաև Հյուսիսային Կովկասում ու Ռուսաստանի հարավում: 1797-ին Ղզլարում ու Սոգդոկում կային Հայաստանից եկած 3500 հայեր:

1778-ին և 1794-ին Սև ծովի հյուսիսային ափերին պատերազմական գործողություններ էին ընթանում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև: Դրա արդյունքում ռուսները տեր դարձան ողջ Ղրիմին: Եկատերինա Երկրորդ միապետուհին հրահանգեց Ղրիմի 12800 հայ բնակիչներին տեղափոխել Դոնի գետաբերան: Տեղափոխումը ընթանում էր գեներալ Ա.Սուվորովի գլխավորությամբ: Հայերը Ռոստով ռուսական քաղաքի մոտ հիմնեցին իրենց նոր բնակավայրը՝ Նոր Նախիջևան քաղաքը: Դրինահայության պարծանքը դարձավ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին¹⁶² (1817-1900):

Հայերը Ռուսաստանում մեծ դեր էին կատարում մետաքսի, գինու, բամբակի և բրնձի արտադրության մեջ:

Ռուս ճանապարհորդները հիացական հիշողություններ են թողել Նոր Նախիջևան այցելելուց հետո: Դրանցից են Ա. Բեգրորդկոն, Ն. Ռանսկին, Ա. Պուշկինը:¹⁶³ Նրանց հիացրել է քաղաքի հատակագիծը, նրա հատուկ ճանապարհները և իշխող առևտրական

¹⁶² Նույն տեղում, էջ 290:

¹⁶³ Նույն տեղում, էջ 291:

աշխուժությունը: Քաղաքի շրջապատում կային հինգ հայկական գյուղեր: 1850-ին Նոր Նախիջևանում ապրում էին 11.295 հայեր, իսկ գյուղերում՝ 5.293:

Տնտեսությունը հայերի շնորհիվ խիստ զարգանում է, և 1850-ին առաջանում է բուրժուական հարուստ խավ:

Մահեները 1858-ից Մոսկվայում լույս տեսնող «Հյուսիսափայլ» պարբերականը կապում են միայն նորնախիջևանցի Միքայել Նալբանդյանի հետ (1830-1866)՝ անտեսելով հիմնական հիմնադրին՝ Ստեփանոս Նազարյանին:¹⁶⁴

Չնայած հայերի ներկայությունը Մոսկվայում սկսվում է XIV դարից, սակայն առավել զգալի դեր նրանք կատարեցին սկսած XVII դարի երկրորդ կեսից, երբ կապ հաստատվեց ցար Ալեքսեյ Միխայլովիչի և Նոր Ջուղայի խոջաների միջև:

Պայմանագիրը ստորագրելու համար 1667-ին Գրիգոր Լուսիկովը և Ստեփան Ռոմոդամսկին Մոսկվա ներկայացան 40 վաճառականների խմբով, որոնք ոչ միայն Նոր Ջուղայից էին, այլև Թիֆլիսից, Ագուլիսից ու այլ քաղաքներից: Այդ շրջանում է գործել հայազգի նկարիչ Բոգդան Սալթանովը, որը նկարել է Ֆեոդոր Երրորդ ցարի դիմանկարը:¹⁶⁵

Երբ Իսրայել Օրին և վարդապետ Մինասը Մոսկվա եկան 1701-ին, հայկական համայնքը բավական բազմամարդ էր: 1703 թվականի մի փաստաթղթում խոսվում է հայկական եկեղեցիներին տրված 50 նվիրատվությունների մասին:

1815-ին Հովակիմ Լազարյանի միջոցներով Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը, որը ոչ միայն Ռուսաստանի

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 292:

¹⁶⁵ Նույն տեղում:

առաջին արևելյան լեզուների ինստիտուտն էր, այլև Բարձրագույն կրթություն էր տալիս աշխարհասփյուռ հայ աշակերտներին:

Սանկտ Պետերբուրգում ևս սկսում են հավաքվել հարուստ հայեր: Դրանցից առաջինը վաճառական Ղուկաս Շիրվանովն էր, որը Վասիլևան կղզում հողատարածք վերցրեց պալատ կառուցելու և Սանկտ Պետերբուրգ եկած նշանավոր հայերին այնտեղ ընդունելու համար:

Բազմաթիվ հայ վաճառականներ, ինչպես Արտեմ Մանուիլովը, Բոգդան Ախվերդովը, Պետրոս Շիրվանովը (Ղուկասի որդին) և Մանուչարյան եղբայրները, մետաքսագործական մանուֆակտուրաներ ունեին:

1791-ին Պետերբուրգում՝ հայկական գերեզմանոցում, կառուցվում է Սուրբ Հարություն եկեղեցին: Լազարյանների տանը 1781-ին բացվում է հայկական տպագրատուն: Սկսում են հրատարակել գրքեր, որոնք ներդաշն էին հայ ազատագրական երազանքներին: Դրանցից էր 1786-ին լույս տեսած Մովսես Խորենացու Հայաստանի վրա ասված «Ողբը»¹⁶⁶: Ռուսաստանի հոգևոր առաջնորդ Հովհաննես Արղությանի վրա հենվելով՝ Լազարյանն ու Պետերբուրգի նրա հայրենակիցները նախաձեռնել էին ցարին համոզել Հայաստանն ազատագրել թուրքերի ու պարսիկների լծից:¹⁶⁷

Ստիպված արտագաղթի հետևանքով հայերը հայտնվել են նաև Բուլղարիայում: Սկզբում՝ XVI դարում, այնտեղ հայտնվել են Շոռոթի ու Նախիջևանի հայերից, իսկ XVII դարից սկսած տեղափոխվել են նաև Արևմտյան Հայաստանի Մալաթիա ու Դիարբեքիր քաղաքներից: Նոր վայրերում հայերն անմիջապես կառուցել են

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 294:

¹⁶⁷ Նույն տեղում:

իրենց եկեղեցին:¹⁶⁸ Նրանք հաստատվել են նաև Բուլղարիայի հին մայրաքաղաք Վելիկո-Տարնովոյում, սակայն արագորեն նրանց քանակը նվազել է: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանը իր մի երկում ողբում է հայերի գրեթե անհետացումը Բուլղարիայի մայրաքաղաքից: Սակայն XIX դարում հայերը հաստատվել են Բուլղարիայի Սոֆիա, Պլովդիվ, Բուրգաս, Վառնա քաղաքներում: 1853 թվականի Ղրիմի պատերազմից հետո զանգվածային արտագաղթ է սկսվում դեպի Բուլղարիա, և 100.000-ից ավելի հայեր բնակվում են այնտեղ:¹⁶⁹

Սահենները շատ մանրամասներ են հաղորդում Վալախիայի, Մոլդովայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Լվովի ու Կամենեց-Պոդոլսկի, Հունգարիայի և Տրանսիլվանիայի, Իտալիայի, Անգլիայի և Միջերկրական ծովափերի երկրների հայկական համայնքների մասին:

Սիմեոն Լեհացին 1611-ի մոտերքը և Աբգար Թոխաթեցին ներկայացնում են իտալացիներին որպես հայասեր և հյուրընկալ մարդիկ: 1574-ից 1796 թվականների ընթացքում հռոմեական տարբեր տպարաններ կաթոլիկական հավատը հայերի մեջ քարոզելու համար տպագրում են մեկ հիանյակ հայերեն գրքեր:

Իտալիայում 1650-ին 72 հայ առևտրական տներ կային՝ հիմնված Ջոյունիայի, Թոխաթի, Նոր Ջուղայի վաճառականների կողմից:

Ղոժերի քաղաք Վենետիկը մեծ տեղ է գրավում հայերի ճակատագրում: Այն դարձավ հայ տպագրության օրրանը, որը 1512-ից մինչև 1789-ը տպագրեց 250 անուն հայերեն գրքեր: Դրանից հետո, երբ 1717թ. Մխիթարյան միաբանությունը հաստատվեց

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 295:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 296:

Սուրբ Ղազար կղզում, ուներ իր սեփական տպարանը: Հայերը դարեր ի վեր եռանդուն մասնակցություն են ունեցել Իտալիայի առևտրական գործերում, և դա հաստատվում է բազում փաստաթղթերով:¹⁷⁰

1666թ. Ոսկան Երևանցին Ամստերդամում տպագրում է Աստվածաշունչը, նրա գործը շարունակում են Վանանդեցի եղբայրները: Ամստերդամի համայնքը բաղկացած էր 800 շունչ հայերից, որոնք առևտրական լայն գործունեություն էին ծավալում ողջ Եվրոպայում: Նրանք կառուցում են իրենց եկեղեցին՝ 1714-ին: Սկսած 1835-ից՝ հայ բամբակ ներկրողները, որոնք Կոստանդնուպոլսից էին ու Ջմյունիայից, հաստատվում են Անգլիայի Մանչեստեր քաղաքում: 1890-ին նրանց հսկողության տակ էին մեկ հիսնյակ ընկերություններ:¹⁷¹ Բազմաթիվ փաստերով Մահեները ներկայացնում են առանձին նշանավոր հայերի եռանդուն գործունեությունը աշխարհի ամենատարբեր երկրներում:

«Հայաստանի պատմություն» հատորի IX գլուխը կոչվում է «Կայսրություններ» (1375-1639):¹⁷² Նրանում տեսնում ենք հայ ժողովրդի պատմության ընթացքը Մեծ Հայքում ու Կիլիկիայում՝ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, երբ Հայաստանի վրա իշխում են թուրքոման ցեղերը: Այս գլխում առանձին ենթաբաժին նվիրված է Գրիգոր Տաթևացուն: Վերջինս նշանավոր վարդապետ Հովհան Որոտնեցու (1313-1388) աշակերտն էր: Գր. Տաթևացին (1346-1409) հայ առաքելական եկեղեցու շահերի ջերմ պաշտպանն էր: Նա նշանավոր մանկավարժ էր և գլխավորել է Տաթևի համալսարանը: Համառոտ ներկայացվում է

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 313:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 314:

¹⁷² Նույն տեղում, էջ 319-351:

վերջինիս կենսագրությունը: Ծնվել է Թիֆլիսում, Քաջբերունիքից (Ադիոհովիտ) Ամիր-Սարգսի որդին էր, նրա մայրը Փարպիից էր: Մանուկ հասակում անունը եղել է Խությունշահ՝ Գրիգոր նրա հոգևոր անունն է: Իր սանին ձեռնադրելու համար Որոտնեցին ձեռնարկել է մի իսկական ներհայեցողական ճամփորդություն: Ուսուցիչը նախ Գրիգոր Տաթևացուն տանում է Երզնկա քաղաքի մոտ գտնվող Մեպուհ լեռը, ուր գտնվում է Մանյա կույսի քարայրը ու Գրիգոր Լուսավորչի վերջին ճգնարանը:¹⁷³ Այստեղ 1371-ին Տաթևացին ստանում է սարկավազի աստիճան: Ուսուցիչ և աշակերտ շարունակում են իրենց ճանապարհը մինչև Երուսաղեմ: Գրիգորը սուրբ քաղաքի Սրբոց Հակոբյանց վանքում Զատկի տոնի ժամանակ ձեռնադրվում է քահանա: Վերադառնալով Տաթև՝ հաջորդ տարին ստանում է վարդապետի գավազան՝ իմաստությունը խորհրդանշող օձերի գլուխներով:¹⁷⁴ Այս տիտղոսը Տաթևացուն իրավունք էր տալիս քարոզել և ուսուցանել, բայց ոչ հրապարակել սեփական գործերը: Այդ արտոնությունը ստանալու համար Գրիգորը պետք է տասը տարի ուսումնասիրեր արտաքին և ներքին բնագավառներին վերաբերող գրքերը, դրանց թվում պետք է լինեին «լայն» ու «նուրբ» տեսակի, այսինքն բոլորին մատչելի գրքերը, որոնցում հավաքված են ամենագիտունների գործերը: 1385-ին Հովհան Որոտնեցին նրան օժուր է ծայրագույն վարդապետ, որը նրան տալիս է լիակատար հեղինակություն: 1383-ից մինչև 1386 թվականը Գրիգորն ուսումնասիրում է իր ուսուցչի հիմնական աշխատությունները՝ նվիրված Արիստոտելին և Հիսուսի մարդե-

¹⁷³ Նույն տեղում, էջ 323:

¹⁷⁴ «Ահա ես ձեզ ուղարկում եմ որպես ոչխարներ՝ գայլերի մեջ: Այսուհետև խորագետ եղեք օձերի պես և միամիտ աղավինների նման» (Տե՛ս Մատթեոս, 10, 16):

դուրջանն ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու: Հետո նա սկսում է շարադրել իր սեփական գործերը՝ նվիրված հավատի խնդիրներին: Դրանք են՝ «Գիրք հարցմանցը» (1397), «Ոսկեփորիկը», «Քարոզ-գիրքը»՝ ավարտված իր մահվանից երկու տարի առաջ՝ 1407-ին:

Առաջին գիրքը, բաղկացած տասը հատորից, յուրօրինակ հանրագումարն է նրա աստվածաբանական հայացքների՝ ընդդեմ Թովմա Ակվինացու, հայոց եկեղեցին պաշտպանելու համար:¹⁷⁵ Երկրորդը, բաղկացած չորս հատորներից, խոսք է Սուրբ Երրորդության և Քրիստոսի աստվածության մասին: Երրորդ գիրքն ունի մեկ հատոր «Ձմերան» և մեկ հատոր «Ամարան»: Նրանում վերախմբված են 344 խրատներ, որոնք մանկավարժորեն բացատրում են քրիստոնեական վարդապետությունը: Հավանական է, որ Գրիգորը հանձնարարել է իր աշակերտներին խմբագրել դրանցից հիսունչորսը, բայց միատարր պլանով և իր գրածին նմանվող ոճով:¹⁷⁶ Տաթևացին հոգևոր գիտելիքները վեր է հանում դիդակտիկ հարց ու պատասխանի ձևով: Մա ուսուցողական ձև է, որով նա դյուրում էր իր ժամանակակիցներին խոկալ տիեզերքի մասին նույն ձևով, ինչպես Աստված: Մա կարևոր էր մի ժամանակահատվածում, երբ Հայաստանը ենթարկվում էր հարձակումների, պատերազմների ու կոտորածների մոնղոլների, Լենկ Թեմուրի հորդանների և այլ թուրքոման ցեղերի կողմից:

«Հայաստանի պատմության» մեջ առանձին վերնագրի տակ խոսք է գնում Մեծփավանքի դպրոցի և Թովմա Մեծփեցու «Պատմութիւն Լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց» աշխատության մասին:

¹⁷⁵ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 323.

¹⁷⁶ Նույն տեղում:

Երբեք եպիսկոպոս չօծվելով՝ Գրիգոր Տաթևացին վայելել է ամենաբարձր հեղինակություն: Նրան կարիքի դեպքում ուղարկում էին բանակցելու Հայաստանը նվաճող օտարների հետ: 1407-ին նա ընտրել է տալիս իր զարմիկին՝ Առաքել Սյունեցուն, Սյունիքի մետրոպոլիտ: Վերջինիս գրչին է պատկանում «Աղամգիրքը», որը յուրօրինակ զուգակիցն է Միլտոնի «Դրախտ կորուսյալի»:¹⁷⁷ 1408-ին Մեծոփավանքում Տաթևացին ու նրա աշակերտները հայտնվել էին այլադավաններից փրկվելու համար: Տաթևացին որոշում է գաղտնի թողնել Մեծոփավանքը՝ Տաթև վերադառնալու համար: Տաթևացու աշակերտ Թովմա Մեծոփեցին արտասովալից տողերով է նկարագրում իր սիրելի ուսուցչի և նրա աշակերտների հալածական վիճակը: Տաթև վերադարձի ճանապարհին Գրիգոր Տաթևացին վախճանվում է՝ 1409-ի դեկտեմբերի 27-ին: Նրա մարմինը տեղափոխում են Տաթևի վանք, ուր նրա համար կառուցում են դամբարան՝ կպած Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու պատին:¹⁷⁸ 1410-ին Թովմա Մեծոփեցին դառնում է Մեծոփավանքի վանահայրը և գրում է Լենկ Թեմուրի ու նրա հաջորդների պատմությունը: «Հայաստանի պատմության» մեջ առանձին բաժին է նվիրված Լենկ Թեմուրին ու նրա՝ Հայաստան կատարած արշավանքներին:

Մոնղոլներից հետո Միջին Ասիայում իր իշխանությամբ բարձրանում է Լենկ Թեմուրը (1335-1405), որն իր նոր տերության մայրաքաղաքը դարձնում է Մամարղանդը: Արշավելով ու մոնղոլներից գրավելով Արևելքը՝ 1385-ին նա հարձակվում է Իրանի վրա: Այնուհետև գրավելով Հայաստանի մի մասը՝ շարժվում է դեպի Թիֆլիս, որը գրավում է 1386-ի նոյեմբերի 21-ին: Հաջորդ տարի

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 324:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 325:

շարժվում է դեպի Հայաստանի հարավը և արևմուտքը: Նա վերադառնում է Մամարդանդ 1387-ի աշնանը հսկայական ավարով ու անհաշվելի գերիներով:¹⁷⁹ Գրիգոր Տաթևացին իր «Հարցմանց գրքի» հիշատակարանում խոսել է Լենկ Թեմուրի արշավանքի դրամատիկ հանգամանքների մասին:

Պատմության այս հատվածում Մահեները խոսում են ոչ միայն Լենկ Թեմուրի, այլև Հայաստանը կեղեքող կարակոյունլուների ու ակկոյունլուների ժամանակահատվածի մասին:

Պատմվում է հայերի կաթողիկոսության նստավայրը Էջմիածին տեղափոխելու մասին:

Հռոմկլայի գրավելուց հետո, 1292-ին պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հորինում է «Ողբ ի դիմաց Ս.Կաթողիկէին» ծավալուն քերթվածը:¹⁸⁰ Իր հերթին Հովհան Ռոտունեցին խոկում էր Արցախի Գանձասարի վանքի մասին, ուր հաստատված էր Աղվանքի կաթողիկոսությունը Հասան-Ջալալյան հայ իշխանների հովանավորությամբ: 1421-ին Կոստանդինը՝ Կիլիկիայի հայ վերջին իշխաններից, որ մնացել էր Կիլիկիայում, 1375-ի հայ թագավորության վերացումից հետո, թողնում է Սիսը ու հաստատվում Կիպրոսում:

Էջմիածինը վերաշինվում է Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամի կողմից, որին Իսկանդարը կոչում էր Այրարատի տեր: Մի ձևական վաճառքով նա հոգևոր միաբանությանն է հանձնում յոթ բարգավաճ գյուղերը՝ Վաղարշապատը, Օշականը, Բաթրինջը, Նորագավիթը, Աղավնատունը, Թեղենիսը և Մուղնին: Ծրագիրը՝ վերադարձնել կաթողիկոսական նստավայրը իր պատմական

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 327:

¹⁸⁰ Այս ողբի քննական բնագիրը կազմել ենք մենք (տե՛ս Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երևան, 1988, էջ 82-105):

բնօրրանը, ուներ գաղտնի հույս Մեծ Հայքում վերականգնել կորցրած անկախությունը:¹⁸¹

1441-ին Թովմա Մեծփեցին և Հովհաննես Կոլոտիկ Հերմոնեցին Էջմիածնում հրավիրում են եպիսկոպոսների ժողով (synode), որին մասնակցում են տասներկու եպիսկոպոս, տասնութ վարդապետ և ավելի քան երեք հարյուր քահանաներ, բազմաթիվ ազնվականներ և հասարակ աշխարհականներ: Ժողովականները բաժանվում են երկու մասի՝ Վասպուրականը ընդդեմ Սյունիքի, որոնցից ամեն մեկն առաջարկում էր կաթողիկոսի իր թեկնածուն: Ընտրվում է Կիրակոս Վիրապեցին, որը 1443-ին փոխարինվում է Սյունիքի թեկնածուով՝ Գրիգոր Ժ Ջալալբեկյանցով (1443-1465):

Մեծ Հայքի բնակիչները տառապում էին մի կողմից Օսմանյան թուրքերի, մյուս կողմից մահմեդական Պարսկաստանի բռնություններից:

Իրանի Սեֆևյան հարստության ծաղկուն ժամանակահատվածը կապվում է Շահ Աբբաս Առաջինի կամ Մեծի (1571-1629) գահակալության հետ: Վերջինիս հետ է կապվում հայերի Մեծ բռնի արտագաղթը: Այն տեղի է ունեցել 1604-ի հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 19-ը: Ըստ պորտուգալացի միսիոներ Belchior dos Anjos-ի այդ արտագաղթի ժամանակ ավելի քան յոթ հազար հոգի մեռավ քաղցից և դաժանություններից, քանզի մայրերը գրկած տանում էին փոքրահասակ երեխաների, շատերը հղի էին, բոլորը քայլում էին ոտքով, տարվա շատ վատ ժամանակ՝ ձյան տակ:¹⁸² Արաքս գետի անցումը աղետալի էր: Շատերը խեղդվեցին գետում. ջուրը ծածկվեց հազարավոր դիակներով: Ներկայացվում են այն զավառները, որոնցից բռնությամբ Պարսկաստան են քշվել հայերը:

¹⁸¹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 332-333.

¹⁸² Նույն տեղում, էջ 345:

Ամբողջ Արարատյան դաշտը արտագաղթի ենթարկվեց: Ժամանակի պատմիչ Առաքել Դավրիժեցին այդ բռնությունների մասին խոր ցավով գրում է. «...որովհետև միանգամից անմարդաբնակ դարձրեց ամեն ինչով լի ու հուռթի աշխարհս Հայոց, որովհետև տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քչեց Պարսկաստան, այլ շատ գավառներ: Եվ սկսեցին Նախիջևանի սահմաններից, անցան Եղեգնաձոր, Գեղամա ծովի եզերքով, Լոռիով, Համգաչիման գավառը, Ապարանը, Շարախանան, Շիրակավանը, Ջարիշատը, Կարսի գյուղերի մի մասը, Կաղզվանի ձորը ամբողջովին, բովանդակ Ալաշկերտը, Մոկսի գյուղերը, Աղբակի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի գավառները, նաև ինչ պանդուխտներ որ մնացել էին Թավրիզ քաղաքում կամ գյուղերում, բովանդակ Արարատյան դաշտը, Երևան քաղաքը, Կոտայքի շրջանը, Ծաղկունքի ձորը, Գառնու ձորը, Ուրծաձորը, սրանցից առաջ Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի, Վանա գավառները ավարով ու գերությամբ բերել էին Երևան, բոլորին սրանց հետ քչեցին տարան»¹⁸³:

Շահ Աբբասը հատուկ ջերմ վերաբերմունք է ցուցաբերում Երևանի, Ագուլիսի և հատկապես Ջուղայի խոջաների նկատմամբ: Իր մեծամեծներին բացատրում է, թե այդ ամենը չի անում հայերի օգուտի, այլ պարսիկների համար: Ջուղայի 2000 ընտանիքները ստանում են արտոնություններ: Նրանք բնակվում են Իրանի նոր մայրաքաղաքի մոտ և կառուցում Նոր Ջուղան: Նոր Ջուղայի քաղաքապետարանն ուներ իր գլխավորը՝ քալանթարը, որը 1605-1660-ին ընտրվում էր Խոջա Խաչիկի ժառանգներից, որոնք կոչվում

¹⁸³ Նույն տեղում, էջ 345-346: Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարպազ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 52-53:

էին նաև Սաֆրազյանք: Առաջինը նրանց մեջ Սաֆարն էր (1605-1618)՝ Խոջա Խաչիկի որդին, որին հաջորդեց նրա եղբայրը՝ Նազարը (1618-1636):

XVII դարի վերջին Նոր Ջուղայում կային 25.000-ից մինչև 30.000 հայ բնակիչներ: Ավելի քան քսանչորս եկեղեցիներ կառուցվեցին 1606-ից մինչև 1695 թվականը: Դրանց մեջ ամենանշանավորը Ամենափրկիչն է: Շահ Աբբասը հրահանգել էր Էջմիածնի մայր տաճարը տեղափոխել Նոր Ջուղա՝ այնտեղից բերելով քարերը: Բարեբախտաբար խոջա Նազարը տարհամոզեց Շահ Աբբասին, և այն քարերը, որոնք արդեն հանվել էին, ցայսօր բարեպաշտորեն պահվում են Նոր Ջուղայի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում:¹⁸⁴ Առաքել Դավրիժեցին գրում է. «Նախ՝ ինքը Շահ Աբբասը սիրալիր էր հայ ազգի հանդեպ, մեծարում էր նրանց՝ մանավանդ ջուղայեցիներին, որոնց գլխավորի անունն էր խոջա Սաֆար, սրա եղբորը՝ խոջա Նազար, և սրանց որդիները՝ Մելիք աղա, Սուլթանում ու Սաֆրազ: Շահը մշտապես գալիս էր նրանց տները, ուտում ու խմում էր նրանց հետ նրանց կերակուրները առանց խտրություն դնելու. չէ՞ որ պարսիկները սովորություն ունեն քրիստոնյաների նկատմամբ խտրական լինելու: Շահը ինքը նրանց տուն էր հրավիրում իր սեղանին ու պատվում էր մեծամեծների հետ ու պատվիրում էր իր նախարարներին նույնը անել»¹⁸⁵:

1605-ից մինչև 1625-ը Այրարատյան նահանգի կառավարիչն էր Ամիրգունա խանը՝ հմուտ պալատական և հիանալի դեկավար: Վերջինս կարողանում է վաստակել շահի վստահությունը և ապահովել հայերին: Ջաքարիա սարկավազ Քանաքեռցին ամենաջերմ խոսքերով է բնութագրում Ամիրգունա խանին, որը վերստին

¹⁸⁴ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 348.

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 348:

հավաքում է հայերին ու սկսում է վերակառուցել ու վերաբնակեցնել նրանց: Նախ վերաշինում է Երևանի միջնաբերդը, հետո պալատները, վերակենդանացնում մրգաստաններն ու այգիները: Նա կառուցում է ջրանցքները, թեթևացնում է հայ ժողովրդի վզին դրված լուծը: Մա մի քաջ մարդ էր, վախի զգացում չունեցող, հասկացող կառուցելու օգուտը և քրիստոնյաներին սիրող:¹⁸⁶

1638-ի թուրք-պարսկական պատերազմի ժամանակ Հայաստանը դառնում է պատերազմի թատերաբեմ: Տեղի է ունենում նոր մեծ բաժանում Թուրքիայի ու Պարսկաստանի միջև: Ավելի ուշ առաջանում են տաճկահայք ու պարսկահայք եզրույթները:

«Հայաստանի պատմություն» գրքի X գլուխը կոչվում է «Լույսեր» (1639-1800): Նոր ժամանակներում բաժանված լինելով Սեֆևյանների և Օսմանյան կայսրության միջև՝ Հայաստանը գրկվում է Եվրոպայի մտավոր մեծ թռիչքից: 1639-ից հետո էլ Հայաստանը տառապում էր ջալալիների հարձակումներից ու թալանից: Սուլթանի կառավարական մարմինները անկարող էին ջալալիներից ապահովել իրենց քաղաքացիներին ու նրանց ունեցվածքը: Պարսկական հատվածներում հայերը փոքր-ինչ առաջադիմում էին հայ վաճառականների բարգավաճ գործունեության հետևանքով: Արտասահմանում հայերը հիմնում են իրենց տարանները: Դրանց շնորհիվ նրանք ծանոթանում են նոր գաղափարների հետ: 1669-իբ Ամստերդամում լույս է տեսնում Առաքել Դավրիժեցու «Պատմությունը»՝ հնարավորություն ստեղծելով ներկայացնել հայ ազգին XVII դարի պատկերը Մեծ Հայքում, Անատոլիայում, Կովկասում և գաղթօջախներում: Մահմեդականների ճնշումներից առաջացած անկումից հետո հայ վաճառականներն ու կաթողիկոսները երազում էին ազգի ազատագրման մասին:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 349:

Նրանք մտածում էին, թե Արևմուտքի հզոր ուժերով կկարողանան ազատագրվել: 1678-ին Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին դիմում է եվրոպացիներին, Հռոմի Ալեքսանդր VII պապին՝ Հայաստանը մահմեդական լծից ազատագրելու համար:¹⁸⁷ Երբ Ջուղայեցին 1680-ին Կոստանդնուպոլսում վախճանվում է, նրա շրջապատից մի երիտասարդ՝ Միսիանի մելիքի որդի Իսրայել Օրին, որոշում է մեն-մենակ շարունակել ազատագրական ձեռնարկը: Եվրոպացիների խոստումներից խաբված՝ նա իր ծառայություններն առաջարկում է Ռուսաստանի ցար Պետրոս Առաջինին, որը ձեռնարկում է մի գաղտնի պատգամավորություն Պարսկաստանում և Կովկասում: Օրին մեռավ, չտեսնելով իր երազանքի իրականացումը: Նրա գործը 1722-ին շարունակեց Դավիթ Բեկը: Վերջինս հույսը դնելով Պետրոս Առաջինի վրա՝ Ղարաբաղում և Սյունիքում սկսում է ազգային-ազատագրական պայքարը: Թուրք-պարսկական զավթիչների դեմ պայքարը շարունակվեց մինչև 1730 թվականը:

Օսմանյան կայսրության հայ հոգևոր դասի ընտրյալները մտածում են մշակութային վերածննդի մասին: Մխիթար Սեբաստացին (1676-1749) Վենետիկում 1717-ին հիմնում է Մխիթարյան միաբանությունը, որը նպատակ ուներ գիտության և կրթության միջոցով բերել հայ ազգի ազատագրումը օտարի լծից: Նույն ժամանակ Մուշի մոտ Վարդան Բաղիշեցին (1630-1704) մոռացումից ու ոչնչանալուց փրկում էր հայ հին պատմիչների գործերը, նրա աշակերտ Հովհաննես Կոլոտը 1715-ին դառնում է Կոստանդնուպոլսի պատրիարքը՝ իրեն հաջորդ ունենալով Գրիգոր Նարեկացու աղոթքների փայլուն մեկնաբանող Հակոբ Նալյանին (1745):

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 353:

Օգտվելով Սեֆևյանների կայսրության ավարտից՝ Մյունիքի և Արցախի (Ղարաբաղի) մելիքները վերստին դիմում են ռուսական ցարին: Ազատագրական գաղափարներ է արձարծում Մադրասում Շահամիր Շահամիրյանը, իսկ Կալկաթայից Հովսեփ Էմինը սովորում է եվրոպական ռազմական գործը: Վերջինս իր ազգային-ազատագրական գործունեության մասին գրել է անգլերենով շարադրված «Հովսեփ Էմին հայի կյանքն ու արկածները» ինքնակենսագրական գրքում:¹⁸⁸

Սեֆևյան շահերի վրա մեծ էր հայ խոջաների ազդեցությունը, և այն զգացվում էր Իրանի արտաքին քաղաքականության մեջ:

Հայ առևտրականներն առավել են ծավալում իրենց առևտրական գործունեությունը միջազգային ասպարեզում և օգնում են Էջմիածնում հաստատված Մայր աթոռին: Փիլիպոս կաթողիկոսը (1633-1655) Կոստանդնուպոլսի մի հարուստ վաճառականի նյութական օգնությամբ կառուցում է Մայր տաճարի զանգակատունը: Մեծահարուստ պարոն Այվազը Մուղնիում կառուցում է Սուրբ Գևորգ հոյակապ եկեղեցին՝ 1664-1669թթ.: Մեկ ուրիշ վաճառական ներդրումներ է կատարում զարգացնելու համար այգեգործությունը, ջրաղացները, անասնաբուծությունը և այլ գյուղատնտեսական բնագավառներ: Հարուստ վաճառականները տեր են դառնում առանձին գյուղերի: Այսպես, օրինակ, Նորքը, Նորագեղը, Եղվարդը և այլ գյուղեր պատկանում էին խոջա Սեթ Երևանցուն:

¹⁸⁸ Տե՛ս The life and adventures of Josef Emin, an armenian. Written in English by himself, London, printed in the year 1792.

1699-ին Արևելյան Հնդկաստանի անգլիացի տնօրենների կարծիքով հայերն աշխարհի հնագույն վաճառականներն են:¹⁸⁹ Նրանց առևտրական ճանապարհները ձգվում էին մինչև Հնդկաստան, Սիամ, Ճավա և Ֆիլիպիններ, այնտեղից էլ Լևանտի երկրներ, Լիվոռնո, Վենետիկ, Անգլիա և Միացյալ թագավորություն:¹⁹⁰

Նոր Ջուղա քաղաքը իր ծաղկման գագաթնակետին հասավ Շահ Սաֆիի (1629-1642) ժամանակ: 1644-ին Շահ Աբբաս Երկրորդը սպանել է տալիս մեծ վեզիր Սարու Թաքիին, որը նվիրված էր թագուհու մայր Աննա խանումին՝ (մահմեդական դարձած կովկասուհի) պաշտոնապես հայերին հովանավորող: Դրանից հետո հայերի վիճակը դառնում է անբարենպաստ: Անգլիացիներն առավել առաջադիմում են մետաքսագործության մեջ, և հարուստ պարսիկները նախընտրում են Անգլիայում պատրաստված մետաքսը: Իրանական թավիշը և մյուս թանկարժեք կտորները ուղարկվում էին Ռուսաստան և Լեհաստան:

Ժամանակի ընթացքում՝ խոջա Սաֆրազի մահից հետո, Նոր Ջուղայի քաղաքաբարությունը այլևս չէր պատկանում խոջա Խաչիկի ժառանգներին, ինչպես խոստացել էր Շահ Աբաս Առաջինը:

Շահ Սուլեյմանի (1666-1694) օրերին մահմեդականներ են հաստատվում Սպահանի հայկական թաղամասերում՝ հայերին հսկելու համար: 1671 թվականին Նոր Ջուղայի հայկական եկեղեցիների տուրքերը բարձրացվում են:¹⁹¹

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 356:

¹⁹⁰ Նույն տեղում:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 357:

1688-ին քսաներկու երիտասարդ աղջիկներ տարվում են հարեմ. նրանց մահմեդականացումը հնարավորություն է տալիս աղջիկների ընտանիքներին պաշտպանելու իրենց իրավունքները:

XVII դարի վերջերին Նոր Ջուղայի ինքնավարությունն ավարտվում է: Սակայն հայ վաճառականները գտան նոր ուղիներ: Սաֆրագյանները դրանից հետո տեղափոխվեցին Մոսկվա և սկսեցին առևտուր անել ողջ Ռուսաստանում: Շահի ֆինանսական ամենամեծ դեմքերը հաստատվեցին Հնդկաստանում: Նոր Ջուղայում մնացածները անհրաժեշտության դեպքում կարողանում էին պաշտպանել իրենց իրավունքները:

Նույն ժամանակահատվածում հայերի վիճակն առավել ծանր էր Օսմանյան Թուրքիայում, ուր ջալալիները հաճախ ամայացնում էին հայկական բնակավայրերը:¹⁹² Ջալալիների վայրենությունները պատկերված են Ստեփանոս Թոխաթցու «Ողբ ի վերայ Եւրոկիա մեծի քաղաքին» քերթվածում.

Ոմանք ամսով հաց չի զըտին
Եւ ըզլերանց խոտն ուտէին,-
Զիւրենաց բարիքն այլք ուտէին,
Ի՛ ինքեանք հեռուստ նայեալ լային:
Այրեցին գտուն և ըզտեղի,
Զմանուկ տըղայքն արին գերի,
Զոսկի ւ՛արծաթ և զդումաշնի
Զայն թալնեցին անյագելի:¹⁹³

¹⁹² Ջալալիների շարժման մասին տե՛ս Մ. Ջուլայյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:

¹⁹³ Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 505-506:

Չալալիներից հալածական՝ հայերը թողնում են իրենց հայրենի բնակավայրերը և մեկնում օտարության: Շատ արհեստավորներ նախընտրում են տեղափոխվել Կոստանդնուպոլիս: Հայ հյուսններն ու քարտաշները, որոնք հաճախ իսկական ճարտարապետներ էին, նպաստում են Թուրքիայի մայրաքաղաքի շինությունները կառուցելուն:

Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերն անլուր հալածանքներից ազատվելու համար գաղթում են դեպի Կոստանդնուպոլիս, Բալկաններ, Լեհաստան, Ղրիմ, Սև ծովի ափեր: Երկիրն ամեն օր ավելի էր դատարկվում:¹⁹⁴ 1611 թվականին Սիմեոն դպիր Լեհացին ասում է, որ բոլորովին մոտ ժամանակներում 40.000 հայ ընտանիքներ տեղափոխվել են Կոստանդնուպոլիս: Նա նաև այցելում է Թուրքիայի մայրաքաղաքի ստրուկների շուկա, ուր ջալալիները վաճառում էին նաև հայ գերիների: Ծեր տղամարդիկ ու կանայք նստած էին, իսկ երիտասարդ ու գեղեցիկ աղջիկներին ու տղաներին շուկայում պտտեցնում էին, ինչպես անում էին ձիերին կամ ջորիներին:¹⁹⁵ Գերիներին զննում էին ոտքից գլուխ: Իրենց դուր եկած աղջիկներին անջատում էին հորից ու մորից, քրոջից ու եղբորից ու տանում: Թուրքերը ստեղծում էին կրոնական լարվածություն: Սիմեոն Լեհացին գրում է, թե Թուրքիայի քաղաքներում հայերն ապրում էին խղճուկ բնակարաններում, աղքատիկ պայմաններում՝ ենթարկված ազգային խտրականության: Գավառներում քրիստոնյաներն իրավունք չունեին հագնել թանկ զգեստներ, ունենալ մեծ տներ կամ այգիներ ու ձի նստել:¹⁹⁶ Առաքել Դավրիժեցին մանրամասն պատմում է հայ քրիստոնյաների նահատա-

¹⁹⁴ Annie et Jean-Pierre Mahé, *Histoire de l'Arménie*, p. 361.

¹⁹⁵ Նույն տեղում:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 362:

կուրթյան մասին Անատոլիայում՝ 1642-ից 1656 թվականների ընթացքում:

Մահեները պատմում են նահատակության հետաքրքիր դեպքեր: Խաչատուր անունով մի բարեպաշտ երիտասարդ Ամիդ (Դիարբեքիր) քաղաքից, հափշտակված Հայսմավուրքում եղած սրբերի վարքով, մանուկ հասակից երազում է մեռնել հանուն հավատի: Դառնալով քրիստոնյա փականագործի աշակերտ՝ մի օր իր ուսուցչին հայտնում է, թե գիշերային տեսիլով իմացել է իր անխուսափելի նահատակության մասին: Հետո նա թողնում է կրպակը, ուղիղ գնում է մզկիթի բակ, ուր հանդիպում է սեյիդ Ալիին, որին վիրավորում է բազմաթիվ վկաների ներկայությամբ: Ատյանում, ուր նրան դատապարտում են, հրաժարվում է դառնալ մահմեդական ու նահատակվում է:¹⁹⁷

Ըստ Առաքելի՝ բոլոր նահատակներն իրենց նմանեցնում էին Քրիստոսին, շնորհիվ գիշերվա գերբնական լուսավորվելու հրաշքի:

XVII դարի սկզբին հայ եկեղեցական կյանքն անկում է ապրում: Շարունակական պատերազմները ավերակների են վերածում վանական դպրոցները: Առաքել Դավրիժեցին ասում է, թե այլևս ոչ ոք գիրք չէր կարդում, գրքերն ընկած էին մռռացության մեջ. «Քանզի մինչև այս պահը տգիտությամբ խուպանացել ու կորդացել էր մեր հայոց ազգը. Ոչ միայն չէին կարդում, այլև գրքեր չէին ճանաչում և չգիտեին գրքերի ուժն ու գորությունը, որովհետև մարդկանց աչքում գիրքը անպիտանացել էր և իբրև փայտի կոճղեր ընկած էր որևէ անկյուն՝ պատված հողով ու մոխրով»:¹⁹⁸ Էջմիածնի կաթողիկոսարանն էլ տառապում էր անկայուն վիճա-

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 364:

¹⁹⁸ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 203:

կից, որովհետև կաթողիկոսի աթոռին հավակնում էին միանգամից մի քանի հոգևորականներ: Մյուս կողմից հայոց պաշտոնական եկեղեցուն հարվածում էին աղանդավորները Մելիսուի գլխավորությամբ:

Մելիսուն ծնվել էր Ուտիքում: Ինչ-որ ժամանակ սարկավազ էր կարգվել Գանձասար վանքում: Բորբոքել է գյուղացիների զայրույթը վանքերի տերերի դեմ: Քարոզել է ունեցվածքի հավասարություն: Նա բողոքող քարոզով ոտքերը կախած նստում էր եկեղեցու բեմին՝ ձեռքին՝ գրքույկը, և մարգարեանում էր ընդդեմ հոգևորականների անարժանավորության ու խոստանում էր «սևագլուխներին սպանողներին» երկնային արքայություն մյուս աշխարհում:¹⁹⁹ Արցախից քշվելուց հետո Մելիսուն եկել է Երևան, Քանաքեռ: Նրա հռչակը շարունակում էր աճել: Քանաքեռում նույնիսկ ջահել աղջիկները խենթանում էին նրա խոսքերից և ցանկանում էին իրենց դեմքը քսել նրա զգեստին: Ամիգունա խանը և կաթողիկոս Ավետիք Էջմիածնեցին զուր ջանքեր են գործադրում նրան կանգնեցնելու: Մելիսուն փախչում է Արևմտահայաստան, այնտեղից էլ Երուսաղեմ: Մելիսուի գործողությունները երբեմն համեմատվում են թոնդրակեցիների հետ, որոնք գործում էին X-XI դարերում: Սակայն Մելիսուն չի ստեղծել որևէ վարդապետություն Քրիստոսի ու եկեղեցու մասին:²⁰⁰

Մահեները խոսում են հոգևոր կյանքի վերածննդի մասին, որը հիմնվեց Մյունիքում՝ 1610-ին, հին Հարանց անապատի տեղում և կոչվեց Մյունյաց Մեծ անապատ:²⁰¹ Մ. Աբեղյանը և Լեոն

¹⁹⁹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 367.

²⁰⁰ Նույն տեղում:

²⁰¹ Մյունյաց Մեծ անապատի գործունեության ու հիմնադիրների մասին տե՛ս Ա. Դոլուխանյան, Ներսես Մոկացի, Ս. Էջմիածին, 2009, էջ 43-46:

Մյունխաց Մեծ անապատի կատարած գրական ու մշակութային դերից ելնելով՝ այն համարել են Մխիթարյան միաբանության նախատիպը:²⁰²

Մովսեսը (հետագայում կաթողիկոս Մովսես Տաթևացին – 1629-1632), հենվելով Շահ Աբասի և Ամիրզունա խանի վրա, փորձում է վերականգնել Սուրբ Էջմիածնի վանական իրավունքները դաշտերի, այգիների, վանքապատկան գյուղերի վրա:²⁰³

Լուսավորչական գործը ևս զարգանում է շնորհիվ Մովսես Տաթևացու, որին անվանում են «երկրորդ Լուսավորիչ»: Նոր Ջուղայում դպրոց է բացվում: Մովսեսի գործը շարունակում է նրա արժանավոր աշակերտ Խաչատուր Կեսարացին, որը հիմնում է գրչատուն ու գրադարան:

Իրականացնելով իր ուսուցչի՝ Մովսես Տաթևացու երազանքը՝ Խաչատուր Կեսարացին 1636-ին Նոր Ջուղայում հիմնում է տպարան: Նա նաև դպրոցում մտցնում է բոլոր ազատ արվեստները («բնագանցություն»), որոնք մինչ այդ անծանոթ էին Հայաստանում: Խաչատուր Կեսարացու տպարանը գործում է մինչև 1650 թվականը: Այս երկարակեցությունը հակադարձվում է Աբգար Թոխաթցու Կոստանդնուպոլսում հիմնած խիստ կարճ կյանք ունեցած տպարանին, որը հիմնվել է Հակոբ I պատրիարքի համաձայնությամբ Սուրբ Նիկողայոս եկեղեցում և փակվեց արագորեն թուրքական գրաքննության կողմից: Հակոբ Մեղապարտը 1512-1513 թվականներին հայերեն հինգ գրքեր է հրատարակում Վենետիկում, որոնցից առաջինը «Ուրբաթագիրքն» էր: 1586-ին

²⁰² Մ. Աբեդյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, Երևան, 1946, էջ 438, Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1904, էջ 154-155:

²⁰³ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 368:

Հովհաննես Տերգնցին Վենետիկում հայերենով տպագրում է Սաղմոսարան:

Երբ Հակոբ Զուղայեցին (1655-1680) ընտրվեց կաթողիկոս, որոշեց ամեն գնով ձեռք բերել նոր տեխնիկա՝ հենվելով սփյուռքի հայերի վրա: Այդ իսկ նպատակով 1656-ին Եվրոպա ուղարկեց գրիչ և ծաղկող Մատթեոս Վանանդեցուն, հետո 1662-ին վարդապետ Ոսկան Երևանցուն:

Ծանր փորձերից հետո Ֆրանսիայում ու կաթոլիկ երկրներում, ուր նրանց հետապնդում էր գրաքննությունը, հայ տպագրիչները հաստատվում են Հոլանդիայում: Ոսկանն այնտեղ հիմնում է Սուրբ Էջմիածնի տպագրատուն և 1666-ին հրատարակում է հայերեն առաջին Աստվածաշունչը:

Նույն ժամանակ վաճառականների և իրենց մեկենասների պահանջը բավարարելու համար հոգևորական տպագրիչները հրատարակում են նաև աշխարհիկ նյութեր: 1668-ին Ղուկաս Վանանդեցին վերստին Ամստերդամում հրատարակում է «Աղվեսագիրքը», որն առակների ժողովածու էր, հետո 1695-ին «Աշխարհացույցը», իսկ 1699-ին «Գանձ չափոյ, կշռոյ, թուոց եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը:

1666-ին տպագրված Աստվածաշունչը գրավում է սրբազան բնագրերի մասնագետ Ռիչարդ Միմոնի ուշադրությունը, որն այն գետեղում է 1685-ին և 1690-ին լույս տեսած «Հին և Նոր կտակարաններ» աշխատության մեջ: Աստվածաշնչի հայերեն թարգմանության ճշգրտության պատճառով Լակրոզն այն անվանում է «Բոլոր հին թարգմանությունների թագուհի»²⁰⁴: 1679-ին Քուրբերտը հանձնարարում է Անտուան Գալլանին՝ «Հազար ու մեկ գիշերների» ապագա թարգմանչին, գնել հայերեն գրքեր և գտնել մի Մովսե-

²⁰⁴ Նույն տեղում, էջ 371:

սի շատ հին «Պատմությունը»՝ լույս տեսած Ամստերդամում 1695-ին, որը ներկայացնում է Հայաստանի պատմությունը Նոյի տապանից սկսած մինչև V դարասկզբի Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Հենց այդ գիրքն էլ ընկած է 1736-ին Վիստոն եղբայրների Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լատիներեն թարգմանության հիմքում:

1669-ին՝ վերստին Ամստերդամում, հեղինակի մահվանից քիչ առաջ լույս է տեսնում Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», որը պատմում է նրան ժամանակակից պատմական բոլոր այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել Հայաստանում ու գաղթօջախներում՝ սկսած 1586-ից:

1669-ից սկսած՝ ավստրիացիները դարձան առաջատարը Թուրքիայի դեմ մղված պայքարում: Ահա թե ինչու կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին իր հույսը դրեց Լեոպոլդ Առաջին միապետի և պապականության վրա: Սակայն պապական Հռոմն առաջ է քաշում հայ և կաթոլիկ եկեղեցիների միանալու խնդիրը, որը մերժվում է Ջուղայեցու կողմից:

Հակոբ Ջուղայեցին Կոստանդնուպոլսում հանդիպում է Իսրայել Օրուն, որը Միսիանի մելիքի որդի էր: 19 տարեկան հասակում Օրին մեկնել է Վենետիկ, երեք տարի եղել այնտեղ, այցելել Ֆրանսիայի թագավորին ու որոշ ժամանակ գերի եղել անգլիացիների մոտ: Ազատվելուց հետո Հռենոսյան Պֆալցում եղել է Հայդելբերգի, Ֆարնկենթալի և Մանհայմի մատակարարման կոմիսար: Հովհան Վիլհելմին ներշնչել է Հայաստանը ազատագրել Օսմանյան լծից: 1699-ի գարնանը Օրին վերադարձել է Սյունիք՝ իր հետ բերելով Հովհան Վիլհելմի նամակը՝ ուղղված Վրաստանի թագավոր Գիորգի XI-ին, Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսներին, վրաց իշխաններին ու հայ մելիքներին: Քսան տարի

կտրված լինելով հայրենիքից՝ Օրին ծանոթ չէր նոր առաջնորդներին: Մելիքները լիովին վստահում էին Օրիին և սպասում էին գերմանացի միապետի օգնությանը: Սակայն Օրիի ազատագրական ծրագրերը չեն իրականանում: Ռուսաստանից սպասվող օգնությանը մեծապես խանգարում են գյուղացիական ապստամբությունները Ստենկա Ռազինի գլխավորությամբ, որոնք տեղի ունեցան 1667-ից 1670թթ. ընթացքում:

1701-ին Օրին հասնում է Մոսկվա, հանդիպում ռուսական ցարին ու ներկայացնում Սյունիքի մելիքների օգնության խնդրագիրը: Օրին պատրաստել էր Հայաստանն ազատագրելու նոր ծրագիր, որում կենտրոնական դերը պատկանում էր Ռուսաստանին:

Օրիի գործը շարունակում են վարդապետ Մինասը և հատկապես կաթողիկոս Եսային: Այս անգամ՝ 1722-ին, Եսայի կաթողիկոսի ծրագրերին միանում է Արևելյան Վրաստանի արքա Վախթանգ VI-ը: Այդ մասին իմանալով՝ շահ Թահմազ II-ը փոխում է Կախեթիայի արքա Կոստանդինի անունը Մուհամմադկուլի խան ու դարձնում նրան մահմեդական: 1723 թվականի ամռանը օսմանցիները մտնում են Թիֆլիս և Վախթանգին աքսորում: Նրա փոխարեն կառավարիչ են նշանակում Վախթանգի Բակուր որդուն՝ մահմեդական դարձնելով նրան՝ Շահնավազ անունով:

Ղարաբաղում սկսվում է Նոր Նորոգում անունով ազատագրական շարժում: Թուրք-պարսկական նվաճողներին դիմադրելու համար Սյունիքում սկսվում է ազատագրական շարժում Դավիթ Բեկի գլխավորությամբ (1722-1728): Դավիթ Բեկը հայ էր, որն ապրում էր Վրաստանում: Նրա պատմությունը մեզ ավանդել է շարժման զինակից Ստեփան Շահումյանը՝ այն պատմելով Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Մեքաստացուն:

Դավիթ Բեկի գորահրամանատար Մխիթար սպարապետը տանում է մի շարք փայլուն հաղթանակներ: Դավիթ Բեկին օգնության են գալիս Ղարաբաղից թվով 2000 մարդ: Մինչ այդ Դավիթ Բեկն ու Մխիթարը գրավել էին Ջևու ու Որոտան բերդերը:

1725-ին թուրքերը հասնում են Մխիհան ու Ղափան: 1726-ի մարտի 24-ին Մխիթար սպարապետը և նրա զինակիցները օգնության խնդրանքով դիմում են ռուսական ցարին, սակայն նրանց չեն պատասխանում:²⁰⁵ Մեղրին ու Ղափանն ազատագրվում են թուրեքրից: Շահ Թահմազ Երկրորդը Դավիթ Բեկին ճանաչում է որպես Ղափանի տեր: Այդ ժամանակ մելիք Մուսան՝ Ագուլխի քաղաքագլուխը, ձևացնում է, թե ենթարկվում է Դավիթ Բեկին, սակայն գաղտնի թելադրում է հարձակվել Թովմա Առաքյալի վանքի վրա, որը հայերի ձեռքին էր: Դավիթ Բեկը վախճանվում է 1728-ին, և ապստամբության գործը շարունակում է Մխիթար սպարապետը: Չնայած Տեր Ավետիսի դավաճանությանը՝ նա շարունակում է այդ անհանգիստ պատերազմը: Հալի ամրոցը թշնամին գրավում է և ստանում է նոր օգնական ուժեր: Մխիթարին մատնում են, և յուրաքանչյուրը նրան սպանում են Խնձորեսկ ամրոցում: Ազատագրական կռիվները շարունակվում են մինչև 1730 թվականը:

Մահեներն առանձնացված ներկայացնում են հայ հոգևոր կյանքի վերածնունդը ու Մխիթար Սեբաստացու կատարած փառահեղ դերն այդ գործում:

Չնայած ազատագրական կռիվները տեղի ունեցան Արևելյան Հայաստանում, սակայն Օսմանյան կայսրությունից սկսվեց մշակութային առաջին վերածնունդը:

Մխիթար Սեբաստացին ծնվել է 1676-ի փետրվարի 7-ին Սեբաստիա քաղաքում: 15 տարեկանում մտել է հայրենի քաղաքի

²⁰⁵ Նույն տեղում, էջ 384:

Սուրբ Նշան վանքը: Կաթողիկոս Նահապետ Ա Եդեսացու (1691-1705) նվիրակ Միքայել Ջուղայեցու հետ մեկնել է Էջմիածին: Հետագա տարիներին եղել է Էրզրումում և Մեբաստիայում, Նիկոսիայում և վերջապես Կոստանդնուպոլսում:²⁰⁶ 1701-ին Մխիթարը և նրա աշակերտները գաղտնի հեռանում են Կոստանդնուպոլսից: Մխիթարի հետագա ողջ կյանքը նվիրվում է հայ ազգի հոգևոր լուսավորության ծառայելուն:²⁰⁷ Մխիթար Մեբաստացին նախատեսում էր, որ իր բոլոր միաբաններն ունենան վարդապետի աստիճան: Ազգայինը միաբանության համար դառնում է առաջատար, որպեսզի որևէ մեկը դառնար Մխիթարյան միաբանության անդամ, ապա նրա ծնողներից մեկը պետք է հայ լիներ:²⁰⁸

1717 թվականին Վենետիկի դոժ Ջիովանին Մխիթարին է տալիս Սուրբ Ղազար կղզյակը, որը նախկինում եղել է բորոտների բնակատեղի: Չմոռանանք, որ այս մեծ վաճառաշահ քաղաքը մի ժամանակ Կիլիկյան Հայաստանի հետ ունեցել էր սերտ կապեր: Եվ հայ վաճառականներն այնտեղ ունեին իրենց տունը, ու հենց այդ քաղաքում էլ լույս տեսավ առաջին հայ տպագիր գիրքը: Մխիթարը մշակում է ազգային գիտական ու պատվասիրական ծրագիր: Ահա ինչու նա անմիջապես բացում է մի հիանալի դպրոց 12-16 տարեկան տղաների համար, որպեսզի նրանք դառնան հոգևորական: Սկզբում ուսուցանվում էին հռետորություն, թվաբանություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն: Հետո ծրագրում մտցվեցին լեզուներ, պատմություն, աշխարհագրություն և այլ գիտաճյուղեր, որոնք ուսուցանվում էին եվրոպական մակարդակով:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 385:

²⁰⁷ Նույն տեղում:

²⁰⁸ Նույն տեղում, էջ 385-386:

Մխիթարը և ողջ միաբանությունը սկսեցին մտավոր առաջադիմական մի նախաձեռնություն, որ չէր եղել Մաշտոցից և սուրբ թարգմանիչներից հետո:²⁰⁹ Նրանք սկսեցին թարգմանել գրքեր, որոնք ընդգրկում էին իրենց ապրած ժամանակի գիտության բոլոր բնագավառները: Մխիթարյանների համար ազգայինը խիստ կարևոր էր: Այդ նպատակով Մխիթարը 1733-ին տպագրում է Աստվածաշնչի նոր օրինակ, որը լիովին հայկական էր, ի տարբերություն Ոսկան Երևանցու 1666-ին տպագրած որոշ չափով լատինացված օրինակի: Մահվանից առաջ՝ 1749-ին, հրատարակում է «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջին հատորը: Սա իր ժամանակին եղել է դասական բառարանագրության օրինակ: Երկրորդ հատորը լույս տեսավ 1769-ին: Մինչ այդ նրա աշակերտները և հաջորդները հրատարակել էին բազում երկլեզու բառարաններ: Մխիթարյաններն ունեին բազմագիտակ միաբաններ: Միքայել Չամչյանը 1784-ից մինչև 1786-ը հրատարակում է «Պատմութիւն Հայոց» աշխատության երեք հատորները՝ հիմնված հին ժամանակագիրների փաստերի վրա, որոնց մի մասը դեռևս տպագրված չէին: 1791-ին լույս է տեսնում Ղուկաս Ինճիճյանի աշխարհագրության դասագրքի առաջին հատորը, որը դառնում է Հայաստանի պատմական աշխարհագրության սկզբնավորողը:

Առաջին մխիթարյան ձեմարանը բացվում է Տրանսիլվանիայում: Մխիթարյանների նպատակն էր ողջ հայության համար բացել ժամանակակից կրթօջախներ: Դպրոցներ էին բացվում Վենետիկում, Պադովայում, Փարիզում: Մխիթարյան դպրոցները հասնում են մինչև Ղրիմ, Կոստանդնուպոլիս, Հնդկաստան:

Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ պարսկական լծի տակ: Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսը կարողացել է դիվա-

²⁰⁹ Նույն տեղում, էջ 386:

նագիտորեն պարսից Նադիր խանի հովանավորությամբ ստանալ 35 հրովարտակներ և ազատել Մայր Աթոռը հարկերից: Նադիր խանը Էջմիածնի Կաթողիկե եկեղեցուն նվիրել է տասնհինգ կիլոգրամանոց ոսկե ջահ ու թանկարժեք գորգեր:²¹⁰

Թուրքիայի սուլթանը որոշ ժամանակ պատերազմով պարսիկներից խլում է Երևանը, Գանձակը, Թիֆլիսը և ողջ հարավային Կովկասը: Երևանի նոր սարդարը Մուհամեդկուլի խանը ստանում 1736-ին Նադիր շահ տիտղոսը: Հայաստանում նա հաստատում է բոլոր մելիքների իրավունքները: Սակայն տուրքերը շարունակում են բարձրանալ: 1747-ին՝ Նադիր շահի սպանվելուց հետո, Պարսկաստանում սկսվում է ամենաթողության շրջան, որը տևում է մինչև 1794 թվականը:

Ազգային-ազատագրական շարժման նոր դեմքը հայ իրականության մեջ դառնում է Հովսեփ Էմինը, որին «Հայաստանի պատմության» մեջ անդրադառնում են երկրորդ անգամ: Նույնը կարելի է ասել Շահամիր Շահամիրյանի մասին, որը պատմության այս հատվածում ունի առանձնացված հատված՝ «Շահամիր Շահամիրյան» խորագրով:²¹¹

Հատկապես հայ երիտասարդները, լսելով Ղարաբաղի հայության հերոսական կռիվների մասին, երագում են ազատագրել իրենց հայրենիքը: Այս կարևոր դերն իր վրա է վերցնում Հովսեփ Էմինը (1726-1809), Պարսկաստանի Համադան քաղաքի վաճառականի որդի՝ տեղափոխված Կալկաթա: Տարված անգլիացիների հզորությամբ՝ պատանի տարիներից սկսում է երազել սովորել եվրոպական ռազմական գործը, որպեսզի ազատագրի իր հայրենիքը: 25 տարեկանում անգլիական նավով հասնում է Լոնդոն:

²¹⁰ Նույն տեղում, էջ 388:

²¹¹ Նույն տեղում, էջ 392-393:

Իռլանդացի գրող, հրապարակախոս, քաղաքական գործիչ Էդմոնդ Բուրկը (1729-1797) նրան վերցնում է իր հովանավորության ներքո: Ռազմական հմտություն ձեռք բերելու համար նա 1757-ին մեկնում է Գերմանիա և պրուսացիների կողմից մասնակցում ֆրանս-պրուսական յոթնամյա պատերազմին: Անգլիա վերադառնալով՝ հանդիպում է վարչապետ Վիլյամ Պիթին և նրան շահագրգռում ազատագրել Հայաստանը: 1759-ից մինչև 1761-ը նա Կովկասում էր՝ իր մտադրությունները զարգացնելու նպատակով: Այդտեղ համոզվում է, որ բացի սեփական ուժերից՝ հայերը պետք է ունենան Ռուսաստանի անհրաժեշտ աջակցությունը: Ռուսաստանի դեսպան Գալիցինից ստանալով անձնագիր և հանձնարարական նամակներ՝ գալիս է Մանկտ Պետերբուրգ: Դիվանադպիր Մ. Վորոնցովը ջերմորեն ընդունում է նրան և ուղարկում է Վրաստան՝ Հերակլ թագավորի մոտ: 1763-ին Էմինը օգնում է Հերակլ Երկրորդին լեզգիների դեմ կռվելիս: Նա կապ է հաստատում Մուշի Մուրբ Կարապետ վանքի վանահայր Տեր Հովնանի հետ, որը խոստանում է կազմել հայ կամավորական ազատագրական ջոկատներ:

Օսմանյան կայսրությունը ճգնաժամի մեջ էր. ապստամբություններ են պայթում Բալկաններում և Իմերեթիայում, ուր Մողոմոն Բագրատիոնին տանում է բազմաթիվ հաղթանակներ թուրք նվաճողների դեմ:²¹² 1762-ին Մանազկերտի շրջանում սկսվում է քուրդ ցեղերի մեջ բռնկված պատերազմը, որի ընթացքում երեք հարյուր հիսուն հայկական գյուղերից երկու հարյուր հիսունը ավերվում են, և բնակիչները գերեվարվում:

Էմինի ծրագիրը, որին սկզբում ջերմորեն աջակցում էր Հերակլը, չի իրականանում՝ վերջինիս հետ կանգնելով, և 1770-ին Հովսեփ Էմինը վերադառնում է Կալկաթա:

²¹² Նույն տեղում, էջ 391:

Նոր ժամանակներին (1801-1878) է վերաբերում «Հայաստանի պատմության» XI գլուխը:²¹³

Չնայած Արևմտյան Հայաստանը գտնվում էր Թուրքիայի լծի տակ, սակայն նրա տարածքում որոշ հայկական հողեր հայերի ազատատենչ ձգտումների հետևանքով ունեին ազգային ինքնավարություն: Դա Սասունում էր: Միշտ ձգտելով ազատագրության՝ ո՛չ մի բեկ և ո՛չ մի փաշա չէր կարող սասունցիներին ենթարկել իրեն:²¹⁴ Պատերազմի դեպքում ողջ սասունցիները, նաև կանայք ու երեխաները, մասնակցում էին իրենց տարածքի պաշտպանությանը:

Մոկսի տերը, այն հայ մելիքի նստատեղի էր, իր ձեռքին էր պահում նաև դատարանը: Արգելված էր քուրդ բեկերին ապրել Մոկսում: Մուշի հայերը Թուրքիայում ունեին քաջության համբավ: Չնայած նրանք տուրք էին վճարում քուրդ ցեղերին, սակայն պահպանում էին իրենց ինքնավարությունը:

1805-ին Նապոլեոնը Ամեդե Ժոբերին ուղարկում է Անատոլիա: Վերջինս հավաստում է, թե Խնուս գավառում կային տասներկու հայկական գյուղեր, որոնք անկախ էին կենտրոնական իշխանությունից ու քրդերից:

Մեկ այլ անկախության կղզյակ կար Տավրոսի լեռներում, հատկապես Զեյթունում, որը գտնվում էր Մարաշ քաղաքից 38 կիլոմետր հյուսիս-արևմուտք: Մեղմված խոր կիրճում և կառուցված 1375-ից մինչև 1409 թվականները, քաղաքն ուներ 15.000-ից 20.000 հայ բնակչություն: Նրան շրջապատող լեռնագագաթները հասնում էին մինչև 3.000 մետր: Չորս իշխանական տներ՝ Սուրենյան, Յաղուրյան, Յենիդումյան և Շովրոյան, տնօրինում էին

²¹³ Նույն տեղում, էջ 399-443:

²¹⁴ Նույն տեղում, էջ 402:

քաղաքի չորս թաղամասերը: Քաղաքի շրջակայքում կային վանքեր և բացառապես հայկական գյուղեր:

Կոստանդնուպոլսի պատրիարքը տեր էր ավելի քան երկու հարյուր վանքերի: Բացի այդ, Էջմիածնի կաթողիկոսը, նույն կարգավիճակով տեր էր հողերի, ջրաղացների, ձիթհանների, այգեստանների, որոնք գտնվում էին Օսմանյան Հայաստանի գրեթե բոլոր վիլայեթներում՝ հատկապես Թոխաթում, Զմյուռնիայում և Կիլիկիայում:

Ամենամեծ կարողություններն ունեին Վարազի Սուրբ Նշանը և Մուշի Սուրբ Կարապետը: Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները և ուրիշ միաբանություններ տեր էին երեք հարյուր հեկտարի և մեծաքանակ հողերի: Իրենց մշակվող հողերում նրանք աշխատեցնում էին բազմաթիվ վճարվող բանվորների: Այդ վանքերի ունեցվածքը հաճախ խլվում էր թուրքերի ու քրդերի կողմից: Նրանց հարձակումները հաճախակի էին:²¹⁵ Հայ հողատերեր հանդիպում էին Վանում, Արձեշում, Դիարբեքիբում, Ակնում և Սեբաստիայում: Հողերը հայերին տվել էր սուլթանը՝ որպես փոխհատուցում նրանց քաղաքացիական ու զինվորական ծառայությունների: Սակավ դեպքում դրանք գնված էին:

Լեռնային Կիլիկիայում և հայերի ինքնավար վայրերում հողի սեփականատերերը առավել մեծաքանակ էին:

XIX դարի առաջին երեք տասնամյակներին Արևմտյան Հայաստանում կային քառասուն քաղաքներ, որոնցում հայերը նշանակալի դեր ունեին արհեստագործության և առևտրի բնագավառներում: Հայեր էին ապրում Էրզրումում՝ 130.000, Թոխաթում՝ 80.000, Ադանայում՝ 12.000, Ամասիայում՝ 30.000: Այդ քաղաքների բնակչությունը խառն էր, նրանցում խոսում էին թուրքերեն, քրդե-

²¹⁵ Նույն տեղում, էջ 404:

րեն, հունարեն, հայերեն, արամեերեն ու այլ լեզուներով: Հայերը բազմաքանակ էին Արաբկիթում, Ակնում, Հաճնում, Մարաշում, Թոխաթում և Կեսարիայում: Հույների հետ նրանք կազմում էին մեծամասնություն:

Կոշկակարները, նուրբ և գունավոր կաշեգործությունն ու մուշտակագործները պատվելի էին Մարաշում, Ադանայում, Բաղեշում, Էրզրումում և Դերսիմում: Ամենուր հայերը գլխավորն էին այդ մասնագիտություններում: Էրզրումը մանածագործության մի մեծ կենտրոն էր: 1818-ին այնտեղ գործում էին հիսուն բամբակագործական արհեստանոցներ, որոնք պատկանում էին հայերին:²¹⁶

Բաղեշի մասնագետները հայտնի էին կարմիր կտավ գործելով, որը խիստ հարգի էր քրդերի մոտ: Վանի, Ակնի և Խարբերդի ջուլիակները նույնպես հույժ հռչակված էին: Մարաշի բամբակագործներից աշխատում էին իրենց տներում՝ Սիրիայում կամ Փոքր Ասիայում: Հաճնի բնակիչները, որոնց լավագույն հողակտորները յուրացրել էին թուրքերը, ձեռք զարկեցին բրդագործության արտադրությանը: Իսկական մանուֆակտուրաներ էին աշխատում Սեբաստիայում, Կեսարիայում, Թոխաթում, Ամասիայում, Ուռհայում: Նյութը ստանալով արտասահմանից՝ նրանք կտորներ էին գործում ֆրանսիացի ու բրիտանացի պատվիրատուների համար:

Նույն ժամանակահատվածում Արևելյան Հայաստանը դեռ պատկանում էր Պարսկաստանին՝ կային Երևանի, Նախիջևանի խանությունները, իսկ Ղարաբաղը XVII դարի պայքարի շնորհիվ կիսանկախ էր:

Հերակլ Երկրորդի մահից հետո՝ 1798-ին, նրա որդին՝ Գիորգի XII-ը, 1799-ին մի դեսպանություն է ուղարկում Սանկտ

²¹⁶ Նույն տեղում, էջ 408:

Պետերբուրգ, որպեսզի լիովին ենթարկվեն Ռուսաստանին ու մտնեն նրա կազմի մեջ, միայն թե ինքը և իր ժառանգները պահպանեն Վրաստանի արքա տիտղոսը:

Առանձին ենթաբաժնով է ներկայացվում ռուս-պարսկական պատերազմը (1825-1827): Նույն միջոցին ո՛չ օսմանցիները, ո՛չ պարսիկները և ո՛չ էլ բրիտանացիները չէին համակերպվում ռուսների առաջանալուն Կովկասում:

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Թիֆլիսի արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին արձակում է կոչ՝ ուղղված հայ ազգին, որ չխնայեն ոչ նյութական միջոցները, ոչ արյունը հանուն քրիստոնեության և կանգնեն ռուսական ցարի կողքին: Հարություն Ալամդարյանը շարադրում է կամավորական ջոկատների կանոնադրությունը. վերջիններս պետք է միանային ռուսական զորքին: Կամավորականները երդվում են պայքարել մինչև արյան վերջին կաթիլը, որպեսզի հայրենիքը բարձրանա ավերակներից: Հայ կամավորականների դրոշի վրա Հիսուսի նկարն էր, իսկ նրա վերևում թևաբաց արծիվը:²¹⁷

1827-ի օգոստոսի 17-ին՝ Օջականի ճակատամարտի վճռական պահին, մի հայ գնդացորդ՝ Հակոբ Հարությունյանը, մտած Աբաս Միրզայի բանակը, հաջողեցնում է անգլիացիների տված թնդանոթը ուղղել պարսիկների շարքերին. բոլորին թվում է, թե Թիֆլիսից հասել է ցարի հրետանին:

1827 թվականին ցարական զորքերը գրավում են Երևանը: Ռազմական հաջողության հետ մեկտեղ, այդ հաղթանակը խորհրդանշական էր հայերի համար:

Երևանի բերդի գրավումը Խաչատուր Աբովյանը ներկայացնում է խիստ պատկերավոր՝ այն համեմատելով դժոխքի ավերման

²¹⁷ Նույն տեղում, էջ 419:

հետ:²¹⁸ Բոլոր նրանք, ովքեր մասնակցել էին Երևանի բերդի գրավմանը, ստանում են հուշամեդալներ:²¹⁹

Որոշ դեկաբրիստներ, որոնք արտրվել էին Կովկաս, հատկապես աչքի ընկան իրենց խիզախությամբ: Երևանում առաջին անգամ բեմադրվեց ռուս գրող Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսը: Պասկևիչը ստանում է Երևանի կոմս տիտղոսը, և Նիկոլայ Առաջին ցարը նրան պարգևատրում է մեկ միլիոն ռուբլի:

Ֆեյթ Ալի շահը հայտարարում է, թե պատրաստ է կնքել խաղաղության պայմանագիր: 1828 թվականին Թուրքմենչայ գյուղում կնքվում է ռուս-պարսկական պայմանագիրը: Ռուսաստանին են հանձնվում Նախիջևանի ու Երևանի խանությունները, նաև Օրդուբադի գավառը: Իրավունք է տրվում բռնությամբ տարագրված բոլոր հայերին Պարսկաստանից վերադառնալ հայրենիք: Ռուսներն իրավունք են ստանում Կասպից ծովում ունենալ նավահանգիստներ ու ռազմանավեր:

Հենվելով Ներսես Աշտարակեցու և հայ ազգային ընտրյալների վրա՝ հազարավոր հայեր, որոնք ապրում էին Պարսկաստանում, հայտնում են ցանկություն՝ անցնել սահմանի ռուսական կողմը: Ներգաղթողներին տրվում են արտոնություններ՝ հողագործության և արհեստների բնագավառներում: 60.000-ից 65.000 մարդիկ թողնում են Պարսկաստանը և գալիս Ռուսական կայսրության մեջ մտած Հայաստան:

1828-1829թթ. տեղի է ունենում ռուս-թուրքական պատերազմը:

1828 թվականի գարնանը մի քանի օրվա ընթացքում ռուսները գրավում են Կարսը՝ հիանալի ամրացված բրիտանացիների

²¹⁸ Նույն տեղում:

²¹⁹ Նույն տեղում, էջ 420:

կողմից: Հայ զինվորականների մի խումբ օգնում է ռուսական զորքին: Սև ծովի կողմից ռուսները գրավում են Անապան, Սուխումին և Փոթին և տիրանում են Սև ծովի լավագույն նավահանգիստներին: Ձմռան ընթացքում Պասկևիչը մեկնում է Սանկտ Պետերբուրգ և համոզում է Նիկոլայ Առաջինին, թե ժամանակն է նվաճել Արևմտահայաստանը ու գրավել նաև Անատոլիան: Անգլիացիները խրախուսում էին պարսիկներին՝ վերսկսել պատերազմը: 1829-ի փետրվարի 11-ին կատաղած պարսիկ ամբոխը Թեհրանում հարձակվում է Ռուսաստանի դեսպանատան վրա և դաժանորեն սպանում դեսպան Գրիբոյեդովին ու երեսուներկու կոզակների: Ֆեյթ Ալի շահը, իմանալով ռուսների հաջողությունների մասին, շտապում է Նիկոլայ Առաջինին ուղարկել մի թանկագին զմրուխտ:²²⁰

Մեծբրիտանացիները դրանից հետո ջանում են օգնել օսմանցիներին: Այս գործողությունների մասին նկարագրում է Պուշկինը իր «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքում:

Տեղին ենք համարում այս հատվածում կատարել երկու լրացում, ըստ «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքի վերջում դրված Ա. Կարպովի ծանոթագրությունների: Առաջինը կապվում է այն խնդրի հետ, որի մասին խոսում են Մահեները, ըստ որի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում ռուսական զորքի հաղթանակում մեծ ծառայություններ ունեին դեկաբրիստները: «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքի ծանոթագրություններում Ա. Կարպովը նշում է, թե 1835 թվականին գրված «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքի ստեղծմանը խթանել է 1834-ին լույս տեսած ֆրանսիացի դիվանագետ Վիկտոր Ֆոնտանյեի մի գիրքը, որում «Пушкин был упомянут как автор

²²⁰ Ոչ թե զմրուխտ, այլ ադամանդ, որը հիմա գտնվում է Մոսկվայի «Алмазный фонд» թանգարանում – Ա. Դ.:

некой сатиры на Арзрумский поход»: Ռուսական կառավարությունը կասկածներ ուներ Պուշկինի վերաբերյալ, և որպեսզի ցրվեին կասկածները, ու Պուշկինը կառավարության ու գրաքննադատության առաջ պաշտպաներ իր ստեղծագործական ազատությունը, գրում է այս գործը, որում փառաբանվում է ռուսական զորքի հաղթանակը: Նույն ծանոթագրություններում կարդում ենք. «Պասկևիչ Իվան Ֆեոդորովիչ, գրաֆ (1782-1856) գեներալ (հետո ֆելդմարշալ) ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքի հրամանատար: Պասկևիչ զորահրամանատարի համբավը երկմտելի է եղել: Պասկևիչին վերագրվող Թուրքիայի հետ պատերազմի ռազմական գործողությունների հաջողություններն իրականում վաստակն էր նրա հրամանատարության տակ եղած շնորհագուրկ դեկաբրիստ սպաների»²²¹:

Բալկաններում ռուսները տանում են փայլուն հաղթանակներ: Ազատագրում են Բուլղարիան, Ադրիանապոլիսը և նպատակադրվում են հարձակվել Կոստանդնուպոլսի վրա: Ֆրանսիայի, Բրիտանայի, Ավստրիայի և Պրուսիայի դեսպանները ուժեղ ճնշում են գործադրում ցարի վրա: 1829 թվականի սեպտեմբերի 9-ին կնքվում է Ադրիանապոլսի պայմանագիրը: Օսմանցիները ռուսներին են հանձնում Դանուբի գետաբերանը բոլոր կղզիներով, Սև ծովի ափերը մինչև Փոթի, Ախալքալակ և Ախալցխա: Ռուսական նավատորմը ազատ կարող էր անցնել Դարդանեղով, իսկ վաճառականները ազատորեն առևտուր անել Օսմանյան կայսրությունում: Սուլթանը պարտավոր է վճարել 4.500.000 ռուբլի ոսկով, ճանաչել Հայաստանի, Մոլդովայի և Վալախիայի ինքնավարությունը: Պասկևիչի մյուս նվաճումները և Անատոլիան ռուսական կողմը

²²¹ А. С. Пушкин, Избранные сочинения в двух томах, том II, Москва, 1980, с. 728.

կորցրեց:²²² Ադրիանապոլսի պայմանագրով ևս թույլ է տրվում հայերին ազատորեն տեղափոխվել ռուսական կայսրություն: Խուսափելով օսմանցիների ճնշումներից՝ հազարավոր հայեր թողնում են Արևմտյան Հայաստանի տարբեր մասերը: 1829 թվականի վերջում 100.000 հայեր անցնում են սահմանը: Արքեպիսկոպոս Կարապետը Էրզրումից անձամբ 2000 հայ ընտանիքների ուղեկցում է Ախալքալակ և Ախալցխա, ոմանք գնում են Լոռի և Շիրակ: Կարսի բնակիչները տեղափոխվում են Գյումրի (վերջինս կոչվեց Ալեքսանդրապոլ), Ապարան և Թալին:²²³

Աբովյանը ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է հայերի կյանքի փրկություն:

Հայերը ռուսներին համարում էին ազատարարներ, սակայն շատ շուտով էյֆորիան անցնում է: Ներսես Աշտարակեցին, հենվելով գեներալ Կրասկովսկու վրա, ցանկություն է հայտնում ռուսական զորքին կից ունենալ հայկական միլիցիա: Նիկոլայ Առաջինը մի կոմիտե է ստեղծում Ռուսաստանում ապրող նշանավոր հայերից: Դրա անդամներից էին Խաչատուր Լազարյանը, Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը, Ալեքսանդր Խուդաբաշյանը: Հայաստանի համար կազմվում է նոր սահմանադրություն, ըստ որի Ռուսաստանի ցարը կոչվում է «Հայաստանի թագավոր»: Հայերին տրվում է սեփական բանակ ունենալու իրավունք, որը մի օր կարող է հետ վերադարձնել Արևմտահայաստանի՝ օսմանցիների կողմից նվաճված տարածքները: Պասկևիչը՝ ողջ Կովկասի կառավարիչը, ընդդիմանում է հայերի անջատողականությանը: Նրա

²²² Նույն տեղում, էջ 422-423:

²²³ Նույն տեղում, էջ 423:

կարծիքով դա հիմք կդառնա մահմեդականների գայրույթին:²²⁴ Այդ պատճառով էլ Ներսես Աշտարակեցուն ուղարկում են Բեսարաբիա: Իրականում Ռուսաստանը նպատակ ուներ ռուսիֆիկացնել Անդրկովկասը:²²⁵

1828 թվականի մարտի 20-ին ցարի դեկրետով ստեղծվում է «Հայկական մարզը», որի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի խանությունները և Օրդուբադի գավառը: Մի կողմ են թողնվում Ղարաբաղը, Լոռին և Ջավախքը, ուր հայերը շատ մեծ թիվ էին կազմում: Ինչ-որ առումով սա յուրօրինակ պաշտոնական ճանաչում էր հայերի ինքնատիպության, սակայն առանց ինքնավար լինելու իրավունքի: Հայերն աստիճանաբար զգում են մի մեծ բաժանում իրենց անկախության երազանքների և իրականության միջև:²²⁶ Բոլոր դեպքերում նրանք ազատվել էին անօրեն գավթիչներից ու հափշտակողներից:

Նիկոլայ Առաջինը մի ստուգողական այցով 1837-ին գալիս է Կովկաս: Ժամանակի ընթացքում Կովկասն ու նվաճված տարածքները այնպես են բաժանվում, որ հայերն իրենց չզգան սեփական տարածքների տեր:

1844-ին Նիկոլայ Առաջինը իշխան Միխայիլ Վորոնցովին, որն ազատ խոսում էր անգլերեն մանուկ հասակից և ռուսական զորքին զեկավարում է Ֆրանսիայում Նապոլեոնի գահընկեց լինելուց հետո, նշանակում է Կովկասի փոխարքա: Չափազանց համակրելով վրացիներին՝ Վորոնցովը սկսում է ասպարեզից դուրս մղել հայերին:²²⁷ 1849-ի հունիսի 8-ին Երևանի կառույցի ղեկավար-

²²⁴ Նույն տեղում, էջ 424:

²²⁵ Նույն տեղում:

²²⁶ Նույն տեղում:

²²⁷ Նույն տեղում, էջ 425:

ման մեջ մտավ Արևելյան Հայաստանի մի մեծ հատվածը՝ Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրդուբադ և Բայազետ:

Իրականում միակ ինքնավարությունը, որ ցարը վերապահեց հայերին, քաղաքական չէր, այլ կրոնական: 1836-ի մարտի 13-ին հաստատվել է հայկական եկեղեցու կարգավիճակը, լիիրավ իրավունքներ ոչ միայն կառավարման խնդիրներում, այլև կրոնական ու մշակութային խնդիրներում ողջ Ռուսական կայսրության մեջ:²²⁸

Ցարը ճանաչում է Սուրբ Էջմիածնի հեղինակությունը բոլոր բնագավառներում, սակայն հայոց կաթողիկոսի ընտրության խնդիրը վերապահում է իրեն: Այդ չարագուշակ լուրն առաջացրեց սփյուռքի հայության զայրույթը: 1840 թվականին հնդկահայերը բողոքի նամակ ուղարկեցին Նիկոլայ Առաջին ցարին:

1844-ին Վորոնցովը Լոռիում՝ Թբիլիսիի և Ալեքսանդրապոլի արանքում, հիմնում է երկու ռուսական գյուղեր՝ հայ գյուղացիներից վերցնելով լավագույն հողերը: Մա առաջացնում է տեղացի հայ բնակչության դժգոհությունը: Ռուս մոլոկաններ են բնակեցնում Սևանի ավազանում՝ Սեմյոնովկայում և Ջանգեզուրում:

Կովկաս այցելելուց հետո Նիկոլայ Առաջինը որոշում է Գյումրիում ամրոց կառուցել: Ալեքսանդրապոլ անունով քաղաքը բարգավաճում է Կարսից եկած արհեստավորների ու վաճառականների շնորհիվ: Ալեքսանդրապոլը Անդրկովկասի միակ գտարյուն հայկական քաղաքն էր: Երևանը փոքր-ինչ ավելի բնակեցված էր. քաղաքը շրջափակված էր խաղողի և այլ այգիներով: Քաղաքում կային յոթ եկեղեցիներ: Քաղաքներ էին Նախիջևանն ու Օրդուբադը: Քաղաքների արհեստանոցների արտադրանքը վաճառվում էր միայն տեղական շուկայում: Միայն 2695 արհես-

²²⁸ Նույն տեղում, էջ 428:

տավորներ աշխատում էին Թիֆլիսի համար, և նրանց արտադրանքը արտահանվում էր Օսմանյան կայսրություն: Կողքի և Նախիջևանի աղիանքերի արդյունահանումը, որն իրականացվում էր տեղական գյուղացիների ուժերով, բազմապատիկ կրկնապատկվում է: Պղնձի արտադրությունը Ալավերդիում ու Զանգեզուրում խիստ ավելանում է: Թիֆլիսի հայ առևտրականները կազմակերպում են արդյունավետ կապ Ռուսաստանի ու Եվրոպայի, ինչպես նաև Պարսկաստանի ու Օսմանյան կայսրության միջև:

Ռուսական կայսրությունն իր մեջ ներառում էր ոչ միայն Անդրկովկասը, այլև Կովկասյան ցեղերին՝ չեչեններին ու դադեստանցիներին:

Օսմանյան կայսրության հայերը Անատոլիայից սկսում են տեղափոխվել Կոստանդնուպոլիս: XIX դարասկզբին Կոստանդնուպոլսում ապրում էին 150.000 հայեր, նրանց թիվը 1860-ից 1880 թվականների ընթացքում կրկնապատկվում է: Առևտուրը և արհեստները Կոստանդնուպոլսում կենտրոնանում է հույների ու հայերի ձեռքում: Ավելի հարուստ հայերը կոչվում էին ամիրա, տիտղոս, որ XVI դարից տրվում էր հարուստ քրիստոնյաներին:

Մեծաքանակ հայ ընտանիքներ զբաղվում էին զինագործությամբ, մետաքսագործությամբ, մանածագործությամբ, թղթի արտադրությամբ: Դուզյանները հսկում էին դրամահատությունը: Բայլանները սուլթանի պալատական ճարտարապետներն էին: Երբ մի վեզիր կամ փաշա սուլթանի աչքից ընկնում էր, նրա սարաֆ հայը անմիջապես հանցավոր էր ճանաչվում, ենթարկվում էր տեղահանման, մահվան ու ողջ ունեցվածքից զրկվելուն: Հիշարժան է նշանավոր Դուզյանի գլխատումը Մահմուդ Երկրորդի հրամանով՝ 1819 թվականի օգոստոսին: 1819 թվականին, բազմաթիվ հայ ամիրաներ միանալով, ստեղծում են կայսրության ֆինանսա-

կան միությունը, որը 1856-ին փոխարինվում է Բանկ օտտոմանով՝ արևմտյան ֆինանսիստների ձեռքին:²²⁹

Օսմանյան Թուրքիայում առաջանում է նոր խավ՝ էֆենդիները, որում հայերը միջին դեր ունեին, բայց հետո դառնում են ավելի մեծաքանակ: Հայ ամիրաները զբաղվում են Թուրքիան տեխնոլոգիապես զարգացնելու խնդիրներով: 1847-ին Դադյանները Բոսֆորի ողջ երկայնքով կառուցում են երկաթուղի: Հայերը հիմնում են նաև գործարաններ: Հայ ամիրաները հիմնում են դպրոցներ և հիվանդանոցներ, օգնում վանքերին, որոնք դեռ XIX դարի առաջին կեսին կային ոչ մեծ քանակով: Կոստանդնուպոլիս անվերջ գայլիս էին հայ նոր մասնագետներ՝ ոսկերիչներ Կիլիկիայից ու Վանից, հացարարներ Ակնից, դերձակներ Սեբաստիայից, քարտաշներ Կեսարիայից, զինագործներ Էրզրումից, դերձակներ Բաղեշից:

1838-ի սեպտեմբերի 9-ին Սկյութարում բացվում է հայկական վարժարան, որում կողք կողքի հավաքվում են հայ ամիրաների ու արհեստավորների երեխաները: Բողոքելով դասային նման միախառնության դեմ՝ ամիրաները դադարեցնում են վարժարանի ֆինանսավորումը:

Սկյութարի վարժարանը վերաբացվում է 1846-ին: Այդտեղ է ձևավորվել բանաստեղծ ու դրամատուրգ Պետրոս Դուրյանը (1851-1872), նրա ժամանակակից Մկրտիչ Պեշիկթաշլյանը (1828-1870), որը սովորել էր Պաղովայում և հիմնեց առաջին հայկական թատրոնը Կոստանդնուպոլսում: Նույն ժամանակաշրջանում երգիծաբան Հակոբ Պարոնյանը (1843-1891) խմբագրում է տարբեր ամսագրեր և հրատարակում իր գործերը:

²²⁹ Նույն տեղում, էջ 430:

1829-ի Ադրիանապոլսի խաղաղության պայմանագրից հետո 1830-ին սուլթանը պետք է ճանաչեր Հունաստանի անկախությունը, հետո 1831-ին՝ Եգիպտոսի, որի տիրակալը՝ Մահմեդ Ալին, գրավել էր Կիլիկիան:

Մահեները խոսում են նաև 1860-ի մայիսի 24-ին լույս տեսած հայկական սահմանադրության մասին, որի մտահղացումն առաջացել էր Եվրոպայում կրթված հայ ամիրաների որդիների մոտ, որոնք ականատես էին եղել 1848-ի ֆրանսիական հեղափոխությանը:

1851-ին զեյթունցիների չորս առաջնորդները պահանջում են ինքնավարություն: Սա անհանգստացնում է սուլթանին: Պայթում է Ղրիմի պատերազմը: Օգտվելով ֆրանսիացիների ու բրիտանացիների հաղթանակից՝ Թուրքիայի Գերագույն դուռը պահը համարում է հարմար բոլոր տեղական ինքնավարություններին վերջ տալու համար: Գրկաբաց ընդունելով Ռուսաստանից վտարված չերքեզներին՝ Թուրքիան նրանց բնակեցնում է Ջեյթունում, որովհետև զեյթունցիներին համարում էր ավելի վտանգավոր: Չերքեզները կոտորածներ են անում Ջեյթունի գյուղերում:

Զինված բախումները բազմապատկվում են 1858 և 1860թթ. ընթացքում: Այդ պահին ապստամբությունները տարածվում են Օսմանյան կայսրության ուրիշ ազգերի շրջանում:

1862-ի օգոստոսի 2-ին սուլթանական կառավարությունը սկսում է հարձակումը՝ թնդանոթներով գնդակոծելով Ջեյթունի կենտրոնական թաղամասերը: Ջեյթունցիները ուժեղ հակահարված են տալիս: Հարձակված թուրքերից ութ հարյուրը սպանվում են՝ նրանց թվում ութ բեկերը. թնդանոթաձիգները սպանվում են, թնդանոթներն անցնում են հայերի ձեռքը:

Մեկ շաբաթ անց Ջեյթունի հաղթանակի լուրը տարածվում է, անցնում բերնից բերան: Ջեյթունի հաղթանակը դառնում է ազգային զարթոնքի խորհրդանիշ: Ազգային զարթոնքն ընդգրկում է բոլոր հայկական համայնքները՝ Ջմյունիայում, Թիֆլիսում, Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում:

Ջեյթունցիներն օգնության են դիմում Ֆրանսիայի արքա Նապոլեոն Երրորդին, որն ուներ որոշակի պատճառներ՝ հաշվի առնելու հայերի խնդրանքը: Նախ նա պետք է պաշտպաներ Սուրբ վայրերը և Մերձավոր Արևելքի քրիստոնյաներին: Մյուս կողմից նրան հետաքրքրում էին Կիլիկիայի բամբակի պլանտացիաները: Նա երագում էր տարածել բամբակի մշակումը Միջերկրականի արևելյան ափերին: Նա հրահանգում է Ֆրանսիայի դեսպանին՝ զեյթունցիների խնդրով միջամտություն անել Ալի փաշա վեզիրին: 1863-ի վերջին ֆրանս-օսմանյան մի հանձնաժողով է ուղարկվում Մարաշ՝ հայերի հետ համաձայնության գալու: Հայերը համաձայնվում են վերադարձնել առգրավված գեներն ու զինամթերքը ու հարկեր տալ:²³⁰

Մահեններն իրավացիորեն նկատում են, որ հայկական հարցը Թուրքիայում առաջացել է 1915 թվականի ցեղասպանությունից շատ առաջ: Օսմանյան կայսրության շատ վիլայեթներ կոչվում էին աշխարհագրական անուններով՝ Դանուբ, Բոսնիա, սակայն հայերի անունով վիլայեթներ չկոչվեցին: Հայերն ապրում էին Էրզրումի, Սեբաստիայի, Դիարբեքիրի, Խարբեռդի և մասամբ Տրապիզոնի վիլայեթներում: Ամենածանր իրողությունն այն էր, որ Վանը, Մուշը և Բիթլիսը միացան մի վիլայեթի, որ կոչվեց Քրդստան:²³¹

²³⁰ Նույն տեղում, էջ 435:

²³¹ Նույն տեղում, էջ 436:

Տեսնելով Արևմտահայաստանի օրեցօր ավելացող ճնշումները՝ Մկրտիչ Խրիմյանը՝ կոչված Հայրիկ, ձեռնամուխ է լինում ազգային ոգին բարձրացնելուն: Նա սկզբում Կոստանդնուպոլսի պատրիարքն էր (1869-1873), հետո Ամենայն Հայոց կաթողիկոսը (1893-1907): Խրիմյան Հայրիկը երկար տարիներ խաղաղության քարոզ է արել քրդերի ու հայերի մեջ: Սկզբում Վանում հրատարակել է «Արծուի Վասպուրական» հանդեսը, իսկ հետո Մուշում՝ «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը: Նա մեծ դեր է կատարել հայերի կյանքում՝ վայելելով հասարակ ժողովրդի և հայ հասարակության ընտրյալների խոր համակրանքը: Խրիմյան Հայրիկը խիստ ուշադիր հետևում էր հայ ազատագրական շարժումներին, և այդ հարցերում նրան օգնում էր Վասպուրականի հոգևոր առաջնորդներից Գարեգին Սրվանձտյանցը: Վերջինս 1874-ին հրատարակում է «Գրոց ու Բրոցը»՝ ներկայացնելով հայ ժողովրդական վեպի գոյությունը ժողովրդի ասացողների մոտ: Միջնադարում ձևավորված ժողովրդական վեպը, որը կոչվում է նաև «Մասնա ծոեր», պատկերում է հայ ժողովրդի պայքարը մահմեդականների դեմ:²³²

Մահեներն անդրադառնում են նաև 1877-1878թթ. պատերազմին ու դրա հետ կապված հայկական հարցին:

Ծանր էր նաև Բալկանյան թերակղզու վրա ապրող քրիստոնյաների վիճակը, որոնք այլևս չտանելով Օսմանյան կայսրության լուծը, սկսում են ապստամբել: 1875-ին ապստամբում է Հերցոգովինան, հետո Բոսնիան: Հաջորդ տարի ապստամբում են Բուլղարիան ու Սերբիան, որոնք 1815-ից ունեին ինքնավարություն: Նրանց է միանում Չեռնոգորիան: Այս շարժումները խրախուսում է

²³² Նույն տեղում, էջ 438:

ռուսական ցարը, որը խիստ անհանգստացնում է բրիտանական դիվանագիտությանը:

Թուրքիայում գահ է բարձրանում Աբդուլ Համիդ Երկրորդը (1876, օգոստոս): Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ փայլուն հաղթանակներ են տանում հայազգի զորահրամանատարներ կոմս Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովը, Իվան Դավիդի Լազարևը և Արշակ Հարությունի Տեր-Ղուկասովը: 1877-ին առնվում են Բայազետը, Արդահանը, Կարսը: 1878-ի փետրվարին Թուրքիան հաշտության դաշինք է առաջարկում:²³³

Խաղաղության առաջին դաշնագիրը կնքվում է Սան Ստեֆանոյի Դադյանների պալատում՝ 1878-ի մարտի 3-ին: Ըստ այդ դաշնագրի՝ օսմանյան կայսրությունը ճանաչում է Սերբիայի, Չեռնոգորիայի, Ռումինիայի անկախությունը: Բեսարաբիան անցնում է Ռուսաստանին: Դարդանելն ազատորեն բացվում է ռուսական առևտրական նավերի համար: Ռուսաստանը Թուրքիայից որպես պատերազմի պատճառած վնասի հատուցում ստանում է 310 միլիոն ռուբլի: Ինչ վերաբերում է Կովկասին և Անատոլիային, դաշնագիրը նախատեսում է Ռուսաստանին հանձնել 35.650 քառ. կմ տարածք՝ ընդգրկելով Կարսը, Արդահանը, Բայազետը, Սողունլուն և Բաթումին: Ռուսաստանը պետք է դուրս գար գրավված մյուս տարածքներից, այդ թվում Էրզրումից: Այն շրջաններին, որոնք բնակեցված էին հայերով, տրվում է ապահովության երաշխիք և անհապաղ պետք է տրվեր հայերի «ղեկավարման ինքնավարություն»: Բրիտանական կողմի պահանջով՝ հայերին տրվող ինքնավարությունը փոխվեց բարեփոխումներով:

Ի պատասխան այդ դաշնագրի՝ Մեծ Բրիտանիան պահանջում է գումարել Բեռլինի կոնգրեսը, որն ամբողջովին վերանայում

²³³ Նույն տեղում, էջ 439:

է Սան Ստեֆանոյի դաշնագիրը: Հայկական պատվիրակութեանը չեն թողնում մասնակցել կոնգրեսին, Խրիմյան Հայրիկը չէր տիրապետում որևէ եվրոպական լեզվի: Նա հայկական պատվիրակութեան մասին ասում է, թէ հզորները կաթսայից վերցնում էին պողպատե շերտերով, իսկ հայերը՝ թղթէ:²³⁴

1878-ի հուլիսի 13-ին ստորագրված Բեռլինի դաշնագրով Ռուսաստանին էին անցնում Բաթումին, Կարսը և Արդահանը, բայց Բայազետն ու Ալաշկերտը վերադարձվում էին Թուրքիային:

Հայկական մտավոր կյանքը ռուսական կայսրութեան մեջ չունեցավ ցանկալի զարգացումը Երևանում և Ալեքսանդրապոլում, այն վերելք ապրեց Թիֆլիսում ու Բաքվում:

Արևմտահայ գյուղի թշվառութեան կողքին Կոստանդնուպոլսում հայ հոգևոր կյանքը վերելք ապրեց շնորհիվ հայ ամիրաների, էֆենդիների ու հայ պատրիարքարանի:

«Հայաստանի պատմություն» գրքի շատ ուշագրավ հատվածներից է «Ցեղասպանություն» գլուխը, որը սկսվում է Արևմտահայաստանում ձևավորված հնչակյան, դաշնակցական, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջացման խիստ համառոտ ակնարկով:

1893-1895թթ. համիդյան զինված ուժերը սարսափ են տարածում հայ բնակչության մեջ: 1895-ի հոկտեմբերից մինչև 1896-ի հունիսը հայերին հալածելը և խստիվ պատժելը կիրառվում է Անատոլիայի տասնհինգ գավառներում:

Այդ վայրենություններին վերջ տալու համար դաշնակցության մի խումբ մտնում է Կոստանդնուպոլսի Բանկ Օտոմանը (1896թ. օգոստոսի 14) և սպառնում պայթեցնել այն: Մահեներն ասում են, թէ այդ ժամանակահատվածում ամենաքիչը 250.000 հա-

²³⁴ Նույն տեղում, էջ 440:

յեր²³⁵ նահատակվեցին համիդյան ջարդերի ժամանակ: Հայ ակադեմիական պատմագրության մեջ համիդյան ջարդերի հայ նահատակների թվաքանակը 300.000 է. «Ինքնապաշտպանական կռիվները մեծ մասամբ անհաջող վախճան ունեցան: 1894-1896թթ. մասսայական կոտորածների ընթացքում զոհվեց մոտ 300.000 մարդ: Ավերվեցին ու ամայացան հարյուրավոր գյուղեր»²³⁶: Ֆրանսիայում այս ողբերգական դեպքերը լայն արձագանք են գտնում թե հայամետ և թե սուլթանին համակրող պահպանողական շրջաններում: Արևմուտքում լույս տեսավ Աբդուլ Համիդի ծաղրանկարը՝ որպես «Մեծ արյունառու»: Ռուսաստանում, Նիկոլայ Երկրորդի ժամանակ, 1905 թվականի հեղափոխությունից հետո սկսվում են ազգամիջյան կռիվներ հայերի ու ադրբեջանցիների միջև:

1908-ին Թուրքիայում իշխանությունն անցնում է երիտթուրքերին, որոնք խոստանում են Թուրքիայում ապրող բոլոր ազգերին՝ խաղաղություն, հավասարություն և առաջադիմություն: Սակայն 1909-ին Ադանայում սպանվում են 30.000 հայեր: Երիտթուրքերը իրենց քաղաքական պլանները անլուծելի են համարում հայերի ինքնավարության կամ անկախության գոյության դեպքում („avec l'existence d'une Arménie autonome ou indépendante”):²³⁷ Նրանք հայերին համարում են ներքին թշնամի, որոնցից հարկավոր էր ազատվել: Գրքի 445-ից մինչև 489 էջը նվիրված է հայերի ցեղասպանությանը: Մահեները խորին ցավով ու անկողմնակալ պատկերում են երիտթուրքերի՝ հայերի նկատմամբ ծրագրված դժոխային ծրագրի իրականացումը, որի հետևանքով հայրենա-

²³⁵ Նույն տեղում, էջ 446:

²³⁶ Հայ ժողովրդի պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Խմբագրությամբ պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1985, էջ 283:

²³⁷ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 447.

գրկվեցին միլիոնավոր հայեր, իսկ նրանցից մեկ ու կես միլիոնը նահատակվեց:

«Հայաստանի պատմություն» գրքի այս հատվածում վերստին անդրադարձ կա համիդյան ջարդերին և հայերի հերոսական դիմադրությանը Սասունում, Զեյթունում, Վանում: Եվ այդ գրքի հեղինակներն իրավացիորեն համիդյան ջարդերը համարում են 1915 թվականի ցեղասպանության նախերգանքը: Քաղաքական այս օրհասն էլ ձևավորում է այն հայկական կուսակցությունները, որոնք որոշում են ուղիներ փնտրել հայ ժողովրդի պատմական ճակատագիրը բուն հայրենիքում շտկելու և հայ ժողովրդին փրկելու նաև ֆիզիկական բնաջնջման աղետից:

1887-ին Ավետիս Նազարբեկյանը և նրա կինը՝ Մարո Վարդանյանը, Ժնևում հիմնում են հայ հեղափոխական «Հնչակյան» կուսակցությունը, որը հետևորդն էր Սանկտ Պետերբուրգում հիմնված «Народная воля» կուսակցության և իր գաղափարախոսությամբ մերձ էր Գ. Պլեխանովի մարքսիստական տեսությանը: Ռուսաստանում էլ ձևավորվում է հայ հեղափոխական դաշակցությունը, որի ղեկավարները դարձան Քրիստափոր Միքայելյանը, Ստեփան Զորյանը՝ կոչված Ռոստոմ, և Սիմոն Զավարյանը:²³⁸

Համիդյան պատժիչ ջոկատներից հայերին պաշտպանելու համար ձևավորվում է հայ ֆիդայիների շարժումը: Արդեն Աբդուլ Համիդի հրահանգով 1895-ին յոթ հազար հայեր բռնի մահմեդականացվում են: Զեյթունի ապստամբությունը 1895-ին օգնում է հայերին ազատվելու կոտորածից:

1896-ի հունիսի 15-ին և 16-ին Վանի այն թաղամասերը, որ բնակեցված էին հայերով, հրդեհվում են: Թուրքերը հատկապես

²³⁸ Նույն տեղում, էջ 450:

թիրախ են ընտրում Վանի Այգեստան թաղամասը, որը բնակեցված էր բացառապես հայերով:²³⁹

Մահեները վերստին անդրադառնում են Բանկ Օտոմանի գրավմանը: Հայերի ինքնապաշտպանական նշանաբանը դառնում է հետևյալ կարգախոսը. «Դիվանագիտական խաղերի ժամանակն անցել է: Մեր հարյուր հազարավոր նահատակների թափված արյունը մեզ իրավունք է տալիս պահանջել ազատություն»²⁴⁰:

1896-ին ֆիդայիների մի խումբ Բաբկեն Սյունու գլխավորությամբ գրավում են Կոստանդնուպոլսի Բանկ Օտոմանը: Նրանք ֆրանսերենով հանգստացնում են բանկի աշխատողներին՝ ասելով, թե չեն ուզում վնասել ոչ մեկին, նրանց պետք չէ բանկի հարստությունը, միայն ներկայացնում են իրենց պահանջները հայ ժողովրդի համար: Այդ գործողությունն ավարտվում է անարդյունք. հայ ֆիդայիները պայթեցնում են բանկը՝ իրենք էլ զոհվելով այդ պայթյունից:²⁴¹

Քանի որ Բաբկեն Սյունին Խարբերդի Ակն գյուղից էր, ապա նրա հայրենակիցներից 2000 հոգու 1896-ի սեպտեմբերի 15-ին սպանում են, 980 տներ կրակի են տալիս: Այս ամենը կատարվում է արևմտյան դիվանագետների աչքի առաջ: Այդ ամենը Աբդուլ Համիդը կատարում է ասելով, թե ինքը Մուհամեդ մարգարեի հաջորդն է և շարժվում է աստվածային օրենքով:²⁴² 1896-ի հուլիսի 20-ին Աբդուլ Համիդը Լևոն XIII-ին գրում է, թե հայերն անհնազանդ են և գործում են ամեն տեսակի գործեր, որոնք վայրի են ու արյու-

²³⁹ Նույն տեղում, էջ 455:

²⁴⁰ Նույն տեղում, էջ 457:

²⁴¹ Նույն տեղում:

²⁴² Նույն տեղում, էջ 458:

նոտ, մի բան, որ որևէ պաշտամունք, որևէ կրոն չի կարող հանդուրժել:²⁴³

Աբդուլ Համիդն ինքը հաճախ հայտարարում էր, թե որևէ ռեֆորմը հայերի համար՝ կվնասի Թուրքիային:

Մահեները վկայակոչում են ցեղասպանագետ Վահագն Դադրյանի այն միտքը, թե 1896-ի հայկական կոտորածները փորձ էր տեսնելու, թե աշխարհը ինչպես կարձագանքի դրանց:²⁴⁴ Ռայմոնդ Գևորգյանի խոսքերով կարելի է այսօր ասել, թե հայ բնակչության ոչնչացումը Թուրքիայում, որ սկսեց Աբդուլ Համիդը, ավարտին հասցրին երիտթուրքերը:²⁴⁵

Եվրոպայի առաջադեմ ուժերը սկսեցին հանդես գալ հայերի իրավունքները պաշտպանող ելույթներով: Դրանց թվում կային մտավորականներ, արվեստագետներ, գրողներ, ինչպիսիք էին Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը և ուրիշներ: Աբդուլ Համիդը միաձայն դատապարտվեց որպես հայկական ջարդերի միակ պատասխանատու: Միաժամանակ հայկական կուսակցությունները փորձում էին դասեր քաղել այդ չարիքից:

Արևելյան Հայաստանում Նիկոլայ Երկրորդը ավելի էր ուժեղացնում Ալեքսանդր Երրորդի ռուսիֆիկացման քաղաքականությունը:

1905 թվականի ռուսական հեղափոխության նախաշեմին բանվորական դժգոհություններ կային Ալավերդու պղնձահանքերում և Բաքվի նավթահորերում, ուր աշխատում էին 12.000 հայ բանվորներ: Այդ նավթահորերի տերերը նրանց հայրենակիցներն էին՝ Ղուկասովը, Լիանոզովը, Մանթաշևը և Արամյանցը:

²⁴³ Նույն տեղում:

²⁴⁴ Նույն տեղում, էջ 459:

²⁴⁵ Նույն տեղում:

Թիֆլիսում էլ բանվորներն աշխատում էին ծխախոտի, կաշվի և տեքստիլ արդյունաբերության մեջ: Բանվորական շրջաններում հայ հեղափոխականները կազմակերպում են դժգոհության շարժումներ: Հեղափոխական գործունեության պատճառով Ստեփան Շահումյանը 1902-ին հեռացվում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտից, ուր նա կազմակերպել էր ուսանողական դասադուլ: Ողջ Ռուսաստանում 1905-ին բռնկված հեղափոխական ցույցերը արյունալի ձևով ճնշվում են: Պետրոգրադի ցույցերը տարածվում են մինչև Մոսկվա, Լեհաստան, Բալթիկա, Կովկասի երկրների արդյունաբերական կենտրոններ: Սկսած հունվարի 18-ից՝ Թիֆլիսի արդյունաբերական կյանքը կաթվածահար է լինում, հեղափոխական ալիքը հասնում է Բաքու, մարտի 5-ին այդ ալիքին միանում է Ալավերդին: Ցարական կառավարությունը նահանգապետ Նակաշիձեի գլխավորությամբ հրահրում է աղբբեջանցիներին հայերի դեմ: Աղբբեջանցիները ստեղծում են գաղտնի բանակ՝ հայերին կոտորելու համար: Հայերի ջարդերը ղեկավարում էր Ահմեդ Աղաօղլուն՝ կոչված Ադան (1865-1839): Նա ծնվել է Ղարաբաղի Շուշի քաղաքում, սովորել Բաքվում, Պետրոգրադում և Փարիզում: Վերադառնալով Բաքու՝ ստեղծում է ազգայնամոլական մի խմբակ, որը ֆինանսավորվում էր մահմեդական բուրժուաներից ու նպատակ ուներ վերջ տալու հայ արդյունաբերողների և վաճառականների մրցակցությանը: Ադանը տարված էր պանթուրքիզմի գաղափարներով և Ռուսաստանի թուրքերին կամենում էր դնել օսմանյան թուրքերի հոգևոր ազդեցության տակ: Բաքվում սկսվում են հայերի կոտորածները, որոնք իրագործվում են 1905-ի փետրվարի 19-ից մինչև 22-ը: Ռուս հեղինակությունները, ոստիկանությունը չեն խառնվում կատարվածին և մնում են դիտողի դերում: Հայերը դիմում են ինքնապաշտպանության: Ադամովն իր

տան մոտ կրակ է բացում թաթարների վրա, որոնք սպանել էին երկու մանկան: Ադամովի տունը այրում են, և ներսում նա ու իր ընտանիքի 21 անդամները գոհվում են: Նույնը կատարվում է Լալայանցի տան հետ:²⁴⁶ Փետրվարի 21-ից ինքնապաշտպանությունը դեկավարում են դաշնակցականները՝ Նիկոլ Դումանի գլխավորությամբ: Հանկարծակի գալով այդ ինքնապաշտպանությունից՝ ռուսները կարգ ու կանոն են հաստատում: Դաշնակցականները դադարեցնում են դիմադրությունը, սակայն մայիսի 24-ին սպանում են Նակաշիձեին, որին համարում էին հայկական կոտորածների պատասխանատու: Հայկական ջարդեր են տեղի ունենում Թբիլիսիում, ուր Արմեն Գարո Բաստերմաջյանը կազմակերպում է հայերի պաշտպանությունը, որի հետևանքով յոթ օրվա կռիվներից հետո թաթարները փախուստի են դիմում: Երևանում հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպում են Դրոն և Խեչոն, Շուշիում՝ Վարդանը:

Այս քառսային վիճակին վերջ տալու համար Կովկասի փոխարքա Գալիցիևի փոխարեն նշանակվում է Վորոնցով-Դաշկովը: Հասնելով Թիֆլիս՝ 1905-ի օգոստոսի 1-ին, նա հրատարակում է դեկրետ, ըստ որի հայկական եկեղեցուն տրվում է ազատություն և նրան վերադարձվում է 1903-ին բռնագանձված ունեցվածքը: Հետո նա պատվավոր ձևով ընդունում է կաթողիկոս Խրիմյան Հայրիկին, որին անձամբ և պաշտոնապես հայտնում է այդ որոշումը: Դրանից հետո Շուշիում վերաբացվում է հայկական դպրոցը: Եկեղեցին վերստին ձեռք է բերում իր ունեցվածքը: Հայ բուրժուաները գոհանում են և վերստին ընդունում ռուսական կողմնորոշումը: Հայ երևելիները ներկայանում են Կովկասի փոխարքային՝ իրենց շնորհակալությունը հայտնելու:

²⁴⁶ Նույն տեղում, էջ 463:

1908-ին երիտթուրքերը դառնում են Թուրքիայի տերը, և նրանց ղեկավարող կարգախոսը՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն», ցնծությամբ է ընդունվում ոչ միայն հայերի, այլև Օսմանյան կայսրության տարածքում ապրող մյուս ոչ թուրք ժողովուրդների կողմից: Ոգևորված այդ փոփոխություններից՝ Փարիզից Ստամբուլ է վերադառնում նշանավոր գրող և քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը, որն արտասանում է մի ոգևորված ճառ՝ ասելով. «Մեր կրոնն ընդհանուր է՝ այն ազատությունն է»²⁴⁷: Մակայն այդ էջֆորիան տևում է շատ կարճ: Դրան փոխարինում են Ադանայի արյունալի ջարդերը՝ իրենց դաժանությամբ գերազանցելով համիդյանին:

Երիտթուրքերի քաղաքականության հիմքը դառնում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Մահեները մանրամասն նկարագրում են հայոց ցեղասպանության թուրքական գաղափարախոսությունը՝ ցեղասպանության սկիզբը, ընթացքը և ավարտը: Մանրամասն ներկայացվում են Վանի ինքնապաշտպանական կռիվները:

Առանձին ենթագլուխ վերնագրված է «1915-ի ապրիլի 24-ը և արևելյան վիլայեթների տարհանումը»²⁴⁸:

1915 թվականի ապրիլի 24-ի գիշերը Պոլսում բռնում են հազար հայերի, որոնց մեջ կային զինվորականներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ, գրողներ, դատավորներ, բժիշկներ, ուսանողներ, հոգևորականներ ու վաճառականներ: Նրանց թվում էին պատգամավորներ Գրիգոր Զոհրապը և Վարդգես Մերինգյուլյանը: Բռնվածներին սկզբում տանում են Անատոլիայի կենտրոնը: Նրանց խոստանում են դատարանի առաջ կանգնեցնել, սակայն

²⁴⁷ Նույն տեղում, էջ 486:

²⁴⁸ Նույն տեղում, էջ 478:

հանկարծ տեղափոխում են դեպի Ադանա, Հալեպ և Դիարբեքիր, ուր բոլորին սպանում են փոքր խմբերով:²⁴⁹ Տեղահանման գործընթացը համակարգված ձևով իրականացվում է 1915-ի մայիսից արևելյան վիլայեթներում՝ Էրզրումում, Բաղեշում, Խարբեղում, Սեբաստիայում ու Դիարբեքիրում: Այդ բռնի տեղահանման ժամանակացույցը հայտնի է բոլոր մանրամասներով: Տեղահանում են քաղաքների ու գյուղերի հայերին՝ հաշվի չառնելով ոչ տարիքը և ոչ էլ սեռը: Դատարկված հայկական գյուղերը թալանվում են ու այրվում: Պոնտոսի կողմերում Ֆայիկ բեյը՝ Տրապիզոնի վիլայեթի գայմագամը, հայերին նստեցնում է Սև ծովի վրա երկու թուրքական ցոկանավ՝ բեռնված երեխաներով ու կանանցով, որոնք երկու ժամ հետո նավահանգիստ են վերադառնում լրիվ դատարկ: Տեղահանվածները, որոնք հասնում էին Սիրիա, տեղավորվում էին ճամբարներում, ուր հաճախ գտնում էին իրենց մահը: Հալեպի մոտ գտնվող ճամբարներն արագորեն փակվում են, և հայերին քշում են Դեր Զորի անապատը, ուր 1916-ի հուլիսին կային 200.000 արքայականներ:²⁵⁰ 1915 թվականի մայիսի 30-ին գերմանացի թարգման Յոհաննես Սոդոմանը ներքին գործերի նախարարության անվտանգության տնօրեն Իսմայիլ Կամբոլայի գրասեղանին տեսել է մի քարտեզ, որի վրա նշված էին արդեն իրականացված հայերի տեղահանությունները: Այդ քարտեզը վերջերս գտնվել է:²⁵¹

Մահեներն առանձնացված ներկայացնում են Մուսա լեռան հայ բնակիչների հերոսապատումը: Մուսա լեռան հայկական վեց գյուղեր, 5000 բնակիչներով, որոշում են դիմակայել թուրքերին: Նրանց ղեկավարն էր Եսայի Յաղուբյանը: Սկզբում Մուսա լեռը

²⁴⁹ Նույն տեղում:

²⁵⁰ Նույն տեղում, էջ 482:

²⁵¹ Նույն տեղում, էջ 483:

բարձրացած հայերի վրա հարձակվում են 7000 թուրք զինվորներ: Մթության մեջ հայերը սպանում են երկու հարյուրին, մնացածը փախուստի է դիմում: Դրանից հետո 20.000 թուրք զինվորներ շրջափակում են լեռը: Միայն ազատ է մնում ժայռոտ ծովափը: Կանայք ծածանում են երկու ամենաբարձր ծառի կատարներին ամրացված դրոշակներ՝ վրան պատկերված խաչ ու անգլերենով գրված. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեք մեզ»:²⁵² 53-րդ օրը վերջապես ֆրանսիական նավը տեսնում է նշանը և մոտենում է ափին: Մի քանի հայ լողորդներ բարձրանում են նավի վրա ու բացատրում իրադրությունը: Վայրկենապես ծագումով հայ մի սպա՝ Տիգրան Թեքեյանը, կազմակերպում է մուսալեռցիների տեղափոխումը: Գնդացիների հարվածների տակ հայերը բարձրանում են Ժաննա դը Արկ նավը, որին ուղեկցում էր անգլիական մի նավ, և սեպտեմբերի 14-ին հասնում են Պորտ Սաիդ: Մուսալեռցիների խիզախությունը պատկերել է Ֆրանց Վերֆելը իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում, որը լույս է տեսել 1933-ին:

1941-ին Նյու Հավենի հավաքին ընդունվել է **ցեղասպանություն** եզրույթը: 1915 թվականի հայերի ցեղասպանությունը դիտարկվում է որպես «Թուրքիայի կատարած ոճրագործությունն ընդդեմ մարդկության»:²⁵³

Մահեները գրում են, թե ոմանք հայ նահատակների թիվը հաշվում են 1.200.000, իսկ ոմանք մեկ ու կես միլիոն:²⁵⁴

«Հայաստանի պատմություն» հատորի վերջին երեք գլուխներն են՝

XIII – Անկախություն (1918-1920), էջ 491-526,

²⁵² Նույն տեղում, էջ 484:

²⁵³ Նույն տեղում, էջ 485:

²⁵⁴ Նույն տեղում:

XIV – Խորհրդայնացում (1920-1991), էջ 527-585,

XV – Այսօր, էջ 587-625:

Ոմանք մտածում են, թե Հայաստանի ազգային սիրտը պետք է հաստատվեր Օսմանյան կայսրության հայկական այն նշանավոր քաղաքներում, որոնք էին Վանը, Կարին-Էրզրումը, Մուշը: Սակայն համիդյան ջարդերից հետո շատ բան փոխվում է: Ընդհակառակը, Ռուսական կայսրության հայերի մոտ կար քաղաքական ու զինվորական տպավորիչ ուժ: Հայերի ընտիր մասը կուտակված էր Հայաստանից դուրս՝ Թիֆլիսում և Բաքվում:

Համաշխարհային պատերազմն ու ցեղասպանությունը ամեն ինչ փոխեցին:

«Հայաստանի պատմություն» հատորի Խորհրդային Հայաստանին վերաբերող հատվածում հատկապես ուշագրավ են գիտությանը, մշակույթին, գրականությանը և արդյունաբերությանը վերաբերող բաժինները, որոնցում տեսնում ենք նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վերելքը 1915 թվականի ազգակործան ցեղասպանությունից հետո:

Արդեն Հայաստանի առաջին հանրապետության օրերին Ալեքսանդրապոլում 1920 թվականի հունվարի 31-ին բացված համալսարանը խորհրդային կարգերի ժամանակ՝ 1921 թվականի հունվարի 23-ին, տեղափոխվում է Երևան, ու ռեկտորն է դառնում Բաքվից վերադարձած բանասեր, պատմաբան Հակոբ Մանանդյանը (1873-1952): 1923-ին Իրանից Հայաստան է գալիս Սորբոնի համալսարանն ավարտած, Անտուան Մեյեի աշակերտ Հրաչյա Աճառյանը (1876-1952): Համալսարանում դասավանդելու է գալիս հայ հին գրականության ամենամեծ մասնագետը՝ Մանուկ Աբեղյանը (1865-1944), որը Կոմիտասի հետ (1869-1935) մինչև ցեղասպանությունը հավաքել է ժողովրդական երգերը, գրառել է «Մաս-

նա ծոեր» վիպերգի տարբեր պատումներ ու շնորհիվ իր բարեկամ Եղիշե Չարենցի տպագրել դրանք 1936-ին:

Մահեները ներկայացնում են հայ ժողովրդի գրագիտության մակարդակը ըստ առանձին թվերի: 1897-ին գրագետ էր հազիվ 9.2 տոկոսը, 1926-ին՝ 33.7 տոկոսը, իսկ 1939-ին արդեն 83.9 տոկոսը:²⁵⁵

Շատ խոսուն է «Մի մայրաքաղաքի արարումը» ենթաբաժինը:

1921-ի հոկտեմբերի 18-ին Երևան է գալիս նկարիչ Մարտիրոս Սարյանը՝ (1880-1972) ծնված Նոր Նախիջևանում և արդեն Ռուսաստանում շատ հռչակավոր: Նա Ալեքսանդր Մյասնիկյանի հայրենակիցն ու մտերիմ բարեկամն էր: Աշոտ Հովհաննիսյանը նշանակվում է ժողովրդական կրթության կոմիսար: Բացվում է պետական թանգարան: 1922թ. հիմնվում են Հայաստանի հանրային գրադարանն ու պետական թատրոնը, որը հետագայում կոչվում է Գաբրիել Սունդուկյանի անունով: Բացվում են արվեստի դպրոց և հաջորդ տարի կոնսերվատորիա ու «Հայֆիլմ» ստուդիան:

Ժամանակի ընթացքում Երևան մայրաքաղաքը նոր տեսք է ստանում ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի (1878-1936) շնորհիվ: Թամանյանը փայլուն վերընթաց ուներ Սանկտ Պետերբուրգում, ուր կառուցել էր ռուսական նեոկլասիցիզմի ոճով շենքեր, 1917-ին եղել է Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի խորհրդի նախագահը: 1920-ի ապրիլին դարձել է Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետը և Անիի ավերակների պահապանը: 1921-ին տեղափոխվել է Թավրիզ: 1921-ին պաշտոնապես հրավիրվել է Երևան: Թամանյանը մեծ դեր է կատարել նաև տնտեսական նշանակություն ունեցող շենքերի նախագծման գործում: Էլեկտրակայաններ, ոռոգման համակարգ, ճանապարհ-

²⁵⁵ Նույն տեղում, էջ 536:

ներ: Նա կարևոր գործ է կատարել ուրբանիստական շենքերի նախագծման խնդրում: Նախագծել է Լենինականի, Էջմիածնի, Ստեփանակերտի, Նոր Բայազետի, Հրազդանի, Նուբարաշենի մի շարք շենքեր: 1924-ին նախագծել է Երևանի վերակառուցման նախագիծը: Թամանյանը խնամքով պահպանել է միջնադարյան հայ ճարտարապետության զարդաքանդակների ձևերը, որոնք ջանասիրաբար ուսումնասիրել է Անիում:

Հայաստանի մշակութային վերելքը շատ նշանավոր հայերի քերում է Հայաստան: Ռիմսկի – Կորսակովի աշակերտ Ալեքսանդր Սպենդիարյանը (1871-1928)՝ ծնված Ղրիմում, իր կյանքի վերջին չորս տարիներն անցկացրեց Երևանում: Բանաստեղծ Եղիշե Չարենցը (1897-1937), որին կոչում են հեղափոխության մարգարե, 1918-1919 թվականներին Ռուսաստանում գործակցում էր բոլշևիկներին, 1921-ին Մոսկվայից գալիս է Երևան, ուր 1926-ին տպագրում է ազգային ողբերգությունը այլաբանական ձևով պատկերող «Երկիր Նաիրի» վեպը՝ դառնալով խորհրդային հայ գրականության արձակի հիմնադիրը:²⁵⁶ Նույն տարին Փարիզից Երևան է վերադառնում գրող Ալեքսանդր Շիրվանզադեն, որի «Նամուս» գործը ոգեշնչում է Համո Բեկնազարյանին (1892-1965) համր ֆիլմի վերածել այն ու դառնալ հայկական կինեմատոգրաֆիայի հայրը: Այդ ծաղկունքը տևեց մինչև 20-ականների վերջը: Նույն ժամանակահատվածում Աննա Ախմատովան և Վալերի Բրյուսովը հայ բանաստեղծներին թարգմանում էին ռուսերեն: 1928-ին Մաքսիմ Գորկին այցելում է Հայաստան, իսկ Սարյանի նկարները ցուցադրվում են Փարիզում:²⁵⁷

²⁵⁶ Նույն տեղում, էջ 538:

²⁵⁷ Նույն տեղում:

Ժամանակը ավելի ծանր էր, երբ Երևան է գալիս նշանավոր նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարը, որը հանրաձանոթ էր Փարիզի արվեստագետներին, ուր ստեղծեց իր «տարածական նկարչությունը»:²⁵⁸ Նա ստեղծեց հսկա արձաններ, որոնցից է Երևանի երկաթուղային կայարանի առջև կանգնած «Մասունցի Դավիթը»: Նույն Ֆրանսիայից Երևան է վերադառնում բանաստեղծ Ավետիք Իսահակյանը (1875-1957): Նա դառնում է Մարտիրոս Սարյանի անբաժան բարեկամը, որի իմաստուն խորհուրդները վերջինիս պաշտպանում են ստալինյան բռնություններից:²⁵⁹

Առաջին հայրենադարձությունը սփյուռքից եղել է 1922-ից 1936թթ. ընթացքում: Հայաստան են եկել 4228 հայեր, որոնք հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ: Նրանք եկել էին Բալկաններից ու Մերձավոր Արևելքից ու բնակեցվեցին Արարատում, Արտաշատում, Վարդենիսում և Անիում: 1925-ից հետո եկածները բնակեցվեցին Երևանի շրջակայքում ու հիմնեցին նոր գյուղեր՝ Նոր Արաբկիր (1925), Նոր Մալաթիա (1927), Նոր Սեբաստիա (1928), Նոր Խարբերդ (1930) և այլն:

Մահեները ստալինյան ժամանակաշրջանի աղետների հետ են կապում Ալեքսանդր Մյասնիկյանի 1925-ի մարտի 22-ի ավիավթարը, ինչպես նաև 1929-30թթ. ապակուլակացնելը, երբ 25.000 հայ հարուստ գյուղացիներ ունեզրկվեցին:

«Խանջյանը ընդդեմ Բերիայի» ենթաբաժնում ներկայացվում է Աղասի Խանջյանի եղերական մահը, որը կազմակերպել էր Բերիան:²⁶⁰

²⁵⁸ Նույն տեղում:

²⁵⁹ Նույն տեղում:

²⁶⁰ ՀՄԽՀ «Տեղեկագրքում» զետեղված է Բերիայի ճառը, որում նա Աղասի Խանջյանին մեղադրում է Արշակ Չոպանյանի հետ ունեցած նամակագրության համար: Չոպանյանը Խանջյանին գրում է, թե ԽՍՀՄ

«Միջնադարյան եկեղեցիները վերականգնելը» բաժինը ներկայացնում է 1965-ին հիմնված հայկական հուշարձանների պահպանության կոմիտեի ստեղծումը, որը Մարտիրոս Սարյանի ու «Մխիթար Սպարապետ» վեպի հեղինակ Սերո Խանգաղյանի ջանքերով նպատակ ուներ վերականգնել ու պահպանել հայ միջնադարյան եկեղեցիները: Մահեները ճշգրտորեն են ներկայացնում Ղարաբաղյան պրոբլեմը: 1963-ի մայիսի 19-ին Լեռնային Ղարաբաղի 2.500 հայ բնակիչներ նամակ են ստորագրում՝ ուղղված Խրուշչովին: Նրանք բողոքում են աղբյուրների շովինիզմի դեմ: Նամակում գրված էր, թե հայերը ճնշված են աղբյուրներից, գյուղերը չունեն կարգին ճանապարհներ, հայ երեխաներին կամաց-կամաց արգելում են մայրենի լեզվով դպրոցներում սովորել: Խրուշչովը «խուլ ականջով» բողոքը չի լսում, իսկ աղբյուրներից ի պատասխան այդ դիմումի՝ սպանում են տասնութ հայերի: Մակայն հայերի բողոքը շարունակվում է: 1965-ի հունիսին Ղարաբաղի տասներեք ներկայացուցիչներ՝ գրող Բագրատ Ուլուբաբյանի և պատգամավոր Արկադի Մանուչարովի գլխավորությամբ, 45.000 հայերի ստորագրությամբ Մոսկվա են ուղարկում նոր դիմում՝ խնդրելով Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին: Վիճակն այնքան է ծանրանում, որ մահվան սպառնալիքի տակ Ուլուբաբյանն ու Մանուչարովը տեղափոխվում են Երևան:²⁶¹

Նոր սահմանադրության մեջ անհրաժեշտ է կատարել Հայաստանի տարածքային փոփոխությունը և Հայաստանին վերադարձնել Աղբյուրների տրված հայկական պապենական տարածքները՝ Ղարաբաղը, Նախիջևանը: Տե՛ս «Տեղեկագիր» ՀՄԽՀ պատմության և գրականության ինստիտուտի, գիրք 1, Երևան, 1936, էջ X-XI:

²⁶¹ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, p. 564.

Հայերի հեռանալը Ղարաբաղից սկսում է աճել: 1921-ին հայերը Ղարաբաղի բնակչության 94.4 տոկոսն էին, 1970-ին դառնում են 80.6 տոկոսը: Ադրբեջանցիները սկսում են տարածքը մաքրել հայկական հուշարձաններից ու խաչքարերից՝ քանդելով ու ջարդելով դրանք:²⁶²

Այդ նույն ժամանակահատվածում Վազգեն Ա-ի մղումով և նրա մեկենաս Օննիկ Մանուկյանի օգնությամբ ստեղծվում է մի մեծ ծրագիր՝ միջնադարյան հայկական վանքերի ու եկեղեցիների գունավոր պատկերագրքեր հրատարակելը: Իտալացի ճարտարապետներ Պաոլո Գուլենոն և Ադրիանո Ալպագո Նովելլոն, որոնք Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտից էին, իրականացնում են հիանալի նկարագարոված պատկերագրքերի տպագրումը: Վախենալով սրբացված քարերը ադրբեջանցիների կողմից ջարդվելուց՝ հայ հովիվները շրջել էին քարերի արձանագրություններ ունեցող կողմերը հողի վրա, որպեսզի դրանք պահպանեն:²⁶³

Հայկական հուշարձանների մեծ ծավալ ունեցող գունավոր պատկերագրքերը զգացմունքային ցնցում են առաջացնում ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Եվրոպայի ու Ամերիկայի սփյուռքահայերի մոտ: Փարիզեցի գիտնական Հայկ Բերբերյանի (1887-1978) ջանքերով վերսկսում է հրատարակվել „Revue des Études Arméniennes” հանդեսը, որի խմբագիրներն են եղել նշանավոր հայագետներ Անտուան Մեյեն և Ֆրեդերիկ Մակլերը:

Մահեներն իրենց գրքում գրում են նաև մի սկանդալային դեպքի մասին, որը կապված էր Ֆրանսիայից հայրենադարձված հայերի հետ: 1956-ի մայիսի 24-ին ԽՍՀՄ է այցելում ֆրանսիացի արտաքին գործերի նախարար Կրիստիան Պինոն, որը գալիս է

²⁶² Նույն տեղում:

²⁶³ Նույն տեղում:

նան Երևան: Օդանավակայանում ֆրանսահայ մայրերը իրենց երեխաների հետ վագում են ինքնաթիռի մոտ: Նրանցից ոմանք երգում են «Մարսելյեզը», իսկ ոմանք գոռում են. «Փրկեցե՛ք մեզ»:²⁶⁴

1964-ին Երևանում բացվում է «Սփյուռքահայության կոմիտեն», որը բարեկամական կապեր է հաստատում արտասահմանում ապրող հայության հետ:

1965 թվականին Հայաստանի Մինիստրների խորհուրդը որոշում է կառուցել ցեղասպանության հուշահամալիրը:

Տեղի է ունենում սգո հանդիսություն: 100.000-ից 200.000 մարդ հավաքվում են Լենինի հրապարակում ու քաղաքի կենտրոնի գլխավոր փողոցներում: Հայեր են գալիս Մոսկվայից, Բաքվից, Թբիլիսիից: Բոլորը պահանջում են արդարություն հայերի ցեղասպանության համար: Հիշեցնում են Ղարաբաղի և Նախիջևանի մասին: Մոսկվայում երեք հարյուր հայ ուսանողներ ցույց են կազմակերպում հայկական եկեղեցու մոտ և Թուրքիայի դեսպանության առջև: Հայերը Մոսկվայից պահանջում են վերաբացել Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը Մոսկվայում, որը փակվել էր Ստալինի հրահանգով:

Առանձին ենթագլխով Մահեները պատկերում են, թե խորհրդային տարիներին ինչ արագությամբ Հայաստանում զարգանում են արդյունաբերության տարբեր ճյուղերը, և Հայաստանը դառնում է զարգացած արդյունաբերական երկիր:

1991-ի սեպտեմբերի 21-ին 99 տոկոս ժողովրդի ձայնով Հայաստանն անկախանում է, և 1991-ի հոկտեմբերի 16-ին 84 տոկոս ձայներով Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվում է անկախ Հայաստանի Հանրապետության նախագահ:²⁶⁵

²⁶⁴ Նույն տեղում, էջ 565:

²⁶⁵ Նույն տեղում, էջ 581:

«Հայաստանի պատմության» «Այսօր» բաժնում խոսվում է դարաբաղյան հայ ազատագրական պատերազմի մասին: Հայերը հերոսամարտերով ազատագրում են Ղարաբաղի հայկական տարածքները, որոնք կազմում էին Խորհրդային Ադրբեջանի մեկ յոթերորդ մասը: Ղարաբաղյան պատերազմի լեգենդար հերոսներից էր Մոնթե Մելքոնյանը՝ (1957-1993) Ավո մականունով:

1994 թվականի մայիսի 12-ին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև կնքվում է հրադադարի պայմանագիր:²⁶⁶

«Հայաստանի պատմություն» գիրքն ավարտվում է 2012 թվականով: Մահեներն այդ պատմությունն ավարտում են ոսկեդարի և XX դարի երկու հայրենասեր գրողների խոսքերով՝ Մովսես Խորենացու և Պարույր Սևակի: Խորենացին գրում է. «Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով..., բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված»²⁶⁷: Պարույր Սևակն էլ նկատում է, թե մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում..., մենք կանք, կլինենք ու կբազմանանք:²⁶⁸

²⁶⁶ Նույն տեղում, էջ 590:

²⁶⁷ Նույն տեղում, էջ 625: Տե՛ս նաև Մ.Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1981, էջ 13:

²⁶⁸ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԻ
ՀԱՆՃԱՐԵՂ ՄԵԿՆԱԲԱՆԸ

**ա) ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆ**

Ժան-Պիեռ Մահեն և Աննի Մահեն երկար տարիներ են զբաղվել Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ ու հասել են հիանալի արդյունքների: Նրանց մեծագույն ծառայություններից կարևորագույն են երկուսը՝ 2000 թվականին Լուվենում հրատարակված «Մատեան ողբերգութեան» երկի նոր ֆրանսերեն թարգմանությունը¹ ծավալուն առաջաբանով և 2004-ին նույն սովորածավալ հետազոտության հայերեն թարգմանվելուն՝ նվիրված Նարեկացու գլուխգործոցին:²

Ճիշտ է, «Մատեան ողբերգութեան» երկը նախ հատվածաբար, ապա ամբողջական արդեն ֆրանսերենով թարգմանված էր, սակայն հանճարեղ Գրիգոր Նարեկացին որևէ օտարազգի հայագետի կողմից այնքան հետազոտված չէր, որքան դա կատարեցին Մահեններն իրենց երկարամյա ուսումնասիրությունների շնորհիվ:

¹ Այդ թարգմանությունը համառոտված առաջաբանով լույս է տեսել Երևանում՝ 2012 թվականին (տե՛ս Grégoire de Narek, *Tragédie, Matean olbergut'ean, Le livre de lamentation, Introduction, traduction et notes par Annie et Jean-Pierre Mahé, Erevan, Nairi, 2012, 532p.*).

² Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, ֆրանսերենից թարգմանեց Շուշանիկ Թամրազյանը, խմբագիր՝ Գուրգեն Գասպարյան, Երևան, «Նաիրի» հրատ., 324 էջ:

Հայ ժողովրդի մեծագույն բարեկամ ու անկրկնելի հայագետ Նիկողայոս Մառի կարծիքով «Մատենանոցը երկր անթարգմանելի է³, որովհետև այն ճիշտ թարգմանել ու մեկնաբանել կարող է միայն Հայաստանը ըստ էության ճանաչող և նրա գեղեցկություններով հիացող անհատը: Ահա այդպիսի գիտնական հայագետներ էին Մահեները, որոնք ֆրանսախոս ընթերցողին մատուցեցին վերժամանակյա, համամարդկային, աստվածաբանական ու փիլիսոփայական սրբազան մատյանը, որի մասին լիովակցի նշանավոր բանաստեղծ Էդուարդաս Մեծելայտիսն ասել է. «Տագնապալի ինչպես Բախի խորալները»⁴:

Հիմա արդեն հրապարակի վրա է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի հովանավորությամբ 2015-ին լույս տեսած «Գրիգոր Նարեկացի, Մատենագիտություն» գիրքը, որում իր հատուկ բաժիններն ունեն Աննի և Ժան-Պիեռ Մահեները:⁵

Մահեները Գրիգոր Նարեկացի միստիկի՝ խորհրդապաշտի հայտնությունը դիտարկում են որպես հայ քրիստոնեական գրականության օրինաչափ զարգացման արդյունք:

Հայկական եկեղեցու կրոնական մտքի էվոլյուցիոն բնականոն ընթացքի մեջ ծնվեց Գրիգոր Նարեկացու երկը: Այդ իսկ նպատակով ֆրանսիացի հայագետները աստվածաբանական խնդիրները սկսում են դիտարկել ոսկեդարից մինչև X դարի սկիզբը: Գրքում համեմատվում են ոսկեդարի և X դարի երկու նշանավոր

³ Н.Март, Об истоках творчества Руставели и его поэма, Тбилиси, 1964, с. 39.

⁴ «Читая Нарекаци», Предисловие М.М.Мкрчяна, составление Л.М.Мкрчяна, Ереван, 1974, с. 25.

⁵ Գրիգոր Նարեկացի, Մատենագիտություն, Աշխատասիրությամբ՝ Աստղիկ Ղափլանեանի, Երևան, 2015:

գրական դեմքեր՝ Ղ.Փարպեցին և Գրիգոր Նարեկացին: Երկուսն էլ տարբերվում են ժամանակի շրջապատող միջավայրից իրենց բազմազիտակությամբ, նույնիսկ կասկածվում աղանդավորության մեջ, երկուսն էլ կարողանում են արդարացնել իրենց: Առաջինը հզոր քննադատական ոգով գրված թղթով, երկրորդը՝ նույնքան հզոր ու զայրալից թղթով՝ ուղղված Կճավա վանքի վանահորը: Այդ թղթերին հետևում են Ղ.Փարպեցու «Հայոց պատմությունը» և Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկը: Միքայել Նալբանդյանը Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մասին գրում է. «Արդարև, Փարպեցու պատմությունը շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիդոսի հոյակապ տարեգրությանց, թե իր անախտակիր ոգու և թե ճարտարության մասին: Եվ մեզ թվում է, թե այս համեմատությունը էր ամենամեծ գովասանությունը, որ կարող էինք տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»⁶:

Մահեները նոր գնահատականներ և թարմաշունչ մեկնաբանություններ են բերում նարեկացիագիտության մեջ: Վերոհիշյալ գրքի հայ ընթերցողին ուղղված առաջաբանում կարդում ենք. «Եվ եթե Գրիգոր Նարեկացին թարգմանվեր լատիներեն իսաչակրաց արշավանքների ժամանակ և տարածվեր Արևմուտքում, ապա Ռեֆորմացիան անհնարին կդառնար, իսկ Լյութերի տազնապներն՝ անառարկայական»⁷:

Մահեները Գր.Նարեկացուն համադրում են աստվածաշնչալի Մովսեսի և նոր ժամանակների հայտնի ֆրանսիացի ու գերմանացի փիլիսոփաներ Ռընե Դեկարտի և Իմանուիլ Կանտի հետ:

⁶ Մ.Նալբանդյան, ԵԼԺ վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 334-335:

⁷ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը, էջ IV:

Ողջ աշխատության մեջ «Մատյանի» հեղինակի մտքի թռիչքը ներկայացվում է որպես ամենահայկականը և միաժամանակ «համաշխարհային գրականության մեջ կրոնական մտքի ամենահինքնատիպը»⁸:

Մահեները համաձայն չեն Գրիգոր Նարեկացու նկատմամբ Շահան Շահնուրի «Նահանջը՝ առանց երգի» վեպի բնորոշմանը: Ի դեպ, այս վեպը միակն է հայ գրականությունից, որ մտել է «1001 գրքեր, որոնք պետք է կարդաք մինչև մեռնելը» համաշխարհային գրականության ընտրանին ներկայացնող ժողովածուի մեջ:⁹

«Նարեկի» ժողովրդական պաշտամունքի առարկա լինելը հանրահայտ է, սակայն նրա գործը մարդկության մեծ մխիթարիչներ Բուդդայի և Ֆրանսուա դ'Ասիզի կողքին դնելը պատվավոր նորություն է:

Երիցս ճիշտ են Մահեները, երբ Նարեկացու քրիստոնեական կրոնի նոր մոտեցումներում սերտ կապեր են տեսնում բյուզանդական եկեղեցու քրիստոնեական հանդուրժողականության հետ:

Հայոց եկեղեցու ինքնուրույնության և նրա ազգային նկարագրի վերաբերյալ արժեքավոր հետազոտություն ունի Մկրտիչ Էմինը՝ «Համառոտ ակնարկ Հայոց արևելյան եկեղեցու» («Краткий очерк истории армянской восточной церкви») խորագրով: Էմինը հայկական եկեղեցու ինքնուրույնությունը ձևակերպում է հետևյալ կերպ. «Հայկական եկեղեցին համարձակորեն կարող է ձեռք մեկնել արևելյան եկեղեցուն, քանզի նա իր ընդերքում ավելի քան տասնվեց դարերի ընթացքում մաքրությամբ պահում է Գրիգոր Լուսավորչի կտակած և նրա անմիջական նախորդներին փոխանց-

⁸ Նույն տեղում, էջ VI:

⁹ «1001 books you must read before you die», New York, 2010, p. 335.

ված ու երեք տիեզերական ժողովներում ընդունված վարդապետությունը»¹⁰:

Բյուզանդական և հայկական կրթական միջավայրի ընդհանրություններից մեկն էլ Գրիգոր Նարեկացու «Մատենաի» ու բյուզանդական միստիկ Սիմեոն Նոր Աստվածաբանի հիմների նմանությունն է. նրանք ստեղծագործել են իրարից բոլորովին անկախ:¹¹

Առանց թոնդրակյան շարժման անդրադարձի անհնար է խոսել Նարեկացու կյանքի ու գործունեության մասին: Հայ քրիստոնեական գրականության քաջ գիտակ Ֆելիքս Նևը այդ հարցի առթիվ ունի հետևյալ նկատումը. «...թեև Նարեկացին լիովին չէր ենթարկվում հոգևոր հայրերի մտածողությանն ու վարքագծին, սակայն երբեք չդարձավ հերձվածող ու չմիացավ հակակեղեցական շարժումներին, որոնք այնքան խոր արմատներ էին գցել նրա հայրենիքում»¹²: Հակաթոնդրակյան հայացքներով Գրիգոր Նարեկացին համահունչ մտածում էր Նարեկա դպրոցի առաջնորդ Անանիա Նարեկացու և իր հոր՝ Խոսրով Անձևացու հետ ներդաշն:

Գրքում գեղագիտական եզակի ընկալումներով է պատկերված Վասպուրականի Գագիկ արքայի միջոցներով ու Մանվել ճարտարապետի հանձնարով կառուցված Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին. «Միակը լինելով հայ արվեստի մեջ իր զարդանախշերի հարստությամբ՝ եկեղեցին դրսից և ներսից պաճուճված էր աստվածաշնչյան դրվագներով՝ նկարված կամ քանդակված, որ ներկա-

¹⁰ Н.Эмин, Краткий очерк истории армянской восточной церкви, Москва, 1872, с. 9.

¹¹ Sté u Syméon le Nouveau Théologien, Hymnes, t. I, Paris, 1969, t. 2, Paris, 1971.

¹² Ա.Դոլուխանյան, Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագրությունը, Երևան, 2001, էջ 68:

յացնում էին սուրբ պատմության ամբողջական ընթերցումը՝ սկսած Եդեմական այգու անկումից մինչև դժոխքի խառնարանները և Քրիստոսի երկրորդ գալուստը:¹³

Մահեները «Մատեան ողբերգութեան» երկը համարում են Նարեկացու աստվածաբանական հայացքների հանրագումարը, որը ներկայացնելու համար ուշագրավ ձևով մեկնաբանվում է նրա ողջ գրական ժառանգությունը՝ այդ թվում նաև տաղերը, գանձերը, մեղեդիները:

Աստվածաբան հայ մատենագիրները անտեղյակ չէին աշխարհիկ արվեստին: Ըստ Ժան-Պիեռ Մահեի ոսկեդարում արդեն Հայաստանի բարձրագույն դպրոցներում ուսուցանվում էր Արիստոտելի «Օրգանոնը», որը մատուցվում էր ըստ Դիոնիսիոս Թրակացու, Թեոն Ալեքսանդրացու կամ «Պիտոյից գրքի»:¹⁴ Գրքում թոնդրակեցիներին վերաբերող հատվածը վերնագրված է՝ «Այժմեական բանավեճ»: Խիստ ուշագրավ է ներքին մարդու հասկացողությունը, որը շարունակ շղթայված է հոգու և մարմնի հակամարտությամբ: Ահա այդ պայքարից և փրկվելու անհայտությունից ծնվում է մարդու ողբերգությունը:

Մահեների կարծիքով «Մատեանը» Գրիգորի պարտքն էր իր ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն:¹⁵

Նարեկացու ներբողյանները Մահեները բնութագրում են հետևյալ ձևով. «Կարելի է գլխապտույտ զգալ Գրիգորի սուրբ գրքերի խոր ճանաչողության անվերջ շրջադարձներից, որ անսայթաք ճկունությամբ բանաստեղծը սփռում է մեր հայացքների առջև՝

¹³ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, էջ 67-68:

¹⁴ Նույն տեղում, էջ 82:

¹⁵ Նույն տեղում, էջ 118:

որպես գեղադիտակի երևակումներ»:¹⁶ Ըստ այս գրքի՝ Նարեկացին հակակրանքը դեպի թոնդրակեցիները, բացի հայտնի թղթից, արտահայտել է իր ստեղծագործական մի շարք դրսևորումներում: Մահեները վերապատմում են ժողովրդական այն ավանդությունը, ըստ որի՝ Նարեկացին մեղադրանքի ատյանից ազատվել է խորոված աղավինները վերակենդանացնելով: Ավանդությունն այնքան տարածված էր հայկական միջավայրում, որ Կիլիկյան գրականության երևելի դեմքը՝ Հովհաննես Թլկուրանցին, այն վերապատմում է «Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն» վիպական տաղում.

Վարդապետն յառաջ եկաւ
Ու յիշեց ըզտէր կենդանին,
Նայ զաջն ի վեր եհան,
Թևաթափ ետուր թեփուրին.
Թև առին ետնապատիկ
Վերայ գլուխ սուրբ վարդապետին.
Վարդապետն օրհնեց զնայ,
Ու թըռան հասան երամին:¹⁷

Ըստ Մահեների՝ Գրիգորը սկզբում 74 ադոթքից էր «Մատեանը» կազմել, մյուս հատվածները հետո է ավելացրել, որպեսզի վերստին հակադրվի թոնդրակեցիներին:¹⁸

Սողոմոն Իմաստունն իր «Ժողովողով» դառնում է «Մատեանի» կարևոր խոսակիցներից: Մատնացույց է արվում Հերմես Եռամեծի աֆորիզմների օգտագործումը «Նարեկում»: Գրքում բնութագրվում է նաև ողբի ժանրը, որը ոսկեդարի ժամանակներից սկսած

¹⁶ Նույն տեղում, էջ 149:

¹⁷ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրությանը՝ Էմ.Պիվազյանի, Երևան, 1960, էջ 211-212:

¹⁸ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, էջ 157:

կայուն գրական տեսակ դարձավ հայ միջնադարի համար, և դրա բանաստեղծական առաջին նմուշը նշանավորվեց Ջևանշիր իշխանին նվիրված ողբով՝ գրված հայերենի այբբենակապով:¹⁹ Այս ժանրի ընթացքը գրքի հեղինակները հասցնում են ավելի ուշ միջնադար:

Կատարյալ նորություն է «Մատեան ողբերգութեան» երկի ու Ավեստայի աղերսների դիտարկումը: Մատյանում նման գիտելիքների աղբյուրը դիտարկվում է ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկի, ցավոք Մահենները Եղիշեին տեղափոխում են VII դար, այն դեպքում, երբ նշանավոր ավեստագետ C. de Harlez-ն Ավեստայի քննական բնագրի առաջաբանում նշում է, թե օգտվել է Եղիշեի երկից ու նրան ներկայացնում է որպես ոսկեդարի պատմիչ:²⁰

Իրավացիորեն նշվում է, թե հայ միջնադարում «Մատեան ողբերգութեան» երկն արտագրելը մշտապես համարվել է մի սուրբ ծես: Նարեկացու «Մատեանը» արտագրել է նաև Սայաթ-Նովան: Այդ մասին վկայում են «Մատեանի» քննական բնագրի կազմողները:²¹ Ըստ Մահենների՝ «Մատեանի» սնահավատ օգտագործումը գերազանցում է հեղինակի մտադրությունները:²²

Գրքի հեղինակները սևեռամիտ են դարձնում Նարեկացու այն բացառիկ ճշգրիտ միտքը, ըստ որի՝ եթե մարդը ներքնապես, ինքն իր մեջ չի գիտակցում կատարած մեղքը, հանցանքը, ապա չի

¹⁹ Նույն տեղում, էջ 178:

²⁰ Avesta, Livre sacré du Zoroastrisme, traduit du text zend accompagné de notes explicatives et précédé d'une introduction..., Paris, 1881, p. XXIII.

²¹ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Աշխատասիրությունը՝ Պ.Մ.Խաչատրյանի և Ա.Ա.Ղազինյանի, Երևան, 1985, էջ 142:

²² Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, էջ 213:

կարող ուղղվել: Մի՞թե սա չի ասված բոլոր ժամանակների մարդկանց համար: Ահա այստեղից էլ սեփական անձի ինքնաճանաչում ու խոստովանություն: Առանձնացված քննվում է «Ես»-ը հայ միջնադարյան գիտակցության մեջ» խնդիրը: Հայ միջնադարում անհատի եսը չէր կարևորվում Աստծու կողքին, «այդ իսկ պատճառով ինքնակենսագրական պատումները գրեթե բացակայում են հայ միջնադարյան գրականության մեջ»²³: Մահեներն այդքան էլ չեն կարևորում Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը, որը խիստ կարևորում է անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը՝ միաժամանակ այն թարգմանելով անգլերեն:²⁴ «Գրվածքի սահունությունը» բաժնում մատնացույց են արվում այն աղերսները, որոնք կան Հին և Նոր կտակարանների ու եկեղեցու հայրերի գրվածքների ու «Մատեանի» միջև:

Ֆրանսիացի հայագետների «Մատեանի» նոր մեկնաբանությունները բաժանված են բազմապիսի և բազմաքանակ ենթաբաժինների, որոնք վկայում են, թե որքան քչերին է հասանելի Նարեկացու գլուխգործոցի գիտական բացատրությունը: Այս զգուշացումն առկա է այնպիսի խորագնա հայագետի մոտ, ինչպիսին է Ստեփանոս Նազարյանի «Беглый взгляд на историю гайканской литературы до конца XIII столетия» հետազոտության մեջ, որում նա խոստովանում է, թե Նարեկացու էլեգիաները իրենց մտքի խորությամբ, անհաշվելի ակնարկներով՝ եկեղեցական և աշխարհիկ հեղինակներին վերաբերող, առաջացնում են բազում դժվարություններ անգամ գիտնական հետազոտողի համար:²⁵

²³ Նույն տեղում, էջ 223-224:

²⁴ F.Conybeare, Ananias of Shirak, His autobiography, *Bizantinische Zeitschrift*, 1897, A, VI.

²⁵ Ստ.Նազարյան, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 22:

Ահա այդ բազմաթիվ դժվարություններն իրենց մանրախույզ հետազոտությամբ հաղթահարել են Մահենները և գիտական աշխարհին նվիրել կոթողային աշխատություն: Կատարյալ նորություն է գրքի «Սրբավայրի ճարտարապետությունը» բաժինը, որում Նարեկացու գլուխգործոցը բաժանվում է երեք մասի՝ եկեղեցու գավիթ, տաճար և խորան: Ըստ այս մոտեցման. «Ժամանակը ջնջվում է կարծես հավերժության առաջ (ՁԴ-ՂԵ): Օրը, որ բանաստեղծը ողջունում է առավոտյան աղոթքի մեջ, ձգվում է՝ հանկարծ ընդգրկելով նրա ողջ կյանքը: Նա Աստծուն աղաչում է ապավեն լինել իրեն՝ իր ձեռնարկումների սկզբում, ընթացքում և ավարտին, երիտասարդության շրջանում, հասուն տարիքում և ծերության օրերին:²⁶

Աննի և Ժան-Պիեռ Մահենները այս նորարարական նվաճմանը հասել են ոչ միայն իրենց տքնաջան աշխատանքով, այլև բազմաթիվ լեզուների իմացությամբ, որն ապահովել է նրանց քննական ու համեմատական հետազոտության մեջ լայնածավալ տեսադաշտի ընդգրկումը:

²⁶ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոցի ողբերգութեան» երկը, էջ 293:

**բ) ՎԵՐՄՏԻՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆԻ» ՆՈՐ
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

2004-ին է լույս տեսել Աննի և Ժան-Պիեռ Մահենների «Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» մենագրությունը, որը բոլորովին նոր խոսք է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վերաբերյալ: Իրականում գիրքը ներկայացնում է Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործն իր ամբողջության մեջ: Մինչ այս գրքի հանդես գալը, որը նվիրված է «Մատեան ողբերգութեան» երկի հրապարակ գալու 1000-ամյա հոբելյանին, գրքի հեղինակները, հատկապես Ժան-Պիեռ Մահեն, մեծ քանակի հոդվածներ է նվիրել հայ հին և միջնադարյան գրականությանը: Դրանց թվարկումը կա հենց ներկայացվող գրքի «Գրականության այբբենական ցանկ» բաժնում: Ցանկը խիստ հարուստ է տարալեզու գրականությամբ, որոնք վերաբերում են թե Գրիգոր Նարեկացուն և թե հայ ու այլ ժողովուրդների միջնադարյան գրականության սկզբնաղբյուրներին ու նրանց շուրջ եղած հետազոտություններին:

Այս, հիրավի, գիտական հետազոտության ենթահարցերը խիստ մանրամասն են, և դրանց մասին կարելի է գրել ծավալուն վերլուծական: Հոդվածում խոսքը վերաբերելու է «Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» մենագրության «Իրանյան սուբստրատի հետքերը», «Հայ քրիստոնեությունը, գրադաշտականությունն ու մանիքեականությունը», «Խոստովանություն և սեփական անձի ճանաչողություն» ենթավերնագրերի ներքո եղած մեկնություններին, որոնք բոլորովին նորություն են նարեկացիագիտության մեջ:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը փիլիսոփայական-աստվածաբանական բարդ ստեղծագործություն է:

Պատահական չէ, որ հայ միջնադարից սկսած այն ենթարկվել է մեկնությունների: Այսօր էլ շատերը փորձում են ներկայացնել երկի իրենց ընկալումը, որը երբեմն հանճարեղ ստեղծագործության սեփական մտքի ընկալման բացատրություն է, գուցե և արժեքավոր, տպավորիչ, սակայն չունի այն պահանջը, որը դրվում է միջնադարյան գրական գործը վերլուծելիս: Հայ միջնադարի մտածողությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ քրիստոնեական աստվածաբանություն: Կարևոր է միստիցիզմի երևույթը հասկանալ՝ սկսած նրա հնագույն դրսևորումներից մինչև Հայաստանի պատմության X դարը: Ծանոթ լինել աշխարհի չորս հիմնական կրոններին՝ զրադաշտականությանը, քրիստոնեությանը, բուդդայականությանն ու մահմեդականությանը, կարդացած լինել այդ կրոնների սրբազան մատյանները, նրանց շուրջ եղած գիտական մեկնությունները, տեղյակ լինել նաև այդ կրոններին առնչվող աղանդավորական դրսևորումներին: Խիստ անհրաժեշտ է բնագրով ծանոթ լինել մինչ Գրիգոր Նարեկացին եղած հայ մատենագրությանը, եվրոպական ու ռուսական հայագիտությանը, Մխիթարյան հայրերի աշխատություններին: Կարևոր է նաև իմանալ օտար լեզուներ: Պահանջների այս ցանկը դեռ թերի է, եթե խոսքը գիտական հայագիտությանն է վերաբերում: Այս բոլոր պահանջներին Աննի և Ժան-Պիեռ Մահենների՝ Գրիգոր Նարեկացուն վերաբերող գիրքը բավարարում է: Այն դասական միջնադարագիտության փայլուն դրսևորում է:

Հայ-իրանական քաղաքական ու մշակութային կապերը վաղուց հայտնի են, և այդ հարցի շուրջ ստեղծված է հսկայական գրականություն թե հայերի և թե օտարազգի գիտնականների կողմից: Հայագետների ծանրակշիռ մասը վերոհիշյալ առնչությունները քննելիս գտնում է, որ հայկականը նմանությամբ հանդերձ

ունի հայկական հիմք ու բնավորություն: Այս տեսակետի կողմնակիցներն են Մ.Էմինը¹, Ղ.Ալիշանը², Հ.Գեղցերը³, Ն.Ադոնցը⁴, Կ.Տրևերը⁵, Գր.Ղափանցյանը⁶, Ս.Երեմյանը⁷ և շատ ուրիշներ:

Ժան-Պիեռ Մահեն որոշակի կապ է տեսնում, ավելի շուտ հետք է նշմարում Գր.Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի և Ավեստայի միջև: Եվ սա զարմանալի չէ: Ավեստայում էլ բավականին տեղ են զբաղեցնում մեղավոր մարդու մեղքերի խոստովանությունները, որոնց շնորհիվ իր հավերժական կյանքում գուցե մարդը փրկվի դժոխքից: Ջրադաշտական կրոնի սրբազան մատյանում, ինչպես Գրիգոր Նարեկացու մոտ, մարդուց պահանջվում է հոգու մաքրություն: Նույնը պահանջվում է նաև Ավեստայում. «Նա, ով մաքուր է պահում իր հոգին՝ իր բարի մտքերով, սուրբ խոսքերով և լավ գործերով, այդպիսին մաքրագործում է իր էությունը»⁸:

Ջրադաշտական կրոնի գիտելիքներն անշուշտ եղել են Հայաստանում, դա պարզորոշ երևում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցից», Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» և Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկից: Պատահական չէ, որ 1881 թվականին Փարիզում լույս տեսած Ավեստայի քննա-

¹ Н.Эмин, Очерк религии и верований языческих армян, Москва, 1864, с. 64.

² Ղ.Ալիշան, Հին հաւատք հայուն կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910:

³ Հ.Գեղցեր, Հետազոտութիւն հայ դիցաբանութեան, Վենետիկ, 1897:

⁴ N.Adontz, Histoire arménienne, v. I, Paris, 1946, p. 391.

⁵ К.Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, с. 77-95.

⁶ Գր.Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956.

⁷ С.Еремян, К. вопросу об этногенезе армян (տե՛ս «Вопросы истории», Москва, 1952, № 7), с. 105.

⁸ Avesta, livre sacré du zoroastrisme, Paris, 1881, p. 51.

կան բնագրի հեղինակը՝ պրոֆ. Հառլեն, իր առաջաբանում բացառիկ կարևոր է համարում հայ երկու պատմիչների՝ Մ.Խորենացու և Եղիշեի հաղորդած փաստերը զրադաշտական կրոնի վերաբերյալ, որոնք այլուր պարզապես չկան:

Մահեներն էլ բերում են ուշագրավ փաստեր Եղիշեի պատմությունից, որոնց մեջ երևում են զրադաշտության մեջ ընդունված խոստովանության բանաձևերը:⁹

Գրքի հեղինակները խոսում են նաև մանիքեական ծեսերին հայերի ծանոթության մասին. «Այս վկայությունները թույլ են տալիս կարծել, որ մինչև Մասանյան հարստության տիրակալության վերջը հայերը ճանաչել են մեղքերի խոստովանության զրադաշտական և մանիքեական ծեսերը»¹⁰:

Խոսելով հեթանոսական շրջանի հայ աստվածների ծագումնաբանության մասին՝ Մ.Էմինը եզրակացնում է, թե պարսիկների ու հայերի հնագույն կրոններն ունեցել են մի ընդհանուր վաղնջական սկզբնաղբյուր:¹¹ Բացի ընդհանուր սկզբնաղբյուր ունենալուց ու որոշ հերձվածների հետ ունեցած կապերից, մի շարք գիտնականներ համոզված պնդում են, թե Աստվածաշնչի Հին կտակարանը և Ավեստան ունեն ասշեցուցիչ ընդհանրություններ:¹²

⁹ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոցի զերբերգութեան» երկը, Երևան, 2004, էջ 203-204:

¹⁰ Նույն տեղում, էջ 205:

¹¹ Н.Эмин, Очерк религии и верований языческих армян, с. 64.

¹² Հ.Մատիկյան, Կրոնի ծագումը և դիցաբանությունն ըստ համեմատական կրոնագիտության, Վիեննա, 1920, էջ 155: Հ.Ալոճյան, Կրակապաշտությունը ընդհանուր ազգաց և հայոց մեջ (տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1910, էջ 13-21):

Ավեստագիտության մեջ ընդունված է, որ իրանական զրադաշտականությունը նախքան քրիստոնեությունը իշխող է եղել ողջ Արևմտյան Ասիայում, և այդ դավանանքի կրող պետություններն էին Պոնտոսը, Հայաստանն ու պարթևների երկիրը:¹³

Ինչպես իրավագիտորեն նշում են Մահեները, զրադաշտականության հետ սերտորեն կապված է եղել մանիքեականության ուսմունքը: Մանիքեականության բացատրությունը շատ հստակ տրված է „The religion of Zarathushtra” («Զրադաշտի կրոնը») գրքում: Մանին ազգությամբ պարսիկ էր և ծնվել է մոտավորապես 216 թվականին: Տասներկու տարեկանում նրան տեսիլ է եկել, թե գալու է նոր մարգարե: Եվ Մանին ստեղծում է իր կրոնը, որի մեջ իր օրերի Արևմուտքի ու Արևելքի որոշ կրոնական պատկերացումներ գումարվում են:¹⁴ Նա զրադաշտությունից վերցրել էր պայքարը հոգու և մատերիայի միջև, որը հիմնական բացատրությունն է չարի ու բարու խնդիրը լուծելու համար: Բուդդայականությունից վերցրել է կարևոր դասերը ամեն մարդու համար, Հիսուսից՝ իրական կյանքի հաստատումը: Նա իր ուսմունքի մեջ ներառել էր հինդուիզմի վարդապետությունից և մինչ իր օրերը հասած բաբելոնյան հավատքի տարրերը: Նրա խրատներում կարելի է տեսնել նաև գնոստիցիզմի և նոր-ալատոնականության ուժեղ խառնուրդ: Նոր ուսմունքի այս էկլեկտիկ բնույթը հեշտացրել էր, որ տարբեր դավանանքի հետևորդներ դառնային նրա դավանողները: Այդ է պատճառը, որ այն ընդունելի էր անգամ Պարսկաստանի արքա Շապուհ Առաջինի համար:¹⁵

¹³ I. J. S. Taraporewala, The religion of Zarathushtra, Tehran, 1980, p. 67 („At one epoch we find three great Iranian (Zoroastrian) powers dominating the whole of Western Asia. These were Pontus, Armenia and Parthia”).

¹⁴ Նույն տեղում, p. 163.

¹⁵ Նույն տեղում, p. 163-164.

Մահեները գրում են. «Ինչպես քրիստոնյայի, այնպես էլ մազդեզականի ապաշխարանքը ծնվում է հնարավոր փրկության որոնումներից՝ վերջին դատաստանից և մահվանից հետո»¹⁶: Ջրադաշտական կրոնին վերաբերող «Արտա Վիրապ նամակ» գրքում առկա է մարդու մահից հետո հոգու անցնելը Չինվաթ կամրջով. եթե հոգին մեղավոր է, մազի բարակություն ունեցող կամրջով չի անցնում, իսկ եթե արդար է, ապա կամուրջը լայնանում է, և նա անցնում է ու գնում դեպի հավերժական լույսը. «Ապա Չինվաթ կամուրջը նորից լայնացավ 9 նիզակի չափ: Մրոշ առաքինու և Ատր յազատի հովանավորությամբ ես դյուրությամբ, հաջողությամբ, քաջաբար և հաղթական կերպով անցա Չինվաթ կամրջի վրայով: Ես ունեցա ուժեղ հովանավորություն Միթր յազատից, Ռաշն արդարից, Վայու վեհից, Վահրամ հզոր յազատից, աշխարհ առաջացնող Աշտատ յազատից և վեհ մազդեյասնների կրոնի փառքից և պարկեշտ ֆրավաշիները և այլ ոգիներ ողջունեցին ինձ՝ Արտա Վիրապիս, ապա ես՝ Արտա Վիրապս, տեսա Ռաշն արդարին, որ դեղին ոսկե կշիռը ձեռքում ուներ և կշռում էր արդարներին և մեղավորներին»¹⁷:

Մահեների գրքում մատնացույց են արվում ապաշխարանքի դրսևորումներ, որոնք նույնն են թե մազդեզական կրոնում և թե Գր.Նարեկացու մատյանում:

Հին ավանդույթների հետքերն այնքան ամուր էին նստած հայերի հիշողության մեջ, որ XVIII դարի աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովան էլ ժողովրդական ձևով վախենում է վերջին դատաստանից, երբ գրում է.

¹⁶ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը, էջ 207:

¹⁷ Արտա Վիրապ նամակ, Յուշտի Ֆրիան, Երևան, 1958, էջ 51:

Դե վուր կոսին էս աշխարհս ունայն է,
Էնդու համա սոյբաթ սազից վախում իմ,
Բլբուլըն վուր թռչե գնա իր բունը,
Դարդակ թողած էն դափազից վախում իմ:¹⁸

Ինչպես նկատում են գրքի հեղինակները, հեթանոսական հմայիլներն անցան քրիստոնեական ժամանակներին և ստացան քրիստոնեական բովանդակություն: Մահեներն օգտագործում են 1986 թվականին Վենետիկում հրատարակված Ֆրեդերիկ Ֆեյդիի «Քրիստոնեական Հայաստանի ամուլետները» գիրքը:¹⁹

Ուշագրավ է, որ այդ հմայիլներում կան Գրիգոր Նարեկացու մատյանի առանձին հատվածներ. «Ֆեյդին բացատրում է, թե հայ եկեղեցու կողմից երկու սրբացված բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու ու Ներսես Շնորհալու աղոթքները մտել են ծիսական հմայական գրականության մեջ»²⁰:

Մահեների մոտ հետաքրքիր է այն բացատրությունը, որ տրված է «Մատեան ողբերգութեան» երկի ԾԶ գլխին:

Մատյանի այս հատվածը համամարդկային ու վերժամանակյա բանաձևումներ ունի: Մահեները մատնացույց են անում հատվածի միջնադարյան ընկալումը. «Իր հերթին, բայց առավել անհատական ձևով, Գրիգորը տարբերակում է դնում գլխավոր մահացու մեղքերի և դրանց մասերի միջև»²¹:

¹⁸ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, աղբրեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ.Հասարայան, Երևան, 1963, էջ 161:

¹⁹ St' u F.Feydit, Amulettes d'Arménie chrétienne, Venice, 1986.

²⁰ Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 65:

²¹ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, էջ 216:

Մանիքեական խոստովանությունների հետ է համեմատվում ԾԶ գլխի այն հատվածը, որում դատապարտվում են մարմնի այլևայլ մասեր.

Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախաւս,
Ակնս յայրատատես, ականջս վրիպալուր,
Ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ,
Ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ...
Գոյութիւն լերդի վիմական...

(ԾԶ, Ա)

Մեղքի գիտակցումը օգնում է անհատին մնալու աստվածային պատվիրանների շրջանակներում և ապրել հրաշքի օրենքներով: Հասարակությունը անհատներից բաղկացած մեծ խումբն է, և եթե բոլոր անհատները հետևում են աստվածային պատվիրաններին, ապա հասարակությունը կմնա աստվածահաճո կարգ ու կանոնի մեջ: Բոլոր կրոնական ուսմունքները անհատից բացի ուղղված են հասարակությանը և իրական կյանքը կանոնավորելու նպատակ ունեն: Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ԾԶ գլխում կան բանաձևումներ, որոնք մարդու համար միշտ արդիական են, և դրանց խախտումն, իրոք, մարդուն հեռացնում է քրիստոնեական կրոնի պատվիրաններից: Ահա մի քանի օրինակներ: «Աւանդ վաճառեալը» նշանակում է մարդու հեռացումը նախ կրոնի ավանդներից, նաև ազգի և ընտանիքի: Սա մահացու մեղք է: «Մարտիկ անպատրաստը» մեծագույն աղետ է, երբ մարդը չի կարողանում պաշտպանել իր խղճի ազատությունը, միաժամանակ չի կարողանում պաշտպանել սեփական տունը, հայրենիքը: «Քահանա անկնդրուկը» շատ է հիշեցնում Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» այն հատվածները, որոնք ներկայացնում են հոգևոր դասի երբեմն աղաղակող թերությունները: Հենց այդ

թերություններն է թվարկում Ներսես Շնորհալիի իր «Թուղթ ընդ-
հանրական» գործում, ուր նշում է, թե որոշ քահանաներ «հասա-
րակ զգեստներով և աղտոտ տրեխներով» բարձրանում են եկե-
ղեցու սուրբ բեմ և ժամասացություն կատարում:²²

Մարդկային խոստովանության այն տեսակը, որը վերա-
բերում է անհատի կատարած մեղքին, հասարակական արժեք
ունի: Եթե մարդը խոստովանում է իր մեղքը՝ գիտակցելով իր կա-
տարած հանցանքը, ապա երկրորդ անգամ երբեք չի կրկնի, իսկ
եթե այդ խոստովանությունը չի բխում ներքին համոզվածություն-
նից, ապա դա ըստ էության խոստովանություն էլ չէ:

Քրիստոնեական կրոնը պահանջում է սեփական անձի ճա-
նաչում: Այս երևույթի դրսևորումն առկա է նաև Գրիգոր Նարե-
կացու «Մատեան ողբերգութեան» երկի տարբեր հատվածներում:

Գրքի հեղինակները Գրիգոր Նարեկացու երկում տեսնում
են սեփական անձի կենսագրական որոշ փաստեր, որոնք նրան
կապում են իրական կյանքի հետ: Այդ փաստերը կան ՕՍ գլխում.

Եւ արդ, առ երկրածի՞ն՝ ոք պաղատեցայց այրս
մահացու ամենապատիր,

Եւ ընդունայն է աղաղակելն,

Առ մահկանացո՞ւ բանական,

Եւ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն,

Առ մա՞րդ ոք եղծական,

Եթէ ընդ տկարութեան բանին եւ նանիր է զարութիւնն,

Առ իշխա՞նս երկրաւոր գահից,

Եթէ անցաւոր է ընդ ինքեանս եւ իւրեանցն բարութիւն,

Առ եղբա՞յր ոք հարազատ,

²² Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդէս, 1991, էջ 82:

Եթէ կարաւտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն,
Առ հա՞յրն իմ երկրաւոր,
Եթէ պակասեալ են ինամականքն
ընդ աւուրց նուագութեանն,
Առ մա՞յրն իմ, որ երկնեաց,
Եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն,
Առ թագաւորութի՞ւնս աշխարհի արդեաւք,
Որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն,
քան զկենսագործելն...
(ՕՍ, Ա)

Մահէների կարծիքով Գր.Նարեկացու ինքնակենսագրական ակնարկները մնում են հետազոտողների գուշակության ոլորտում:

Գրիգոր Նարեկացու նորարարություններից մեկն էլ այն է, որ «Նա համընդհանուր խոստովանության ձևերը փոխարինել է անհատական ապաշխարանքի տիպական մոդելներով»²³:

Գոյի խնդիրները, կյանքի և մահվան, հոգու և մարմնի պրոբլեմները կան աշխարհի հայտնի չորս կրոնական ուսմունքներում, որոնք բոլորն էլ ունեն սրբազան գրքեր: Հենց այդ պատճառով էլ հաճախ մասնագետները կատարում են համեմատական ուսումնասիրություններ՝ կողք կողքի դնելով տարբեր կրոնական վարդապետությունները: Այդ երևույթն է քննում հենց Էփիֆանիուս Վիլսոնը իր „Sacred Books of the East”²⁴ գրքում՝ բաղդատելով վեդայական հիմները, Ավեստան, Ղուրանը և Բուդդայի կյանքն ու

²³ Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոցի գրքերգութեան» երկը, էջ 219:

²⁴ St' u Sacred Books of the East, with critical and biographical sketches by Epiphanius Wilson, New Delhi, 1987.

ուսմունքը: Է.Վիլսոնը Ավեստայի բնագրին կցված առաջաբանում հիշեցնում է, թե զրադաշտական կրոնի Յիման (Yima) պարսիկների Նոյն է, իսկ Զրադաշտը նման է Հին կտակարանի Մովսեսին, որը խոսում է Աստծու հետ:²⁵

Աննի և Ժան-Պիեռ Մահենների՝ Գրիգոր Նարեկացու գլուխգործոցի մեկնաբանության մեջ տեսնում ենք միկրոկոսմի և մակրոկոսմի փոխկապերը, որոնք մշտապես հուզել են մարդուն բոլոր ժամանակներում և առկա են զարգացած քաղաքակրթություն արտացոլող կրոնական ուսմունքներում:

²⁵ Նոյն տեղում, էջ 53:

**զ) ԱՆՆԻ ԵՎ ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆԵՐԻ «ՄԱՏԵԱՆ
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ՝
ՈՐՈՒԵՍ ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՈՍՔ**

2012-ին «Նաիրի» հրատարակչությունը լույս աշխարհ բերեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ֆրանսերեն նոր թարգմանությունը Աննի և Ժան-Պիեռ Մահեների թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: [2]

Մահեները երկար տարիներ զբաղվել են Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությամբ: Նրանց նարեկագիտական հետազոտական աշխատանքի ամփոփումը դարձավ 2000-ին լույս տեսած «Գրիգոր Նարեկացին և նրա «Մատեան ողբերգութեան» երկը ծավալուն աշխատությունը, որը 2004-ին թարգմանվեց հայերեն: [8]

2012-ին Երևանում լույս տեսած «Մատեան ողբերգութեան» երկը ներածությունից բացի ունի խիստ համառոտ նախաբան, որը փաստահարուստ է: Երևանյան հրատարակչության հիմքում ընկած է Լուվենում Մահեների թարգմանած «Մատեան ողբերգութեան» երկի ֆրանսերեն բնագիրը, որը լույս է տեսել գրպանի գիրք փոքր ծավալով (en format de poche). Նրա ծանոթագրությունները ներկա հրատարակչության մեջ համառոտվել են, բանասիրական և նեղ մասնագիտական դիտարկումները՝ հանվել: Ամբողջովին պահպանվել է Գր. Նարեկացու երկի բնագիրը, որը թարգմանված է ըստ 1985-ին Երևանում լույս տեսած «Մատեանի» քննական բնագրի, որը կազմել էին Պողոս Խաչատրյանն ու Արշալույս Ղազինյանը: [1] Մատյանի 34, 75, 92 և 95 գլուխները բաժանվել են ըստ Բուենո Այրեսում 1948-ին լույս տեսած Գարեգին Տրապիզոնեցու հրատարակչության:

Հատուկ ուշադրություն է դարձվել պոեմի կառուցվածքին, պահպանվել է Գրիգոր Նարեկացու երկի գլուխների համառոտ վերնագիրը՝ «Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ»:

Գրիգոր Նարեկացու «Մատենաի» մասին շատերն են գրել: Այժմ առկա է հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության գիտական մատենագիտությունը: [3] Սակայն այն, ինչ գրում են Մահեները, թե այս առաջաբանում և թե իրենց հատուկ հետազոտության մեջ, լիովին տարբեր մոտեցումներ ու գնահատականներ է ներկայացնում: Ըստ նրանց՝ սա մի նյարդայնացնող, միաժամանակ մարդուն արթուն պահող գիրք է՝ գրված 1002 թվականին, մենակյաց վանականի ձեռքով, որը խոստովանում է ողջ մարդկության սարսափելի մեղքերը: Խոստովանելով այդքան առատ ու անհավանական մեղքերը՝ նա իր գրքով հիշեցնում է Հիերոնիմոս Բոսիի պատկերած մղձավանջները:

Քրիստոնեական աշխարհը երկրորդ հազարամյակի սկզբում սպասում էր Աստծու դատաստանին: Սա ձայնն է մարդկության մեծագույն միսիթարիչի, ինչպիսին էին Բուդդան և Ֆրանսուա Ասիզը, և Նարեկացու գիրքը առ այսօր եզակի տեղ ունի հայ գրականության մեջ: Ոչ մի պոեմ հայ գրականության մեջ մտքի այդ թափը չունի, և քնարականությունը երբեք դեռ չի գտել այդպիսի անհատական դրսևորում:

Հայ մատենագրությունը միաբան ճանաչում է այս պոեմի եզակիությունը: Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է Նարեկա վանքում, և հայերը «Մատենաը» կոչել են նաև «Նարեկ», որն անմիջապես կապվում է հեղինակի անվան հետ.

Սոյն գիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեացէ
Տարածեացէ զծածկեալսն, հոչակեացէ զգաղտնիսն,
Կականեացէ զկատարածն, հնչեացէ զմոռացեալսն,

Յայտնեսցե՛ք զաներեւոյթան, բարբառեսցե՛ք զբարուրսն...

[10-88-3]

Հազար տարուց ավելի է, ինչ Գրիգոր Նարեկացու գիրքն ուղեկցում է հայերին՝ նրանց կյանքի ամենատարբեր հանգամանքներում: Այն հավասարեցված է Ավետարանին, այն կարդում են հիվանդների համար, վերցնում հեռավոր ճանապարհորդությունների ժամանակ, գրքի որոշ հատվածներ դարձել են հմայիլների խոսքեր: Ժան-Պիեռ Մահեն անշուշտ ծանոթ է իր ուսուցչի՝ Ֆրեդերիկ Ֆեյդիի «Հայաստանի քրիստոնեական հմայիլները» աշխատությանը, որում բազում փաստեր կան, որոնք վկայում են Նարեկացու «Մատենի» հատվածների հմայիլների վերածվելը: [4-65]

Ըստ Մահենների՝ Աստվածաշնչից բացի հայերի մոտ ոչ մի գիրք նման տարածում չի ունեցել: Այս պոեմի եզակիությունը նրան արտոնություն է տվել դառնալ վերժամանակյա [2-5]: Ամեն ժամանակահատվածում այն կարող է ունենալ իր դարի մարդու բացատրությունը: Դիմելով աշխարհի անհաշվելի քրիստոնյաներին՝ նա խոստովանում է մարդու բոլոր մեղքերը՝ Ադամից մինչև նրա վերջին ժառանգները, որովհետև բոլոր մարդիկ՝ մեռած կամ կենդանի, Աստծու հայացքի տակ են: Միաժամանակ, երբ Գրիգորը իր վերժամանակյա խոստովանություններն էր անում, նա իր գրքի վերջում՝ հիշատակարանում, դնում է «Մատյանը» գրելու ճշգրիտ թվականը, հանգամանքները և խոսում քաղաքական վիճակի մասին: Բյուզանդիայում կայսր էր մեծ Վասիլը, Հայաստանը խաղաղության մեջ էր, սակայն հայոց եկեղեցուն անհանգստացնում էին աղանդավորները,՝ ահա այս ժամանակ «Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականն իր եղբոր՝ Հովհաննեսի գործակցութեամբ ավարտել է «Մատյանը»:

Առաջաբանում առանձին անդրադարձ կա Նարեկյան դպրոցի՝ Գրիգոր Նարեկացու կյանքում ունեցած դերին: 2005-ին Փարիզում լույս տեսած «Հայաստանը դարերի փորձությունների մեջ» գրքում Մահեները խոսել են Մեծ Հայքի Բագրատունիների և Վասպուրականի Արծրունի թագավորների ու վերջինների կառուցած Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու մասին: [9-64-65] Այս հատվածում հաղորդվում է, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է 945-ին, հայրը Խոսրով Անձևացին էր, ուներ երկու եղբայրներ. ավագը՝ Սահակը, միջնեկը՝ Հովհաննեսը, նա իր մորը կորցրել է շատ վաղ: Այդ մասին նա խոստովանում է «Մատեանի» 51-րդ դրվագում.

Առ մա՞յրն իմ, որ երկնեաց,
Եթե կասեցան գթութիւնքն ընդ նահանջել
կենդանութեանն: [10-308]

Նրա հայրը՝ Խոսրով Անձևացին, կնոջ մահից հետո դառնում է եպիսկոպոս՝ լինելով ժառանգական իշխան: Նարեկացիագետ Հրաչյա Թամրազյանը Գրիգոր Նարեկացու ծնունդը դնում է 947-949 թվականների միջակայքում՝ հետևելով Մ.Աբեղյանին և Պ.Խաչատրյանին: [5-10]

Թոնդրակյան աղանդը ևս քննության է ենթարկվում այս առաջաբանում: Հովհաննես Դ. Օվայեցու ժամանակ (833-855) Ծաղկոտն գավառի Ջարեհավան գյուղից Սմբատը դառնում է հիմնադիրը թոնդրակյան շարժման: Սմբատ Ջարեհավանցին Հիսուսին մարդայնացնում է, մերժում է եկեղեցու սրբությունները, եկեղեցու կողմից օրհնված ամուսնությունը, հրաժարվում է կիրակին ճանաչել որպես հատուկ օր, չի ընդունում խաչի առաջ խոնարհումը: Թոնդրակեցիները բոլորովին նպատակ չունեին վերափոխել եկեղեցու կառավարումը, նրանք կամենում էին եկեղեցին լրիվ արմատախիլ անել:

Գրիգոր Նարեկացին ունեցել է երկու ուսուցիչներ՝ Խոսրով Անձևացին՝ իր հայրը, և Անանիան՝ Նարեկա վանքի վանահայրն ու Նարեկա դպրոցի գլխավորը: Ե՛վ հայրը, և՛ Անանիա Նարեկացին ունեին աստվածաբանական, փիլիսոփայական գործեր: Անանիա Նարեկացու խրատներն իսկական հոգևոր վարժանքներ են, որոնք պահանջում են եռանդուն մրցակցություն առ Հիսուսն ունեցած շարունակական խոկման ժամանակ: Նարեկա վանքի վարդապետները զուգահեռաբար իրենց աստվածաբանական հետազոտություններով նպաստում էին աղանդավորների դեմ պայքարելուն: Անանիա Նարեկացին «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցոց» երկով [6-41] թվում է, թե վերջ էր դրել այդ աղանդի մերկացմանը, սակայն Կճավա վանքի Մուշեղ անունով ոմն գիտնական շարունակում էր պաշտպանել թոնդրակեցիներին [2-10]:

Տեղին է այս հարցի առիթով հիշել նարեկացիագետ Պողոս Խաչատրյանի հետևյալ նկատումը. «Նարեկացին աններելի է համարում կճավացիների ներողամիտ, հանդուրժողական և, նույնիսկ, համակրական վերաբերմունքը թողնդրակեցիների նկատմամբ, քանի որ աղանդավորների մասին հայտարարել են, թե «չեն նոքա աստար յառաքելաւանդ դաւանութենէ», նույնիսկ ցանկացել են վիճակակից դառնալ նրանց («մեծաւ փափագանաւք հաւասարիլ մասին նոցա») և իրենց արյունը խառնել այն կոտորվածների արյանը, որոնք խողխողվել են Ալլվարդ ամիրայի սրից»: [7-99-100]

Առաջաբանում Մահեները խոսում են 977-ին Նարեկացու գրած «Երգ երգոցի» մեկնության մասին, որի պատվիրատուն Արծրունյաց թագավոր Գուրգեն Արծրունին էր: Այդ մեկնության մեջ հարսը՝ եկեղեցին, կատարելագործվում է փեսայի՝ Հիսուսի խոսքով: Իր ուսուցչի՝ Անանիայի պատվերով է Նարեկացին գրել տա-

ղերը, գանձերը, մեղեդիները, որոնք երգվել են եկեղեցական արարողությունների ժամանակ: Նարեկացին գրել է նաև ներբողյաններ, որոնցից նշանավորագույնը «Պատմութիւն Ապարանից խաչին» գործն է [11-913], իսկ «Հազար թվականի շեմին պատմական բազում հանգամանքները նրան շտապեցնում են շարադրել իր ամենանշանավոր երկը՝ «Մատեան ողբերգութեանը», որում հավաքում է ողջ կյանքի խոհերն ու մտածումները: [2-11]

Մահէները համառոտ ներկայացնում են, որ Նարեկացու կյանքը հենց «Մատեանի» մեջ առկա է: Բյուզանդական կայսրության ծայրամասերում հայերն ու հույները շարունակում էին խորանալ աստվածաբանական վեճերի մեջ: Թոնդրակյան աղանդավորական շարժումն անհանգստացնում էր ոչ միայն Հայոց եկեղեցուն, այլև Բյուզանդական կայսրությանը: 1000 թվականին Բյուզանդիայի կայսր Վասիլ Երկրորդը (957-1025, Մակեդոնյան հայկական հարստությունից) ձմեռն անցկացնում է Տարսոնում, երբ լսում է ժամանակին իր դեմ ապստամբած Դավիթ Կյուրապաղատի հանկարծակի մահվան մասին: Կայսրն անմիջապես իր մեծ բանակով անցնում է Մելիտինեն, վերցնում Հարք գավառը, հասնում մինչև Տայք և վերադառնում Կոստանդնուպոլիս: Իր արշավանքի ընթացքում Հարքում կամ Մանազկերտում հանդիպում է թոնդրակեցիներին, որոնք եկեղեցու թշնամիներն էին: [2-12]

«Մատեան ողբերգութեան» պոեմի երկու գլուխներում՝ 34 և 75, փառաբանվում են եկեղեցին և քրիստոնեությունը, ու մատնացույց արվում աղանդավորների սխալները: Մահէները շեշտում են, որ առաջին անգամ Նարեկացին ընթերցող հասարակությանն է ներկայացնում իր գործերը ոչ թե արքայի պատվերին կամ որևէ եպիսկոպոսին ի պատասխան, այլ սեփական նախաձեռնությամբ: Մատյանի որոշ հատվածներ ներկայացնում են բանաստեղծի

ամենօրյա մտածումները, սակայն, անկասկած կան մտքեր, որոնք նա չի պահպանել իր գրքում: Աստծու և մարդու երկխոսությունն առկա է նաև սուրբգրության մեջ:

Նկատենք, որ զրադաշտական կրոնի սրբագան մատյանի՝ Ավեստայի բազմաթիվ էջերում Զրադաշտը հարց է տալիս Ահուրա Մազդային, և վերջինս պատասխանում է: Նույնը տեսնում ենք նաև XI դարի բյուզանդական նշանավոր միստիկ Միմեոն Աստվածաբանի հիմներում:

Գրիգորն իր խոսքում ընտրում է մարգարեների սաղմոսների ապաշխարական ձևը: Երբեմն Աստծուն ուղղած նրա խոսքերը ստանում են անձնական խոստովանության ձևեր:

«Բանաստեղծը և Աստվածաշունչ» բաժնում մատնացույց են արվում քրիստոնյաների սուրբ գրքերի հետ ունեցած մատյանի աղերսները: Նարեկացին յուրացրել է Հին կտակարանում Սողոմոն իմաստունին վերագրված գրքերը. [2-15]

Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ,
Քանզի ոչ այլ ոք բազմամեղ, որքան գնա ինձ գուգաշաւիդ:
[10-283]

Մատյանի 61-62 գլուխներն ուղղակի գալիս են աստվածաշնչային սաղմոսներից: Նարեկացու մոտ ուժեղ է այլաբանությունը: Գրիգորի մտածումները ներթափանցվում են մարդու ներքին աշխարհը: Մեծագույն տարածություն է առաջանում մարդու և այլոց միջև: Ճշմարտությունը մարդուն մատնացույց է անում, թե ինչպես բարձրանալ այդ անդունդից:

Հետաքրքիր է նաև առաջաբանի «Աստվածաշնչային պատկերներ և չգիտակցված նախատիպեր» բաժինը: Բանաստեղծը գրում է.

Զի՞նչ արինակ առ այս Քեզ նմանագոյն ևս յարմարական
Աստանար եղից, ա՛նձն իմ պարտաւոր:
Պատժակիցս կործանեցելոյն Սողոմայ,
Ըմբերանեալ դատախազս Նինուէի,
Անարի բարբարոս, քան գոհիկինն հարաւային,
Վատթարագոյնս, քան զՔանան,
Յամառեցեալս, քան զԱմադէկ: [10-11]

Այս ինքնաձաղկման օրինակները հոգատար ձևով մեծանում են: Եվ նա խնդրում է Հիսուսին.

Եթէ անարեւութեան մրրիկ խորտակիչ հողմոյ
յանկարծ բախեցէ.
Զհաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս,
Հանդարտեցի՛ անդրէն՝ դեկաւ այս թեւոց ի
Քեզ պատկանեալ: [10-26]

Մարդկային մարմինը մի նավակ է, որը տարուբերվում է կենաց ծովում, իսկ Հիսուսը նավավարն է: Այս միտքն առկա է նաև Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականներում: Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7703 ձեռագրում միջնադարյան խորհրդանիշները բացատրող անանուն հեղինակն ունի նաև հետևյալ բացատրությունը. «Արեգակն՝ զՔրիստոս, ծով՝ զաշխարհս, նա՛ւ՝ զմարդկայնինս խորհուրդ, նաւուղղակ՝ զմիտս, նաւահանգիստ՝ զեկեղեցիս Աստուծոյ»: [12-108ա]

Նարեկացին արդիականացնում է աստվածաշնչային պատվիրանները:

Մահէները լիովին նորարար են, երբ խոսում են «Մատենի» աղոթքների ճարտարապետական ձևի մասին: Նրանք «Մատենը»

դիտում են որպես սիմֆոնիա, որում երաժշտությունը ուժգին քարձրանում է, իսկ երբեմն շատ ցածրանում:

Մահեների կարծիքով Գրիգոր Նարեկացին իր գրքով կառուցել է քրիստոնեական տաճար՝ սքանչելի կառույց: Ոճական մի դրվագ կարող է դառնալ ուղեցույց: Նարեկացու տաճարն ունի նույն պարզությունը, ինչպիսին որ է հայկական եկեղեցին՝ մի ձև, որը հաստատում է VIII դարի նկարագիրը: Եկեղեցին այլաբանորեն համեմատվում է Նոյի տապանի հետ: [2-26] Այն նույնն է, ինչպիսին եղել է տապանը՝ բաղկացած երեք խորշերից: Եկեղեցին էլ բաղկացած է երեք մասերից՝ գավիթ, տաճար և խորան: Ուլքեր մտան Նոյի տապանը՝ փրկվեցին, նույն կերպ, ուլքեր եկեղեցու ճշմարիտ հավատացյալներն են, կփրկվեն խեղդվելուց և սուզվելուց:

Մահեների առաջաբանն ավարտվում է մի անմոռաց եզրահանգմամբ, և վերջին բաժնի խորագիրն է՝ «Գրիգորը և իր գիրքը. մի անմահ ուսուցիչ և մի ննջեցյալ հավերժ կենդանի»:

Առաջաբանն ավարտվում է դիպուկ մի եզրահանգումով, ըստ որի Գրիգոր Նարեկացին հավատացած է՝ իրենից հետո իր գիրքը հնչելու է անհամար բազմության շուրթերին՝ մինչև վերջին դատաստանը Աստծուն աղոթելով իր անունից: Ինչ վերաբերում է նրա հայրենակիցներին, ապա նրա ուխտը լիովին լսելի է: Հայերը չեն դարձել նրա գրաքննադատը, այլ նրանով ունեն կապ, որը հրահանգում է կորովամտություն, պայծառատեսություն, նա հոգևոր մի ուսուցիչ է, որը զորացնում է հայերին և նրանց առաջնորդում հասկանալու Ավետարանի ճշմարիտ շնորհը: «Նարեկը» իսկական գագաթ է, մի բանալի՝ թափանցելու հայերի ամենախիստիմ և ամենաեզակի հոգևորի մեջ:

Գրականություն

1. Գրիգոր Նարեկացի, Մատենանոցերգութեան, Աշխատասիրությանամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Հայկական ՄՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985
2. Grégoire de Narek, Matean ołbergut'ean, Le livre de Lamentation, Introduction, traduction et notes par Annie et Jean-Pierre Mahé, „Naïri" Erevan, 2012
3. Գրիգոր Նարեկացի Մատենագիտութիւն, Աշխատասիրությանամբ Աստղիկ Ղափլանյանի, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 1915
4. Դոլուխանյան Աելիտա, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008
5. Թամրազյան Հրաչյա, Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, 2005
6. Թամրազյան Հրաչյա, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, գիրք Ա, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, 2013
7. Խաչատրյան Պողոս, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996
8. Մահե Աննի և Ժան-Պիեռ, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոցերգութեան» երկը, Երևան, «Նաիրի», 2004
9. Mahé Annie et Jean-Pierre, L'Arménie à l'épreuve des siècles, Paris, Gallimard, 2005
10. Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենանոցերգութեան (Նարեկ), Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2016
11. Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, 2011
12. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 7703

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԺԱՆ-ՊԻԵՌԻ ՄԱՀԵԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**ա) ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԸ
ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՐՁ**

Հայ միջնադարյան մանրանկարներն ունեն բազմաթիվ գաղտնիքներ, և դրանք մեկնաբանում են հատուկ գիտական հմտություն ունեցող մասնագետներ: Այդ առումով մեծարժեք է Ասատուր Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» կոթողային աշխատությունը, որը, իրավամբ, կարող է ուղեցույց լինել հայ մանրանկարչության մեկնիչների համար:¹

Այսօրինակ մեկնողական բնույթ ունի Ժ.-Պ. Մահեի «Միրամարգն ու սկահը հայկական ավետարանների խորաններում» հոդվածը:

Սկահը կամ սկիհը եկեղեցիներում օգտագործվող արծաթյա անոթ է, որի մեջ գինի են լցնում՝ պատարագի ժամանակ նվիրագործելու համար:² Ահա հայկական ձեռագիր Ավետարաններում հաճախ են հանդիպում նախշագարդեր, որոնց կենտրոնում բաժակ սկիհն է, իսկ նրա երկու կողմերում նկարված են երկու սիրամարգեր: Ի՞նչ է դա նշանակում՝ բացատրում է Մահեն: Որպես օրի-

¹ Տե՛ս Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Երևան, 1965, 660 էջ:

² Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Զ-Ֆ, Երևան, 2010, էջ 230:

նակ բերվում է Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7736 Ավետարանը:

Հայկական մատենագրության մեջ սիրամարգը գովերգվում է իր գեղեցկության համար: Սիրամարգի մի պատկերի մասին Ա. Մնացականյանը գրում է. «№ 3393 ձեռագրի 2ա թերթի մուտքագարդում հանդիպում ենք կենաց հեղուկի անոթին՝ դիցաբանական ծագում ունեցող կնոջ գլխի վրա: Այդ կնոջ երկու ուսերից բուսել են պտղաբերության ճյուղերը, իսկ երկու կողմերից դեպի անոթն են մոտենում երկու սիրամարգ: Կինը՝ նախամոր գաղափարն ունի. նա է, որ իշխում է տոհմի աճման և զարգացման երևույթների վրա: Ուստի նա իր գլխին է պահում կենաց հեղուկը, որն այստեղ իմաստավորում է տոհմի զարգացման ուժերը: Այդ հեղուկին մոտեցած զույգ սիրամարգերը տոհմի զույգ ֆրատրիաների հուշերն են:³ Այստեղ էլ նախամայրը երևան է գալիս կենաց հեղուկ մատակարարի դերում»⁴:

Մահեն իր հողվածում հիշեցնում է, թե ինչ են ասել Փիլոն Երբայեցին, Եզնիկ Կողբացին, Մովսես Խորենացին ու Անանիա Շիրակացին սիրամարգերի մասին: Նա նաև հիշեցնում է.

«Սիրամարգը խորհրդավոր նշանակություն ունի նաև Գրիգոր Նարեկացու «Տաղ եկեղեցւոյ»-ի մեջ: Բերում եմ համապատասխան հատվածը Վազգեն Գևորգյանի հրաշալի թարգմանությամբ.

Եվ Դավթի որդին՝ Սողոմոն արքան,
Քերթոդն այն վսեմ ու շքեղաշուք,
Զարդարեց այն պերճ, վայելուչ փառքով.

³ Ֆրատրիա – ցեղի ստորաբաժանում՝ մի քանի արյունակից տոհմերից կազմված: Տե՛ս Ա. Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977, էջ 1328:

⁴ Ա. Շ. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, էջ 489:

Խորանին խիտ-խիտ ականապաճույճ
պասկներ կապեց,
Կանգնեցրեց այնտեղ և վիմարձաններ
Աղավանման յոթնաչիներով,
Շքեղաբարո, գեղանագաճեմ, սիզաքայլ թռչուն,
Միրամարգ, որը ասում էր կարծես.
«Այն ո՞վ է պարզել վեհասքանչորեն պարանոցն իր օդ,-
Ես, որ եկել եմ ինձ արարողի,
Ինձ ուղարկողի կողմից և ահա
Գնում եմ հեռո՛ւ, գնում եմ հեռո՛ւ,
Փայլելով պայծառ արփիանման ճաճանչումներով
Ու ծիրանեծիր տեսքով վառվռուն»⁵:

Միրամարգը մարմնավորում է եկեղեցու ավետարանական քարոզությունը.⁶ Ավետարանը անմահության գիրքն է, և սիրամարգը խորհրդանշում է անմահությունը ու հենց այդ իմաստով էլ պատկերված է Ավետարանի խորաններում:

Խորհրդանիշները բացատրող հանրագիտարանում այս թեմայի հետ կապված կարդում ենք. «Քրիստոնեության մեջ սիրամարգի փետուրների վրա եղած «աչքերը» երբեմն խորհրդանշում են «ամենատես» եկեղեցին: ...սիրամարգը դարձել է անմահության խորհրդանիշ»⁷:

Մահեն քննվող խնդրի առիթով կարևոր մեջբերում է կատարում Հերմես Եռամեծին վերագրվող մի ճառից. «Ինչո՞ւ, ով հայր,- Հերմեսին հարցնում է աշակերտը,- Աստված միտքը չբաշխեց

⁵ Ժ.-Պ. Մահե, Միրամարգն ու սկիհը հայկական ավետարանների խորաններում: Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1, Երևան, 1986, էջ 107:

⁶ Նույն տեղում:

⁷ Энциклопедия символов, Москва, Санкт-Петербург, 2005, с. 829.

բոլոր մարդկանց մեջ»: Եռամեծը պատասխանում է. «Բանն այն է, որդյակ, որ Աստված ուզեց, որ միտքն ընծայվի ոգիներին, որպես մրցանակ: Աստված միտքը լցրեց մեծ խառնարանի մեջ և ուղարկեց երկիր, հետն առաքելով մի մունետիկ, որը պետք է քարոզեր մարդկանց սրտերում, թե «Մկրտվի՛ր, եթե այդ կարողությունը ունես՝ ահա այն խառնարանի մեջ. հավատացողը կվերամբառնա խառնարանն ուղարկողի մոտ, իմացող՝ թե ինչ նպատակով ես ծնվել»: Արդ, ովքեր ուշադրություն դարձրին մունետիկի քարոզությանը և մկրտվեցին մտքի մկրտությամբ, դրանք հասկացողություն ստացան և դարձան կատարյալ մարդիկ»: Բայց կատարյալ մարդ դառնալ նշանակում է «այն փառավոր վարքն ընտրել, որի միջոցով մարդն անմահանում է»⁸:

Ըստ Մահեի՝ սիրամարգի խորհրդանիշը նախաքրիստոնեական ծագում ունի, հետո այն անցել է քրիստոնեությանը: Քրիստոնեական կրոնում «Ավետարանն ուրիշ ոչինչ չէ, բայց աստվածային միտք, անմահացնող աստվածային խոսք: Հետևաբար, ովքեր այդ մտքից կխմեն, սիրամարգերի նման կանմահանան»⁹:

⁸ «Պատմա-բանասիրական հանդես», 1, 1986, էջ 110-111:

⁹ Նույն տեղում, էջ 111:

**բ) ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՄԱՅԻԼՆԵՐԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ**

Մահեի գիտական հոդվածների մեջ բավականին տեղ են գրադեցնում գրախոսությունները: Դրանցից մեկը նվիրված է իր սիրելի ուսուցչի վերջին կոթողային աշխատությանը՝ նվիրված հայկական հմայիլներին: Ֆեյդիի „Amulets de l’Arménie chrétienne” երկը լույս է տեսել 1986-ին Վենետիկում: Այս գրքի վրա Ֆեյդիի աշխատել է գիտական ողջ կյանքի ընթացքում՝ մոտ հիսուն տարի:¹

Հմայիլները նախաքրիստոնեական ծագում ունեն: Դրա մասին վկայություն կա Հովհան Մանդակունու «Թուղթ վասն հմայից դիւթականաց եւ անօրէն յուրթողաց» ճառում, որում գրողը խիստ քննադատում է կախարդական տարրեր ունեցող հմայիլներին հավատալը: Հետագայում հմայիլները այնքան են մտել հայ մարդու կենցաղի մեջ, որ նրանց տրվել է քրիստոնեական բովանդակություն: Կաթողիկոսը շարունակ վկայակոչելով Ավետարանը՝ զգուշացնում է, թե հավատացյալը պետք է հավատա Հիսուսի վարդապետությանը և ոչ կախարդական բժժանքներին, այլապես «Անիծեալ ամենայն մարդ, որ ոչ կացցէ ի գրեալսն ի գիրս»²:

Մահեն համոզված է, թե Մանդակունուն վերագրված այդ ճառը չի գրվել V դարում, այլ VI-VII դարերում, ու դրա հեղինակը Հովհան Մայրազունեցին է, որից մեզ է հասել «Խրատ վարուց» ժողովածուն:³

¹ Ա. Դուլխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագետ, Երևան, 2008, էջ 59:

² Հովհան Մանդակունի, Ճառք, երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1860, էջ 194:

³ Տե՛ս „Revue des Études Arméniennes, t. XXI, Paris, 1988-1989, p. 552.

Հմայիլներն այնքան են քրիստոնեական դարձել, որ նրանցում տեսնում ենք հայ միջնադարում սրբացված երկու մեծ բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու քերթվածները:⁴ Նրանցում հասկապես տեղ են գտել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկից առանձին գլուխների հատվածներ և Ներսես Շնորհալու հռչակավոր «Հաւատով խոստովանիմ...» աղոթքը, որը Մխիթարյան հայրերը թարգմանել են աշխարհի 30-ից ավելի լեզուներով՝ անգամ սանակրիտով:

Պակաս ուղղափառ բնագրերի կողքին հմայիլներում կարելի է գտնել անվավեր նյութերի հատվածներ, ինչպես հայոց Աբգար թագավորի նամակն՝ ուղղված Քրիստոսին:⁵

Հմայիլներում կան աղոթքներ ընդդեմ դևերին ու ալքերին՝ կապված Լիլիթի լեգենդի հետ:⁶

Մահեի կարծիքով թիվ 147 հմայիլը, Ստեփանոս Մալխասյանցի բացատրած այսահար բառի իմաստի հետ կապված է հրեական լեգենդի հետ, որն առկա է Լեհաստանի հրեաների մոտ: Վերջում Մահեն թվարկում է մի շարք վրիպակներ՝ փրկիչ և ոչ թե փկրիչ, գորել և ոչ թե կորել: Մակայն այսօրինակ սխալները չեն նսեմացնում գրքի արժեքը, որովհետև սեղանին է մի նոր վավերաթուղթ, որն ունի լեզվական, պատմական, ազգագրական և կրոնական հետաքրքրություն:⁷

⁴ Նույն տեղում, էջ 553:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 554:

գ) ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵԻ ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆՆԵՐԸ՝
ՆՎԻՐՎԱԾ ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻՆ,
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻՆ, ԲՅՈՒՋԱՆԴԱԳԵՏՆԵՐԻՆ

„Revue des Études Arméniennes” հանդեսում և այլուր, տարբեր տարիների հրատարակված, կան հայ և օտարերկրացի հայագետներին, արևելագետներին, բյուզանդագետներին նվիրված հրաժեշտի խոսքեր, որոնք աչքի են ընկնում ջերմությամբ և դեպի գիտության մարդն ունեցած խոր հարգանքով:

Այդ հայագետներից առաջինը Մահեի մեծ ուսուցիչ Ֆրեդերիկ Ֆեյդիին է, որին նվիրված՝ 1991-ի «Բազմավեպի» թիվ 3-4-ում լույս է տեսել ընդարձակ մահախոսական՝ „Hommage à Frédéric Feydit” (1908-1991) խորագրով:¹ Ժան-Պիեռ Մահեն նշում է. «Ֆրեդերիկ Ֆեյդիի գիտական գործը բաղկացած է վեց գրքերից և մի քառասնյակ հոդվածներից»²: Նա հատուկ շեշտում է, որ չնայած այդ գրքերն ու հոդվածներն ունեն տեսական բնույթ, սակայն նրանց գործնական ու կիրառական արժեքը չափազանց մեծ է: Մահեն խոստովանում է, թե 1972-1975 թվականներին Արևելյան լեզուների իր դասընթացի երեք տարիների ամենատպավորիչ պատգամը, որ մնացել է Ֆրեդերիկ Ֆեյդիից, այն անմնացորդ սերն է, որ հայագետն ուներ Հայաստանի, նրա լեզվի, նրա ժողովրդի, նրա բոլոր դարաշրջանների նկատմամբ:³

Անսահման հուզիչ է Սիրարփի Տեր-Ներսեսյանին նվիրվածը: Դրանից իմանում ենք, որ Ելիզավետա Ստանոնիչ Ալլենը „Women as Interpreters of the Visual Arts” (1820-1979) գրքում մեծ հոդված է

¹ Տե՛ս «Բազմավեպ», թիվ 3-4, Վենետիկ, 1991, էջ 514-521:

² Նույն տեղում, էջ 517:

³ Նույն տեղում, էջ 521:

նվիրել Միրարփի Ներսեսյանի կյանքին ու գործին՝ որպես հայկական ու բյուզանդական արվեստի գիտակի և ուսուցանողի:⁴ Միրարփի Տեր-Ներսեսյանը Հարվարդի համալսարանի պատվավոր պրոֆեսոր էր, Ֆրանսիայի ինստիտուտի թղթակից անդամ, ՀՍՍՌ ԳԱ արտասահմանյան անդամ, 1981-ից „Revue des Études Arméniennes” հանդեսի տնօրեն: Նա արդեն անհայտացած հայ արվեստի անգուգական պատմաբան էր և ուներ ողբերգական ճակատագիր: Ծնվել էր 1896-ի սեպտեմբերի 5-ին և շատ շուտ դարձել որբ ու մեծացել քեռու՝ նշանավոր պատմաբան և Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի մոտ, որի շրջապատում հանդիպել է իր ժամանակի նշանավոր արվեստագետներին ու գիտնականներին: Դրանց թվում են եղել Գարեգին Հովսեփյանն ու Կոմիտասը: Նրա կյանքի մի մեծ ժամանակահատված կապված է „Revue des Études Arméniennes” հանդեսի հետ: Ս. Տեր-Ներսեսյանի ողջ կյանքը նվիրված է եղել գիտությանը և ուսուցանելուն: Նույնիսկ իր սիրելի քրոջ երկարատև հիվանդության ժամանակ նա չի կորցրել դեպի գիտությունն ու ուսուցանումն ունեցած եռանդը: Որպես „Revue des Études Arméniennes” հանդեսի խմբագիր՝ ուշադիր կարդացել է բոլոր այն հոդվածները, որոնք նվիրված էին հայ արվեստին ու հայկական ձեռագրերին:

Ս. Տեր-Ներսեսյանը ձգտում էր հայկական ձեռագրերում եղած բարձր արվեստը հասանելի դարձնել աշխարհին: Կյանքի վերջին տարիներին աշխատում էր Կիլիկյան Հայաստանի մանրանկարների հետազոտման վրա: Երբ Ա. Ս. Մաթևոսյանը հրատարակել էր XIII դարի հայկական ձեռագրերի հիշատակարանները, նա հատուկ խնամք տարավ դրանք ներկայացնելու իր խմբագրած հանդեսում:

⁴ Տե՛ս „Revue des Études Arméniennes”, t. XXI, Paris, 1988-1989, p. 5.

Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշատակը հարգելու և նրա անձի ու կատարածի նկատմամբ ունեցած երախտագիտությունը ներկայացնելու համար „Revue des Études Arméniennes”-ի XXIII հատորը նվիրվելու էր նրան:⁵

Այնուհետև ներկայացվում են Սիրարփի Տեր-Ներսեսյանի վերջին տարիներին հրատարակած գրքերն ու հոդվածները: Տեղին է մեջբերել գրքերի ցուցակը՝

1. *Études Byzantines et Arméniennes – Byzantine and Armenian Studies*, 2 vols. (Bibl. de la Fondation Galouste Gulbenkian), Louvain, Imprimerie Orientaliste, 1973.

2. *L'art arménien au Moyen Age* (en arménien), Erévan, 1975.

3. *L'art arménien* (Flammarion: Orient et Occident), Paris, Arts et métiers Graphiques, 1977.

4. *Miniatures arméniennes d'Ispahan* (en collaboration avec A. Mekhitarian), Les Editeurs d'Art Associés, Bruxelles, 1986.

5. *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, XIIth to XIVth centuries* (sous presse).⁶

Նույնքան ջերմություն կա ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին նվիրված հրաժեշտի խոսքում („Académicien Levon S. Xačikyan”):⁷

Մահեն Լևոն Խաչիկյանի կյանքից հեռանալը ցավալի է համարում աշխարհի հայագետների համար: Խաչիկյանի անունը սերտորեն կապվում էր Մաշտոցի անվան Մատենադարանի հետ, որի տնօրենն է եղել քսանչորս տարի: Նրա շնորհիվ Մատենադարանը դարձել է նաև եզակի թանգարան, որն իր դռները բացել է ոչ միայն հայերի, այլև արտասահմանցիների համար: Նրա օրոք հրա-

⁵ Նույն տեղում, էջ 6:

⁶ Նույն տեղում, էջ 8:

⁷ „Revue des Études Arméniennes”, t. XVI, Paris, 1982, p. 7.

տարակվել են Մատենադարանի ձեռագրացուցակները, «Բանբեր Մատենադարանի» տեղեկագիրը և հատկապես միայն նրա աշխատասիրությամբ լույս տեսած XIV, XV դարերի ձեռագրերը հիշատակարանները ներկայացնող կոթողային հատորները:⁸

Նա նշում է նաև՝ Մատենադարանի տնօրենի պաշտոնը ստանձնել է Լևոն Խաչիկյանի երկարամյա բարեկամը՝ Սեն Արևշատյանը, միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի մասնագետը և հավատացած է, որ վերջինս հաջողությամբ կշարունակի Լևոն Խաչիկյանի գործը:⁹

Պատմաբան, արևելագետ, աղբյուրագետ Արամ Տեր-Ղևոնդյանին և հնագետ-պատմաբան, արևելագետ Գևորգ Տիրացյանին նվիրված հրաժեշտի խոսքերին կցված են վերջիններիս կենսամատենագիտությունները: Հիշատակի հոդվածներ են նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյանին և Արզար Հովհաննիսյանին, Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա փոխտնօրեն, բանասեր, աղբյուրագետ Բաբկեն Չուգասյանին և ուրիշների:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 8:

դ) ԴԵՎՈՆԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ՁԵՏԵՂՎԱԾ
ՕՄԱՐ ԽԱԼԻՖԱՅԻ ՈՒ ԲՅՈՒՋԱՆԴԻՄՅԻ ԿԱՅՄԸ
ԼԵՎՈՆ Գ-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

VIII դարի պատմիչ Ղևոնդի «Պատմությունը» եզակի աղբյուր է արաբական արշավանքների վերաբերյալ: Նրա գրքում է զետեղված պատմական հույժ կարևոր մի փաստաթուղթ՝ Օմար խալիֆայի (717-720) նամակն՝ ուղղված բյուզանդական կայսր Լևոն Գ-ին (717-741):

Նշանավոր արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը Ղևոնդի երկի աշխարհաբար թարգմանության հարուստ ծանոթագրություններում մանրամասն խոսում է այդ նամակագրության մասին, այլ պատմաբանների փաստերի հիման վրա ներկայացնելով այդ նամակագրության վավերականությունը. «Մակայն հետաքրքրականն այն է, որ Միսյեի հրատարակած «Հունական հայրաբանություն» շարքում Լևոն Զ կայսեր (886-912) աշխատությունների շարքում հիշվում է նրա մի լատիներեն նամակը... Օմար թագավորին: Սրա նյութը կրճատ է, բայց լրիվ համընկնում է Ղևոնդի մեջբերած նամակի հետ: Ըստ Ձեֆիրի՝ այստեղ կասկած չկա, որ Լևոն Գ-ն շփոթված է Լևոն Զ-ի հետ: Սա անժխտելիորեն ապացուցում է Ղևոնդի նամակների վավերականությունը»¹:

2015 թվականին Փարիզում Բեռնադետ Մարտենը հրատարակել է Օմարի և Լևոն Գ-ի նամակագրությունը՝ այդ նամակագրությունն անվանելով պատմական վիճաբանություն. „Lewond Vardapet, discours historique, traduit et commenté par Bernadette Martin-Hisard“: Բ. Մարտենի թարգմանությանը կցված է Ժան-

¹ Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 151:

Պիեռ Մահեի նույն ժամանակագրության թարգմանությունը Ալեքսան Հակոբյանի կազմած հայերեն բնագրից:²

Իր թարգմանությանը Մահեն կցել է նախաբան, որում հայտնում է, թե Ղևոնդի երկում եղած պատմական վիճաբանությունը գրված է հայերենով VIII դարի վերջին: Բեռնադետ Մարտենը 1980-ից 1982թթ. INALCO-ում դասախոսել է Ղևոնդի պատմությունը՝ որպես Հայաստանում արաբների տիրապետության ժամանակահատված: Մահեն ծանոթ էր Արամ Տեր-Ղևոնդյանի Ղևոնդի պատմության արդի հայերեն թարգմանությանը, ինչպես նաև 1982-ին Ֆիլադելֆիայում Ջավեն Արզումանյանի հրատարակած անգլերեն թարգմանությանը:

2007-ին Անթիլիասում լույս է տեսել Ղևոնդի երկի քննական բնագիրը, որը պատրաստել էր Գևորգ Տեր-Վարդանյանը. այն գերազանց էր 1887-ին Սանկտ Պետերբուրգում հրատարակվածից: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք հետազոտությունների բաժնի վարիչ Ալեքսան Հակոբյանը ներկայացրել է իր քննությունը, որն ինքը պատրաստել է 2007 թվականի քննական բնագրի լույս ընծայվելուց առաջ: Ալեքսան Հակոբյանի քննությանը Մահեն ավելացնում է իր դիտարկումները:

Ղևոնդը չի պատմում 789 թվականից հետո եղած իրադարձությունների մասին: Բեռնադետ Մարտենն ասում է, թե Ղևոնդի VIII դարի երկրորդ կեսի դեպքերի նկարագրերը հաղորդում են եզակի ու նոր տեղեկություններ, որոնք համեմատ են բյուզանդական ու արաբական աղբյուրների հաղորդածին:

² Lewond Vardapet, Discours historique, traduit et commenté par Bernadette Martin-Hisardavec un annexe. La correspondance d'Omar et de Léon, traduit et commentée par Jean-Pierre Mahé, text établi par Alexan Hakobian, Paris, 2015.

Այսօրվա արևելագիտության մեջ ընդունված է, որ Ղևոնդի պատմության XVIII և XIX գլուխները բնագրում հետամուտ են:³ Դրանք ներկայացնում են մի շատ հետաքրքիր փաստաթուղթ՝ առաջին վիճաբանությունը մահմեդականության և քրիստոնեական հավատների շուրջ: Ահա թե ինչու է Մահեն թարգմանել այն ըստ Ալեքսան Հակոբյանի բնագրի:

Ալեքսան Հակոբյանն իր հետազոտության մեջ բարեխղճորեն ներկայացնում է հարցի պատմությունը՝ թվարկելով Ղևոնդի երկը քննության ենթարկած Քերովբե Պատկանյանի, Ստեփան Մալխասյանի, Ներսես Ակինյանի, Զավեն Արզումանյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի կարծիքները, վերջինս ևս անդրադարձել է իրենից առաջ եղած հետազոտողներին: Ա. Հակոբյանն անդրադառնում է Ղևոնդի պատմության հնագույն գրչագրին, որը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում՝ ձեռագիր թիվ 1902-ում: Պատվիրատուն եղել է ծագումով Հաղպատից Հովհանավանքի վանահայր Համազասպ Մամիկոնյանը՝ 1279-1311 թվականների արանքում: Ձեռագրին կցված երկու հիշատակարաններում ուրիշ ճշգրիտ թվական չկա: Հետո թարգմանաբար բերվում է բուն հետազոտությունը:

Մահմեդական կրոնին ընդդեմ հակաճառությունների մեջ խիստ կարևոր է XIV դարի երկրորդ կեսի և XV դարասկզբի նշանավոր աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ, մանրանկարիչ, եկեղեցական գործիչ Գրիգոր Տաթևացու «Ընդդեմ տաճկաց» հակաճառությունը, որն ըստ Բաբգեն Կյուլեսերյանի՝ 1930-ին հրատարակած բնագրի ֆրանսերեն թարգմանել ու մեկնաբանել է Ֆրեդերիկ Մակլերը:⁴

³ Նույն տեղում, էջ VII:

⁴ F. Macler, L'Islam dans la litterature Arménienne d'après Gr. Tathéwatsi, Paris, 1933.

Ե) ՎԱՉԱԳԱՆ III ԲԱՐԵՊԱՇՏԸ ԵՎ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ

„Revue des Études Arméniennes” հանդեսի 35 հատորում լույս է տեսել Մահեի „Vaçagan III le pieux et le culte des reliques” հոդվածը:

Վաչագան Բարեպաշտը VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի հիմնական դեմքն է, որի մասին մատենագիրը պատմում է իր երկի երկու գրքերում: Մասնագետների կարծիքով «Պատմութիւն Աղուանից աշխարհի» մատյանի III գիրքը գրել է X դարի մատենագիր Մովսես Դասխուրանցին:¹

Վաչագան Բարեպաշտը եղել է հայերի սիրելի թագավորներից: Նրա կերպարի հիման վրա դասական գրող Ղազարոս Աղայանը գրել է իր լավագույն հեքիաթը՝ «Անահիտը»: Խախտելով հեքիաթին հատուկ անձերի ու վայրերի անորոշությունը՝ Աղայանը հեքիաթին տվել է պատմական կոնկրետություն. «Մի ժամանակ Աղվանից աշխարհի թագավորանիստ քաղաքը Պարտավն էր, որ այժմ ավերակ է և ասվում է Բարդա: Դա գտնվում է այժմյան Գանձակի և Շուշվա մեջտեղը՝ Թարթառ գետի վրա: Այդտեղ էր Վաչե թագավորի հոյակապ ապարանքը իր ընդարձակ ծառատանով...»²: Հիանալի պատմավիպասան Հայկ Խաչատրյանը, որը բազմաթիվ պատմավեպերի հեղինակ էր («Էրեբունի»-1968, «Տիգրան Մեծ»-1972, «Արտավազդ»-1975, «Արտաշես»-1980, «Քերթողահայրը»-1985, «Երվանդ Սակավակյաց»-1989 և ուրիշներ), 1998-ին

¹ «Ով ով է, հայեր», Կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007, էջ 161:

² Ղ. Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1956, էջ 106:

գրեց «Վաչագան» պատմավեպը՝ նվիրված Վաչագան Բարեպաշտին:

Իր այս հոդվածում Մահեն վերստին հաստատում է հայ պատմագրության նյութերի իր քաջատեղյակությունը: Նա հիանալի գիտի, թե ովքեր են գրել Վաչագան Բարեպաշտի մասին և ինչպես եղավ, որ Մեծ Հայքի պապենական տարածքները՝ Ուտիքը, Արցախը և Փայտակարանի մի մասը հանձնվեցին Աղվանքին: Սասանյան Պերոզը սպանվում է հեփթաղներից, և նրա փոխարեն Պարսկաստանի գահին նստում է Պերոզը, որը շտապում է կնքել Նվարսակի (484թ.) պայմանագիրը: Այդ պայմանագրով Վահան Մամիկոնյանը դառնում է Արևելյան Հայաստանի մարզպան, փաստորեն երկրի իրավական տերը, և Պարսկաստանը խոստանում է չխառնվել Հայաստանի ներքին գործերին: Այդ ժամանակահատվածում Աղվանքը սերտ կապերի մեջ էր Մեծ Հայքի հետ: Մահեն հիշեցնում է, որ Մաշտոցը այբուբեն էր ստեղծել նաև աղվանների համար:³

461-ին Սասանյան Պարսկաստանը Արցախին է միացնում Հայաստանի Արևելյան կողմի նահանգները՝ Արցախը, Ուտիքը, Փայտակարանի մի մասը: Մահեն իրավացիորեն նկատում է, թե այդ քաղաքական քայլին նպաստել է 428-ին Հայաստանում Արշակունիների թագավորության վերացումը: Մյուս կողմից էլ Հայաստանի տարածքներն այլ երկրին հանձնելը նպաստում էր այդ երկրում հայկական տարրի գերիշխող դերի ուժեղացմանը: Վաչագան Բարեպաշտը, ըստ Մահեի, եղել է հայամետ արքա և իր երկրին տվել է հայկական ուղղվածություն:⁴ Վաչագանը ջերմեռանդ քրիստոնյա էր, և նրան հայտնի էր Գրիգոր Լուսավորչի թո-

³ „Revue des Études Arméniennes”, t. 35, Paris, 2013, p. 113.

⁴ Նույն տեղում, էջ 114:

ռան՝ Գրիգորիսի դերը Աղվանքում քրիստոնեությունը տարածելու խնդրում: Գրիգորիսն իր այդ առաքելության ընթացքում 334-ին նահատակվում է մազբուսների ձեռքով:⁵

Մովսես Կաղանկատվացին վկայում է Վաչագանի աստվածապաշտության մասին և նշում է, թե նա Պարսից արքա Պերոզի հրամանով կառուցում է Պերոզապատ քաղաքը, որը հետո կոչվում է Պարտավ:⁶

Հեթանոսական ժամանակներում աղվանացիները չափազանց հետ էին որմնադրության և քարե շինություններ կառուցելու գործում: Այդ մասին կարևոր վկայություն ունի Փավստոս Բուզանդը: Ահա թե ինչ է ասում Աղվանքի թագավոր Ուոնայրը իր գորականներին. «Ձեզ հիմակվանից հիշեցնում եմ, որ մտքներդ պահեք, երբ մենք Հունաց գորքերը ձերբակալենք՝ նրանցից շատերին կենդանի թողեք, որպեսզի կապենք ու տանինք Աղվանք և իբրև կավագործ, գալատոս և հիմնադիր աշխատեցնենք մեր քաղաքների, ապարանքների և ուրիշ պիտույքների համար»⁷:

Ինչպես վկայում է Կաղանկատվացին, Վաչագան Բարեպաշտն անհաշտ պայքար է մղել հեթանոսական սովորույթների դեմ: Մահեն ասում է, թե այդ պայքարը հիշեցնում էր միջնադարում Եվրոպայում եղած ինկվիզիցիան:⁸

⁵ Նույն տեղում:

⁶ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 42:

⁷ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 297:

⁸ „Revue des Études Arméniennes”, t. 35, p. 117:

Մահեն լայնորեն օգտագործել է Չարլզ Դաուսեթի Մովսես Կաղանկատվացու պատմության անգլերեն թարգմանությունը, որը վերջինս ներկայացրել է Մովսես Դասխուրանցու անունով:⁹

Գրիգորիսի մասունքների որոնումը նկարագրվում է ժամանակագրի կողմից, նման երևույթ տեսնում ենք Դեն Բրաունի «Կողմա Վինչի» վեպում:¹⁰

Մահեն ճշտում է նաև Վաչագան Բարեպաշտի մահվան թվականը՝ այն համարելով 510-ը:¹¹

Վաչագանը կրոնական խնդիրներում այնքան պահանջկոտ ու սկզբունքային է եղել, որ ողջ հոգևոր ու աշխարհիկ մարդկանց համար գրել է «Սահմանադրութիւն կանոնական», որը երկրում կարգ ու կանոն պետք է սահմաներ, և դրան հետևողը լինելու էին եկեղեցին ու ինքը՝ արքան:¹²

Վաչագանն այնքան բարեպաշտ էր ու իր հետ ամենուր տանում էր ավելի վաղ շրջանի երկու քրիստոնյա նահատակների՝ Ջաքարիայի արյունը՝ ապակյա շշի մեջ լցված, և Պանդալիոնի նշխարները:¹³

Մահեն պատմում է, իհարկե ըստ Կաղանկատվացու, թե Վաչագանն ու նրա տիկինը՝ Շուշանիկը, զավակ չունեին և խնդրում էին Աստծուն, որ իրենց բարեպաշտության դիմաց զավակ պարգևի, ու շուտով որդի են ունենում, որի անունը դնում

⁹ Տե՛ս The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci by C. J. F. Dowsett, London, 1961.

¹⁰ „Revue des Études Arméniennes”, t. 35, p. 118.

¹¹ Նույն տեղում, էջ 121:

¹² Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 89-94:

¹³ Նույն տեղում, էջ 39:

են Պանդալիոն:¹⁴ «Եւ զի մանուկ չէր աստուածասէր և բարեպաշտ թագաւորին Վաչագանի, վանականաց ուխտադրութեամբ աղաչէր զԱստուած...: ...Եւ խնդութեամբ ընկալաւ զպարգևսն ի յԱստուծոյ ի ձեռն սրբոց վկայիցն: Եւ դնէր անուն մանկանն Պանդալիոն՝ յանուն նահատակին Քրիստոսի Պանդալիոնի և հրամայէր սնուցանել զմանուկն ընդ երկիւղն Աստուծոյ...»¹⁵:

Վաչագան Բարեպաշտի քաղաքականության մեջ զգալի է մի կողմից պայքար աղանդավորության դեմ, մյուս կողմից եկեղեցու կանոնիկ ու միավորման բերող վարդապետության տարածում ու ամրապնդում: Դա կնպաստեր իսպառ ոչնչացնելու հեթանոսական սովորույթները:

Վաչագան Բարեպաշտի նմանօրինակ գործողությունները մինչ նրան կատարվել էին Հայաստանում՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մաշտոցի նախաձեռնությամբ: Հայաստանում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից քիչ անց Սահակ Պարթևը շարադրել տվեց Գրիգոր Լուսավորչի վարքը, որը և Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» գլխավոր աղբյուրն է: Այդ նույն մեթոդով՝ Սուրբ Գրիգորիսի պաշտամունքը վերականգնելով, Վաչագան Բարեպաշտը վերահաստատեց քրիստոնեությունը Աղվանքում: Նրա համար Ամարասում Գրիգորիսի մասունքները պահելը այն կարևոր հիշատակն էր, որ այդ վանքը հիմնել է հենց Գրիգոր Լուսավորիչը:¹⁶

Քրիստոնեական երկրներում նման պաշտամունքային բազմաթիվ վայրեր կան: Հռոմի մոտ՝ հին հռոմեական ճանապարհի

¹⁴ „Revue des Études Arméniennes”, t. 35, p. 125.

¹⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 63:

¹⁶ „Revue des Études Arméniennes”, t. 35, p. 126:

հենց սկզբում, կանգնած է Սուրբ Պետրոսի եկեղեցին այն տեղում, ուր Պետրոսը հեթանոսներից հալածական, թողնում էր քաղաքը, և նրան երևում է Հիսուսը ու հարցնում. «Յո՞ւ երթաս»: Պետրոսը վերադառնում է Հռոմ ու նահատակվում: Ուշագրավ է, որ եկեղեցու ներսում տեղադրված է Հենրիկ Սենկևիչի՝ «Յո երթաս» վեպի հեղինակի կիսանդրին: Այդ եկեղեցուն շատ մոտ գտնվում են քրիստոնեական կրոնի պաշտողների կատակոմբները, որոնք վաղ քրիստոնեության պաշտամունքի խոսուն հուշարձաններ են և ներկայացնում են, թե ինչ հալածանքների են ենթարկվել քրիստոնյաները Հռոմում, մինչև այդ կրոնի պետական կարգավիճակ ստանալը:

զ) ՎԱՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ ՆԵՐԲՈՂՅԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ

Ժան-Պիեռ Մահեի վերջին ծավալուն աշխատությունը կոչվում է «Հայոց այբուբենը պատմության և հիշատակարանների մեջ»¹: Այն լույս է տեսել „Bibliothèque de l’Orient chrétien” մատենաշարով: Գրքում զետեղված է Մահեի թարգմանությամբ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը խիստ ծավալուն առաջաբանով և Վարդան Արևելցու ներբողյանը՝ նվիրված հայոց գրերի գյուտին և սուրբ թարգմանիչներին՝ նույնպես ծավալուն բանասիրական քննությամբ:²

